ISSN 1829-4707

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԳԻՐՔ

3

ԵՐԵՎԱՆ 2017

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KHACHATUR ABOVYAN
FACULTY OF HISTORY AND LAW

АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА
ФАКУЛЬТЕТ ИСТОРИИ И ПРАВОВЕДЕНИЯ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԵԳԻՐՔ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

HISTORY AND SOCIAL SCIENCES
YEARBOOK
(Collection of scientific articles)

ИСТОРИЯ И ОБЩЕСТВОВЕДЕНИЕ
ЕЖЕГОДНИК
(Сборник научных статей)

3

ԵՐԵՎԱՆ YEREVAN ЕРЕВАН

2017

Հրատարակվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի, պատմության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

Published by decisions of Academic Council of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan and the Council of Faculty of History and Law

Опубликовано решениями Научного совета Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна и совета факультета истории и юриспруденции

Խմբագրական խորհուրդ՝

Միրզախանյան Ռուբեն – Խորհրդի նախագահ (ՀՊՄՀ ռեկտոր, պ.գ.դ., պրոֆեսոր), **Հովհաննիսյան Էդգար** - Գլխավոր խմբագիր (պ.գ.թ., դոցենտ), **Պողոսյան Սամվել** - Պատասխանատու քարտուղար (պ.գ.դ., դոցենտ), **Սաֆրաստյան Ռուբեն** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր), **Մելքոնյան Աշոտ** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր), **Խառատյան Ալբերտ** (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր), **Փիլիպոսյան Աշոտ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Շիրինյան Լևոն** (ք.գ.դ., պրոֆեսոր), **Հովհաննիսյան Վոլոդյա** (ի.գ.դ., պրոֆեսոր), **Նահապետյան Ռաֆիկ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Վիրաբյան Ամատունի** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Վիրաբյան Վանիկ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Պողոսյան Էդուարդ** (պ.գ.դ., դոցենտ), **Քոսյան Արամ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Մինասյան Էդիկ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Ավետիսյան Հայկ** (պ.գ.դ., պրոֆեսոր), **Կովաչ Բալինտ** (պ.գ.դ., պրոֆեսոր, Հունգարիա), **Հարությունյան Ավետիս** (պ.գ.թ., դոցենտ), **Գրեկյան Երվանդ** (պ.գ.դ., դոցենտ), **Հովհաննիսյան Հասմիկ** (փ.գ.դ., պրոֆեսոր), **Քեռյան Գարիկ** (ք.գ.դ., պրոֆեսոր), **Թոփուզյան Աիդա** (մ.գ.դ., պրոֆեսոր), **Գևորգյան Սրբուհի** (հ.գ.դ., պրոֆեսոր), **Վարդանյան Կամո** (հ.գ.դ., դոցենտ), **Երեմյան Արա** (ի.գ.թ., դոցենտ), **Մկրտչյան Արտակ** (ի.գ.դ., պրոֆեսոր, Իսպանիա), **Տոնոյան Լուսինե** (բ.գ.թ.) **Պապոյան Հարություն** (մ.գ.թ., դոցենտ):

Editorial Board:

Mirzakhanyan Rouben - President of Council (Rector of ASPU, Doctor of Historical Sciences, Professor), Hovhannisyan Edgar - Editor (Doctor of History, Associate Professor), Poghosyan Samvel - Executive Secretary (Doctor of Historical Sciences, Associate Professor), Safrastyan Ruben (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Melkonyan Ashot (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Kharatyan Albert (corresponding member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Piliposyan Ashot (Doctor of Historical Sciences, Professor), Shirinyan Levon (Doctor of Political Sciences, Professor), Hovhannisyan Vladimir (Doctor of Juridical Sciences, Professor), Rafik Nahapetyan (Doctor of Historical Sciences, Professor), Virabyan Amatuni (Doctor of Historical Sciences, Professor), Virabyan Vanik (Doctor of Historical Sciences, Professor), Poghosyan Eduard (Doctor of Historical Sciences, Associate Professor), Kosyan Aram (Doctor of Historical Sciences, Professor), Edik Minasyan (Doctor of Historical Sciences, Professor), Avetisyan Hayk (Doctor of Historical Sciences, Professor), Kovac Balint (Doctor of History, Professor, Hungary), Avetis Harutyunyan (Doctor of History, Associate Professor), Grekyan Ervand (Doctor of Historical Sciences, Associate Professor), Hasmik Hovhannisyan (Doctor of Philosophical Sciences, Professor), Keryan Garik (Doctor of Political Sciences, Professor), Topuzyan Aida (Doctor of Pedagogical Sciences, Professor), Kevorkian Srbuhi (Doctor of Psychological Sciences, Professor), Vardanyan Kamo (Doctor of Psychological Sciences, Associate Professor), Yeremyan Ara (Doctor of Law, Associate Professor), Mkrtichyan Artak (PhD in Low, Professor, Spain), Tonoyan Lusine (Doctor of Philology), Papoyan Harutiun (Doctor of Pedagogy, Associate Professor).

Редакционная коллегия:

Мирзаханян Рубен - Председатель Совета (ректор университета, доктор исторических наук, профессор), Оганнисян Эдгар – главный редактор (кандидат исторических наук, доцент), Погосян Самвел - Исполнительный секретарь (доктор исторических наук, доцент), Сафрастян Рубен (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Мелконян Ашот (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Харатян Альберт (член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор), Пилипосян Ашот (доктор исторических наук, профессор), Левон Ширинян (доктор политических наук, профессор), Оганесян Владимир (доктор юридических наук, профессор), Рафик Нагапетян (доктор исторических наук, профессор), Вирабян Аматуни (доктор исторических наук, профессор), Вирабян Ваник (доктор исторических наук, профессор), Погосян Эдуард (доктор исторических наук, доцент), Косян Арам (доктор исторических наук, профессор), Минасян Эдик (доктор исторических наук, профессор), Аветисян Айк (доктор исторических наук, профессор), Ковач Балинт (доктор исторических наук, профессор, Венгрия), Аветис Арутюнян (кандидат исторических наук, доцент), Грекян Ерванд (доктор исторических наук, доцент), Оганнисян Асмик (доктор философских наук, профессор), Керян Гарик (доктор политических наук, профессор), Топузян Аида (доктор педагогических наук, профессор), Геворгян Србуи (доктор психологических наук, профессор), Варданян Камо (доктор психологических наук, доцент), Еремян Ара (кандидат юридических наук, доцент), Мкртчян Артак (доктор юридических наук, профессор, Испания), Тоноян Лусине (кандидат филологических наук), Папоян Арутюн (кандидат педагогических наук, доцент).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. **ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ**, ՄՇԱԿՈՒԹԱԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1925-1932 ԹԹ. 9
2. **ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ,** ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀՀ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ 24
3. **ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ**, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՋՈՐՔԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ 38
4. **ՎԻՐԱԲՅԱՆ ՎԱՆԻԿ**, ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 46
5. **ԲԱԴԱԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ,** ԲՈՒԿԱՆԻ ԱՐԱՄԵԱՏԱՌ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱԼԴԻ ԱՍՏՑՈ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 56
6. **ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ԱՇՈՏ,** ՊԱՏԱՀԱԲԱՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻՑ 62
7. **ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ**, ԱՆՏԻՊ ՎԻՄԱԳՐԵՐ ՎԱՅՈՑ ՁՈՐԻՑ 75
8. **ԱՎԱՆԵՍՈՎ ՀՈՎԻԿ,** ԻՎԱՆՅԱՆԻ (ԽՈՋԱԼՈՒԻ) ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՓԱՍՏԵՐ ԸՆԴԴԵՄ ԿԵՂԾԻՔԻ 82
9. **ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ**, ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ 93
10. **ԿՐԱՆԻՑ ՊԻՏԵՐ,** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԱՆ)ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ 105
11. **ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ**, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1901-1904 ԹԹ. 128
12. **ԽԱԼԱԹՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԻ**, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ 1921թ. ԿՆՔՎԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ. ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 143
13. **ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ**, ՍԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ 154

14. **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ, ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՂԱՎՆԻԿ,** ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՋԻՆՎՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 163
15. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ,** ԱԼԱՋԱՀՅՈՅՔԸ ԽԵԹԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (Ք.Ա. 1800-1200ԹԹ.) 168
16. **ՄՈՎՍԻՍՅԱՆ ՖԵԼԻՔՍ,** ՄԱՍՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԲՌՆԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 187

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

17. **ԳԱԼՍՏՅԱՆ ԱՇՈՏ**, ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ԱԶԳ ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵՋՎՈՒՄ 210
18. **ՏՈՆՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ**, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀՆՈՒՐԻ ԵՎ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՈՒՄ 220
19. **ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ**, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆ ԻՐԱՆԱՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1921-1945 ԹԹ.) 254
20. **ՌՈԵՎԱ ԵԿԱՏԵՐԻՆԱ,** ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 261
21. **ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ**, ԱԶԳԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ 270
22. **ՍԱՐՎԱԶՅԱՆ ԼԻԼԻԹ**, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ 282
23. **ՉԻՉՈՅԱՆ ԼԻԼԻԹ**, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԻՋԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ 304
24. **ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՀԱԿ**, ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 311
25. **ՌԱԴԻՈՆՈՎԱ ՄԱՐԻՆԱ, ՅՈՒՇԿՈՎ ԻԳՈՐ**, ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԵՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 320

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

26. **ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ**, «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ-ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 327
27. **ՏՈՒՐԿԻՆ ԵԳՈՐ,** ԿՐՈՆԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 345
28. **ՇՈՒՏԿՈ ԴՄԻՏՐԻ,** ԿՐՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 351
29. **ԱԼՅՈԽԻՆ ԻԳՈՐ, ԱՎՈՒՋԱ ԱԼԵՔՍԵՅ,** ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 359
30. **ԳՈՒԺՎԱ ԵՎԳԵՆԻ, ԳՈՒԺՎԱ ԳԵՆԱԴԻ**, ԱՊԱԳԱ ՍՊԱՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 365
31. **ԳԵՐԱՍԻՄՈՎ ՎԻԿՏՈՐ, ԿԱՆԱՊՅԱՆՈՎ ՍԵՐԻԿ,** ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 375
32. **ՄԻՇԻՆ ՌՈՄԱՆ,** ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՊԱՏՄԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 382
33. **ԿԱՐՄԱԵՎ ԱԼԵՔՍԵՅ,** ՀԱՄՈԶՄՈՒՆՔԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՌԱԶՄԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 392
34. **ՏԵՆԻՏԻԼՈՎ ՊԱՎԵԼ,** ԴԻԴԱԿՏԻԿ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՋՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 401
35. **ՏԵՆԻՏԻԼՈՎ ՍԵՐԳԵՅ, ՄԱԼՈՋԵՄՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ,** ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 408

36. **ՅՈՒԴԻՆ ԻՎԱՆ,** ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՏԱՐԲԵՐ ՍՏՐՈՒԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ 414

37. **ԳՈՐՇԿՈՎԱ ԵԼԵՆԱ,** ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՆՊԱՏՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 422

38. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԵՏԱ,** ՌԱԶՄԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 428

39. **ՍԱՄՈՆԻՆ ՖԻԼԻՊ,** ՌԱԶՄԱԾՈՒՆՉ ԵՐԳԵՐԸ ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԱԿԻ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ 435

40. **ԳԵՐԱՍԻՄՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ, ԻՎԱՆՈՎ ՄԱՔՍԻՄ,** ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 440

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԱԳԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 448

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. ՄՇԱԿՈՒԹԱԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1925-1932ԹԹ.

ՌՈՒԲԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *մշակութալուսավորական հիմնարկներ, Հայաստան, խրճիթ-ընթերցարան, Հայկինո, թատրոն:*

1925-1932 թթ. մշակութալուսավորական հիմնարկները շարունակում էին ամրապնդել իրենց տեղն ու դերը խորհրդահայ կյանքում: Դեռևս գործում էին խրճիթ-ընթերցարանները՝ որպես յուրօրինակ գրադարաններ: Դրանք ոչ միայն քարոզչական կենտրոններ էին, այլև ժողովրդական լայն զանգվածների կրթական զարգացմանը նպաստող օջախներ: Կարևոր դեր էին կատարում նաև ակումբները:

«Խրճիթ-ընթերցարանը հանդիսանում է գյուղական աշխատավորության մեջ տարվող կուսակցական և կրթալուսավորչական աշխատանքների միակ կենտրոնացնողն ու պարփակողը: Նա պետք է լինի ու հանդիսանում է միակ մասսայական հիմնարկը, որի միջոցով գյուղը վերկազմվելու է ամբողջովին ու նորանալու»[1]: Այսպիսին էր խրճիթ-ընթերցարանների առաքելությունը:

Խրճիթ-ընթերցարանն առավելապես գյուղական լուսավորական հաստատություն էր, որի գլխավոր նպատակը կրթելն էր և կուսակցության որդեգրած նպատակների քարոզչությունը: Այդ նպատակների իրականացումն սկսվում էր գյուղատնտեսության զարգացման խնդիրներից, որի մասին տեղեկանքում ասվում էր.

«1. Քանի որ Խրճիթ-ընթերցարանը մեծ մասամբ գտնվում է գյուղում, նրա աշխատանքները պետք է կրեն գյուղատնտեսական թեքում՝ նպատակ ունենալով ոչ միայն տնտեսությունն ու գյուղացու

[1]ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 696, թ. 22-ի դարձերեսը:

գիտական մակարդակը բարձրացնել, այլ նաև սերտ կերպով կապել քաղաքի արդյունաբերության ու բանվորության հետ»[1]:

Գյուղացու «գիտական մակարդակի բարձրացման» խնդիրը խիստ հարաբերական էր, քանի որ գյուղատնտեսության զարգացմանն առնչվող խորհրդային պետության ծրագրային դրույթներին տեղյակ լինելն ամենևին չէր նշանակում գիտական մակարդակի բարձրացում, բայց և այնպես նա պատկերացում էր ստանում խորհրդային ապագա գյուղի համար նախորոշված գյուղատնտեսական ծրագրերին:

Կարևորվում էր գյուղացու կուլտուրական մակարդակի բարձրացման մարտավարությունը.

«2. Խրճիթ-ընթերցարանի միջոցով խորհրդային երկրներում սկսած խորհրդ. շինարարական աշխատանքին պետք է կցել գյուղական աշխատավորական լայն մասսաները, ամրապնդել բանվորի և գյուղացու կապն ու կտրելով գյուղը հնից՝ տանել դեպի նոր կենցաղը:

Գյուղի և քաղաքի զոդման ուժեղացնելու, գիտության կիրառում գյուղատնտեսության մեջ, գյուղացու կուլտուրական մակարդակի բարձրացում և գյուղի ձևափոխում ու նորոգում, ահա պահանջներ, որոնց պիտի ձգտի Խրճիթ-Ընթերցարանը»[2]:

Խրճիթ-ընթերցարանները իրականացնում էին նաև տեղեկատու բյուրոյի գործառույթներ:

«Խրճիթ-ընթերցարանը պետք է տանի նաև տեղեկատու բյուրոյի աշխատանքներ: Այս տեսակետից պետք է ունենալ երկու արկղ, որոնցից մեկը բողոքի արկղ, մյուսը հարցերի արկղ, որոնք բացվելու են աշխատանքի ժամերը անցնելուց հետո և վերացվեն եղած հարցերն ու բողոքները:

Հարցերը մեծ մասամբ պտտելու են կաթնատնտեսության, հողագործության, անասնապահության, բանջարաբուծության, բնական գիտելիքների, առողջապահության և այլն շուրջն, իսկ եթե կլինեն

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում, թ. 23:

հարցեր, որ խրճիթ-ընթերցարանի վարիչը կդժվարանա պատասխանել, այն ժամանակ պետք է դիմել համապատասխան մարմիններին ու անհատներին, օրինակ շրջհրահանգիչին և ապա նաև Գավքաղլուսվարին»[1]:

Այսպիսով, խրճիթ-ընթերցարանների՝ որպես մշակութալուսավորական հիմնարկների գլխավոր խնդիրը գյուղացուն գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ որդեգրած մարտավարական ուղղությունների մասին տեղեկատվության տրամադրումն էր և այն համոզմունքի արմատավորումը, որ այդ մարտավարությունը ճիշտ է:

Գրեթե համանման գործառույթներ էին իրականացնում նաև ակումբները՝ այն տարբերությամբ, որ նրանցում առկա գրադարաններում ամփոփված գրականությունն առավելապես իշխող կուսակցության համագումարների որոշումներն էին, մարքս-լենինյան դասականների աշխատությունները, պլենումների և այլ որոշումների հրատարակություններ:

Այն, որ խրճիթ-ընթերցարանները կարևորագույն դեր են ունեցել նոր մոտեցումներին համահունչ գյուղը վերափոխելու տեսանկյունից, երևում է ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի՝ «Կուլտուրական հետամնացության դեմ պայքարելու ձեռնարկումների մասին» 1930թ. հոկտեմբերի 4-ի որոշումից, որով նախատեսվում էր.

«1. Առաջարկել Լուսժողկոմատին.

ա/ Հետամնաց շրջաններում ծավալել կուլտ.-կրթական հիմնարկների ցանց, կազմակերպելով հատկապես կանանց համար ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ և այլն.

բ/ ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան և պայքար մղել նոր կենցաղի համար

գ/ հրատարակել տեղական լեզուներով համապատասխան բովանդակության մատչելի գրականություն կենցաղային նախապաշարմունքների մասին, նաև պարբերական մամուլում հատկապես լուսաբանել այդ խնդիրները:

[1]Նույն տեղում, թ. 23:

2. Առաջարկել Առժողկոմատին.

ա/ կազմակերպել հետամնաց վայրերում բնակչության, առանձնապես կանանց բշժկական օգնության գործը, հիմնելով դեղատներ, հիվանդանոցներ, բուժարաններ, կոնսուլտացիոն կայաններ և այլն:

բ/ Բոլոր հնարավոր միջոցներով պայքարել գյուղական հեքիմության դեմ:

գ/ Հրատարակել բժշկա-սանիտարական հարցերի վերաբերյալ մատչելի գրականություն:

3. Առաջարկել Գերագույն Դատարանին կարգավորել կանանց իրավաբանական ոգնության գործը:

4. Առաջարկել բանվորուհիների և գեղջկուհիների աշխատանքն ու կենցաղը բարելավող Կենտրոնական Հանձնաժողովին ուժեղ պայքար մղել կանանց, առանձնապես թուրք կանանց ազատագրելու համար, որոնք կրոնական նախապաշարմունքների և հետամնաց սովորույթների շնորհիվ դեռևս գտնվում են տղամարդու ճնշման տակ:

5. Առաջարկել շրջգործկոմներին աջակցել պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների վերոհիշյալ բոլոր ձեռնարկումներին:

6. Առաջարկել հիշյալ հիմնարկներին ու կազմակերպություններին կուլտուրական հետամնացության դեմ պայքարելու ձեռնարկումներին մասնակից անել հասարակության լայն շրջաններն ու խորհրդային ակտիվ հասարակայնությանը (կենցաղային սեկցիաները, քաղաքի և գյուղի զոդման ընկերությունները, Արհմիությունները, խորհրդային և կուսակցական մամուլը, բանգյուղթղթակիցների կազմակերպությունները, լիկկայանները, ակումբները և այլն):

7. Առաջարկել վերոհիշյալ հիմնարկներին և ֆինժողկոմատին այս որոշմամբ առաջադրվող աշխատանքները կատարելու նպատակով 1930-31թթ. բյուջեյում նախատեսել համապատասխան գումարներ:

8. Պարտավորացնել ՀՍԽՀ Կենտգործկոմի Կազմբաժնին հսկել այս որոշման կիրարկության վրա»[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 35, գ. 9, թ. 1-2:

Մշակութալուսավորական հիմնարկների մյուս կարևորագույն օղակն էր կինեմատոգրաֆիան: Կինոարտադրությունը կազմակերպող մարմինը Հայկինոն էր, որը փոխարինել էր դեռևս 1923թ. ապրիլի 20-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի որոշմամբ ստեղծված Պետկինոյին: Այն Լուսժողկոմատի կառույցներից էր, որը նույն թվականի աշնանից վերանվանվում է Պետլուսկինո: Վերջինս ակցիոներական ընկերություն էր, որի հիմնական խնդիրն էր իրականացնել «գեղարվեստական և դոկումենտալ ֆիլմերի արտադրություն, ռեսպուբլիկայի կինոֆիկացում, ֆիլմերի վարձակալություն ¥պրոկատ) ՍՍՌՄ-ում և արտասահմանում»[1]:

Առաջին կինոթատրոնը՝ «Նաիրին», բացվում է Ամիրյան փողոցում՝ հայ ավետարանականների աղոթավայրում: Վերջինս քանդվում է 1950 թ., և նրա անունը տրվում է այն ժամանակվա Ստալինյան ու Մռավյան փողոցների անկյունային տան մեջ բացված նոր կինոթատրոնին[2]: Երկար տարիներ գործում էր նաև Աբովյան փողոցում գտնվող «Պրոլետար» ամառային կինոթատրոնը: Երրորդ կինոթատրոնն ավելի ուշ ստեղծված «Աստղն» էր: Ինչպես վկայում է հայ կինոյի երախտավորներից Դ. Դզնունին, «ԽՍՀՄ-ում կինոգործի վերակառուցման հետ միասին վերափոխվում է նաև հայկական կինեմատոգրաֆիայի ղեկավարման սիստեմը: 1930 թվականին մտնելով Սոյուզկինոյի մեջ որպես ազգային կինոկազմակերպություն՝ Հայկինոն հետագայում մտնում է ՍՍՌՄ ժողկոմսովետին կից Կինոֆոտո արդյունաբերության Գլխավոր վարչության մեջ որպես ինքնուրույն ազգային միավոր՝ պահպանելով ֆիլմերի արտադրության, կինոֆիկացման և կինոպրոկատի իր մենաշնորհը»[3]:

Դզնունին կատարել է հայկական ֆիլմերի արտադրության հետևյալ պարբերացումը՝ **համր կինոյի** շրջան, որն ընդգրկում է 1924-1934 թթ. և **հնչուն կինոյի** շրջան՝ 1935թ.-ից սկսած[4]:

---

[1]Դ. Մ. Դզնունի, Ուրվագծեր Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության, Ե., 1961, էջ 14:
[2]Նույն տեղում, էջ 16-17:
[3]Նույն տեղում, էջ 17:
[4]Նույն տեղում, էջ 27:

Մեր անդրադարձն առնչվում է համր կինոյի շրջանին: Այդ շրջանում «Նամուսից» հետո Հայաստանում նկարահանված երկրորդ գեղարվեստական կինոնկարը «Զարեն» էր, սցենարի հեղինակ՝ Համո Բեկնազարյան: Ֆիլմը նկարահանվում է 1926թ.: Գլխավոր դերկատարներն էին Հր. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Ն. Մանուչարյանը, Հ. Խաչանյանը, Մ. Գարագաշը, Օ. Գուլազյանը, Մ. Թադևոսյանը: Կինոնկարը ցուցադրվում է «Նաիրի» կինոթատրոնում՝ ջերմ ընդունելության արժանանալով հասարակության կողմից: Նույն թվականին նկարահանվում է նաև «Շոր և Շորշոր» կինոկատակերգությունը: Ռեժիսորը Ամասի Մարտիրոսյանն էր: Գլխավոր դերկատարներն էին Հ. Խաչանյանը, Ա. Ամիրբեկյանը, Ն. Մանուչարյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Գարագաշը, Ե. Ադամյանը:

«Երբ նկարահանումներն ավարտվեցին,- գրում է Դզնունին, - և ֆիլմը մոնտաժի ենթարկվելով ցուցադրվեց «Նաիրի» կինոթատրոնում, հանդիսականները գոհ մնացին ռեժիսյորի և դերասանների աշխատանքից և կուշտ ծիծաղեցին՝ դիտելով այդ առաջին հայկական կինոկոմեդիան»[1]:

Համր ֆիլմերի ժանրից հայտնի է նաև Շիրվանզադեի «Ցավագարը» ստեղծագործության հիման վրա 1927-ին նկարահանված «Չար ոգին»: «Երբ «Չար ոգի» ֆիլմի նկարահանումներն ավարտվեցին և ֆիլմը ցուցադրվեց «Նաիրի» կինոթատրոնում, - գրում է Դզնունին, - երիտասարդ ռեժիսյորները բարձր գնահատման արժանացան: Ֆիլմն ընդունելություն գտավ նաև Մոսկվայում և Միության այլ քաղաքներում»[2]:

Ֆիլմի ռեժիսորներն էին Մ. Գելովանին և Պ. Բարխուդարյանը, իսկ գեղարվեստական ղեկավարը՝ Հ. Բեկնազարյանը: Ֆիլմում նկարահանվել են Հասմիկը, Հ. Խաչանյանը, Մ. Գարագաշը, Ս. Մկրտչյանը և այլք:

Նույն թվականին ռեժիսոր Ա. Յալովը նկարահանում է «Ղուլը» կինոֆիլմը: Ներկայացվում էր 1921թ. Փետրվարյան ապստամբությանն

[1]Նույն տեղում, էջ 47:
[2]Նույն տեղում, էջ 50-51:

առնչվող մի պատմություն, որի նպատակն էր քննադատել «Դաշնակցություն» կուսակցության կառավարման շրջանը: Ֆիլմի ցուցադրումը, սակայն, արգելվում է Լուսժողկոմի կողմից՝ պատճառաբանելով, որ «1927-1928թթ. այդպիսի ֆիլմի ցուցադրումը դաստիարակիչ դեր չի կարող կատարել»[1]:

Սակայն մինչ այդ այն արդեն ցուցադրվել էր Ռուսաստանում, Ուկրաինայում և Բելոռուսիայում:

Հեղափոխական թեմաներին է առնչվում նաև 1927թ. Հ. Բեկնազարյանի նկարահանած «Խազփուշ» ֆիլմը, որը ներկայացնում է խազփուշների՝ պարսկական «լյումպեն-պրոլետարիատի» ներկայացուցիչների ընդվզումը ֆեոդալների, առևտրականների և հոգևորականների դեմ: 1927թ. հոկտեմբերին Երևան ժամանած Անրի Բարբյուսը այս ֆիլմը դիտելուց հետո հետևյալ կարծիքն է հայտնել. «Սա իրոք ամենացնցող նկարներից մեկն է, որ ես երբևէ տեսել եմ էկրանի վրա: Ոգևորված իսկական արտիստների և իսկական ռևոլյուցիոներների ստեղծագործությամբ՝ ես ամենայն անկեղծությամբ արտահայտում եմ իմ հիացմունքը Հայաստանի կինոյի մասին»[2]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում համր կինոյի ստեղծագործություններից հիշարժան են «Զամալու», «Հինգը խնձորին», «Տասնվեցերորդը», «Տունը հրաբխի վրա», «Ով է մեղավոր», «Անուշ» և մի քանի այլ ֆիլմեր, որոնք նկարահանվում են 1928-30 թթ.:

Հայկինոյի վերջին համր ֆիլմը «Գիքորն» էր (ռեժիսոր՝ Ամասի Մարտիրոսյան)՝ նկարահանված Հովի. Թումանյանի համանուն պատմվածքի հիման վրա 1934-ին: Նույն Դզնունու վկայությամբ՝ «Ֆիլմի ցուցադրումը Երևանի կինոներում մամուլի և հասարակայնության կողմից ընկալվեց որպես Հայկինոյի խոշոր նվաճում: Նույնպիսի հաջողությամբ «Գիքորն» ընդունվեց Մոսկվայում և ՍՍՌՄ այլ վայրերում, որպես անցյալում անչափահասներին պատկերող լավագույն գեղարվեստական ֆիլմերից մեկը»[3]: Մինչ այդ նկարահանվել էին «Մեքսիկական

[1]Նույն տեղում, էջ 53:
[2]Նույն տեղում, էջ 57:
[3]Նույն տեղում, էջ 81:

դիպլոմատներ», «Երկու գիշեր», «Արևի զավակը», «Կիկոս» և այլ ֆիլմեր, որոնք ժամանակաշրջանի և հնարավորությունների ճիշտ ընկալման պարագայում նույնպես արժանի են գնահատանքի:

Չնայած բազում դժվարություններին՝ Հայկինոն (1957-ից՝ Հայֆիլմը) բավական էական ներդրում է ունենում խորհրդահայ կինեմատոգրաֆիայի զարգացման գործում:

Կինոն՝ որպես մշակութալուսավորական ինստիտուտ, շարունակում էր ծավալվել ողջ հանրապետությունում: ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի «Կինոֆիկացման ֆոնդեր կազմակերպելու մասին» 1930թ. մայիսի 9-ի որոշման մեջ մասնավորապես նշվում էր. «Կինոֆիկացման ֆոնդից կինոցանցի կառուցման համար միջոցներ հատկացնելիս առաջին հերթին կինոթատրոնների հիմնական կառուցում է կատարվում բանվորական շրջաններում, ինչպես նաև կինո չունեցող գյուղերում ու վայրերում, և ընդարձակվում է շարժական կինոների գյուղական ցանցը. երկրորդ հերթին կատարվում է քաղաքային ու գյուղական գործող կինո-ապարատների հիմնական նորոգություն և ցանցի ընդարձակում»[1]:

«Կինո ձեռնարկություններին հարկային արտոնություններ տալու մասին» վերտառությամբ մեկ այլ որոշման մեջ՝ ընդունված նույն թվականի հոկտեմբերի 4-ին, մասնավորապես ասվում էր. «Բացառապես քաղ-կրթական ֆիլմեր և քրոնիկոն ցուցադրող կինո-սեանսներն ազատել այն հարկերից, որ գանձվում են հասարակական տեսլականների զվարճատեղերի հաճախորդներից»[2]:

Ավելի լայն հնարավորություններ էին ստեղծվում գաղափարախոսական կամ իշխող գաղափարախոսությունը քարոզող ֆիլմերի արտադրության համար:

1926-1932 թթ. հաջողություններ է գրանցում նաև խորհրդահայ թատրոնը: Ինչպես նկատում է թատերագետ Բ. Հարությունյանը,

[1]ՀԱԱ, ֆ. 113, ց. 35, գ. 7, թ. 7:
[2]Նույն տեղում, ց. 35, գ. 8, թ. 21:

խորհրդահայ թատրոնը գտնվում էր սոցիալիստական ռեալիզմի ճանապարհին: Նա այդպես էլ վերնագրել է իր աշխատության երրորդ գլուխը[1]:

«Հայ արվեստում և գրականության մեջ, - գրում է նա, - 1926-1932 թթ. ծնունդ առան ժողովրդի հոգևոր կյանքի վերելքը վկայող բազմաթիվ երկեր»[2]:

1926 թ. Երևանում ստեղծվում է Բանվորական շրջիկ թատրոն, որի հիման վրա 1932 թ. կազմակերպվում է Գորկու անվան բանվորական թատրոնը: 1928 թ. Լենինականի թատերախմբի հիման վրա ստեղծվում է Հայաստանի պետական դրամատիկական երկրորդ թատրոնը: 1929թ. իր առաջին ներկայացումն է ցուցադրում Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը: Պետական թատրոններ են բացվում Կիրովականում (1931 թ.), Նոր Բայազետում (1932 թ.) և Դիլիջանում (1932 թ.): Գործում էր Ամո Խարազյանի շրջիկ թատրոնը, որը 1928 թ. պետականացվել էր[3]:

Թատրոնների ընդլայնմանը զուգընթաց՝ հայ գրողները և թատերագիրները հանդես էին գալիս նորանոր ստեղծագործություններով, որոնք բեմականացվում էին: 1927 թ. մարտին Երևանի պետթատրոնը, որի ռեժիսորն էր Ա. Բուրջալյանը, բեմադրում է Շիրվանզադեի «Մորգանի խնամին» կատակերգությունը: Այն մեծ հաջողությամբ բեմականացվում է մինչև 1930-ական թթ.:

Բեմադրվում են նաև ռուսական դրամատիկական ստեղծագործություններ: 1926 թ. ապրիլին Երևանի պետթատրոնում Լ. Քալանթարը բեմադրում է Ա. Լունաչարսկու «Թույն» դրաման, իսկ նույն թվականի վերջերին Ն. էրդմանի «Մանդատ» կատակերգությունն է բեմադրում Ա. Բուրջալյանը: Այս երկու ստեղծագործություններն էլ հետագայում բեմադրվում են Լենինականում: Մեծ հաջողություն են ունենում 1926 թ. Լ. Քալանթարի բեմադրած երեք ներկայացումները՝ «Կամակոր կնոջ սանձահարումը», «Տարտյուֆ» և «Վարժապետ Բուբուսը»:

---

[1]Հարությունյան Բ., Հայ սովետական թատրոնի պատմություն, Ե., 1967, էջ 61:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում, էջ 61-62:

Երևանի պետթատրոնը բավական արգասաբեր գործունեություն է ծավալում նաև հաջորդ տարիներին: 1927 թ. մայիսին Լ. Քալանթարի թարգմանությամբ և բեմադրությամբ ներկայացվում է Կ. Կրենյովի «Լյուբով Յարովայա» դրաման: Գլխավոր դերակատարն էր Հասմիկը, որը «ճշմարիտ գծով ցույց տվեց, թե ինչպես սովորական ռուս կինը աստիճանաբար վերաճում է հեղափոխական մարտիկի»[1]: Բեմում փայլում էին Հր. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Վ. Վաղարշյանը և Ա. Ոսկանյանը:

Երևանի պետական թատրոնը 1930 թ. մասնակցում է Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովուրդների արվեստի համամիութենական տասնօրյա օլիմպիադային, որի կազմկոմիտեի կողմից արժանանում է բարձր գնահատականի: Թատրոնը հանդես է բերում «դերասանական կուլտուրայի բարձր մակարդակ, թատերական արտահայտչական միջոցների ազատ տիրապետում, խաղի հստակ նկար և շարժական ռիթմ, ժեստի զուսպ ուժ և խոսքի կուլտուրայի բարձր զարգացում…»[2]:

1920-ական թթ. վերջերից Հայաստանի թատրոնների բեմացանկում առավելապես ընդգրկված էին հեղափոխական թեմաներով ստեղծագործություններ:

Պետական թատրոնում 1928-ին բեմադրվում են Վ. Իվանովի «Զրահագնացք 14-69» (ռեժիսոր՝ Ն. Ֆրիդ, գլխավոր դերակատար՝ Հր. Ներսիսյան,), 1929-ին՝ Վ. Կիրշոնի «Հողմերի քաղաքը»՝ նվիրված Բաքվի 26 կոմիսարներին (ռեժիսորներ՝ Ռ. Սիմոնով և Ա. Գուլակյան), Բ. Ռոմաշովի «Հրե կամուրջը»՝ նվիրված քաղաքացիական կռիվներին (ռեժիսոր՝ Վ. Վաղարշյան), 1930-ին՝ Վ. Վիշնևսկու «Հրե կամուրջը» (ռեժիսոր՝ Ա. Գուլակյան), որը հաջողություն չի ունենում և այլն: Ինչպես համոզվում ենք, հիմնականում բեմադրվում էին ռուս հեղինակների ստեղծագործություններ: Ուստի 1929 թ. հունիսին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Անդրերկրկոմի՝ ազգային թատրոններին նվիրված խորհրդակցության

[1]Նույն տեղում, էջ 67:

[2] Մելիքսեթյան Վ., Կարապետյան Հ., Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկրորդ պրակ, 1929-1934, Ե., 1958, էջ 83:

բանաձևում հայ թատրոնին առաջարկվում է միջոցներ ձեռնարկել «ինքնուրույն դրամատուրգիայի ետ մնալը հաղթահարելու համար»[1]:

Կազմակերպվում է պիեսների մրցանակաբաշխություն, անցկացվում են կոնսուլտացիաներ: Այդ շրջանում գրվում են Վ. Վաղարշյանի «Օղակում» (1929), Տ. Հախումյանի «Այգաբացին» (1932) և Գ. Գաբրիելյանի «Կրակե օղակում» (1932) պիեսները:

«Օղակումը» 1930 թ. Երևանի պետթատրոնում բեմադրում է Ա. Գուլակյանը: Գլխավոր դերկատարներն էին Հր. Ներսիսյանը և Վ. Վաղարշյանը: Այն նվիրված էր բոլշևիկների՝ ընդդեմ դաշնակցականների պայքարի արդարացիության բացահայտմանը, հայ-ադրբեջանական բարեկամության սերմնավորմանը: «Այգաբացին» պիեսը նվիրված էր Մայիսյան ապստամբության հերոսներին: Այն բեմադրվում է 1933 թ. Երևանի Մ. Գորկու անվան բանվորական թատրոնի հիմնադիր և գլխավոր ռեժիսոր Լ. Քալանթարի և Տ. Հախումյանի միացյալ ջանքերով: Գլխավոր դերակատարներն էին Դ. Ամիրբեկյանը, Դ. Մալյանը և Ա. Նանաջանյանը:

«Կրակե օղակումը» նվիրված էր Հայաստանում պարտիզանական շարժմանը: Այն բեմականացվեց 1932 թ. Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում: Այս պիեսների գաղափարական հիմքում դաշնակցականների վարած հակահայկական քաղաքականության բացահայտումն էր, որը բխում էր իշխող կուսակցության քաղաքական ուղեգծից:

Բեմականացումներ են եղել նաև նվիրված բանվորուհիների կյանքի լուսաբանմանը: 1929 թ. Երևանում բեմադրվում է Ա. Գլեբովի «Ինգա» պիեսը, որտեղ գլխավոր դերկատարներն էին Ա. Ոսկանյանը, Հասմիկը, Հր. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը և Ռ. Վարդանյանը:

Գյուղական կյանքն արտացոլվում է Անուշավան Վարդանյանի («Դանիել աղա», «Ժողով», «Բանդիտներ», «Ուրվականներ»), Վահան Միրաքյանի («Նոր գյուղի շեմին», «Մանուշի հարսանիքը», «Խոզպահի

[1]Բաբկեն Հարությունյան, նշվ. աշխ., էջ 74:

կինը») և Արշավիր Ղարագյուլյանի («Կոմսոմոլ Աստղիկ», «Շուշանաձորում») պիեսներում:

Հայ թատերական կյանքում երևույթ դարձավ Ե. Յանովսկու «Ցասում» պիեսի բեմադրությունը, որը հաջողությամբ իրականացրեց Ա. Գուլակյանը Երևանի պետթատրոնում: Իր փայլուն խաղով հատկապես աչքի ընկավ Հր. Ներսիսյանը: Այն նվիրված էր գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությանը, որը ներկայացված էր այնպիսի գույներով, որ թվում էր, թե նման տնտեսությունն իդեալական է գյուղի զարգացման համար:

Այս պիեսից հետո Տ. Հախումյանը ստեղծում է ուկրաինացի դրամատուրգ Ի. Միկիտենկոյի «Դիկտատուրա» պիեսի հայկական տարբերակը, որը բեմադրվում է Լենինականի թատրոնում: Ապա նա գրում է «Թշնամի» (1930) և «Ոսկորների վրա» (1931) պիեսները, որոնցից առաջինը բեմադրվում է Երևանի պետթատրոնում, իսկ երկրորդը՝ Բաքվի հայկական թատրոնում: Բ. Հարությունյանն այս պիեսների վերաբերյալ գրում է. «Հեղինակին միշտ չէ, որ հաջողվել էր հերոսների արարքները հիմնավորել, կատարել սոցիալական ընդհանրացումներ»[1]:

Հայկական թատրոններում 1920-ական թթ. վերջերին բեմադրվում են նաև սոցիալիստական ինդուստրացմանը նվիրված պիեսներ, որոնցից հիշատակելի են Վ. Կիրշոնի «Ռելսերը գնում են», Ն. Պոգոդինի «Տեմպը», Թ. Սարյանի «Կացնի պոեմը» թատերգությունները:

Սոցիալիստական շինարարության թեմային էր նվիրված Վ. Թոթովենցի «Բաքու-Լոնդոն» դրաման, «որը պատմում էր առաջին հնգամյակի նավթագործների մղած պայքարի մասին»[2]: Այս դրամայի բեմականացմամբ 1932 թ. ապրիլին բացվում է Երևանի Մ. Գորկու անվան բանվորական թատրոնը:

Չէին անտեսվում նաև դասականները: Բեմադրվում էին նաև Շիրվանզադեի, Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Լ. Շանթի և այլոց

[1]Նույն տեղում, էջ 83:
[2]Նույն տեղում, էջ 85-86:

ստեղծագործությունները: Լայն ընդգրկում ունեին նաև ռուս և արևմտաեվրոպական դասականների ստեղծագործությունները: Հայկական թատրոններում բեմադրվում են Մ. Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Ա. Օստրովսկու «Արդյունավոր պաշտոնը», Ն. Գոգոլի «Ռևիզորը», Շեքսպիրի «Օթելլոն», «Լիր արքան», «Վենետիկի վաճառականը», «Մակբեթը», «Համլետը», Մոլիերի «Դոն Ժուանը», «Տարտյուֆը», «Երևակայական հիվանդը», Շիլլերի «Ֆիեսկոյի դատավարությունը Ջենովայում» և այլն:

Ընդհանուր առմամբ հայ թատերական արվեստն այս ժամանակահատվածում ընթանում էր գաղափարական մի քանի ուղղություններով.

ա) սոցիալիստական շինարարության, ինդուստրացման և կոլեկտիվացման վերաբերյալ բեմականացումներով, որոնք անվերապահորեն ունեին առավելապես քարոզչական նպատակ,

բ) քաղաքացիական կռիվների արտացոլմամբ, որոնց թեմաներով հայ թատերական ներկայացումները հիմնականում փոխառված էին ռուսական ներկայացումներից և կրում էին նրանց կնիքը. ավելին, հայկական ստեղծագործությունների սյուժեն երբեմն գրեթե նույնությամբ քաղվում էր ռուսական նմանաբնույթ սյուժեներից, փոխվում էին միայն իրադարձությունների վայրն ու դերակատարները,

գ) դասականների ստեղծագործությունների բեմականացումներով, որոնք, թերևս, առավել հաջողությամբ էին իրականացվում, քանի որ սոցռեալիզմի գաղափարական հենքը նրանց համար մասամբ էր պարտադրելի:

Հավելենք նաև, որ թատրոնի աշխատողները գտնվում էին պետական լայն հոգածության ներքո, բայց դրանով հանդերձ խստորեն դրված էր կուսակցական գաղափարական գծից չշեղվելու խնդիրը ոչ միայն թատրոնի, այլև գեղարվեստի բոլոր բնագավառների աշխատավորների նկատմամբ: Այսպես, ՀԿԿ կենտկոմի 1927 թ. փետրվարի 2-ի Լուսժողկոմատ՝ Ա.Մռավյանին հասցեագրված գրության մեջ նշվում էր.

«Գեղարվեստի բոլոր ասպարեզներում անհրաժեշտ է խստորեն անցկացնել կուսակցության գիծը: Վերջին ամիսների ընթացքում նկատելի են մեզ համար անընդունելի մի շարք ելույթներ, որ կատարվում է բուրժուական և մանրբուրժուական «եստետների» կողմից, որոնց անհրաժեշտ է հակազդել մեր գաղափարախոսությունը այն էլ ոչ թե դեպքից դեպք, այլ սիստեմատիկ, պլանային ձևով կիրառել:

Բացի այդ գեղարվեստական դաստիարակության ցրված լինելը Լուսժողկոմատի տարբեր վարչությունների միջև, կարիք է զգացվում այդ աշխատանքը կազմակերպչորեն կենտրոնացնել մի վարչության ձեռքին՝ հանձնելով ղեկավարությունը հատուկ՝ գեղարվեստի ոլորտում կոմպետենտ կուս. ընկերոջ:

Նկատի ունենալով վերոհիշյալը Ագիտբաժինս անհրաժեշտ է համարում կոլլեգիայիդ վորոշած գեղարվեստական խորհուրդը վերածել գլխարվեստի («Գլավիսկուստվո» հարևան հանրապետությունների օրինակով) և զարկ տալ վերջինիս շուտափույթ բեղմանվոր աշխատանքներին:

ԿԿ Ագիտպրոպբաժնի տեղակալ՝

Դզնունի

Բաժնի վարիչ՝ Շլեպչյան»[1]:

Ասել է թե, ստեղծվում էր արվեստի գաղափարական գծին հետևող հատուկ մարմին, որի վերահսկողության պայմաններում հնարավոր էր ստեղծագործել միայն ու միայն սոցռեալիզմի մեթոդով, որը ենթադրում էր պլանավորում արվեստի մեջ:

1931 թ. հոկտեմբերի 23-ի ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմսովետի որոշմամբ սահմանված «Գիտության, տեխնիկայի և արվեստի աշխատավորների վաստակավոր գործչի և «Ժողովրդական արտիստի» կոչում տալու մասին» որոշումը[2] տարածվում էր հենց կուսակցական

[1]ՀԱԱ, ֆ. 122, ց. 2, գ. 6, թ. 38:
[2]Նույն տեղում, ֆ. 113, ց. 35, գ. 17, թ. 7:

գիծը իրենց ստեղծագործություններում ճշտորեն պահած արվեստագետներին: Իսկ այդ գիծը պահելը դյուրին խնդիր չէր, քանի որ միշտ էլ ցանկության դեպքում կարելի էր շեղումներ գտնել:

SUMMARY

ACTIVITIES OF INSTITUTIONS OF CULTURAL ENLIGHTENMENT IN ARMENIA (1925 – 1932)

MIRZAKHANYAN RUBEN

The struggle against illiteracy was among the major priorities of the activities of institutions of cultural enlightenment in Armenia between 1925 and 1932. Though in some cases the respective process turned out to be violent in its ideological vibe, the so-called hut-based reading areas (reading huts), in general, played a positive role. The period understudy was marked by the formation Armenian cinematography and the development of Armenian national theatre. Despite the dictatorship of the political party and state bodies, the institutions of cultural enlightenment had their unique contribution in the cultural life of Armenia between 1925 and 1932.

Keywords: *institutions of cultural enlightenment, reading-hut, Armenian cinema, theater arts, Armenia.*

РЕЗЮМЕ

ДЕЯТЕЛЬНОСТЬ КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ В АРМЕНИИ (1925-1932 ГГ.)

МИРЗАХАНЯН РУБЕН

Важным направлением в деятельности культурно-просветительных учреждений Армении 1925-1932гг. являлась борьба в безграмотностью. В отдельных случаях, имея формальный характер, оголтелую идеологическую направленность, избы-читальни в целом сыграли положительную роль. Изучаемый период – время становления армянской кинематографии, развития национального театрального искусства. Несмотря на диктат партийных и государственных органов культурно-просветительные учреждения 1925-1932гг. сыграли исключительную роль в культурной жизни Армении.

Ключевые слова: *культурно-просветительные учреждения, изба-читальня, армянская кинематография, театральная искусства, Армения.*

2. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀՀ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

ԷԴԳԱՐ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հայկական Սփյուռք, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, ՀՀ Սահմանադրություն, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարություն, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ:*

20-րդ դարի վերջին և հատկապես 21-րդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում աննախադեպ ծավալների են հասել միգրացիոն հոսքերը և մարդկային տեղաշարժերը՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական, քաղաքական, ռազմական և մի շարք այլ պատճառներով: Օտար երկրներում հայտնված զանգվածները հետագա գոյակցության երկու ճանապարհ ունեն՝ ձուլվել հյուրընկալ հասարակությունում՝ կորցնելով սեփական էթնիկ ինքնությունը, կամ էլ դառնալ սփյուռք: Հյուրընկալ երկրներում հայտնված ոչ բոլոր էթնիկ խմբերին է հաջողվում դառնալ սփյուռք: Սփյուռքացման ճանապարհին ի թիվս այլ գործոնների[1], մի շարք հայտնի տեսաբանների կարծիքով, անչափ կարևոր է հայրենիքի գաղափարը և կապերը սեփական հայրենիքի հետ[2]: Ներկայում գնալով մեծանում է այն երկրների թիվը, որոնք սկսել են հատուկ կարևորել սեփական սփյուռքների դերն ու նշանակությունը սեփական պետության համար: Այդ երկրները հավելյալ ջանքեր են գործադրում կազմակերպված և հայրենի պետության հետ համակարգված հարաբերություններ ունեցող սփյուռքներ ունենալու ուղղությամբ[3]: Այս

[1] Սփյուռքի հարցերով հայտնի տեսաբան Խ. Թեոլեոլյանը ցրունքների սփյուռքացման հարցում կարևորում է տասներկու գործոններ, մանրամասն տես՝ Tölölyan Kh., Redefining Diasporas: Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A Journal of Transnational Studies, volum 5, number 1, 1996, pp. 20-26.

[2] Բեժանյան Ա.Գ., Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, Երևան, 2013, № 1, էջ 217-219:

[3] Արդեն իսկ կազմակերպված սփյուռք ունենալու դեպքում հայրենի պետություններում անգամ ձևավորվում են քաղաքական ուժեր, որոնք իրենց հիմնական նպատակն են

գործընթացները որպես կանոն դրսևորվում են հայրենի պետության կողմից նոր ինստիտուտների և գերատեսչական մարմինների ստեղծմամբ, որոնց վերապահվում է հայրենիք-սփյուռք հարաբերությունների համակարգման գործառույթները: Այս ամենը, բնականաբար, իր արտացոլումն է ստանում նաև հայրենի պետության կողմից ընդունված պետաիրավական ակտերում, որոնց հետազոտումից պարզ է դառնում տվյալ երկրի և սեփական սփյուռքի միջև հարաբերությունների զարգացման ողջ ընթացքը:

1991թ. Հայաստանի քաղաքական անկախացումից հետո հայկական սփյուռքի հետ հարբերությունների զարգացման նոր հնարավորություններ ստեղծվեցին: Միաժամանակ ստեղծված նոր քաղաքական իրավիճակը և աշխարհաքաղաքական մի շարք զարգացումներ նոր մարտահրավերներ առաջ բերեցին Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ անկախության վերականգնումը հնարավորություն տվեց Սփյուռքի հետ հաստատել քաղաքական հարաբերություններ: Անկախության տարիներին ձևավորվեցին նաև մի շարք պետական գործիքներ և ձևաչափեր, որոնք պետք է իրականացնեին և համակարգեին ՀՀ պաշտոնական քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որպես կանոն, ինչպես վերը նշվեց, արտացոլվում են հայրենի պետության կողմից ընդունված պետաիրավական փաստաթղթերում: Բնականաբար, անկախության տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման ընթացքը ևս արտացոլվեց ՀՀ պետաիրավական հիմանական փաստաթղթերում՝ Սահմանադրություն, Ազգային անվտանգության ռազմավարություն, օրենքներ,

---

համարում ներգրավվածության ապահովումը հայրենի պետության քաղաքական կյանքին: Օրինակ վերջերս հայկական լրատվական դաշտում տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ սփյուռքահայ գործարար Վահագն Հովնանյանի փեսայի, պահեստազորի գնդապետ Արթուր Ալեքսանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է նոր շարժում «Միացյալ Արմենիա» անվանմամբ, որի գլխավոր նպատակն է ապահովել սփյուռքի լեգիտիմ ներկայությունը Հայաստանի կառավարման համակարգում՝ մասնավորապես խորհրդարանում՝ սփյուռքի պատգամավորներից բաղկացած վերին պալատ ստեղծելով: Տես՝ http://www.tert.am/am/news/2016/10/27/arthur-aleqsanyan/2175791

Հայաստան-Սփյուռք հարաբերություններին վերաբերող հայեցակարգեր: Նշված պետաիրավական ակտերում տեղ գտած դրույթներից հնարավոր է հետևություններ կատարել թե տվյալ ժամանակահատվածում ՀՀ քաղաքական վերնախավը ինչպիսի պատկերացումներ է ունեցել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների և Սփյուռքի՝ ՀՀ քաղաքական կյանքի ներգրավվածության հարցերի վերաբերյալ: Փաստենք նաև, որ վերջին 25 տարիների ընթացքում Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման դինամիկան մեծամասամբ կապված է եղել ՀՀ երեք նախագահների հայկական սփյուռքի նկատմամբ ունեցած դիրքորոշումներով և մոտեցումներով: Այս մոտեցումներն իրենց ուղղակի արտացոլումն են ունեցել ոչ միայն վերջիններիս կողմից իրականացվող քաղաքականության մեջ, այլև տվյալ ժամանակաշրջանի պետաիրավական փաստաթղթերում:

Այսպես՝ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր սեփական մոտեցումներն ուներ Սփյուռքի նկատմամբ իրականացվող քաղաքականության և Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վերաբերյալ: Վերջինս գրեթե բացառում էր Սփուռքի ներգրավվածությունը ՀՀ քաղաքական կյանքին և Սփյուռքի ազդեցությունը ՀՀ կայացրած քաղաքական որոշումների վրա, անկախ նրանից այդ որոշումները վերաբերում էին ներքին թե արտաքին քաղաքականության հարցերին:

1995թ. նորանկախ Հայաստանի Հանրապետությունն առաջին անգամ ունեցավ Մայր օրենք՝ Սահմանադրություն: Որքան էլ, որ տարօրինակ էր՝ մեծաթիվ և կազմակերպված Սփյուռք ունենալու պարագայում, ՀՀ առաջին Սահամանադրության մեջ չկար որևէ խոսք Սփյուռքի կամ էլ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մասին[1]: Նշենք նաև, որ 1991-1998թթ. ընթացքում չընդունվեց նաև որևէ այլ պետաիրավական փաստաթուղթ, որը կհամակարգեր Հայաստան-Սփյուռք հարաբերությունները կամ կանդրադառնար Սփյուռքին ընդհանրապես: Հետաքրքիր է նաև՝ անկախ պետականության գոյության

[1] Տես՝ ՀՀ Սահմանադրություն (1995), http://www.arlis.am/documentview.aspx?docID=1

առաջին տարիներին ՀՀ-ում գոյություն չուներ նաև որևէ պետական մարմին, որին վերապահված լիներ Հայաստան-Սփյուռք հարբերությունների համակարգում: Թեև անկախության առաջին տարիներին շարունակում էր գործել դեռ 1964թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն, սակայն այս կազմակերպությունը չուներ նախկին լիազորություններն ու հնարավորությունները և հիմնականում զբաղված էր ԱՊՀ երկրների հետ մշակութային համագործակցության հարցերով: Սփյուռքի հետ հարաբերությունների համակարգումը, փաստորեն, վերապահված էր ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

Սփյուռքի հետ կապված հարցերում հանրապետության առաջին նախագահից տարբերվող դիրքորոշում ուներ 1998թ. նախագահ դարձած Ռոբերտ Քոչարյանը: Նախ, վերջինս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը հռչակեց որպես ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը[1]: Սփյուռքի համար այս կարևոր հարցում պաշտոնական Հայաստանի դիրքորոշման փոփոխությունը Հայստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման համար նոր հնարավորություններ ստեղծեց: Սփյուռքի վստահությունը ՀՀ նկատմամբ ավելի աճեց, երբ վերականգնվեց հայկական ավանդական կուսակցություններից մեկի՝ Հայ հեղափոխական դաշնակցության Հայաստանում գործելու իրավունքը և վերջինս շուտով դարձավ ՀՀ նոր կառավարության մաս: Ռ. Քոչարյանի նախագահության տարիներին ստեղծվեց նաև Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման նոր ձևաչափ՝ Հայաստան-Սփյուռք համաժողովները[2]: Վերջինիս կառավարման տարիներին ՀՀ կառավարության որոշմամբ Արտաքին գործերի նախարարության կազմում Հայաստան-Սփյուռքի հարաբերությունները համակարգելու նպատակով 2000թ. առաջին անգամ

[1] Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1991-2001թթ.), Երևան, 2003, էջ 548-549:

[2] Ռ. Քոչարյանի նախագահության տարիներին տեղի ունեցան Հայաստան-Սփյուռք երեք համաժողովներ՝ 1999, 2002, 2006 թվականներին:

ստեղծվեց հատուկ ստորաբաժանում՝ *սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունը*[1]: Այս նոր կառույցն ուներ գերատեսչության կարգավիճակ և սեփական կանոնադրություն[2]: Երկու տարի անց՝ 2002թ., այս կառույցը վերակազմավորվեց որպես *սփյուռքի հետ կապերի գործակալության*[3]:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում տեղի ունեցած այս փոփոխություններն արձանագրվեցին նաև ժամանակի պետաիրավական փաստաթղթերում: Նախ 2005թ. նոյեմբերի 27-ին Հայաստանում տեղի ունեցավ սահմանադրական հանրաքվե: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սփյուռքի մասով ՀՀ Սահմանադրության մեջ տեղ գտավ հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը»[4]: Ակնհայտ էր, որ այս փոփոխությունով Հայաստան պետությունը հավակնում էր Սփյուռքի հետ կապերի հետագա ամրապնդմանը, նաև հայտարարվում էր հայկական մշակութային ժառանգությանը տեր կանգնելու մասին: Նոր Սահմանադրությամբ հանվում էր նաև երկքաղաքացիության արգելքը: Շուտով, «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում կատարված համապատասխան փոփոխությունով Հայաստանում թույլատրվեց երկքաղաքացիությունը[5]:

---

[1] ՀՀ Կառավարության 2000 թ. հունիսի 23-ի N 342 որոշումը Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն ստեղծելու մասին, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7906

[2] ՀՀ վարչապետի 2000թ. սեպտեմբերի 15-ի N 633 որոշումը Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարության կանոնադրությունը եվ կենտրոնական ապարատի կառուցվածքը հաստատելու մասին, տես՝ http://www.arlis.am/documentview.aspx?docid=15483

[3] ՀՀ Կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N 1057-Ն որոշումը Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունը վերակազմակերպելու մասին, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=9732

[4] ՀՀ Սահմանադրություն (2005), Գլուխ 1՝ Սահմանադրական կարգի հիմունքները, հոդված 11, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780

[5] «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84344

Հաջորդ հիմնարար պետական փաստաթուղթը, որտեղ անդրադարձ կար Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունն էր: 2007թ. փետրվարին նախագահ Ռ. Քոչարյանի համապատասխան հրամանագրով հաստատվում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունը[1]: Նման կարևոր փաստաթուղթ Հայաստանում ստեղծվում էր առաջին անգամ: Ազգային անվտանգության ռազմավարությունում առանձին դրույթներ հատկացված էին հայկական սփյուռքին և Հայաստան-Սփյուռք հարաբերություններին: Այսպես՝ ռազմավարությունում «Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակումն ու իրականացումը, Սփյուռքի ներուժի համակողմանի համախմբումը» դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործոն: Ազգային անվտանգության ռազմավարության արտաքին սպառնալիքներին նվիրված բաժնում, խոսելով Սփյուռքում հայապահպանության խնդիրների մասին, «Սփյուռքի ազգամշակութային ինքնության թուլացումը»[2] համարվում էր որպես արտաքին սպառնալիք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կազմակերպված և բնակության երկրներում արդյունավետ կերպով ներգրավված Սփյուռքի առկայությունը կարևոր է Հայաստանի միջազգային ներգրավվածության մակարդակի բարձրացման տեսակետից»[3], իսկ ուծացված և ինքնությունը կորցրած հայկական համայնքը չէր կարող կատարել այս ակնկալվող գործառույթը, հետևաբար տեսականորեն սպառնալիք ստեղծելով, կամ, ավելի ճիշտ է ասել, զրկելով որոշակի հնարավորություններից ՀՀ արտաքին քաղաքականությանը: «Սփյուռքը մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև»[4]. այս ձևակերպմամբ է բնորոշվում ռազմավարության

[1] ՀՀ նախագահի հրամանագիրը ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության հաստատելու մասին, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Հաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված բաժնի անդրադարձը Սփյուռքի դերին ՀՀ արտաքին քաղաքականության մեջ: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ռազմավարության մեջ արտաքին քաղաքական հարցերում հայկական սփյուռքին կարևոր դերակատարում էր հատկացվում հատկապես հայ-ամերիկյան հարաբերություններում[1]:

ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում առանձին բաժին հատկացված է նաև Հայաստան-Սփյուռք հարաբերություններին: Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացումը ենթադրում է մի քանի ուղղություններ: Նախ ռազմավարության մեջ խոսվում է Հայաստանի անհարժեշտ ջանքերի մասին Սփյուռքում ուծացմանը դիմակայելու նպատակով, ապա կարևորում է Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովումը ՀՀ և ԼՂՀ համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման հարցում[2]:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված Ազգային անվտանգության ռազմավարության համապատասխան բաժինը կարևորում է նաև Հայաստանի համար հայկական սփյուռքի տնտեսական և մշակութային նշանակությունը, քանզի Սփյուռքը խթանում է. «…մասնավորապես առևտուրը, զբոսաշրջությունը, ազգային մշակութային արժեքների պահպանումը, զարգացումն ու տարածումը»[3]:

2008թ. Հայաստանի նոր նախագահ է ընտրվում Սերժ Սարգսյանը: Վերջինիս դիրքոշումը Հայաստան-Սփյուռք հարբերությունների վերաբերյալ ևս տարբերվում էր իր նախորդներից: Այս դիրքորոշումներն արտահայտվեցին կոնկրետ քայլերով, երբ ստեղծվեցին նոր պետական ինստիտուտներ, որոնք պետք է համակարգեին և զարգացման նոր փուլի հասցնեին հայրենիքի կապերը Սփյուռքի հետ, ինչպես նաև նոր նախագահի կողմից առաջ քաշվեցին նոր գաղա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

փարներ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ոլորտում: Բնականաբար այս ամենը կրկին իրենց արտացոլումը գտան ՀՀ պետաիրավական փաստաթղթերում:

Նախ, 2008թ. հունիսին Արտաքին գործրի նախարարության կազմում գործող Սփյուռքի հետ կապերի գործակալությանը տրվեց պետական կոմիտեի կարգավիճակ[1], իսկ ամիսներ անց՝ նույն թվականի հոկտեմբերին, ՀՀ կառավարության կազմում սկսեց գործել նոր՝ Սփյուռքի նախարարությունը[2]: Նորաստեղծ նախարարությունը հանդիսանալու էր «...որպես պետական գործիք Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունն ամբողջական և արդյունավետ դարձնելու»[3] համար:

Նախարարության ստեղծումից հետո՝ 2009թ. օգոստոսին, ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվում է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համար մի կարևոր փաստաթուղթ՝ «Հայաստան-Սփյուռք գործակցության զարզացման հայեցակարգը»[4]: Այն սահմանում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները:

Պետական քաղաքականությունը Հայաստան-Սփյուռք գործակցության բնագավառում իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, դիվանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական, կազմակերպչական հարաբերությունների ամբողջություն, որն ուղղված

---

[1] ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք՝ http://www.mfa.am/hy/history/

[2] ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» (ընդունվել է 2008թ.-ի սեպտեմբերի 11-ին), տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78354

[3] Հակոբյան Հ., ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, Տարեգիրք, Երևան, 2012:

[4] Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, Հավելված ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 20-ի նիստի N34 արձանագրային որոշման, Երևան, 2010:

է հայապահպանության խնդիրների լուծմանը և ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող հարցերում Սփյուռքի համակարգված մասնակցությանը: Հայեցակարգը հռչակում էր Հայաստան-Սփյուռք «հայաստանակենտրոն» գործակցության զարգացման մասին: Հայեցակարգը բաղկացած է հինգ գլուխներից, որտեղ առաջին անգամ համակարգված ներկայացվում է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ընթացքը, գործակցության զարգացման քաղաքականությունն ու հիմնական գործիքները, ինչպես նաև գլխավոր ոլորտներն ու գնահատման համակարգը: Փաստաթղթում վերլուծվում է Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ու գործակցության ներկա վիճակն ու հնարավորությունները, անդրադարձ է կատարվում նաև գործակցության զարգացման դեռևս չիրացված հնարավորություններին և Սփյուռքի առջև ծառացած արդի մարտահրավերներին: Հայեցակարգում տեղ են գտել նաև մի շարք գաղափարներ, որոնք միտված են ապագայում Հայաստան-Սփյուռք հարաբերություններում նոր ինստիտուտների ձևավորմանը: Մասնավորապես նախանշվում էր, որ Հայաստան-Սփյուռք գործակցությանը համահայկական ընդգրկում հաղորդելու, համազգային, համամարդկային խնդիրները համատեղ քննարկելու և սկզբունքները որոշելու, պետական մարմինների գործունեությանը համահայկական բնույթ հաղորդելու և դրանց միջև Հայաստան-Սփյուռք գործակցությանը նվիրված համագործակցություն ապահովելու նպատակով ՀՀ նախագահի ղեկավարությամբ նախատեսվում է ստեղծել համահայկական կենտրոնական մարմին՝ Ազգային խորհուրդ[1]: Ազգային խորհուրդն ունենալու էր ազգային-հասարակական խորհրդատվական բնույթ, որը քննության առարկա էր դարձնելու համազգային առաջնահերթությունները, համահայկական հիմնահարցերը: ՀՀ և ԼՂՀ պետական կառույցները Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեին Ազգային խորհրդի երաշխավորությունները: Ազգային խորհրդը դառնալու էր

[1] Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, Հավելված ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 20-ի նիստի N34 արձանագրային որոշման, Երևան, 2010, էջ 27:

համահայկական ներկայացուցչական մարմին, որը, թեև ըստ այս հայեցակարգի ունենալու էր խորհրդատվական բնույթ, սակայն կարևոր դերակատարում էր ունենալու համահայկական բնույթի հարցերում կայացված որոշումներում: Ազգային խորհրդում ընդգրկվելու էին ՀՀ և ԼՂՀ պետական պաշտոնյաներ, Սփյուռքի կառույցների ներկայացուցիչներ, հայտնի անհատներ, հոգևորականներ: Ապագայում նման համահայկական կառույցի ստեղծումը լիովին համապատասխանում է Ս. Սարգսյանի Սփյուռքի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում ունեցած դիրքորոշումներին: Դատելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի Ազգային խորհրդի ստեղծման վերբերյալ դրույթներից՝ կարելի է ենթադրել, որ հենց այս կառույցին էր վերապահվելու Հայաստան-Սփյուռք միասնական քաղաքական օրակարգի մշակման հարցը, որը արդիական խնդիր է շարունակում մնալ նաև այսօր:

Ազգային խորհրդի գաղափարը գործնականում կյանքի կոչելու նպատակով՝ Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի ժամանակ նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը[1] հետագայում վերանվանել «Համահայկական խորհուրդ»[2]: Սակայն հայտնի է, որ մինչ օրս նման կառույց չի ստեղծվել: Սակայն աշխատանքներն ու համապատասխան խորհրդատվություններն այդ ուղղությամբ շարունակվում են: Կարծում ենք՝ այս նոր ձևաչափի ստեղծումը իր մեջ որոշակի բարդություններ է ներառում: Հատկապես խնդրահարույց է առաջարկվող կառույցում համահայկական ներկայացուցչականության ապահովումը, այդ կառույցի լիազորությունների շրջանակը, կայացրած որոշումների նշանակությունը համահայկական հարցերում և մի շարք այլ խնդիրներ, որոնք կարոտ են հստակեցման:

[1] ՀՀ նախագահի 2011թ. ապրիլի 23-ի ՆՀ-67-Ա հրամանագիրով՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ, ստեղծվում էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով:

[2] ՀՀ Նախագահ Սորժ Սարգսյանի խոսքը Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի փակման ժամանակ, տես՝ http://www.mindiaspora.am/am/Conferences/3418

Այլապես Հայաստան-Սփյուռք հարաբերություններում առաջարկվող այս նոր ձևաչափը համահայկական միասնականություն ապահովելու և ընդհանուր խնդիրները համատեղ լուծելու ջանքերի փոխարեն կարող է պառակտել և նոր հակասություններ ստեղծել առանց այն էլ բազում խնդիրներ ունեցող հայկական սփյուռքում և Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում:

Սփյուռքի նախարարություն ստեղծելուց հետո Սփյուռքի նկատմամբ ՀՀ քաղաքականության համակարգման և միասնական դարձնելու անհարաժեշտություն էր առաջացել: Ուստի, 2013թ. Ս. Սարգսյանի հրամանագրով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով Սփյուռքի նախարարությունը ճանաչվում էր որպես գլխադասային մարմին հայկական սփյուռքի հետ հարաբերությունների բնագավառներում[1]: Նույն այդ հրամանագրով Սփյուռքի նախարարությանն իրավունք էր վերապահվում ուղղակիորեն աշխատել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների հետ Հայաստան-Սփյուռք գործակցությանն առնչվող հարցերով, իսկ ՀՀ գործադիր իշխանության և տարածքային կառավարման մարմիններին հանձնարարվում էր Սփյուռքի նախարարության հետ նախապես քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցության ուղղությամբ իրականացվող ծրագրերը: Նշված հրամանագրում կարևոր էր նաև ևս մեկ կետ, որը նախատեսում էր Սփյուռքի ներկայացուցիչների ներգրավումը Սփյուռքին առնչվող միջգերատեսչական հանձնաժողովների, աշխատանքային խմբերի և այլ մարմինների կազմում: Սրանով կարևոր քայլ էր կատարվում Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: Փաստորեն՝ Սփյուռքի կառույցների ներկայացուցիչները հնարավորություն էին

[1] ՀՀ Նախագահի հրամանագիրը **Հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին, Տես՝** http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86167

ստանում անմիջական մասնակցություն ունենալ Սփյուռքի նկատմամբ ՀՀ քաղաքականության մշակման գործընթացին[1]:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ներկա միտումներն իրենց արտացոլումը գտան նաև Հայաստանի նոր սահմանադրության մեջ: 2015թ. դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանարաքվեի արդյունքում Հայաստանն ունեցավ նոր բարեփոխված սահմանադրություն, որով արմատապես փոփոխվում էր երկրի կառավարման համակարգը: Ինչպես հայտնի է, առաջարկվող բարեփոխումներով Հայաստանը դառնալու է խորհրդարանական հանրապետություն: 2015թ. դեկտեմբերին ընդունված նոր սահմանադրության մեջ ևս տեղ գտան դրույթներ Սփյուռքի վերաբերյալ: 19-րդ հոդվածը, որն անդրադառնում է Սփյուռքի հետ կապերին, բաղկացած է երկու կետերից, դրանք են՝

1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական

[1] 2016թ. նոյեմբերի 26-ին Սերժ Սարգսյանը ՀՀԿ 16-րդ համագումարի ժամանակ, խոսելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մասին, անդրադարձ կատարեց նաև Սփյուռքի հետ միասնական որոշումներ կայացնելու և համատեղ գործելու հարցին, մանսավորապես նշելով. «...մեկ էական լրացում պետք է կատարենք Հայաստան-Սփյուռք համատեղ աշխատանքում: Միասնականության և պատասխանատվության համատեղումն է դա: Մենք ունենք Հայաստանի զարգացմամբ մտահոգ սփյուռք... Ուրեմն եկել է նաև միասնաբար զարգացման քաղաքականություն իրականացնելու ժամանակը: Անկեղծ լինենք՝ մինչև այսօր դա ընդգծված իրականություն չի եղել: Քիչ բացառություններով՝ Հայաստանում մշակվել և իրականացվել է այս կամ այն ոլորտի քաղաքականությունը, ընթացքում սփյուռքի մեր հայրենակիցները հրավիրվել են մասնակցելու կամ օժանդակելու: Մենք փոխում ենք սլաքը, ասում ենք՝ այսուհետ մշակված ձևաչափերով միասին ենք աշխատելու, միասին ենք ամրագրելու նպատակադրումները, միասին ենք դեր ստանձնելու, միասին ենք իրականացնելու, և վերջում էլ միասին ենք ասելու ինչը ստացվեց և ինչը՝ ոչ»: Տե՛ս http://www.president.am/hy/press-release/item/2016/11/26/President-Serzh-Sargsyan-statement-at-RPA-16th-Convention/

պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը[1]:

ՀՀ նոր սահմանադրության Սփյուռքին վերաբերող դրույթը համեմատության մեջ դնելով սահմանադրության նախորդ տարբերակի հետ, պարզ է դառնում, որ նոր տարբերակում ավելացել են երկու կարևոր շեշտադրումներ. մեկը հայրենադարձության, մյուսը՝ հայապահպանությանն ուղղված քաղաքականության մասով: Սրանով ցույց է տրվում, որ Հայաստան պետությունը հավակնում է Սփյուռքի հարցերում էապես մեծացնել իր քաղաքական դերակատարությունը: Այլ հարց է, թե իրականում, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որքանով է հաջողվում այդ քաղաքականությունն իրագործել, կամ որքան է իրականացվող քաղաքականության արդյունավետության աստիճանը:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ Հայաստանի անկախացումից հետո Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ընթացքն իր ուղղակի արտացոլումն է գտել ՀՀ պետաիրավական հիմնական փաստաթղթերում: Վերլուծելով այդ փաստաթղթերը՝ պարզ է դառնում, թե տվյալ շրջափուլում հայաստանյան իշխող քաղաքական ուժերն ինչպես են պատկերացրել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը, որ ուղղություններն են համարվել առաջնային և որ հատկապես կարևոր է, ինչ դերակատարում է վերապահվել Սփյուռքին ՀՀ ներքին և արտաքին քաղաքական կյանքում: Միայն ՀՀ սահմանադրության և նրանում կատարված հետագա բարեփոխումների և մի շարք այլ կարևոր պետաիրավական ակտերի օրինակով, ինչպիսիք են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը և այլն, փաստվում է այն հանգամանքը, որ տարիների ընթացքում պաշտոնական Երևանն ավելի ու ավելի է կարևորել Սփյուռքի դերակատարությունը Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում և փորձել է մի շարք իրավական

[1]ՀՀ Սահմանադրություն (2015), Գլուխ 1՝ Սահմանադրական կարգի հիմունքները, հոդված 11, տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510

ակտերի և համագործակցության ձևաչափերի միջոցով խորացնել Հայաստան-Սփյուռք գործակցությունն ու Սփյուռքի ներուժի հա-մախմբման ջանքերը:

SUMMARY

THE REFLECTION OF THE RELATIONSHIPS OF ARMENIA-DIASPORA IN THE MAIN DOCUMENTS OF LEGAL ISSUES OF THE REPUBLIC OF ARMENIA

HOVHANNISYAN EDGAR

After the independence of Armenia in 1991 new opportunities were created for the development of the relationships with the Armenian Diaspora. The relations of Armenia-Diaspora have been directly reflected in the main documents of the legal issues of the Republic of Armenia.

Analyzing these documents, it becomes clear the approaches of Armenian ruling political powers to the main directions of the development of cooperation of Armenia- Diaspora and what is especially important, which kind of role was given to the Diaspora in the scopes of internal and external political life of Armenia.

By the example of the Constitution of the RA and other important documents of legal issue, for instance, National Security Strategy of Armenia, The Armenia-Diaspora Cooperation Concept and etc., have proved that in the course of years official Yerevan have highlighted more and more the role of Diaspora in the internal and external political life of Armenia. In this article, the course of development of relationships of Armenia and Diaspora in the framework of above-mentioned documents are discussed.

Keywords: *Armenian Diaspora, Armenia-Diaspora relations, Constitution of RA, National Security Strategy of Armenia, concept of Armenia-Diaspora cooperation.*

РЕЗЮМЕ

ОТРАЖЕНИЕ ОТНОШЕНИЙ АРМЕНИЯ-ДИАСПОРА В ОСНОВНЫХ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВЫХ ДОКУМЕНТАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ОГАННИСЯН ЭДГАР

В 1991 году после приобретения Арменией политической хезавицимости были созданы новые возможности для развития отношений с Армянской Диаспорой (Спюрком). Ход отношений Армения-Диаспора нашел

непосредственное отражение в основных государственно-правовых документах РА. Анализ этих документов проясняет подходы армянских правящих политических сил к направлениям развития сотрудничества между Арменией и Диаспорой и, что особенно важно, ту роль, которая отводится Спюрку во внутренней и внешней жизни РА. На протяжении многих лет официальный Ереван придавал все большую важность роли Спюрка во внутренней и внешней политической жизни Армении. И это положение наьодит подтверждение и в Конституции РА, и в других важных государственно-правовых документах, таких как Стратегия национальной безопасности РА, Концепция развития сотрудничества между Арменией и Спюрком и др. В данной статье обсуждается процесс развития отношений Армения-Спюрк в контексте указанных документов.

Ключевые слова: *Армянская диаспора, отношения Армения-Диаспора, Конституция РА, Стратегия национальной безопасности Армении, Концепция развития сотрудничества между Арменией и Спюрком.*

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Կիլիկիա, Հայկական լեգեոն, Ադանա, Մուդրոսի զինադադար:*

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան բաժանված էր Օսմանյան կայսրության Ադանայի ու Հալեպի վիլայեթների մեջ: Չնայած երկրամասը զերծ մնաց ռազմական գործողությունների թատերաբեմ դառնալուց, սակայն պատերազմի ավարտական փուլում հայտնվեց տնտեսապես բավական ծանր վիճակում: Դա պայմանավորված էր աշխարհամարտի արդյունքում Օսմանյան կայսրության ընդհանուր տնտեսական անկումով, ինչպես նաև հայ բնակչության զանգվածային տեղահանությամբ, որոնց ձեռքում էր երկրամասի առևտրի, արհեստների, գյուղատնտեսության առյուծի բաժինը:

Պատերազմի տարիներին Անտանտի երկրները բազմիցս քննարկել էին Կիլիկիայում ափիանում կատարելու տարբեր նախա-

գծեր, սակայն դրանք այդպես էլ չէին գործադրվել: Միաժամանակ, Կիլիկիայի ափերին բավական մոտ գտնվող Կիպրոսում 1916 թ. վերջին Ֆրանսիան կազմավորել էր Արևելյան (Հայկական) լեգեոնը, որը կազմված էր հիմնականում հայ կամավորներից: Այդ զորախմբի գլխավոր նպատակն էր Կիլիկիայի ազատագրումը, և այդ երկրամասում հայկական ինքնավարության ստեղծումը՝ Ֆրանսիայի հովանու ներքո:

Սակայն բրիտանա-ֆրանսիական զորքերը 1918 թ. ռազմական գլխավոր գործողությունները թուրքերի դեմ ծավալեցին Պաղեստինում: Մեգիդոյի ճակատամարտում (1918 թ. սեպտեմբերի 19-25) գեներալ Էդմունդ Ալենբիի գլխավորած դաշնակցային զորքերը գլխովին ջախջախեցին Պաղեստինի թուրքական երեք բանակները: Այդ ճակատամարտին՝ Ռաֆաթ-Արարայի բարձունքների մոտ, մասնակցեցին նաև Արևելյան լեգեոնի հայկական երկու գումարտակները:

Շարունակելով առաջխաղացումը՝ դաշնակցային զորքերը շարժվեցին դեպի Հորդանան, Լիբանան և Սիրիա: Հոկտեմբերի 1-ին բրիտանական զորքերը մուտք գործեցին Դամասկոս[1], հոկտեմբերի 6-ին հայկական 3-րդ գումարտակն ազատագրեց Բեյրութը[2], իսկ հոկտեմբերի 26-ին բրիտանական և արաբական զորքերը գրավեցին Հալեպը[3]:

Փաստորեն՝ ամբողջ Լիբանանը, Սիրիան ազատագրված էին և դաշնակիցների հաջորդ թիրախը Կիլիկիան էր:

Դեռևս հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն բրիտանական իշխանություններից պահանջել էր, որպեսզի Ալեքսանդրետի գրավումը կատարվեր միայն ֆրանսիական և հայկական ստորաբաժանումների միջոցով, քանի որ այդ նավահանգիստն առանձնահատուկ կարևորություն ուներ Ֆրանսիայի համար[4]: Հոկտեմբերի 26-ին սպասվում էր, որ ֆրանսիական նավատորմը ափիհանում

[1] ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 1:
[2] Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, 1941, p. 776-777.
[3] Massey W. T., Allenby's final triumph, London, 1920, p. 307-309.
[4] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. Բ, Երևան, 2005, էջ 402:

կկատարեր Ալեքսանդրետում, սակայն ֆրանսիական նավերը չկարողացան մտնել կիլիկիյան այդ նավահանգիստ, քանի որ այն ականապատված և բավական լավ պաշտպանված էր[1]:

Այդուհանդերձ, հայկական այդ երկրամասի գրավումը տեղի ունեցավ գրեթե առանց արյուն թափելու:

Թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել: Հոկտեմբերի 27-ին սկսվեցին ռազմական գործողությունները դադարեցնելու շուրջ բանակցությունները, որոնք ընթանում էին Լեմնոս կղզու Մուդրոսի նավահանգստում՝ բրիտանական «Ագամեմնոն» հածանավի վրա: Բրիտանական կողմից այն վարում էր ծովակալ Արթուր Քալթորփը, թուրքականից՝ ծովային նախարար Հուսեին Ռաուֆ բեյը: Բանակցություններին մասնակցելու ցանկություն հայտնեց նաև ֆրանսիական փոխծովակալ Շառլ Օմետը, սակայն և՛ բրիտանական, և՛ թուրքական կողմերը մերժեցին[2]:

Բանն այն է, որ պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրվել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մերձավոր Արևելքում: Չնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայնագրերին ու պայմանավորվածություններին՝ բրիտանացիները փորձում էին Ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվելու Մերձավոր Արևելքում, որտեղ Հայկական լեգեոնից բացի, ֆրանսիական ուժեր գրեթե չկային:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրված զինադադարով թուրքերն անձնատվության (կապիտուլիացիայի) ենթարկվեցին: Զինադադարի երկու հոդվածներն անմիջականորեն առնչվում էին Կիլիկիային: Այսպես, 10-րդ հոդվածով նախատեսվում էր Տավրոսի թունելների համակարգի գրավումը դաշնակիցների կողմից, իսկ 16-րդով՝ թուրքական բոլոր զորքերի դուրսբերումը Կիլիկիայից[3]: Այսպիսով՝ Մուդրոսի զինադադարը բարենպաստ պայմաններ էր ստեղծում

[1] Massey W., Allenby's final triumph, p. 302-303.
[2] Fromkin D., A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009, pp. 360–373.
[3] Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943, pp. 85-87.

առանց դժվարության Կիլիկիան թուրքական զորքերից ազատագրելու համար:

1918 թ. նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր Հայկական լեգեոնի պաշտպանության ներքո վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել Հայոց ցեղասպանությունից փրկված շուրջ 150-200.000 հայեր:

Նոյեմբերի 5-ին Ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախմբի հրամանատար Ֆիլիպ դը Պիեպապին, որպեսզի Տավրոսը ռազմակալվի Արևելյան լեգեոնի ուժերով[1]: Նոյեմբերի 10-ին ֆրանսիական նավատորմը գրավեց Ալեքսանդրետը[2]:

Հայտնի է, որ 1916 թ. ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով Սիրիան, Լիբանանը և Կիլիկիան անցնելու էին Ֆրանսիային: Ֆրանսիական կողմը կասկածանքով էր վերաբերում դաշնակից բրիտանացիներին և չէր ցանկանում, որ Կիլիկիան գրավվի նրանց զորքերով: Դա պայմանավորված էր Սիրիայում բրիտանացիների գործողություններով, երբ շատ դեպքերում ոտնահարվում էին ֆրանսիական շահերը:

Նոյեմբերի 15-ին Արևելքում ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Համելինը ռազմական նախարարությանը տեղեկացրեց, որ պատրաստվում է Հայկական լեգեոնը տեղափոխել Կիլիկիա՝ Ալեքսանդրետի վրայով Թոփրակ Կալե, Ադանա և Տավրոսի լեռներ[3]:

Նոյեմբերի 15-ին հայկական 1-ին գումարտակի երկու վաշտերը նավով Բեյրութից ուղարկվեցին Ալեքսանդրետ: Հաջորդ օրը նրանք

[1] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. Բ, էջ 422-423:
[2] Քիւրքճեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 5:
[3] Պօյաճեան Տ., Հայկական լէգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 178:

մտան քաղաք: 1-ին գումարտակի մնացած լեգեոնականները ռազմանավով Ալեքսանդրետ ժամանեցին հաջորդ շաբաթ: Քաղաքի բոլոր ռազմավարական կետերի պահպանությունը, որը գտնվում էր նոյեմբերի 14-ին Ալեքսանդրետ ժամանած ալժիրյան զորախմբի վերահսկողության տակ, հանձնվեց Հայկական լեգեոնին:

Սակայն Կիլիկիայի զգալի մասի ազատագրումը թուրքերից իրականացվեց դեկտեմբերին:

1918 թ. նոյեմբերի 28-ին դաշնակցային ուժերի գլխավոր շտաբը թուրքական կողմից պահանջեց իրենց հանձնել Կիլիկիայի այն բոլոր տարածքները, որոնք իրենց համար ռազմական արժեք ունեին և իրենց անվտանգությունն էին երաշխավորում: Դաշնակիցները պետք է գրավեին Ադանայի նահանգն ըստ հետևյալ ժամանակացույցի՝

1. դեկտեմբերի 13-ին Ջիհան գետից արևելք գտնվող տարածքները,

2. դեկտեմբերի 17-ին Սիհուն գետից արևելք և Ադանա-Տարսոն գծից հարավ ընկած հողամասերը,

3. դեկտեմբերի 21-ին արևմուտքում մինչև Պոզանտ ընկած տարածքները:

4. Դեկտեմբերի 21-ից հետո վերոնշյալ սահմաններից ներս գտնվող բոլոր թուրք զինվորները և սպաները գերվելու էին, իսկ զենքը և զինամթերքը բռնագրավվելու էր[1]:

Դեկտեմբերի 7-ին Հայկական լեգեոնի զինվորների վերահսկողության տակ անցավ Անտիոքը[2], դեկտեմբերի 10-ին լեգեոնականները մեկնեցին Պայաս, իսկ հաջորդ երեկո հասան Դյորթ Յոլ: Լեգեոնի 1-ին գումարտակը դեկտեմբերի 18-ին ազատագրեց Թոփրակ Կալեն[3], իսկ դեկտեմբերի 23-ին՝ Օսմանիեն և Իսլահիեն[4]:

---

[1] Bremond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921, p. 6. Պրեմօն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, էջ 10-11:

[2] Գուշագճեան Մ., Մուսա լերան հայկական գաղթօճախը 1875-1939, Պէյրութ, 1988, էջ 147:

[3] Մուրատեան Գ., Հայրենիքին ուխտաւորները վրեժին ճամբուն վրայ, Կ.Պոլիս, 1920, էջ 82:

[4] http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence

Թուրքական բանակը հեռանալուց առաջ հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք էր բաժանել մահմեդական բնակչությանը, որը, որոշ դեպքերում, փորձում էր զինված դիմադրություն ցույց տալ: Նոյեմբերի 30-ին Ալեքսանդրետում, իսկ դեկտեմբերի 12-ին Բեյլանում Հայկական լեգեոնի զինվորները բախում ունեցան թուրքերի հետ, սակայն արագորեն ճնշեցին նրանց զինված ընդվզումները[1]:

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում թուրքերի զինված ելույթները հազվադեպ էին և միայն հետագայում դրանք ստացան մեծ ծավալներ:

Դեկտեմբերի 16-ին հայկական 2-րդ և 3-րդ գումարտակները Բեյրութից բրիտանական «Կամպետտա» և «Եկատերինոսլավ» նավերով մեկնեցին Մերսին: Առաջինն անմիջապես Մերսին էր ուղևորվելու, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրետ, ապա՝ Մերսին[2]:

Դեկտեմբերի 18-ի առավոտյան հայ զինվորները ափ դուրս եկան Մերսինում:

Շուտով բրիտանական «Թակուս» նավով Բեյրութից Ալեքսանդրետ տեղափոխվեց 4-րդ գումարտակը[3], իսկ 1-ին գումարտակը շարժվեց ավելի հյուսիս[4]:

3-րդ գումարտակի 7-րդ վաշտը և գնդացրորդների վաշտը մնացին Մերսինում, իսկ մյուս մասը գնացքով դեկտեմբերի 20-ին մեկնեց Տարսոն և Ադանա[5]: Նույն օրը Կիլիկիայի այդ երկու գլխավոր կենտրոններն անցան հայկական զինուժի հսկողության տա: Դեկտեմբերի 25-ին Ադանա ժամանեց Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Լուի Ռոմիոն[6]:

---

[1] Պօյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 191:
[2] Նույն տեղում, էջ 178:
[3] Նույն տեղում:
[4] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 192:
[5] Պարթեւեան Ս., Արարա: Հայկական լէգէոնը, Իզմիր, 1919, էջ 110:
[6] Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 10:

Ըստ էության՝ Կիլիկիայի ազատագրումը կատարվեց հիմնականում Հայկական լեգեոնի ուժերով: 1-ին գումարտակի վերահսկողության տակ հայտնվեց Կիլիկիայի արևելքը՝ Բեյլանը, Պայասը, Դյորթ Յոլը, Անտիոքը, Թոփրակ Կալեն, Օսմանիեն, Բաղչեն, Իսլահիեն: 4-րդ գումարտակը հաստատվեց Ալեքսանդրետում և շրջակայքում[1]:

Այսպիսով՝ Հալեպի նահանգի կազմում գտնվող կիլիկյան տարածքների վերահսկողությունը դրվեց Հայկական լեգեոնի 1-ին և 4-րդ գումարտակների վրա: Ադանայի նահանգի վերահսկողությունը դրվեց լեգեոնի 2-րդ և 3-րդ գումարտակների վրա: 2-րդ գումարտակն ազատագրեց կենտրոնական շրջանները՝ 4-րդ վաշտը մնաց Ադանայում, իսկ 5-րդ և 6-րդ վաշտերը զբաղեցրին Սիհուն և Ջիհան գետերի միջագետքում գտնվող կարևոր ռազմավարական կետերը: 3-րդ գումարտակը զբաղեցրեց Կիլիկիայի արևմտյան մասը՝ Մերսինը, Տարսոնը, Ենիճեն, Պոզանտը[2]:

Կիլիկիայի հյուսիս-արևելյան տարածքները՝ Մարաշը, Այնթապը, Քիլիսը, Բիրեջիկը, Ուրֆան գրավվեցին բրիտանական զորքերի կողմից: Դեկտեմբերի 18-ին մի քանի սպաների ու զինվորների հետ Այնթապ ժամանեց բրիտանացի դիվանագետ և պետական գործիչ Մարկ Սայքսը, իսկ մեկ շաբաթից քաղաք մտան հնդկական զորամասեր[3]: 1919 թ. փետրվարի 2-ին բրիտանական զորքերն ազատագրեցին Մարաշը, փետրվարի 27-ին՝ Բիրեջիկը, մարտի 24-ին՝ Ուրֆան: 1919 թ. հոկտեմբերի 29-ին ֆրանսիական և Հայկական լեգեոնի զորամասերը բրիտանացիներին փոխարինեցին Մարաշում, հոկտեմբերի 30-ին՝ Ուրֆայում[4], իսկ նոյեմբերի 11-ին Հայկական լեգեոնի վերահսկողությանը հանձնվեց Այնթապը[5]:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Կիլիկիայի ազատագրումն իրականացվեց գլխավորապես հայկական զինուժի միջոցով:

---

[1] Պօյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 193:
[2] Նույն տեղում, էջ 199-200:
[3] Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Ա, Լոս Անճէլըս, 1953, էջ 1071-1072:
[4] http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence
[5] ՀԱԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 821, թ. 3:

Որոշ տարածքների գրավմանը մասնակցել են նաև ֆրանսիական զորախմբի կազմում գտնվող ալժիրյան զորամասերը: Միայն Ուրֆան, Այնթապը, Բիրեջիկը և Մարաշը ազատագրվեցին բրիտանական զորքերի կողմից: Այդ տարածքների վերահսկողությունը Հայկական լեգեոնին փոխանցվեց 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Փաստորեն՝ Հայկական լեգեոնը, որը կազմավորվել էր Կիլիկիան ազատագրելու նպատակով, կարողացավ հաջողությամբ իրականացնել իր առջև դրված խնդիրը: Նրա պաշտպանության ներքո հայ տարագիրները կարողացան վերադառնալ իր կողմից ազատագրած հայկական բնակավայրերը:

SUMMARY

ON THE ISSUE OF LIBERATION OF CILICIA BY ARMENIAN LEGION AND ALLIED TROOPS

POGHOSYAN SAMVEL

At the end of 1918 Cilicia was liberated from Turkish domination and passed under French control. The liberation of this region carried out mainly by the efforts of Armenian Legion. The latter was established in Cyprus and its main goal was the liberation of Cilicia. In November-December of 1918 whole Adana province and the northwestern parts of province of Aleppo passed under the control of Armenian Legion. Several regions in eastern Cilicia was liberated by British troops, who these territories handed over the control of Armenian Legion in late 1919.

Keywords: Cilicia, Armenian Legion, Adana, Mudros armistice.

РЕЗЮМЕ

К ВОПРОСУ ОСВОБОЖДЕНИЯ КИЛИКИИ СИЛАМИ АРМЯНСКОГО ЛЕГИОНА И СОЮЗНИЧЕСКИХ ВОЙСК

ПОГОСЯН САМВЕЛ

В конце 1918 года Киликия была освобождена от турецкого господства и проходила под контроль Франции. Освобождение этого региона осуществлялся в основном силами Армянского легиона. Последний был создан на Кипре, и его главной целью было освобождение Киликии. В ноябре-декабре 1918 года вся провинция Аданы и северо-западные районы провинции Алеппо прошли под контроль Армянского легиона. Несколько регионов в восточной

части Киликии были освобождени английскими войсками, которые эти территории передали под контроль Армянского легиона в конце 1919 года.

Ключевые слова: Киликия, Армянский легион, Адана, Мудросское перемирие.

4. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

Բանալի բառեր՝ *Աշխարհամարտ, Սարդարապատ, հայկական պետականություն, Առաջին հանրապետություն, Թուրքիա, Ռուսաստան, դաշնակիցներ, բոլշևիզմ, խորհրդայնացում:*

Առաջին աշխարհամարտը հայ ժողովրդի համար ստեղծեց ամենածայրահեղ իրավիճակը ֆիզիկական գոյության ապահովման տեսանկյունից: Հոկտեմբերյան հեղաշրջումը և «համաշխարհային հեղափոխության» բոլշևիկյան ծրագրերը հնարավորություն ընձեռեցին Առաջին աշխարհամարտում պարտություն կրած և հապճեպ հանրապետական դիմակ հագած Թուրքիային՝ մարսել արևմտահայության նախճիրը, կլանել ոչ միայն ողջ Արևմտահայաստանը, այլև ռուսական Հայաստանի՝ Արևելահայաստանի զգալի մասը:

Քաղաքական այդ դժվարագույն պայմաններում էլ հայ ժողովրդի մի հատվածը կարողացավ ուշքի գալ համաշխարհային պատերազմի ահավոր հետևանքներից և գոյատևել՝ ստեղծել իր անկախ պետականությունը Հայաստանի արևելյան մի բեկորի վրա: Հայաստանի 1918-1920 թթ. հանրապետության ստեղծումն էլ հենց հանդիսացավ նրա կենսունակության միակ զորեղ արտահայտիչը, անկախ միասնական պետություն ձեռք բերելու գլխավոր պատվանդանը: Հայաստանի Հանրապետությունը ծնվեց Սարդարապատի Հայրենական հերոսամարտի բոցերում: Հայ ժողովուրդը կռվեց ու հաղթեց անարգ թշնամուն, որը, օգտվելով մեծ տերությունների և միջազգային հանրության թողտվությունից ու շահամետ քաղաքականությունից, նպատակադրվել էր իրագործել նաև հայ ժողովր-

դի արևելահայ հատվածի ոչնչացումը: Սարդարապատի դյուցազնամարտը և 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության երկունքը հայ ժողովրդի ազգային համախմբվածության ու կազմակերպվածության դաս էր, պատգամ: «Սարդարապատը Հայոց Հայրենական պատերազմը կարելի է համարել: Սարդարապատը, Բաշ-Ապարանը, Ղարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, իր անկախության համար մինչև վերջ միահամուռ՝ ազգովին պայքար մղելու պատրաստակամության և վճռականության վկաներ եղան: Հայ ժողովրդի Մայիսյան այդ հերոսամարտերը վիժեցրին Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և այնտեղի հայերին ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերը: Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման նախադրյալներ ընձեռեց: … Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա կյանքում, բազմադարյան պատմության մեջ»[1], - նկատել է Հ. Ավետիսյանը»[2]:

Սարդարապատյան ճակատամարտաշարքի պատմական նշանակությունը լավ է ըմբռնել և իրատեսորեն գնահատել անգլիացի կովկասագետ Ք. Ուոքըրը «Հայաստան: Ազգի վերապրումը» հայտնի գրքում. «Եթե հայերը պարտություն կրեին Սարդարապատում, Հայաստան բառը կարող էր նշանակել սոսկ մի հին աշխարհագրական տերմին, ինչպես, օրինակ՝ Կապադովկիան»[3]: Իրադարձությունների զարգացման երկաթյա տրամաբանությամբ քաոսի, անկայունության և անորոշության մեջ խճճված երկիրն ու ժողովուրդը, գերմարդկային ճիգերով հաղթահարելով իր երեք հազար տարուց ավելի պատմության ընթացքում չտեսնված ճգնաժամը, կանգնեց փաստի՝ անկախության, ինքնուրույն ազգային պետականության վերստեղծման գերագույն հիմնախնդրի առաջ: Շուրջ 9 դարերի տևական ընդմիջումից հետո, հաղթահարելով դարերի ստրկացնող լուծը,

[1] Տե՛ս Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին. Ուսումնական ձեռնարկ, Եր., 2003, էջ 221-222:
[2] Ավետիսյան Հր., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 236, 256:
[3] Տե՛ս Կարապետյան Մ. Ս., նշվ. աշխ., էջ 210:

օտար նվաճողների թողած ծանր ժառանգությունը, պատմական Հայաստանի տարածքի մի փոքր բեկորի՝ մեկ տասներորդի վրա ստեղծվեց մի անկախ հանրապետություն, որը կոչված էր դառնալու ողջ հայության դարավոր իղձերի իրականացման գլխավոր պատվարը, բարձրացող ժողովրդի հենասյունը: Սարդարապատյան ճակատամարտաշարքի բոցերում ծնված ՄԱՅԻՍԻ 28-ը, Կ. Սասունու բնութագրմամբ, ոչ միայն Հայոց պատմության միֆն է, այլև «գալիք օրերու դրոշը», «Հայ Ազգի հարության պատարագը, որը կը մատուցվի ցեղին հավիտենական կենսունակությունը հոչակելու համար»[1]: Դա հայ գաղափարաբանության հաղթանակն էր, հայոց պատմության շրջադարձը դեպի իր դարավոր իդեալը և նպատակադրումը:

Ուշագրավ է, որ 1919 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության նիստում ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը, անդրադառնալով հայոց պետականության զարգացման դարավոր փորձին, եզրահանգում է. «Հայ ժողովուրդը, որը միշտ հիացրել է իր պատմությամբ, դարերով կռվել է իր քաղաքական ազատության համար, և երբ այսօր Հայաստանի անկախությունը փաստ է, ժողովուրդը յուր ամբողջությամբ չի ընդունում..., որ այժմյան Հայաստանի Հանրապետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ շարունակությունը նվիրական պատմական Հայաստանի և որ տարբերվում է հենց միայն նրանով, որ այժմ... հաստատվել են հանրապետական կարգեր»[2]:

Սակայն աշխարհաքաղաքական իրավիճակի սրընթաց փոփոխությունները և Հայաստանի նկատմամբ Անտանտյան դաշնակիցների վերաբերմունքի էական վերանայումը հանգեցրին ՀՀ ճակատագրական մեկուսացմանը, որի ավարտը հանդիսացան 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի աղետալի արդյունքները և Ալեքսանդրապոլի ծանրագույն պայմանագիրը, որի արդյունքում բոլշևիկները, Երևանի համաձայնագրից հետո առաջացած նոր իրավիճակում, ստացան ծանր ժառանգություն՝ շուրջ 10 հազար քառ.

[1] Սասունի Կ., Յուշեր եւ վկայութիւններ, Բէյրութ, 1972, էջ 276:
[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ֆ. 201, ց.1, գ. 251, թ. 377:

կմ. տարածք՝ մոտ 1 միլիոն բնակչությամբ, որի մի զգալի մասը սովյալ գաղթականներ էին:

Ակնհայտ է դառնում, որ Առաջին հանրապետության կուսակցական-քաղաքական և ռազմական շրջանները չըմբռնեցին կատարվող փոփոխությունների խորքային իմաստները, չընկալեցին ու հաշվի չառան, որ Մեծ Բրիտանիայի մեկնումից հետո, հետևաբար, հենց Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացող Թուրքիան էին, որ Կովկասյան այդ «դատարկությունը» պետք է լցնեին: Ռազմաքաղաքական իրավիճակի թելադրանքով Հայաստանը չկարողացավ և չէր էլ կարող գործնականում համաձայնության գալ այդ պետություններից որևիցե մեկի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր ՀՀ խաբուսիկ հույսը՝ անտանտյան Դաշնակիցների և ԱՄՆ-ի օժանդակության հետ կապված, դաշնակիցներ, որոնք, ինչպես դիպուկ նկատում են անգլիացի կովկասագետներ Դ. Մ. Լանգը և Ք. Ջ. Ուոքըրը, հայ ժողովրդի քաղաքական առաջնորդներին հմտորեն կերակրում էին «Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով»[1]:

Կար իրավիճակի անորոշության զգացողություն: ՀՀ հետախուզական ծառայության մի շարք ներկայացուցիչներ, բարձրագույն սպայական-հրամանատարական և կուսակցական-քաղաքական որոշ շրջաններ ավելի զգուշավոր էին այս կամ այն երկրին նախապատվություն տալու հարցում, նույնիսկ աղոտ կասկածներ կային, թե ով է իրականում ուժեղ՝ բոլշևիկյան Ռուսաստա՞նը, Կոլչա՞կը, թե՞ Դենիկինը, անգլիացիները, ամերիկացիները թե՞ այլ ուժեր: Այդ էր հենց զգուշացնում գեներալ Գ. Ղորղանյանը 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի զեկույցում. «Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլիամետ կամ ռուսամետ քաղաքականություն: Մենք պատերազմի հենց սկզբից մեր ճակատագիրը կապել

[1] Տե՛ս Լանգ Դ. Մ., Ուոքըր Քր. Ջ., Հայերը (Հայ ժողովրդի պատմություն), Եր., 1992, էջ 31:

ենք Համաձայնության երկրների հետ և դրանից չենք հրաժարվել մինչև վերջին օրը: Այժմ մենք բոլորին պիտի հասկացնենք, որ մեր հարցերի լուծումը սպասում ենք ոչ թե Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից կամ Ամերիկայից առանձին-առանձին, այլ Համաձայնության երկրներից: Մեր ճակատագիրը պետք է որոշի Դաշնակիցների խորհրդաժողովը Փարիզում: Իսկ մինչ այդ որոշումը սխալ կլիներ մեր բարեկեցությունը կապել Համաձայնության անդամ այս կամ այն երկրի հետ, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ երկրի դիրքորոշումը ապագա խորհրդաժողովում: Հնարավոր է, որ մենք ժամանակավոր հաջողություն ունենանք, սակայն, հնարավոր է նաև, շատ բան կորցնենք»[1]:

Այդ հույսերը տարան ՀՀ ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: Երբեք էլ էական օգնություն դաշնակիցների կողմից չեղավ, միայն եղան սնամեջ հայտարարություններ: Իսկ հարևանների հետ այդպես էլ, տարբեր պատճառներով, հնարավոր չեղավ լեզու գտնել: Եվ սակայն Դենիկինի բանակի բոլշևիկներից պարտություն կրելուց հետո էր միայն՝ 1920 թ. հունվարին, որ Դաշնակիցները Անդրկովկասյան հանրապետություններին իբրև անկախ պետություններ ճանաչեցին՝ նպատակադրելով Կովկասը և Պարսկաստանը ետ պահել բոլշևիկյան ազդեցությունից: Այս հանգամանքը իրատեսորեն է գնահատում Ռ. Հովհաննիսյանը, նշելով, որ արևմտյան կողմնորոշումը ռիսկ էր, քանզի այն Հայաստանը ետ էր շպրտում Ռուսաստանին մեր նկատմամբ «կախվածությունից» դեպի «ավելի հուսալի, ավելի հզոր» երկրները, որոնք այդքան շատ բան էին «ներդրել» հայկական ողբերգության մեջ[2]:

---

[1] ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35-36:

[2] Hovannisian R. G., The republic of Armenia, From London to Sevres, February- August, 1920.- Barkeley, Los Angeles, London, 1996, vol. III, p.1: Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելումին, Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին ու լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը գծել էր թղթի վրա, երկիրը ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը անհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի գործակցությունը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու: Հովհաննիսեան Ռ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մեջ // «Դրօշակ», թիւ 19 (1402), 13 յունվարի, 1993, էջ 32-33: Թեկուզև քիչ թե շատ ուշացումով, հենց այդ

Քաղաքական-ռազմական կառավարող շրջանները չէին ցանկանում այդ տարիներին, և հատկապես 1920 թ. սահմանագծում նկատել այն, ինչն արդեն տեսանելի էր: Վերջիններս կպչուն հույսեր էին փայփայում, որ հանկարծ Դաշնակիցները կկերպարանափոխվեն և հանուն Անտանտի գծով իրենց կրտսեր եղբայրակցի և պատերազմում ծանր կորուստներ ունեցած Հայաստանի ու հայ ժողովրդի սրընթաց և կտրուկ, արդյունավետ քայլեր կձեռնարկեն և հողմացրիվ կանեն Կարմիր-բոլշևիկյան «ցնցոտիավոր» բանակներին, որոնք սակայն իրենք ջարդուփշուր արեցին թե՛ Կոլչակի, թե՛ Դենիկինի, թե՛ Վրանգելի, թե՛ Անգլիայի կազմակերպած, այսպես կոչված «14 երկրների» և թե՛ առհասարակ մնացյալ բոլոր սպիտակ բանակները: Դա դիպուկ է նկատել Տ. Դեվոյանցը. «Բայց Տրոցկիներն եւ Չիչերինները չկան այլեւս: Նրանց փոխարինել է Սովետական մի նոր դիւանագիտութիւն, որ այժմ զբաղուած է իր նախորդների զիջած հողամասերը հաւաքելով եւ կցելով Խորհրդային Ռուսաստանին: Այսպէս նա վարուեց Լադվիայի, Լիտուանիայի, Էսդոնիայի, Ֆինլանդիայի, Բեսարաբիայի ու Բուկովինայի հետ: Այդպէս պիտի վարուի նաեւ իր կորցրած միւս հողերի հետ»[1]:

Իրավիճակի այդ սրընթաց գահավիժումները նկատել են նաև Կովկասի գծով անգլիացի հետազոտողներ Դ. Մ. Լանգը և Ք. Ջ. Ուոքըրը. «1920 թ. ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ

ժամանակ քաղաքական որոշ գործիչների մոտ արդեն կար ոչ շատ հաստատուն, սակայն աստիճանաբար որոշակիացող համոզմունք բոլշևիզմի հնարավոր հաստատունության՝ համաշխարհային նոր ռեալ ուժ դառնալու տեսանկյունից: Դա նրբորեն նկատել է Ալ. Խատիսյանը ՀՀ պառլամենտի արդեն 1920 թ. ապրիլի 30-ի նիստում (№ 86) ունեցած ելույթում. «Այնուամենայնիվ, չպետք է անտեսել, որ բոլշևիկներն են հանդիսանում Ռուսաստանի իրական ուժը, այդ փաստը մատնանշվում է մասնավորապես Եվրոպայում, ուր նկատվում է դեպի Ռուսաստան ունեցած քաղաքականության բեկումն. ֆրանսիական պառլամենտը հանձնարարել է կառավարությանը՝ բանակցություններ վարել Ռուսաստանի հետ: Նույն տեսակետին է Իտալիան, Ամերիկայի դիրքը հայտնի է ձեզ, այն ինչ հնարավոր չէր հունվարին, այն հնարավոր է դառնում, և մեծ տերությունները մտածում են կամ գուցե սկսել են բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական հարցերի վերաբերյալ».- «Յառաջ», 15 մայիսի, 1920, № 91:

[1] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, № 4 (249), յուլիս-օգոստոս, էջ 82:

փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների՝ Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»[1]:

Այսպիսով՝ Հայաստանի այսպես կոչված «սովետիզացիան» այլընտրանք չուներ, և դա աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակի ակնհայտ իրողությունն էր և տրամաբանական արդյունքը: Ընդհանուր առմամբ դա բավականին հստակ է զգացել Ալ. Խատիսյանը. «Բոլշեւիկները եւ անոնց ետեւէն նոյնիսկ ռամկավարները կ'սեն, թէ Դաշնակցականները հասցուցին Հայաստանը ողբերգական վիճակի 1920 թ. վերջը, իսկ բոլշեւիկները եկան եւ փրկեցին Հայաստանը Թուրքերէն: Բացարձակապէս սուտ է այս: Եւ եկած եմ այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխավոր զինակիցները բոլշեւիկներն էին, որ ոժ եւ հնարավորություն տուին Թուրքերու հարձակելու Հայաստանի վրայ: Այդ՝ անվիճելի փաստ է: Փաստ է նույնպէս, որ իրար օգնելէ ետքը, իրար մեջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ոչ թէ առանձին թշնամութենէն դեպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն տուին այն, ինչ որ անոնք կ'ուզէին- Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացածը, ինչ-որ Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը ադին»[2]:

Հայկական պետականության պատմության ամենակնճռոտ հիմնահարցերից մեկը Հայաստանի խորհրդայնացման պատմությունն է: Այդ հարցին միակողմանի մոտեցում է ցույց տրվում, այն ներկայաց-

[1] Լանգ Դ. Մ., Ուոքըր Քր. Ջ., Հայերը..., էջ 32:
[2] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 292-293:

վում որպես ընդամենը չարիք, բոլշևիկյան արկածախնդրության և նվաճողական քաղաքականության, քեմալա-խորհրդային համագործակցության ու Հ. Հ. Դաշնակցության չկշռադատված, անհեռատես և ոչ խորքային քաղաքականության «պարզագույն» արդյունք: Սակայն ակնհայտ է, որ անցումային այդ ժամանակաշրջանում հենց անցում կատարվեց Հանրապետությունից Հանրապետություն, և ողջամտությունը պահանջում է այդ փաստը տեսնել, այն դիտարկել որպես իրողություն՝ սոցիալիստական հեռանկարի առումով:

Բոլշևիզմը 1920-ական թվականներին համաշխարհային ամենազորեղ քաղաքական հոսանքներից էր, և հաշվի չնստելը բոլշևիկյան քաղաքականության հետ հավասարազոր էր ինքնակործանման, ինչը չըմբռնեց ու օբյեկտիվորեն չգնահատեց հայ հասարակական-քաղաքական ուժերի մեծ մասը: Այլընտրանք չկար, և հայ ժողովուրդը ներքաշվեց համաշխարհային քաղաքականության՝ իր համար անսովոր և նոր ընթացքի մեջ, կանգնեց խորհրդայնացման անխուսափելի փաստի առաջ, և այդ հանգամանքը, իր բոլոր բացասական երանգավորումներով հանդերձ, այնուամենայնիվ որոշակի դեր կատարեց ազգապահպանման գործում, փրկեց բռնի ուծացումից ու ֆիզիկական ոչնչացման առկա վտանգից: Այն փակեց մի կարգի հեռանկարների ճանապարհը հայկական պետականության կայացման ճանապարհին, և քողարկված վիճակում պահեց մի այլ կարգի հնարավորությունների ու հեռանկարների համակարգը, որը պարզորոշվեց 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ.: Հետևաբար, Հայաստանի խորհրդայնացումը պետք է միանշանակ դիտարկել որպես պատմաքաղաքական լուրջ իրողություն, քանզի արդեն 1920 թ. բոլշևիզմը զորեղ գործոն էր, և այն հնարավոր չէր անտեսել: Առաջինից Երկրորդ՝ Խորհրդային հանրապետության անցման պատմափաստի վերաբերյալ իր բազմանշանակ և պատմականորեն իմաստուն գնահատումն է տալիս Առաջին հանրապետության տարեգիր Ս. Վրացյանը. «Որևէ ուրացումով կամ փաստերի խեղաթյուրումով կարելի չէ հերքել և այն փաստը, որ 1920 թ. դեկտ. 2-ին, կամ, եթե հաճելի է, նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ ոչ թե

Հայաստանի նոր պետության ստեղծումը, այլ գոյություն ունեցող հանրապետության վարչաձևի փոփոխություն. ժողովրդական անկախ հանրապետության տեղը հաստատվեց խորհրդային անկախ հանրապետություն...

Այսպիսով՝ պատմական իրողություն է, որ ներկա Խորհրդ. Հայաստանը շարունակությունն է Հայաստանի Հանրապետության: Եթե տեղի չունենային այն մաքառումները, որոնք հանգեցրին հայկական անկախ պետության ստեղծման 1918 թ. Մայիսի 28-ին, եթե գոյություն չունենար Հայաստանի Հանրապետությունը իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր գոյություն չէր ունենա և Խորհրդ. Հայաստանը: Վարչաձևերը ժամանակավոր երևույթ են: Ժամանակավոր են և վարիչները: Հավերժական են ազգերն ու հայրենիքները՝ հայրենի հողի վրա նստած ժողովուրդները: Հավերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահվամբ մահը կոխելով՝ կերտեց հայրենիքի անկախությունը: Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ, ավելի լայն ազգային սահմաններով»[1]: Այսինքն՝ պարզապես անցում կատարվեց Հանրապետությունից Հանրապետություն, այսինքն՝ Ժողովրդավարական Հայաստանից՝ Սոցիալիստական Խորհրդային Հայաստան: Այսպիսով՝ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարգացման սոցիալիստական փուլը ևս պետք է դիտել որպես պետականության զարգացման պատմաժամանակագրական հաջորդական փուլ, իսկ այդ հանրապետությունը համարել որպես Հայաստանի Երկրորդ հանրապետություն (1920 թ.–1991 թ.):

Ակնհայտ է, որ ՀՀ սովետական (խորհրդային) ձև ընդունելը չպետք է դիտել որպես պետականության անկում: Դա հստակ է նկատել Ս. Սարինյանը. «Մեր նորագույն պատմության մեծագույն ստեղծագործությունը եղավ հայոց առաջին հանրապետությունը, որ միջազգային ճանաչում տվեց Հայաստանին, որպես պետական-քաղաքական սուբյեկտի: Ինչ վերաբերում է երկրորդ հանրապետությանը, այդ պատմական մի ամբողջ ֆորմացիայի կրողը եղավ նա՝ տնտեսական,

[1] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 606-608:

սոցիալական, մշակութային, ազգաբանական համակարգով, եւ որքան էլ կայսերապատկան ենթակայության մոդելում, այնուամենայնիվ, պետություն էր վարչատնտեսական, իրավական, սոցիալական, մշակութային հաստատությունների կառուցվածքով եւ խորապես նպաստել է հայոց պետական ազգի եւ քաղաքական սուբյեկտի հոգեբանական կազմույթին: Երրորդ հանրապետությունը նախորդների տրամաբանական շարունակությունն է եւ ընդհանրության մեջ նրանք նշանավորում են հայոց պատմության ժամանակը՝ անկախ պետականության կայացման դարաշրջանը»[1]:

Առաջին հայկական հանրապետությունը մայրամուտ ապրեց 1920 թ. դեկտեմբերին, սակայն փոխարինվեց դարձյալ պետությամբ՝ սոցիալիստական-կոմունիստական հանրապետությամբ, որն ուներ իր Սահմանադրությունը, և ըստ էության հայոց բազմադարյան պատմության մեջ առաջին սահմանադրությունը, թեկուզև ոչ անթերի և իր վրա ժամանակաշրջանի դրոշմվածքը կրող, որն անխուսափելի էր և՛ պատմաքաղաքական տեսանկյունից՝ լիովին պարտադրված հայ հասարակությանը:

SUMMARY

ON THE ISSUE OF THE TRANSITION FROM THE FIRST REPUBLIC OF ARMENIA TO THE SOVIET REPUBLIC

VIRABYAN VANIK

The establishing process of the Armenian statehood as a result of the Patriotic Battle of Sardarapatin 1918, is analyzed. In the meantime, the transition of the state-political system of the First Republic of Armenia to a socialist-soviet state system is discussed, considering it as an outcome of the current political situation, as well as a unique way out of the impasse situation, which led to the establishment of Soviet regime in the country.

Keywords: *World War, Sardarapat, Armenian statehood, the First Republic, Turkey, Russia, allies, Bolshevism, sovietization.*

[1] Սարինյան Ռ., Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, Եր.,1998, էջ 285:

РЕЗЮМЕ

ВОКРУГ ВОПРОСА ПЕРЕХОДА ОТ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ К СОВЕТСКОЙ РЕСПУБЛИКЕ

ВИРАБЯН ВАНИК

Проанализирован процесс возникновения армянской государственности как последствие Сардарапатской Отечественной битвы в мае 1918 г. Вместе с тем поднят вопрос о переходе от армянской государственности Первой Республики Армения к социалистическо-советской форме государсва, рассматривая эту трансформацию как решение из создавшийся военно-политической ситуации, а также как своеобразный выход из этого тупикового положения, что привело установлению советской власти в стране.

Ключевые слова: Мировая война, Сардарапат, армянская *государственность, первая республика, Турция, Россия, союзники, большевизм, советизация.*

5. ԲՈՒԿԱՆԻ ԱՐԱՄԵԱՏԱՌ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱԼԴԻ ԱՍՏԾՈ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

ՄԻՔԱՅԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Բանալի բառեր՝ *Բուկան, Քալայչի թափե, Խալդի, Հադադ, Ուրարտու, Մանա:*

Բուկան բնակավայրից (Ուրմիա լճի հարավ-արևելք) 7կմ հյուսիս գտնվող Քալայչի թափե հնավայրում Է. Յաղմաեիի գլխավորությամբ իրականացված պեղումների ժամանակ, 1985 թ. գտնվեց արամեերեն արձանագիր մի կոթող[1] (նկ.1): 1990 թ. հնությունների շուկայում

---

* Հոդվածն ընթերցելու և տրված արժեքավոր խորհուրդների համար մեր երախտագիտությունն ենք հայտնում պ. գ. դ. Երվանդ Գրեկյանին: Հոդվածի պատրաստման ընթացքում ցուցաբերած տեխնիկական աջակցության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հ. Դանիելյանին, Ա. Մարտիրոսյանին և Ս. Չիլինգարյանին: Քալայչի թափեի պեղումների վերաբերյալ Բ. Կարգարի հոդվածը տրամադրելու համար շնորհակալ ենք Ռ. Հեյդարիից:

[1]Հղվում է՝ ըստ Hassanzadeh Y., Mollasalehi H. 2011: New Evidence for Mannean Art: An Assessment of Three Glazed Tiles from Qalaichi (Izirtu), Elam and Persia, edited by J. Álvarez-Mon and M. B. Garrison, Winona Lake, Indiana, Eisenbrauns, p., 409.

հայտնաբերվեց նույն կոթողի պակասող հատվածը[1]: Կոթողի թարգմանության առաջին փորձը պատկանում է Ռ. Բաշաշին[2]: Ուրարտուի դիցարանի գերագույն աստված Խալդիի պաշտամունքի ուսումնասիրության համար այս սկզբնաղբյուրն ունի առանձնակի նշանակություն, քանի որ արամեերեն տեքստում երկու անգամ հիշատակվում է Խալդի աստծո անունը: Վերը նշված կոթողն իր թվագրությամբ և տեղադրությամբ պետք է վերագրվի Մանայի թագավորությանը: Բուկանի արձանագրությունը կարևոր տվյալներ կարող է հաղորդել նաև ուրարտա-մանայական կրոնական, գուցե նաև՝ քաղաքական փոխառնչությունների վերաբերյալ: Կոթողի արձանագրության Մ. Սոկոլոֆֆի թարգմանության փորձը, որ տեղ է գտել Ն. Տիրացյանի հոդվածում, ներկայացնում ենք ստորև.

1) Ո՛վ կործանի այս հուշակոթողը, [լինի դա…] 2) պատերազմի ժամանակ, թե խաղաղության մեջ, բոլոր մահացու վարակները 3) աշխարհի երեսին, թող դրանք, որ կան, աստվածները պարտադրեն [երկ]րին 4) թագավորի: Ու նա ատելի է աստվածներին, ու նա ատելի է 5) Խալդիին, որն է Z'TR-ում: Թո՛ղ յոթ կովեր 6) գուրգուրեն մի հորթի և նա չհագենա: Թո՛ղ յոթ 7) կին թխել ուզենան [հաց] մի վառարանում (=օջախում) ու [այդպես էլ] չկարողանան լցնել 8) այն: Թո՛ղ [եփող] կրակի ծուխն ու ձայնը [չըրըխկոցը] 9) երկանքի իսպառ վերանան նրա երկրի երեսից: Թո՛ղ նրա հողն աղակալվի և թող որ 10) դառնագին լինի նրա համար սա թունավոր մոլախոտից: Ու այն թագավորն, [կգրի (՞)] 11) այս հուշակոթողի վրա, թո՛ղ Հադադն ու Խալդին շուռ գան [=գլխիվայր անեն] նրա գահը: 12) Ու թո՛ղ Հադադն այլևս չորոտա 13) նրա երկնքում, և թող որ ամբողջ անեծքը կոթողի դիպչի նրան[3]:

---

[1] Sokoloff M.,The Old Aramaic Inscription from Bukān: A Revised Interpretation, Israel Exploration Journal 49/1-2, 1999, p., 105.

[2] Ռ. Բաշաշ Խանզակ, Բուկանի արձանագրության վերծանումը (պարսկերեն). The Proceedings of the First Symposium on Inscriptions and Ancient Texts, Shiraz, 14th- 16th Isfand 1370, Iranian Cultural Heritage Organization. Tehran, 1996, էջ. 25-30.

[3] Տիրացյան Ն., Խալդի աստծո հիշատակությամբ արամեերեն մի արձանագրության շուրջ, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր (խմբ.՝ Ա. Քալանթարյան, Ս. Հարությունյան), Երևան 2001, էջ, 6:

Մասնագետները միակարծիք են, որ այս արձանագրությունը գրվել է արամեացի գրչի կողմից: Ամենայն հավանականությամբ այս կոթողը կանգնեցվել է տեղի կառավարչի կամ էլ արքայի կողմից[1]: Քանի որ կոթողի հայտնաբերման տարածքը ժամանակին գտնվել է Մանայի թագավորության կազմում, տրամաբանական է ենթադրել, որ այն կարող է կերտված լինել այդ երկրի արքաներից մեկի հրամանով: Ի. Եպհալը նույնիսկ կարծիք է հայտնել, որ արձանագրությունում հիշատակված Խալդին և Հադադը եղել են այդ արքայի աստվածները[2]: Մեր ուսումնասիրության համար առավել կարևոր է վերը հիշատակված՝ «Խալդին, որն է **Z'TR-ում?»** արտահայտությունը: Կ. Ռ. Բաշաշը, Ա. Լըմերը, Մ. Սոկոլոֆֆը և Ի. Եպհալը **Z'TR**-ն ընթերցել են որպես տեղանուն, այն նույնացնելով Մանայի թագավորության մայրաքաղաք Իզիրտուի հետ[3]: Խ. Թեքսիդորը այստեղ ընթերցել է ոչ թե Z'TR, այլ MTTR և այն համեմատել ուրատական տերության հոգևոր կենտրոն Մուծածիրի հետ[4]: Հետագայում Ֆ. Մ. Ֆալեսը, խնդիրը քննելով ժամանակի (Ք. ա. VII-VI դդ.) արամեերենի քերականության որոշ առանձնահատկությունների հիմքի վրա, ցույց է տվել այդ տեսակետի անհնար լինելը[5]: Դեմ լինելով Z'TR-Իզիրտու համադրմանը՝ Ն. Տիրացյանը հավանական է համարում Z'TR-ն նույնացնելու Մուծածիրի հարևա-

[1] Ep'hal I., The Bukān Aramaic Inscription: Historical Considerations, Israel Exploration Journal 39, 1999, p. 119.

[2] Նույն տեղում:

[3] Lemaire A., Une inscription araméennes du VIIIe siécle av. J.-C. Trouvée á Bukân (Azerbaidjan Iranien), Studia Iranica 27, 1998, pp. 15-30., Sokoloff M., The Old Aramaic Inscription from Bukān: A Revised Interpretation, Israel Exploration Journal 49/1-2, 1999, p. 106., Ep'hal I., The Bukān Aramaic Inscription: Historical Considerations, Israel Exploration Journal 39, 1999, p. 120.

[4] Teixidor J., Résumé des travaux 1997/98. In: Antiquités Sémitiques. Annuaire du Collège de France , 1997/98, pp. 389–400.

[5] Fales M. F., Evidence for west-east contacts in the 8th century BC: the Bukān Stele. Continuity of Empire (?) Assyria, Media, Persia, edited by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger , 2003, pp., 136-137.

նությամբ գտնվող Շատտերա բնակավայրի հետ, որը վկայված է ասորեստանյան աղբյուրներից մեկում[1]: Այս խնդրի վերաբերյալ միանգամայն այլ տեսակետ է հայտնել Ֆ. Մ. Ֆալեսը: Իտալացի մասնագետի կարծիքով տեքստի վերոնշյալ հատվածում պետք է ընթերցել ոչ թե Z'TR, այլ B/SZ'R[2]: Ընդ որում՝ Մ. Ֆալեսն հակված է այն համարելու ոչ թե տեղանուն, այլ անձնանուն[3], չբացառելով, որ դա կարող է նույնացվել Ասորեստանի դեմ ապստամբած Կիշիսուի կառավարիչ (պետք է տեղադրվի արևմտազագրոսյան գոտում) ᴹBisihatir-ի հետ[4]: Վերջինս հիշատակվում է ասորեստանյան գահակալ Թիգլաթպալասար III-ի արձանագրություններից մեկում[5]:

Վերը հիշատակված իրարամերժ տեսակետները բարդություններ են ստեղծում Մանայի տարածքում Խալդիի պաշտամունքի վերաբերյալ եզրակացություններ անելու համար: Արդյո՞ք այդ տարածաշրջանում Խալդին ուներ իր պաշտամունքային կենտրոնը, արդյո՞ք վերջինիս անվան հիշատակումը Բուկանի արձանագրությունում Մանայում ուրարտացիների կողմից իրենց գերագույն աստծո պաշտամունքի պարտադրման արդյունք է: Միգուցե այս խնդրում մեծ ազդեցություն են ունեցել դեռևս Ռուսա I արքայի կառավարման ժամանակաշրջանում ձևավորված ուրարտա-մանայական սերտ հարաբերությունները[6]: Սրանք հարցեր են, որ դեռ սպասում են իրենց պատասխաններին[7]: Այս առումով՝ չպետք է նաև բացառել այն հանգամանքը, որ Խալդին կարող է եղած լիներ Մանա պետության գլխավոր աստվածներից մեկը՝ առանց

[1] Տիրացյան Ն., նշվ. աշխ., էջ, 12
[2] Fales M. F., նշվ. աշխ., էջ, 134:
[3] Նույն տեղում, էջ, 137:
[4] Նույն տեղում, էջ, 138
[5] Նույն տեղում, էջ, 138:
[6] Տիրացյան Ն., նշվ. աշխ., էջ, 11:
[7] Ըստ Ե. Գրեկյանի բանավոր հաղորդման՝ չպետք է նաև բացառել, որ Բուկանի արձանագրությունը կարող էր լիներ Ուրարտուի և Մանայի արքաների միջև պայմանագիր: Հնարավոր է, որ Հադադի և Խալդիի անունների տակ համապատասխանաբար նկատի են առնվել մանայական և ուրարտական գերագույն աստվածները: Առիթից օգտվելով՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ե. Գրեկյանին՝ իր տեսակետով կիսվելու և այն սույն հոդվածում տպագրել թույլ տալու համար:

որևէ «ուրարտական միջամտության»: Չի բացառվում, որ Մանայում Խալդիի հնարավոր պաշտամունքը ազդված լիներ «Մուծածիրյան գոտուց»: Համենայնդեպս՝ Բուկանի արձանագրության Խալդիին հիշատակող համատեքստը կարող է վկայել այն մասին, որ վերջինս եղել է Մանայի գերագույն աստվածներից մեկը: Ըստ Մ. Ֆ. Ֆալեսի՝ արձանագրությունում Հադադի՝ Խալդիից առաջ հիշատակվելու հանգամանքը մատնանշում է այն, որ առաջինը հիշատակված աստվածության պաշտամունքը եղել է առաջնային[1]:

Հետաքրքիր է, որ Քալայչի թափեի պեղումների արդյունքում բացվել է ընդարձակ սյունազարդ դահլիճով մի կառույց, որը հնավայրը պեղող հնագետ Բ. Կարգարի կարծիքով եղել է մանայական տաճար(նկ. 2)[2]: Եթե այդ ենթադրությունը ճիշտ է, ապա չի բացառվում, որ վերը հիշատակված երկու աստվածություններից առնազն մեկի պաշտամունքը որևէ կերպ առնչվել է Քալայչիում պեղված կառույցի հետ[3]:

Կարծում ենք, որ Քալայչի թափեի, ինչպես նաև Մանայի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող այլ հնավավայրերի հետագա պեղումները կարող են նոր հեռանկարներ բացել վերոնշյալ խնդիրների ուսումնասիրության և լուսաբանման համար:

[1] Fales M. F., նշվ. աշխ., 139:

[2] Քալայչի թափեի պեղումների վերաբերյալ տե՛ս՝ Կարգար Մ., Քալայչի/Իզիրտու: Մանայական կենտրոն: Ib փուլ (պարսկերեն), Proceedings of the International Symposium on Iranian Archaeology: Northwestern Region, ed. M. Azarnoush,Tehran, էջ, 229-245: Տե՛ս նաև՝՝ Y. Hassanzadeh, H. Mollasalehi, նշվ. աշխ., էջ, 410, նկ.3.

[3] Քալայչի թափեի պեղումների արդյունքում, ինչպես նաև՝ ոչ օրինական ճանապարհով գտնվել են «առասպելական էակների», բուսական և այլ պատկերումներով ջնարակած աղյուսներ, որոնք, ըստ Յ. Հասսանզադեի և Հ. Մոլլասալեհիի կարող էին առնչվել պաշտամունքային կառույցի հետ: Ինչպես նշում են վերը նշված հետազոտողները, դեռևս հստակ չէ՝ արդյոք այդ աղյուսները զարդարել են Քալայչի թափեի Խալդիի և Ադադի մանայական տաճարի պատերը, թե ոչ: Տե՛ս՝ Y. Hassanzadeh, H. Mollasalehi, նշվ. աշխ., էջ, 410:

Բուկանի կոթողը: Գծանկար:



Քալայչի թափեի կառույցը: Հատակագիծ

Բուկանի և Մուծածիրի տեղադրությունը

SUMMARY
ON THE MENTION OF THE GOD HALDI IN THE ARAMAIC INSCRIPTION OF BUKÂN

BADALYAN MIQAYEL

In 1985, at the site of Tapeh Qalaichi near Bukân to the south-east of Lake Urmia, a fragment of a stone stele with Aramaic inscription was discovered. Later, in 1990, an additional fragment of the same stele appeared on the antiquities market. It is interesting to note that in the Bukân inscription, the god Haldi is mentioned twice. In one instance, Haldi is attested with the storm god Hadad. The facts relating to the testimony of Haldi can uncover important perspectives on the

Mannean pantheon and on the Urarto-Mannean political and religious relations as well. If the cult of Haldi did exist in the Mannean Kingdom, it is not unexpected that it could have been directly influenced from the Musasirian zone.

Key words: *Bukân, Qalaichi Tappeh, Haldi, Hadad, Urartu, Mana.*

РЕЗЮМЕ
ОБ УПОМИНАНИИ БОГА ХАЛДИ В АРАМЕЙСКОЙ НАДПИСИ БУКАНА

БАДАЛЯН МИКАЭЛ

В 1985 г. во время раскопок в Калайчи-тапе, расположенном к юго-востоку от озера Урмия, неподолеку от поселения Букан, была найдена часть стелы с аремейской надписью. Позднее, в 1990 г. из антиквариатного магазина был найден другой фрагмент той же стелы. Интересно, что в данной надписи дважды упоминается имя бога Халди. В одном случае бог Халди упоминается наряду с богом Ададом. Этот факт может открыть новые перспективы для изучения маннейского пантеона, а также–урарто-маннейских религиозных и политических связей. Если в Маннейском царстве существовал культ бога Халди, мы не исключаем его проникновение из Муцацирской зоны.

Ключевые слова: *Букан, Калайчи-тапе, Халди, Адад, Урарту, Мана.*

6. ՊԱՏԱՀԱԲԱՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻՑ

ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հայկական լեռնաշխարհ, Վաղ երկաթի դարաշրջան, հնագիտական համալիր, խեցեղեն, բրոնզե գուրի, երկաթե սուր, պերճանքի առարկաներ*

Մեծանուն ճարտարապետ Թ. Թորամանյանը 1914 թ. շրջագայելով Շիրակում, միջնադարի հայկական ճարտարապետական հուշարձաններից զատ, մանրամասն հետազոտել է նաև տեղի (Ծաղկահովիտ, Հնաբերդ, Հոռոմ, Լեռնակերտ, Գուսանագյուղ, Սպանդարյան և այլ) պատմամշակութային հուշարձանները և իր աշխատանքներում այս կամ այն առումով անդրադառնալով Հայկական լեռնաշխարհի հնագույն շրջանի կառույցներին, հպանցիկ խոսել է նաև բրոնզեդարյան-

երկաթեդարյան բնակատեղիների ու դամբարանային համալիրների մասին: Դրանց մեջ առանձնանում է Կուլիջան գյուղի մերձակայքում (ներկայիս՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Սպանդարյան) պատահաբար քանդված դամաբարանը, որում բացված նյութերը հավաքվել են հենց իր կողմից[1]: Խունացած թղթի կտորի վրա այդ գտածոների հայտնաբերման մասին արված գրառումն այսօր պահվում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի (կրճատ՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ) անձնական փաստաթղթերի արխիվում[2]: Այս փաստաթղթից ընկալվում է, որ նյութերը հավաքվել են մեկ տեղից և, ամենայն հավանականությամբ, նույն դամբանախցում տեղադրված առարկաներ են եղել: Փաստաթղթում նշված է նաև, որ նյութերը հանձնվել են Հայաստանի պատմության թանգարանին: Դրանք հիմա էլ պահվում են թանգարանի հնագիտական նյութերի զետեղարանում[3]: Ժամանակին այս հավաքածուի առանձին առարկաներ հետազոտվել և հրատարակվել են հնագետներ Տ. Խաչատրյանի, Գ. Արեշյանի և իմ կողմից[4]: Նկատի ունենալով հայտնաբերված նյութերի կարևոր դերը Հայկական լեռնաշխարհի և Մերձավոր Արևելքի (հատկապես՝ Իրանական սարահարթի) վաղ երկաթի շրջափուլի պատմամշակութային փոխառնչությունների վերհանման ու մեկնաբանման գործում՝ նպատակահարմար գտանք մեկ անգամ ևս մանրամասն անդրադառնալ այդ հետաքրքիր հավաքածուին:

Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի մոտ գտնվող հնագիտական հուշարձանի նախնական հետազոտման աշխատանքները սկսվել

---

[1] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության,* հ. 1, Եր. 1942, էջ 38-39:

[2] «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Թ. Թորամանյանի փաստաթղթերի անձնական արխիվ, հաշվառանիշ ԳԳ 394, ԱԱԹփ 3/67[24]:

[3] Հայաստանի պատմության թանգարան (այսուհետև՝ ՀՊԹ), հավաքածու թիվ 1890:

[4] Т. Хачатрян, *Древняя культура Ширака*, Ереван 1975, с. 23-24, 234-236, рис. 6. Г. Арешян, *О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе,* "ИФЖ" # 2, 1974, с. 193-198. Ա. Փիլիպոսյան, *Հին Արևելքի շրջանակավոր դաստրակով դաշույններն ու սրերը,* «Հայաստանի հնագիտական հուշարձանները» # 17, պրակ IV, Եր. 1999, էջ 31-32, աղ. 17, նկ. 4, աղ. 57:

են դեռևս XIX դ. վերջերից, երբ այս տարածքում շրջանցային դիտարկումներ է իրականացրել Ատրպետը[1]: XX դ. 30-ական թթ. Շիրակի մի շարք կիկլոպյան բնակատեղիներում (նաև Սպանդարյան-Կուլիջանում) ուսումնասիրություններ են կատարել ռուսաստանցի մասնագետները[2]: Սպանդարյանում 1973 թ. կատարված հողային աշխատանքների ժամանակ բացվել է երկաթի դարաշրջանին վերաբերող մեկ դամբարան ևս[3]: Այդ ամենն էլ հիմք է տվել հնագետ Տ. Խաչատրյանին, 1978-1979 թթ. Սպանդարյան բնակավայրի մերձակայքում նոր պեղումներ նախաձեռնելու համար, որի արդյունքում հայտնաբերվել են մ.թ.ա. XI/X-VIII/VII դդ. վերաբերող նոր և կարևոր հնագիտական նյութեր[4]:

Սպանդարյանում և հարակից տարածքներում ժամանակին գոյություն ունեցած ցեղային կազմավորման և երկաթեդարյան հնավայրի մասին ամենավաղ գրավոր տեղեկությունները պահպանվել են տեղում Արգիշթի I-ի թողած սեպագիր արձանագրության մեջ: Այն հայտնաբերվել է 1884 թ. գյուղի մոտակայքում՝ Կարկաչան գետի քարքարոտ ափին, Արագած լեռան հյուսիսարևմտյան ժայռափեշի վրա: Տեքստը հաղորդում է.

1. ^{d}Hal-di-ni uš-ta-bi ma-si-ni šú-ri-e	1. (Աստված) Խալդին ճամփա ընկավ, իր զենքին
2. ka-ru-ni ^{m}Qu-u-li-a-i-ni KUR-ni	2. ենթարկեց Կուլիաինի (ցեղի) երկիրը,
3. te-qu-ni ^{m}Ar-gi-iš-ti-ka-i	3. Խոնարհեց (բառացի՝ թեքեց) Արգիշթիի առջև:
4. ú-lu-uš-ta-bi ^{d}Hal-di-ni	4. Առաջորդում էր (նրան) (աստված) Խալդին:
5. ^{m}Ar-gi-iš-ti-še a-li	5. Արգիշթին ասում է.
6. ha-ú-bi ^{URU}Du-ru-ba-ni	6. Նվաճեցի (քաղաք) Դուրուբանին,

[1] Ատրպետ, Շիրակի աչքատարեան (կիկլոպյան) ամրոցներ, «Ազգագրական Հանդէս», # XXV, Թիֆլիս 1914, էջ 165-168:

[2] А. Аджян, Л. Гюзальян, Б. Пиотровский, *Циклопические крепости Закавказья*, ГАИМК, # 1-2, Москва 1932, с. 61-64.

[3] Т. Хачатрян, *Древняя культура Ширака*, Ереван ամրոցներ, с. 24.

[4] Տ. Խաչատրյանի կողմից Սպանդարյանում պեղած նյութերը պահվում են Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական զետեղարանում, հավաքածուներ թիվ 2767 և թիվ 2768:

7. ^{m}Qu-u-li-a-i-ni KUR-ni 7. Կուլիաինի (ցեղի) երկրի[1]:

Արձանագրությունը փաստում է, որ արդեն մ.թ.ա. VIII դ. առաջին կեսին Շիրակի տարածքում, հզոր Էրիախի երկրից բացի՝ մասնավորապես Սպանդարյան բնակավայրի մերձակայքում, գոյություն է ունեցել նաև Կուլիաինի անվամբ ցեղախումբ (երկիր), որի իշխանական քաղաքը՝ Դուրուբանին, նվաճել է Արգիշթի I-ինը: Չի բացառվում, որ Սպանդարյանի մոտ գտնվող կիկլոպյան ամրոցի ավերակներ ժամանակին հենց տեքստում հիշատակվող Դուրուբանի բնակավայրն է եղել: Արձանագրությունն առաջին անգամ հրատարակած ռուս արևելագետ Մ. Նիկոլսկին հակված էր կարծելու, որ այդ բնակավայրի թուրքացված Կուլիջան (Ղուլիջան) անվան հիմքում հնարավոր է, որ ընկած է ուրարտական շրջանի Կուլիաինի տեղանունը[2]:

Ինչ վերաբերում է 1914 թ. Սպանդարյանում բացված դամբարանին, ապա, ցավոք, Թ. Թորամանյանի արխիվում այն ներկայացնող որևէ չափագրություն կամ լուսանկար չի պահպանվել: Դատելով նույն բնակավայրի մերձակայքում հնագետ Տ. Խաչատրյանի 1978-1979 թթ. կատարած պեղումների արդյունքներից՝ մեծանուն ճարտարապետի հավաքած նյութերը, ամենայն հավանականությամբ, հենց նույն հուշարձանի՝ Դուրուբանի ամրոցի դամբարանադաշտից են, առավել ևս, որ համաժամանակյա են Տ. Խաչատրյանի պեղածներին: Հայաստանի պատմության թանգարանում պահվող Սպանդարյանի (Կուլիջան) թիվ 1890 հավաքածուն կազմված է կավանոթներից, պերճանքի առարկաներից և սպառազինության նմուշներից:

Խեցեղենի օրինակները՝ հարթ հատակով, դեպի վեր աստիճանաբար լայնացող իրանով, կարճ վզով և դեպի դուրս թեքվող

[1] Г. Меликишвили, *Урартские клинообразные надписи,* Москва 1960, УКН-132, с. 260. Н. Арутюнян, *Корпус урартских клинообразных надписей,* Ер. 2001, КУКН-178, с. 202-203. M. Salvini, *Corpus del Testi Urartei,* vol. I, Roma 2008, A8-9, pp. 349. Հ. Եղիազարյան, *Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները,* Երևան 1975, էջ 27: Ի. Ավագյան, *Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում,* Գյումրի 2015, էջ 49:

[2] М. Никольский, *Клинообразные надписи Закавказья,* "Материалы по археологии Кавказа", т. V, Москва 1896, с. 70-84. Н. Арутюнян, *Топонимика Урарту,* Ер. 1985, с. 116-117.

զանգվածեղ, կլորավուն շուրթով, մոխրագույն և սև-փայլեցված 3 սափորներ են, որոնց երկուսի իրանների ուռուցիկ հատվածների հանդիպակաց կողմերում մեկ զույգ ուղղահայաց, հատույթում՝ կլորավուն, զանգվածեղ, աղեղնաձև կանթեր են ամրացված (աղ. I, նկ. 11, 13): Երրորդ սափորն ուսին անցքավոր, կիսասկավառակաձև, ոչ մեծ, անցքավոր ունկ ունի, իսկ իրանի ուռուցիկ հատվածում՝ խորադիր, հորիզոնական երկու ակոսների միջնատարածքում,խորադիր զուգահեռ գծերից կազմված զիգզագների հորիզոնական նախշագոտի (աղ. I, նկ. 12): Այս անոթների զուգահեռները լավ հայտնի են Հայաստանի վաղերկաթեդարյան դամբարանային համալիրներից (Արթիկ, Դիլիջան, Ռեդլին լագեր, Աստղի բլուր, Դվին, Շիրակավան, Ոսկեհասկ, Արտաշավան, Թալին և այլն) և վերաբերում են մ.թ.ա. XI – IX դդ.[1]:

Պերճանքի առարկաների մեջ կան 3 ապարանջաններ և սակավաթիվ տարաձև ուլունքահատիկներ: Ապարանջանները բրոնզից են, պատկանում են ծայրերն իրար մոտեցող և աստիճանաբար նեղացող տեսակին: Դրանցից երկուսը սեգմենտավոր, իսկ մեկը՝ հարթ իրան ունեն: Երեքն էլ հատույթում կլորավուն են (աղ. I, նկ. 5-7):

Ուլունքահատիկներն ունեն գնդաձև, գլանաձև, խողովակաձևելուստավոր ու սկավառակաձև կառուցվածք, պատրաստված են քարից, դեղնավուն ու կապտավուն երանգով կավի մածուկից ու ապակուց

[1] Т. Хачатрян, *Материальная культура древнего Артика*, Ер. 1963, с. 146. Ս. Եսայան, Հ. Հովաննիսյան, *Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ*, Եր. 1969, աղ. XXIX, նկ. 1: Т. Хачатрян, *Древняя культура Ширака*, Ер. 1975, с. 248-249, рис. 159. С. Есаян, *Древняя культура племен Северо-Восточной Армении,* Ер. 1976, с. 122, табл. 98, рис. 1, с. 166, табл. 122. К. Кушнарева, *Древнейшие памятники Двина,* Ер. 1977, с. 24, рис. 33. Табл. XX, рис. 1,2. Т. Хачатрян, *Артикский некрополь (каталог),* Ер. 1979, с. 299, 309, 328, 342, 378. Л. Петросян, *Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.),* Ер. 1989, с. 70, табл. 69/5. Լ. Պետրոսյան, *Պեղումներ Սարապատում,* «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում I» հոդվածների ժողովածու, Եր. 1993, էջ 90-96, աղ. XC, նկ. 1,2. աղ. XCI, նկ. 1-3: Ս. Դևեջյան, *Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում,* Եր. 2001, աղ. XI, նկ. 10: Հ. Ավետիսյան, Պ. Ավետիսյան, *Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում,* Եր. 2006, էջ 224, աղ. 28, նկ. 5, էջ 226, աղ. 30, նկ. 3, էջ 242, աղ. 46, նկ. 4, էջ 250, աղ. 54, նկ. 2, էջ 251, աղ. 55, նկ. 5,էջ 274, աղ. 78, նկ. 14: P. Avetisyan, *On Periodization and Chronology of the Iron Age in Armenia*, "Aramazd" AJNES, vol. IV, issue 2, Yerevan 2009, p. 69, fig. 1/10,11, p. 72, fig. 4/2,4, p. 73, fig. 5/6.

(աղ. I, նկ. 9): Սրանց զուգահեռները ևս տարածված են Հայաստանի մ.թ.ա. XI/X – VIII/VII դդ. գրեթե բոլոր դամբարանային համալիրներում:

Հատկապես առանձնահատուկ են սպառազինության նմուշները: Դրանցում կան և՛ հարձակողական (բրոնզե նետասլաք, բրոնզե և երկաթե 2 նիզակներ, երկաթե կարճ սուր), և՛ պաշտպանական (բրոզե գոտու բեկորներ) զինատեսակներ, և՛ ասպազենի մասեր (ձիասանձի բրոնզե հատվածեր):

Բրոնզե գոտու բեկորների մի մասն է պահպանվել (աղ. I, նկ. 10): Այն նման է Հայաստանում (Ախթալա, Լալի գյուղ, Սանահին, Ստեփանավան, Օձուն, Աստղի բլուր, Բջնի, Թաքիա, Վանաձոր, Կարմիր բերդ, Արցախ և այլն)[1] և ժամանակակից Վրաստանի հարավային շրջաններում (մասնավորապես՝ Ջավախքում)[2] մ.թ.ա II հազ. վերջին – մ.թ.ա. I հազ. առաջին քառորդին տարածում ստացած բրոնզե լայն գոտիներին, որոնց արտաքին մակերեսներին, գագաթներով իրար ուղղված փորագիր, նախշազարդ եռանկյունաձև պատկերների միջնատարածքում զետեղված ուղղանկյունաձև, նեղ զարդագոտու (կարտուշի) մեջ ներկայացված է վազող առասպելական գիշատիչների շարք, իսկ դրա շուրջբոլորը՝ նմանատիպ գիշատիչների ու դրանց օժանդակող կամ խոչընդոտող թռչունների պայքար ու հակադրություն:

Երկճանկ իրանով և քառակող՝ աստիճանաբար նեղացող պոչուկ-խրոցով բրոնզե նետասլաքը (աղ. I, նկ. 4), ինչպես նաև տերևաձև շեղբով բրոնզե և երկաթե խողովակակոթառ նիզակները (բրոնզե օրինակը լեզվակի կենտրոնում, երկու հանդիպակաց կողմերից ունի նաև ուռուցիկ կենտրոնական ող) (աղ. I, նկ. 2, 3) լավ հայտնի են Հայաս-

[1] А. Мартиросян, *Армения в эпоху Бронзы и Раннего Железа*, Ер. 1964, с. 105, табл. IX, рис. 11. S. Esayan, *Gürtelbleche der äiteren Eisenzeit in Armenien*, "Beiträge zur Alligemeinen und Vergleichenden Aechäologie", Band 6, Bonn 1984, Abb. 9/32a, Abb. 12/38a-b, 40a-c, Abb. 15/49a-c, 51a-c, 52a-c, Abb. 19/56a-d, Abb. 20/61, 62.

[2] Н. Урушадзе, *Бронзовая летопись древней Грузии*, Тбилиси 1984, рис. 16, 22-22a, 23, 26, 27a. Н. Урушадзе, *Древнегрузинское пластическое искусство,* Тбилиси 1988, табл. XIII. D. Narimanishvili, G. Karelidze, J.-K. Hamburg, *New Data from Beshtasheni Late Bronze Age – Early Iron Age Cemetery,* in "Mrtsamor. The Chronicle of Fifty Years of Excavations", Yerevan 2015, p. 114, fig. 2, p. 116, fig. 2.

տանի (Էլար, Մեծամոր, Լոռի բերդ, Շիրակավան, Գոլովինո, Խրտանոց, Կարմիր բլուր, Կուրթան, Մակարաշեն, Կարմիր բերդ, Օշական, Սարուխան, Կարմիրգյուղ, Նորատուս, Արծվաքար, Հացառատ, Գեղհովիտ և այլն) մ.թ.ա. XII/XI – VIII/VII դդ. դամբարանային համալիրներից (ներառյալ նաև ուրարտական հուշարձանները)[1]:

Նույն ժամանակահատվածին է վերաբերում նաև բրոնզե ոլորուն, ձողաձև լկամներով, հատվածավոր, յուրօրինակ ձիասանձը (աղ. I, նկ. 8): Դրա զուգահեռները դարձյալ Շիրակի տարածաշրջանից են: Մեկը պատահական գտածո է, որ ներկայումս պահվում է Հայաստանի պատմության թանգարանի զետեղարանում[2], երկրորդը հայտնաբերվել է Լենինականի (Գյումրի) թիվ 8, իսկ երրորդը՝ Արթիկի թիվ 218 վաղերկաթեդարյան դամբարաններից[3]: Նմանատիպ մեկ ձիասանձ էլ պեղել է Ա. Իվանովսկին Գետաբակի (Կեդաբեկ) ձիու թաղումով թիվ 56 դամբարանում[4], հենց կենդանու գլխի վրա, ինչից էլ պարզվել է, որ արտաքինից քիչ արտասովոր կառուցվածք ունեցող այդ հարմարանքն իրոք ձիասանձ է: Դրա մոտավոր զուգահեռները հայտնի են նաև Իրանական սարահարթի արևմտյան շրջանի (Լուրիստան) երկաթեդարյան դամբարանային համալիրներից[5]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երկաթե կարճ սուրը (աղ. I, նկ. 1)[6]: Այն ունի մահիկաձև, շրջանակավոր վերնամաս,

---

[1] А. Мартиросян, *Армения в эпоху … ,* с. 204, рис. 79, с. 209, рис. 81, с. 211, рис. 83, табл. XXX, XXXII. Ա. Փիլիպոսյան, *Հետախուզական պեղումներ «Մոթթի ձոր» դամբարանադաշտում,* «ՀՀ-ում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան», զեկ. թեզեր. Եր. 1991, էջ 31: Ա. Փիլիպոսյան, Ռ. Մկրտչյան, *Գեղհովիտ…*, էջ 20, աղ. 14, նկ. 2, 3:

[2] Հայաստանի պատմության թանգարան, անհատական, թիվ 1430:

[3] А. Мартиросян, *О древнем поселении и могильнике близ Ленинакана,* КСИА, # 55, Москва 1954, с. 106-116, рис. 46/2,3,6. Т. Хачатрян, *Древняя культура …,* с. 236-237, рис. 150. Т. Хачатрян, *Артикский некрополь (каталог),* Ер. 1979, с. 199.

[4] А. Ивановский, *По Закавказью,* МАК – VI, Москва 1896, с. 127-128, табл. VII, рис. 3,6.

[5] L. Vanden Berghe, *La nécropole de Gul Khanan-Murdah*, “Archeologia”, # 108, Paris 1980.

[6] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության,* h. 1, Եր. 1942, էջ 38-39: Т. Хачатрян, *Материальная культура древнего Артика*, с. 23-24. Г. Арешян, *О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе,* “ИФЖ”, # 2, Ер. 1974, с. 193-198. Ա. Փիլիպոսյան, *Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշար, h.*

ուղիղ-մատնեքավոր բռնակ, ուղղանկյունաձև, դուրգամած խաչարդ, հավասարաչափ նեղացող սայրերով շեղբ և սուր ծայր: Զենքի երկարությունը՝ 65 սմ է: Հայաստանում նման սրեր և դաշույններ հայտնի են Էջմիածնից և Կարմիր բլուրից[1]: Զենքի այս օրինակները Հայաստանում կիրառվել են մ.թ.ա. XI–VIII դարերում: Դրանց ուղղակի զուգահեռները հանդիպում են Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում, մասնավորապես Գուլ-Խանան-Մուրդա (աղ. II), Վար-Կաբուդ, Շամզի-Մումա (աղ. III), Թաթուլբան-Շինան (աղ. IV), հնավայրերում (Լուրիստան) և դարձյալ, վերաբերում են մ.թ.ա. IX–VIII դդ.[2], ինչը վկայում է Հայկական լեռնաշխարհում և Իրանական սարահարթի արևմտյան շրջաններում մ.թ.ա. I հազ. առաջին քառորդին կիրառված հարձակողական զենքի կոնկրետ տեսակների արտաքին ձևավորման, հարդարման ու բանեցման նկատելի ընդհանրությունների մասին:

Բերված բոլոր զուգահեռները մեկ անգամ ևս վկայում են Սպանդարյան (նախկին՝ Կուլիջան) գյուղի ավերված դամբարանից անվանի ճարտարապետ Թ. Թորամանյանի հավաքած հնագիտական նյութերի հույժ կարևորությունը պատմամշակութային վերակազմությունների իրականացման համար և թույլ են տալիս գտածոները թվագրելու մ.թ.ա. XI – IX դարերով՝ վաղ երկաթի շրջափուլով:

17, պրակ IV, Եր. 1999, էջ 31, աղ. 17. նկ. 2, աղ. 57: Օ. Խնկիկյան, *Հայաստանի հնագիտություն*, Եր. 2010, էջ 142, աղ. XV, նկ. 1:

[1] Ա. Փիլիպոսյան, *Հին Արևելքի շրջանակավոր...*, աղ. 17, նկ. 1, 8-11:

[2] L. Vanden Berghe, *La nécropole ge War Kabud,* "Archeologia", # 18, Paris 1967, p. 56, fig. a. L. Vanden Berghe, *La nécropole de Gul Khanan-Murdah*, "Archeologia", # 108, Paris 1980. P. 47, fig. 11. L. Vanden Berghe, *La chronoligie de la civilization des bronzes du Pusht-i-Kuh, Luristan,* "Proceedings of the I[st] Annual Symposium of Archaeological Research in Iran", Bastan 1972, p. 12, fig. 13. L. Vanden Berghe, *La nécropole de Chamzi-Mumah,* "Archeologia", # 108, Paris 1977, p. 41. L. Vanden Berghe, Luristan: een verdwenen bronzkunst uit West-Iran, Sint-Pietersabdij – Gent 1982-1983, p. 83, fig. 39/13.

Աղյուսակ I



Աղյուսակ II



Աղյուսակ III



Աղյուսակ IV



SUMMARY

COMPLEX OF CHANCE FIND ARCHAEOLOGICAL ARTEFACTS AT SPANDARYAN

PILIPOSYAN ASHOT

Outstanding architect, Toros Toramanyan, gathered and handed to the National Museum of Armenia the archaeological collection consisting of different weaponry, pottery and jewelry discovered from a tomb unearthed by chance in 1914 nearby Spandaryan (former Kulidjan). This collection is numbered 1890 in the National Museum of Armenia.

The comprehensive study of the material ascertains that the burial complex at Spandaryan has many similarities to the Iron Age archaeological complexes of Armenia and the north-western part of the Iranian Plateau. It may be dated to the 11^{th} – 9^{th} cc BC.

Key words: *Armenian Highlands, Early Iron Age, archaeological complex, ceramic ware, bronze belt, iron sword, jewelry.*

РЕЗЮМЕ

КОМПЛЕКС СЛУЧАЙНО НАЙДЕННЫХ АРХЕОЛОГИЧЕСКИХ АРТЕФАКТОВ ИЗ СПАНДАРЯНА

ПИЛИПОСЯН АШОТ

В 1914 году, в близи села Спандарян (бывший Кулиджан), во время исследования случайно разрушенного древнего захоронения, известный архитектор Торос Тораманян обнаружил и собрал комплекс археологических артефактов (оружие, керамика, украшения) и, впоследствии, весь материал сдал в Музей Истории Армении. Ныне это № 1890 коллекция археологического фонда музея.

Детальное изучение показало, что артефакты из Спандаряна, имеют значительные параллели с погребальными комплексами эпохи раннего железа Армении и Северо-западного Ирана и датируется 11-9 вв. до н.э.

Ключевые слова: *Армянское нагорье, Эпоха раннего железа, археологический комплекс, керамика, бронзовый пояс, железный меч, украшения.*

7. ԱՆՏԻՊ ՎԻՄԱԳՐԵՐ ՎԱՅՈՑ ՁՈՐԻՑ

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԴԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ *Սմբատյանց, Վայոց ձոր, խաչքար, վանք, մկրտության ավազան, մատուռ, Խնձորուտ, բարավոր, անտիպ վիմագիր:*

Պատմական Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով: Դեռևս XIX դարի տեղագիր-ճանապարհորդներն ուսումնասիրեցին հուշարձանները, վերծանեցին վիմագրերը, հավաքեցին ազգագրական, բանահյուսական հարուստ տեղեկություններ, որոնք ամփոփվեցին տեղագրական ուսումնասիրություններում[1]: Նրանց գործը գիտական հիմքերի վրա դրվեց խորհրդային շրջանում և փաստական նյութերի, պատմագիտական աղբյուրների հիմքի վրա ներկայացվում է մեր ժամանակներում[2]: Անշուշտ կան հուշարձաններ, որոնք տարբեր պատճառներով բավարար չափով ուշադրության չեն արժանացել մասնագետների կողմից, և այսօր փորձ է արվում լրացնելու այդ բացը՝ արխիվային ֆոնդերում տեղ գտած նյութերի և դաշտային օրագրերի հիման վրա:

Տեղագիր-ճանապարհորդ, վիմագրագետ, հայ առաքելական եկեղեցու երախտավոր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը (1833-1911), իր հոգևոր գործունեությանը զուգահեռ, մեծ ավանդ ունի հայագիտության բնագավառում: Նրա տպագիր ուսումնասիրություններում կան ավելի քան յոթ հարյուր վիմագրեր Հայաստանից և հարակից երկրներից, որոնց գրեթե կեսը մեզ չեն հասել: Հատկապես հարուստ է հեղինակի արխիվային ֆոնդը, որտեղ կան բազմաբովանդակ տեղեկություններ Վայոց ձորի բնակավայրերի վերաբերյալ: Դեռևս 1867թ., ստանձնելով Նախիջևան քաղաքի և շրջանի գյուղերի հոգևոր առաջ-

---

[1] *Ս. Ջալալեանց*, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858: *Ղևոնդ Ալիշան*, Սիսական, Վենետիկ, 1893: *Ե. Լալայեան,* Շարուր-Դարալագեազի գաւառ, Ազգագրական հանդէս, գիրք XII (այսուհետ՝ ԱՀ, XII), Թիֆլիս, 1904, 235-293: Վայոց ձոր, Նշանաւոր վանքեր, Ազգագարական հանդէս, գիրք XXVI (այսուհետ՝ ԱՀ, XXVI), Թիֆլիս, 1916, էջ 5-84: *Քաջբերունի* (Գաբրել Տեր-Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, 2003:

[2] *Դիվան հայ վիմագրության,* Վայոց Ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, 246 էջ (այսուհետ՝ ԴՀՎ, III):

նորդությունը, Մ. Սմբատյանցը հավաքել է Նախիջևան քաղաքի, գավառի և հարակից գավառների պատմությանն ու մշակութային արժեքների վերաբերյալ նյութեր՝ նպատակ ունենալով հրատարակել «Պատմական գաւառագրութիւն Նախիջեւանայ՝ քաղաքին Հայաստանի և հինգ գաւառակաց նորին Շարուրայ, Վայոց ձորոյ, Ջահկայ, Երնջակայ և Գողթնեաց» ուսումնասիրությունը, քանի որ այս երկրամասի վերաբերյալ «ցայսօր ամբողջ գրքի մէջ բովանդակուած ոչ ոքից չէ գրուած»[1]: Ցավոք, աշխատանքը չի պահպանվել, բայց մեզ են հասել Սրբազանի ձեռագրերում պահպանված պատմական[2] և վիմագրագիտական տեղեկությունները գավառի մասին:

Մեսրոպ Սմբատյանցի արխիվային մի քանի գործերից առանձնացնել ենք ավելի քան երեք տասնյակ վիմագրեր ներկայիս Վայոց ձորի մարզի Խաչիկ[3], Գնիշիկ, Աղավնաձոր[4], Արփի[5], (Եղեգնաձորի ենթաշրջան), Հորադիզ, Աղխաչ[6], Օղբին, Սերս[7], Մարտիրոս[8], Հերհեր[9],

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ,* ֆոնդ 429, ցուցակ 1, (այսուհետ՝ ՀԱԱ), գործ 11, Հրավիրագիր Նախիջևանի գաւառի տեղագրութեան տպագրութեան համար, թերթ 9ա:

[2] Վայոց ձորի բնակավայրերը համառ և անզիջում պայքար են մղել հատկապես 1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ: Մ. Սմբատյանցն իբրև ականատես մանրամասն նկարագրել է թուրքերի կողմից հայկական գյուղերում կատարված ոճրագործությունները, թալանը, նաև հայերի ինքնապաշտպանական մարտերը: Տե՛ս *Մատենադարան*, թղթապանակ 217, Մ. Սմբատյանցի արխիվ 1883-1905թթ., (այսուհետ՝ Մատենադարան), վավերագիր 3, Քաղուած հայ-թուրքական ընդհարման պատմութիւնից 1905-06թթ.:

[3] *ՀԱԱ,* գործ 104, Տեղեկություններ Շարուր-Դարալագյազի դպրոցների 1830-80թթ. պատմության մասին, թերթ 8բ: *ԴՀՎ*, III, էջ 205-208:

[4] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 26ա, բ: *ԴՀՎ*, III, էջ 34-39:

[5] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 22ա: *ԴՀՎ*, III, էջ 28-33:

[6] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 43բ: Գ. *Հովսեփյանց,* Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, հատոր Գ, Նիւ Եորք, 1942 (այսուհետ՝ Խաղբակյանք կամ Պոռշյանք), էջ 5: *ԴՀՎ*, III, էջ 201, արձ. 647:

[7] Սերսի Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցու շինարարական արձանագրության մեջ Մ. Սմբատյանցն անձնանունը վերծանել է *Նախիջևան*, բնագրում այն ընթերցում ենք *ԱԽՍԷՃԱՆ*: Տե՛ս *ՀԱԱ*, գործ 5, Տեղեկություն Վայոց ձորի վանքերի մասին, թերթ 21: Գ. *Սարգսյան, Հ. Մելքոնյան*, Վիմագրագիտական էսքիզներ-2, ՊԲՀ, 2012, 3 (այսուհետ՝ Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան), էջ 111:

[8] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 21ա: *ԴՀՎ*, III, էջ 178-191:

[9] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 43բ: *ԴՀՎ*, III, էջ 47-69:

Կեչուտ[1] (Վայքի ենթաշրջան) բնակավայրերի մի շարք հուշարձաններից, ինչպես նաև Սպիտակավորի վանական համալիրից[2]: Դրանց մի մասն ուսումնասիրվել և հրատարակվել է, սակայն ներկայացնում ենք ևս ինը վիմագիր Մ. Սմբատյանցի վերծանությամբ, որից 7-ը մեզ չեն հասել:

Գնիշիկ գյուղը հիշատակվում է դեռևս միջնադարում Գնշին կամ Գնչին տարբերակով[3]: 1975 թ. սողանքների հետևանքով գյուղի բնակչությունը տեղափոխվել է՝ բնակություն հաստատելով նորաստեղծ Արփի ավանում[4]: Հին բնակավայրից մինչ օրս հրատարակվել է չորս վիմագիր[5]: Մ. Սմբատյանցն այստեղից հիշատակում է ևս երկու արձանագիր խաչքար, որոնք տեղում չեն.

1. ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՅ. ԹՎ. ՉԺԲ (1263)[6]:

2. ԵՍ ՇԱՀՐԻԱՐՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱՉՍ Ի ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԸՍՏԵՓԱՆՆՈՍԻ Ի ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹԵԱՆ ԱՃԲԻՆ[7]:

Կոթողը, ըստ վիմագրի, կանգնեցվել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփաննոս Օրբելյանի իշխանության տարիներին (1286-1303թթ.): *Շահրիար* անձնանունը, որը պարսկերենից թարգմանաբար նշանակում է թագավոր, հանդիպում ենք XV դարից սկսած ձեռագիր հիշատակարաններում[8]: Սակայն *Շահրիար* անվամբ բնակավայրեր են եղել Երևանի նահանգում և Նախիջևան գավառում[9]: *Աճուբ* անձնանունը հավանաբար Աղուբ (Եաղուբ՝ արաբ., Հակոբ) պետք է ընթերցել[10]:

1970-ական թթ. լքյալ էր նաև Հորադիզ գյուղը (Հողոցիմ, Կորադիզ, Կորտոյնք, ռուս. աղբյուրներում՝ Գերադիզ): Վաղ միջնադարյան բնակավայրի մասին վկայում է Եղիշե պատմիչը, ով նշում է,

---

[1] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 43ա: *Ալիշան,* Սիսական, էջ 103, *Ե. Լալայեան*, ԱՀ, XII, էջ 253: *ԴՀՎ*, III, էջ 21-22, արձ. 31-37:

[2] *ՀԱԱ,* գործ 100, Վիճակագրական տվյալներ հայկական գյուղերի, եկեղեցիների և բնակչության մասին, թերթ 31ա: *ԴՀՎ*, III, էջ 96-101:

[3] *Սփ. Օրբելյան,* Սյունիքի պատմություն, Երևան, 1966, էջ 395: *ԴՀՎ*, III, էջ 204-205:

[4] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան* (այսուհետ՝ *ՀՀՇՏԲ*), հատոր I, Երևան, 1986, էջ 927:

[5] *ԴՀՎ,* III, էջ 204:

[6] *ՀԱԱ,* գործ 104, թերթ 8բ:

[7] Նույն տեղում:

[8] *Հ. Աճառյան*, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1948, էջ 132:

[9] *ՀՀՇՏԲ*, հատոր IV, Երևան, 1998, էջ 60:

[10] *Հ. Աճառյան*, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 109:

որ Ամենայն հայոց կաթողիկոս Հովսեփ Ա Վայոցձորցին (440-451) սերում էր «ի գեղջէ Հողոցմանց»[1]: 1886թ. դրությամբ լեռնային այդ գյուղում կար 81 տուն[2]: 1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Հորադիզն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ զերծ մնաց ասպատակություններից, ավելին՝ այստեղ ապաստանեցին հարևան Աղխաչ և Օղբին գյուղերի հայ ազգաբնակչությունը[3]: Գյուղի կենտրոնում մինչ օրս կանգուն է XVII դարի սրբատաշ քարով կառուցված Ս. Նիկողայոս բազիլիկ եկեղեցին, որի արևմտյան մուտքի բարավորին կա շինարարական հետևյալ արձանագրությունը, 2 տող (նկ. 1, գրչ. 1).

1. ԹՎ. ՌՃԺԵ (1666) ՇԻՆԵՑՕ ԵԿԵՂԵՑԻ ԼԻՍ ԱՆՈՒԱՄԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ,

ՈՐ ԳԵՂՈՎ ԱՇԽԱՏԵՑԱՔ[4]:

Եկեղեցուց քիչ ներքև, գյուղ մտնող ճանապարհի ձախ հատվածում կա մատուռ, որը տեղացիներն անվանում են Փոքր վանք: Մատուռի արևմտյան մուտքի վերնամասում եղել է.

2. ԹՎ. ՌՃԾԳ (1704) ՔԱՍՊԱՐ ԽԱՆՍ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ[5]:

Հորադիզից դեպի Օղբին (Աղոպեն) տանող լեռնային ճանապարհի գրեթե կենտրոնում՝ ձորակում, գտնվում է Մեծ Ոանք կամ Ս. Վարդան կիսավեր հուշարձանը: Այն հարուստ է վիմագրերով՝ մոտ չորս տանյակ, սակայն Մեսրոպ Սմբատյանցը գրառել է ընդամենը չորսը,

---

[1] *Եղիշէ*, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 358:

[2] *Մատենադարան*, վավերագիր 3, թերթ 19-20:

[3] Նույն տեղում, թերթ 54:

[4] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 7բ: Գ. *Հովսեփեանց*, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 4: Վիմագրագետ Ս. Բարխուդարյանը հավանաբար չի եղել հուշարձանի տարածքում և հրատարակել է այն որպես կորած վիմագիր: Տե՛ս ԴՎՀ, III, արձ. 654, էջ 202: Վիմագրի լուսանկարը տրամադրել է Ն. Մինասյանը:

[5] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 7բ: Անցյալ տարի կատարած մեր ուսումնասիրությունների ընթացքում այստեղից վերծանել ենք ևս չորս վիմագիր, որոնցից միայն մեկի թվականն է պահպանվել: Տեղահանված խաչքարի ստորին մասը կոտրված է, արձանագրությունը պահպանվել է կոթողի վերին հատվածում, 6 տող. *ՍԲ խ/ա՛չս բարեխօս/ս հոգոյն Պապ/ա՛յ/ճանին մօրն/ Նիազաղին/ ԹՎ. ՌՀԹ (1620):*

որից երեքը մեզ չեն հասել[1]: Արձանագրության մեջ հիշատակ–վող Տեր Կիրակոսը կառուցել է վանական համալիրի կամ Անապատի գլխավոր եկեղեցին, որի արևմտյան մուտքի բարավորի շինարարա–կան արձանագրությունն է (նկ. 2).

3. ՇԻՆ[Ե]ՑՕ ՀԵԿ[Ե]Ղ[Ե]Ց[Ի]Ս ԹՎ [ԻՆ] ՌՃԻԸ (1679), ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆ ՈՐԴԻ ՏՐ ԿԻՐԱԿ[Ո]ՍԻ ԳՐ[Ե]ՑԻ ՀԱՅՍ[2]:

Եկեղեցու արևմտյան պատին ագուցված խաչքարին եղել է.

1. ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է ՅԱԿՈԲԻ ՈՐԴԻ ՄԱՂԴՍԻ (մահտեսի) ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, Թ. ՌՃԾԱ (1702)[3]:

Եկեղեցու մկրտության ավազանի խաչքարի պատվանդանին էլ՝

2. ԵՍ ԿՈՍՏԱՆԴ ՔԱՀԱՆԱՅՍ ՇԻՆԵՑԻ ԱՆԱՊԱՏՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ՀԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄ, ՀԱԻՐՆ ԻՄ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՄԱՒՐՆ ԻՄ ԵՂԻՍԱԲԷԹԻՆ . ՅԻՇԵՑԷՔ Ի $\overline{\text{ՔՍ}}$[4]:

Եկեղեցին կոչվում է Ս. Վարդան, որի մասին տեղեկանում ենք Մ. Սմբատյանցի կողմից հայտնաբերված եկեղեցու զանգի մակագրութ–յունից.

3. ՅԻՇԱՏԱԿ Է ՀԱՆԳՍ ՍԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ[5]:

Տեր Կիրակոսը հիմնել է ոչ միայն Ս. Վարդան եկեղեցին, այլև մասնակցություն է ունեցել Օղբինի (Աղոպեն) Ս. Աստվածածին կիսա–ժայռափոր եկեղեցու կառուցմանը, որի առհավատչյան է հարավային

---

[1] Վանքի վիմագրերը համեմատելու համար օգտվել ենք վիմագրագետ Գ. Սարգսյանի դաշտային օրագրից (այսուհետ՝ ԴՕ):

[2] *ՀԱԱ,* գործ 104, թերթ 40ա: Գ. *Սարգսյան, Հ. Մելքոնյան,* էջ 111: Նախորդ հրատարակիչների վերծանության մեջ կա երկու վրիպակ, ուստի ներկայացնում ենք վիմագիրի ստույգ վերծանությունն ու լուսանկարը: Լուսանկարը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ Գ. Սարգսյանին:

[3] *ՀԱԱ,* գործ 104, թերթ 40բ:

[4] *ՀԱԱ,* գործ 104, թերթ 41բ: Կոստանդ քահանան հիշատակվում է նաև եկեղեցու խաչքարերից մեկի վիմագրում (4տող). *Կ[ա]նկ[ն]եցաւ խ[ա]չս/ /ի՝ հոգոյ Կոստանդ/ ք[ա]հ[անայի]/ եւ Եղիսաբ[եթի]// յիշէք* $\overline{\text{ՔՍ}}$: Տե՛ս Գ. *Սարգսյանի ԴՕ*:

[5] *ՀԱԱ,* գործ 104, թերթ 41ա: Ս. Վարդան անվամբ հուշարձաններ կան Սյունիքում, Վասպուրականում: Տե՛ս *ՀՀՇՏԲ*, V, էջ 778-779:

մուտքի բարավորի արձանագրությունը: Ցավոք, տարիների ընթացքում վիմագիրը եղծվել է՝ դառնալով դժվարընթեռնելի, սակայն, բարեբախտաբար, վերծանությունը պահպանվել է Մ. Սմբատյանցի արխիվում[1] (նկ. 2):

Խնձորուտ (նախկին՝ Ալմալու) գյուղից մոտ 2 կմ հարավ, հայ-նախիջևանյան սահմանագոտում, պահպանվել են հին Խնձորուտի ավերակները և երկու եկեղեցի: Ս. Ստեփաննոս բազիլիկ եկեղեցին վերանորոգվել է XIX դարում, որի ընթացքում արձանագիր բեկորները հայտնվել են կառույցի տարբեր մասերում: Ներկայումս պահպանվել է չորս վիմագիր, ևս մեկի մասին է հիշատակում Մ. Սմբատյանցը, որը տեղում չէ: Կիսատ վերծանված արձանագրությունը եղել է մկրտության ավազանի պատին.

4. ԵՍ ՊՕՂՈՍ ԿԱՆԳՆԵՑՐԻ ՍԲ ԱԽԱՉԱՆՍ ԹՎ. ՌՃԾԷ (1708) ԵՒ ԻՄ ԿԻՆ ԱՆՆԱ[2]...:

Փաստորեն, Մ. Սմբատյանցն իր շրջագայությունների ընթացքում Վայոց ձորի բնակավայրերից հավաքել է 32 արձանագրություն՝ վիմագրական ժառանգությունը հարստացնելով ևս 7 նոր վիմագրերով: Սրբազանի արխիվային նյութերի ուսումնասիրումն ու հրատարակումը կարող է նոր խթան հանդիսանալ հայ վիմագրագիտության համար: Լիահույս ենք, որ Մ. Սմբատյանցի գիտական վաստակն ըստ արժանվույն կգնահատեն սերունդները:

SUMMARY

UNPUBLISHED EPIGRAFIC INSCRIPTIONS FROM VAYOTS DZOR

ADAMYAN SUSANNA

There is a rich of epigraphic and historical information about Vayots Dzor settlements in the studies of surveyor-travelers in XIX. In the Soviet Union time all that was put on the scientific base, but there are historic architectural monuments that are left out of attention. For that reason we tried to publish the unpublished inscriptions of M. Smbatsyants on the base of archival materials and field blogs.

Mesrop Archbishop Smbatyants (1833-1911) left a rich epigraphic heritage (near 730 epigraphs). There are more than three dozen inscriptions in his archive

[1] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 42ա: Գ. *Սարգսյան, Հ. Մելքոնյան*, էջ 110:

[2] *ՀԱԱ*, գործ 104, թերթ 43բ:

funds from number of settlements of Vayots Dzor (Khachik, Gnishik, Aghavnadzor, Horadiz, Aghkhach, Oghbin, Sers, Martiros, Arpa, Herher, Kechut), some of them had already been studied in the latest period. Here are 9 lithographs (7 are none preserved) which provide additional information about the history of the monument. They are published for the first time with the author's decoding and our partial editing.

РЕЗЮМЕ

НЕИЗДАННЫЕ НАДПИСИ ИЗ ВАЙОЦ ДЗОРА

АДАМЯН СУСАННА

В неизданных работах архиепископа Месропа Смбатьянца(1833-1911) есть многочисленные сведения о местностях Вайоц дзора и сведения относительно истории и искусства. Он собрал более, чем три десятка каменные надписи с памятников деревень таких, как Хачик, Гнишик, Кечут, Агавнадзор, Корадиз, Агхач,Огбин, Серс, Мартирос, Арпи, Гергер, также с Нораванка, Спитакавора. Одна их часть была исследована специалистами, однако ещё десять (семь из них до нас не дошли) были выделены из архивных фондов автора. Рукописи издаются впервые и сделаны с текстуальным сравнением с нашей стороны.

Նկ. 1 Հորադիզի Ս. Նիկողայոս եկեղեցի



գրչագիր 1

Նկ. 2 Հորադիզի Ս. Վարդան վանական համալիր

8. ОСВЕЩЕНИИЯ ОСВОБОЖДЕНИЕ ИВАНЯНА (ХОДЖАЛУ) В АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИОГРАФИИ. ФАКТЫ ПРОТИВ ЛЖИ

АВАНЕСОВ ОВИК СЕРГЕОВИЧ

Ключевые слова *- Иванян (Ходжалу), Азербайджан, Аяз Муталибов, Эльмира Ахундова, Ровшан Мустафаев, Рустам Гаджиев, Степанакерт.*

Освобождение Иваняна (Ходжалы) 1992, военное действие в аэропорту НКР* (находился возле села Иванян (Ходжалу) в 7 км от Степанакерта) с целью снятия блокады и ликвидации вражеских огневых точек. Произошло 25-26 февраля 1992 года. С весны 1991 года населенные пункты НКР периодически подвергались нападениям азербайджанского ОМОНА* и реактивной системы залпового огня «Алазань», «Кристалл» и БМ*-21. В это время были взяты в плен 700 мирных армянских жителей, были уничтожены сотни гектаров зерновых посевов, большая часть населенных пунктов была лишена электричества и водоснабжения. По причине продолжительной осады, бомбардировки, наличия большого количества беженцев, нехватки топлива, вынужденного простоя различных предприятий, в том числе пищевой промышленности, а также блокады межрегиональных дорог в НКР и, в частности в Степанакерте, ситуация постепенно ухудшилась, продукты и

топливо иссякли. Месячная доза хлеба на январь-февраль не превышала 400 г., в конце месяца начался голод, а в некоторых районах вспыхнули эпидемии. Спасение людей от голодной смерти, оказание медицинской помощи, освобождение единственного аэропорта и ликвидация вражеских огневых точек стало жизненной необходимостью.

До этого усилиями Народного фронта Азербайджана в Иванян (Ходжалы) были переброшены солдаты вооруженных подразделений ОМОНА, было организовано заселение там эмигрировавших из Узбекистана турокмесхетинцев и население с 2135 (1989 г.) выросло до 6000 (1991).

Военное действие по освобождению Иваняна (Ходжалы) и аэропорта (командующий Аркадий Тер-Тадевосян) началось 25 февраля 1992 года в 23.30 и завершилось в 3 часа 26 февраля. Атакующие Иванян (Ходжалы) подразделения СС* НКР оставили коридор для мирного населения села, для того чтобы они могли безопасно покинуть зону военных действий, о чем азербайджанская сторона была заранее проинформирована, однако последняя не предприняла никаких действий для вывода мирного населения из зоны военных действий.

После военных действий Ходжалы СС НКР освободили из плена 12 армян, в том числе 1 ребенка и 6 женщин, захватили две БМ-21, 4 установки «Алазань», одну 100 мм пушку и три единицы бронетехники. Спасательная служба НКР Арцах в Иваняне (Ходжалы) и в округе обнаружила трупы 11 мирных азербайджанских жителей. Сотни мирных жителей Ходжалы погибли в 10-11 км. от села, на подступах к Акне (Агдаму), где было расположено региональное подразделение Азербайджанских ВС*[1]. Официальная пропаганда Азербайджана пытается обвинить армян в резне мирного населения Иваняна (Ходжалы), однако даже президент Аяз Муталибов в марте 1992 году признался, *«….что коридор, по которому люди могли покинуть зону,*

[1] Энциклопедия «Карабахская национально-освободительная война 1988-1994», гл.ред. О.Айвазян. Издательство «Армянская энциклопедия». Ереван 2004, стр.271-272.

армяне, все таки оставили. Зачем же им тогда стрелять? Тем более на территории, близкой к Агдаму, где к тому времени было достаточно сил, чтобы выйти и помочь людям»[1].

Эльмира Ахундова в сваей работе «Ходжалы. Хроника геноцида», пишет: «Ходжалы... В ночь с 25 на 26 февраля название этого города вписалось в кровавую летопись необъявленной войны в Карабахе. Связь с Ходжалы была прервана в ту самую ночь, поэтому полную картину развернувшихся там событий и масштабы происшедшей трагедии передать было трудно. Корреспонденту Азеринформа в Агдаме удалось воссоздать ее по рассказам очевидцев - жителей Ходжалы, чудом выбравшихся из горящего города и сумевших пробиться в Агдам. ...Еще 25 февраля вокруг осажденного города сконцентрировались крупные силы армянских вооруженных формирований, весь этот день из вражеского стана раздавался гул работающих моторов танков, бронетранспортеров и БМП. По всему было видно - готовится захват Ходжалы. Вечером загрохотали артиллерийские орудия, а небо буквально изрешетили следы трассирующих пуль. На город обрушился шквал смертоносного огня. В нескольких местах вспыхнули пожары, а к пяти часам утра город практически полностью был объят пламенем... »[2]. Отметим тот факт что об операцы было перепружена азербайджанская страна свидетельствуют слова экс-президента А. Муталибова**,** «…нападение на Ходжалу не было внезапным, о том, что оно готовится, было хорошо известно в Баку. Знали здесь и об «аскеранском коридоре», оставленном армянской стороной для эвакуации мирных жителей»[3].

[1] Независимая газета 2.4.1992.
[2] Эльмира Ахундова, Ходжалы. Хроника геноцида, Баку, 1993, с.10-11.
[3] «Огонек», N14-15, 1992 г.

Публицист Тахир Гашим-заде «события» Иваняна сравнивает с трагедией. Беслана одновременно обвиняя Россию в спонсировании «сепаратистских движений»[1]- автор пишет: «До трагедии в Беслане уже была трагедия азербайджанского населения Ходжалы, когда армянскими боевиками были уничтожены 617 человек, включая грудных детей. В Ходжалы и Беслане чувствуется один почерк. И там, и тут была проведена акция по устрашению и уничтожению населения с целью углубления противоречий между конфликтующими сторонами. Террористический акт в Беслане был не просто актом террора…».

В журнале МИД* Азербайджана о событиях Иваняна читаем: «…существующие факты доказывают что геноцид жителей Ходжалы, который был реализован 25-26 февраля 1992 г. ввключая` дитей, стариков и женшин, целиустримленно массово убивали потаму что они азербайджанцы»[2]. Даная формолирфка редколегия указоного журнала перепичатла и изминила дату и геграфическую названия из работ посвешоного армянскогс генацида в Османском империи.

Монографии «Xocali soyqirimi» читаем: «До первой половины февраля 1992 года армяне захватили населенные пункты в окрестностях дороги Шуша-Ходжалы и Шуши. Ходжалы оказался полностью окруженным и был лишен связи воздушным путем. Зенитно-ракетные комплексы и зенитная артиллерия врага не позволяли вертолетам летать в Ходжалы. В ночь с 25 на 26 февраля 1992 года армянские вооруженные формирования совместно с 366 мотострелковым полком оккупировали город Ходжалы и аэропорт расположенный поблизости. Армянские вооруженные формирования и 366 мотострелковый полк Российской армии осуществили чудовищный геноцид против жителей Ходжалы»[3].

---

[1] Тахир Гашим-заде, Ходжалы и Беслан. Трагические итоги вековечной политики (Эхо, 10.09.2004).

[2] Azərbaycan Respublikasi Xarici İşlər Nazirliyini “Diplomatiya Aləmi” jurnali, Xüsusi Buraxiliş, Baki, 2005, s. 54.

[3] QAT (Qarabağ Azadliq TəĢkilati). Xocali soyqirimi. Baki, 2015, s.4.

Поэт, публицист Хафиз Али пишет:«То, что произошло в Ходжалы, - ни с чем не сопоставимо. Порой трагедию Ходжалы сравнивают с Сонгми и Хатынью. Но Сонгми и Хатынь были маленькими селениями. Ходжалы - город с десятитысячным населением. Здесь полностью истреблено более 200 семей. О тысячах жителей пока ничего не известно. Причем, мы почему-то говорим только о населении города. А омоновцы, а те, кто спешил на помощь ходжалинцам? Их число тоже исчисляется сотнями...»[1].

В энциклопедии Ровшана Мустафаева о сабтиях Иваняна написана: «Вооруженные силы Армении при содействии российского 366-го полка, состоящего, как выяснилось позже, в основном из армянских офицеров и прапорщиков, стерли с лица земли азербайджанский город Ходжалы. Жертвами варварской акции стали около тысячи человек, главным образом старики, женщины и дети. Это кровавое преступление стало одним из самых чудовищных деяний международного терроризма против гражданского населения в XX веке. Массовое истребление мирных жителей города Ходжалы в Нагорно-Карабахском регионе Азербайджана состоялось в ночь с 25 на 26 февраля 1992 года. Сотни ни в чем не повинных людей были зверски уничтожены за одну ночь. Трагический итог ходжалинского преступления: 613 погибших, в том числе 106 женщин и 23 ребенка, 487 инвалидов, 1275 прошедших через ужасы армянского плена, 150 пропавших без вести. В ходе этой варварской операции десятки детей, женщин и стариков расстреляны в упор»[2]. Считаем необходимом отметить тот факт что за все протяжение национально освободительное движение против азерских оккупантов силовые структуры РСФСР* не воевали со страны армян (это в своих

[1] «Адабият ве инджесенет», 3 апреля 1992 г.

[2] Ровшан Мустафаев, Преступления армянских террористических и бандитских формирований против человечества (XIX-XXI вв.) Краткая хронологическая энциклопедия, Баку - ЭЛМ – 2002, с. 130.

роботах подтверждают яркие представители азербайджанской пропагандистской системы) был с точностью наоборот, подтверждением этому операция «Кольцо»[1]. Военная операция «Кольцо» (30.04-20.08.1991) была осуществлена силами Внутренних войск МВД* СССР* и спецназа милиции МВД Азербайджанской ССР, а также подразделениями 23-й дивизии (расположенной в г. Кировабад) 4-й армии МО* СССР. В ходе этой операции население армянских сел Геташен и Мартунашен района Ханлар Азербайджанской ССР и ряда сел района Шаумян АО* Нагорного Карабаха было депортировано. Депортация армян Арцаха была организована президентом Азербайджанской ССР Аязом Муталибовым и вторым секретарем ЦК КП* Азербайджана В. Поляничко. А. Муталибов согласовывал программу действий с президентом СССР М. Горбачевым, который несет ответственность за депортацию и резню в Арцахе. В принятии решения о выполнении военной операции «Кольцо» лично участвовали МВД СССР Б. Пуго, начальник КГБ* СССР В. Крючков, министр обороны СССР Д. Язов, а в разработке военной операции участвовал также замминистр МВД СССР генерал Б. Громов. Командир внутренних войск МВД СССР генерал-лейтенант Ю. Шаталин лично контролировал ход операции. Список условных вызовов всех военных подразделений и командирских составов, принявших участие в этой операции, похищенный у командира бакинского полка Внутренних войск МВД СССР командиром самообороны Геташенского субрегиона Татулом Крпеяном, является главным доказательным фактом государственно-террористического характера военной операции «Кольцо»[2].

---

[1]Об операциии «Кольцо» подробно читайте՝ Tomas de Waal. Black Garden; Armenia and Azerbaijan through Peace and War. New York and London, 2003, pp.110-111, Ayaz Mutalibov's interview: Thomas de Waal: Armenia and Azerbaijan through Peace and War, New York, 2003, pp. 143-164, Cox C. and Eibner J.: Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh; Institute for Religious Minorities in the Islamic World; Zurich, London, Washington, 1993, pp. 32-47.

[2] Барсегян И. В., Государственно-терористичсский характер военной операции «КОЛЬЦО», «вестник общественных наук», 2013 № 3, с. 91- 92.

О том что азербайджанская пиар машина фальсифицирует Иванянские события доказывают эти фотографий[1].

В книге Гайк Демоян и Левон Мелик-Шахназарян «Ходжалинское дело: Особая папка» читаем: *«...В действительности военнослужащие 366 мотострелкового полка СНГ не принимали участия в штурме Ходжалу. Собственно говоря, в этом не было небходимости, ибо вооруженные подразделения армян имели на вооружении бронетехнику. Еще в начале декабря они предприняли разоружение советского милицейского полка, переброшенного в Степанакерт для обеспечения режима чрезвычайного положения. В результате этой акции армянские отряды заполучили большое количество стрелкового оружия и несколько единиц бронетехники (БМП, БТР*, БРДМ*). Небольшой части этого оружия, даже если не считать отбитую у азербайджанцев трофейную технику, было достаточно для успешного проведения операции. Как нам представляется, миф об участии 366 полка в боях за Ходжалу родился:*

[1] Мать оплакивающая смерть своих детей, http://www.xocali.net/ru/mat-oplakivajushhaja-smert-svoikh-detej.html.1.10.2016.

- как следствие попыток азербайджанских защитников Ходжалу "оправдаться" перед соотечественниками;

- ввиду того, что при штурме Ходжалу армянские вооруженные подразделения впервые с начала конфликта использовали военную бронетехнику»[1].

Азербайджанскй афтор Хавва Мамедова о сабтиях Иваняна пишет: «Ходжалы был заблакирован армянскими воружоными формираваниям. Все дораги были перекрыты. Город потеял связь по суше с внешним миром. Электроснабжение было перевано. С нояабря 1991 года жители могли подерживать связь с большой землей лишь по телефону.... 18 января 1991года водушном постранстве автномной области был сбит верталот МИ 8 гражданской авиаци, на борту которого находилось свыше 40 азербайджанцев. После этой диверсии и гибели пассажиров прервалось и воздушное собшение с Ходжалы.

Отерзоный от болшой земльи город, где был отряд сомообороны, имевший лишь 50-60 автаматов, охотничих ружей, оказался в окружение воружоных до зубов боевиков, поддержных бронитехникой и своременными огневыми средствами»[2].

Мамедова делает нелогичные выводы также кастельно к участью 366-го мотомеханизированного пола в операции освабаждения Иваняана и учатиях в других боевых дествиях. «1991 г. 30 октьбря с учатием теьники и командного сатава 366-го мотомеханизированного пола окупироавли силение Туг и Селакатин, 12 ноября - село Ахулу, 19 ноября - село Ходжавенд. Жиетли были частью убиты, часть спаслась бегством... »[3]. Считаем важном отметить тот факт что вышеупомянутый мотомеханизированный полк еще находилась под руководством

[1] Гайк Демоян, Левон Мелик-Шахназарян, Ходжалинское дело: особая папка, Е., 2003, с. 19-20.
[2] Хавва Мамедова, Ходжалы: Шехиды и Шахиды, Баку, 2004, с. 22.
[3] Тамже, с. 21.

Азербайджана. Рукаводства полка только 16 января 1992 г. обяавило об отказе подчиняться рукаводству Азербайджана в войне против НКР[1].

Касетльно собтиям Иваняна автар цтироватет слова очивидца Алмедар Аббасова: «…когда около 150 жителей Ходжалы, которым прорываясь сквозь окружение стали продвигаться в направлении Агдама, попали в засаду устроенную воружоными армянами, то часть беженцев зверски перебили на месте, остальных взяли в плен…»[2]. Однако из Акны (Агдам) не подтверждались атаки со страны армянских солдат по той простой причине что до 1993 г. это территория находилось под контролем Азербайджанской армии.

События Иванян результат внутри политических грязных игр об этом свидетельствуют слова политических и общественных деятелей Азербайджана которые в то время занимали высокие государственные посты. Ниже приставляем слова некоторых из этих деятелях.

Рустам Гаджиев

член правления НФА* Агдама

«…Мы могли бы помочь ходжалинцам, были и силы, и возможности. Но руководители республики хотели показать народу, что у них силы нет, и снова призвать на помощь армию СНГ*, подавив с ее помощью заодно и оппозицию»[3].

Э. Мамедов

мэр Ходжалу

«…После сообщения о готовящейся операции по взятию городка я попросил Агдам прислать вертолеты, чтобы вывезти стариков, женщин и детей. Нас заверили: завтра проведем операцию и прорвем блокаду. Помощь так и не пришла»[4].

М. Сафароглы

---

to co-operate with the Council in order to put an end in the shortest time possible to the horrors of the Armenian tragedy, requests the Council to negotiate with the Governments with a view to entrusting a Power with the task of taking the necessary measures to stop the hostilities between Armenia and the Kemalists." Romanian representative Take Ionescu joined Viviani's proposition, while Fridtjof Nansen and Canadian representative Charles Doherty introduced the discourse on (and arguments for) a possible joint military intervention.[1]

After long discussions, President Hymans called for the closure of the debate and asked Lord Cecil to address the Assembly, who, in turn, thanked the Assembly for the valuable debate, and expressed his excitement over the debate, which he regarded as "the most interesting debate we have had, because it has been a real discussion of a very urgent and difficult problem." He acknowledged that practical solutions are needed for the Armenian question, and proposed to move the motion of La Fontaine. He explained that all proposals concerning Armenia, from sending telegrams to governments to the establishment of an army, could be submitted to the committee, which will immediately study them and provide the Assembly with a report. At this point Lord Cecil considered every solution to the Armenian question, except admission, possible: "negotiations [...] appeals to the Powers [...] mandatory or in any other way, direct assistance, direct interventions."[2]

The debate went on, until eventually the first resolution concerning Armenia was adopted, officially embracing the strategy of a mandate, requesting the Council "to arrive at an understanding with the Governments, with a view to entrusting a Power with the task of taking the necessary measures to stop the hostilities" in Armenia. The resolution also ordained the establishment of a special committee to investigate the

[1] Ibid., 94-97.
[2] Ibid., 98-100.

Armenian question, adjourning any actual measures and commitments by the Assembly.[1]

Joint military intervention

As maintained above, the strategy of a joint military intervention to protect Armenia was proposed by Fridtjof Nansen on the 22nd of November relating to the proposition of Lord Cecil, however, a similar approach was first introduced by Karl Hjalmar Branting, Swedish representative, as a hybrid of the two strategies of a mandate and an inter-allied military intervention. He made his remarks after Spalaikovitch's proposal, stressing that "we are to do more than receive telegrams, and as the hon. Representative of Serbia suggested, send telegrams," and pointed out that the matter in question is of a much more serious and problematic nature. He stated that although there was no other option than to assign a mandate over Armenia to one "single Power", there is not a state that was willing to take up this duty, as they lack the necessary resources, therefore, to foster the case of the mandate, a joint action should be taken by each and every member states "to provide it [future mandatory state] with the necessary financial assistance, and to provide it probably with the necessary aid in men and munitions." Therefore, although he maintained that the sole solution was a mandate, he introduced the idea of a joint military intervention to protect Armenia.[2]

Fridtjof Nansen, who was probably best informed at the Assembly about the situation in Armenia, urged immediate and actual actions. Without further pushing the question of a mandate he concluded that the only effective solution to the Armenian question was the establishment and deployment of an "expedition," an international army of "60 000 men at

[1] Resolution adopted November 22, 1920. Resolutions adopted by the Assembly during its First Session. AAN AJP, Pôrządki obrad, stenogramy posiedzeń, sprawozdania z prac organów Ligi Narodów, druki urzędowe. Folder 872. 176.

[2] Discussion of the Proposition of Lord Robert Cecil concerning Armenia. Provisional Verbatim Record, 9th Plenary Meeting (Salle de la Reformation), Monday 22th Nov. 1920, at 10:30 A.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. AAN AJP, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 92-93.

an expense of perhaps twenty million pounds" which could be collected from state and private donors in the US and member states to the League. His proposition was reinforced by Canadian representative Charles Doherty, introducing a legal argumentation for direct and joint military intervention.[1]

The proposal of Nansen was rejected, but not abandoned, as the Romanian delegate embraced it and moved a motion on the 29th plenary meeting to organize a joint military expedition to Armenia. The following proposal was submitted to the Assembly by Take Ionesco on the 17th of December:

"In order to bring about speedy and real assistance to the Armenian people who are apparently in death's agonies, Romania proposes to the Allied Nations assembled at Geneva that an International Expeditionary Force should be formed, charged with the duty of establishing order and peace in Armenia, and this international body should be placed under the command of an Inter-Allied General Staff, and might be composed of a force of 40,000 men, made up of detachments of all the countries at present belonging to the League of Nations according to their proportionate populations. Romania declares herself ready to assist in this work, both in material and men, and her money."[2]

Lord Cecil reacted to the Romanian government's proposal by raising the question of the persecution of the Ukrainian Jewish population without giving any remark on the proposal in question, implicating that priority should be given not to the relief for Armenians, but Ukrainian Jews. However, Paul Hymans suggested to discuss that matter at a different time. He remarked the proposal of establishing an "Inter-Allied Command" for the purpose of safeguarding Armenia as an admirable "humanitarian and generous proposal", however, recommended that it should also be discussed at a later time, since the Assembly's First Session was about to be

[1] Ibid., 96-98.

[2] Provisional Verbatim Record, 29th Plenary Meeting, Friday 17th Dec. 1920, at 4 P.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. AAN AJP, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 873. 230.

closed the following day, "therefore there will be no time for them [the Assembly] to study the question." In conclusion, he congratulated the Romanian Government for the "noble-minded" proposal. In return, Lord Cecil expressed his objections to the proposal of Hymans to consider and discuss the Romanian delegate's proposal at the next Session of the Assembly (1921), as similar questions were to be raised the very next day during the discussion on the Report of the Committee on Armenia. Therefore, on accounts of Hymans' suggestion, Ionescu was appointed as a member of the Committee on Armenia and asked to include his government's proposal in the committee's report the next day. Later that day the committee studied the possibility of a joint military intervention, and found it unfulfillable and dissociated from it in its report submitted the next day.[1] A resolution was adopted to sum up the Assembly's modest commitments towards the Armenian Republic:

"The Assembly, recalling its decision of November 22nd, 1920, will continue to co-operate with the Council, which is entrusted with the duty of safeguarding the future of Armenia, referring for advice, if it should be necessary, to the Members of the League. The Assembly notes that, in response to the initiative taken by the League, universal sympathy has already been shown for Armenia, and that Armenia has received offers of mediation on her behalf from President Wilson, Spain and Brazil."[2]

The Assembly was closed that day, without any practical decision or agreement on "the most interesting debate" of the Assembly, that of the protection of Armenia. Already the fact of the failure of all proposed strategies (both peaceful and military) to protect a recognized (quasi-ally) state speaks volumes, however, analyzing discursive practices of the parties engaged in the debate could shed more light on the assessment of the Armenian question by the Allies at the end of 1920.

[1] Ibid., 230-231.

[2] Resolution adopted December 18, 1920. Resolutions adopted by the Assembly during its First Session. AAN AJP, Pôrządki obrad, stenogramy posiedzeń, sprawozdania z prac organów Ligi Narodów, druki urzędowe. Folder 872. 176.

Discourses on peace and responsibility

However controversial the discourse on the protection of Armenia at the First Assembly might had been, certain features of commonly adopted principles can be identified, such as the humanitarian and moral justification of the discourse itself and proposed strategies for international protection of Armenia, the unanimous recognition of genocide (in a pre-Lemkin terminological context), and the acknowledgement and (a certain) mitigation of the sense of Allied responsibility for Armenia and the Armenians. The Assembly's discursive assessment of the Armenian question illuminates the challenges the Assembly faced on account of the responsibility to (un)protect Armenia, as the League's own identification ("Temple of Right, the Palace of Peace"[1]) and legitimation ("such peoples should be entrusted to advanced nations").

First of all, the very existence of a discourse on Armenia before the Assembly was justified by humanitarian and moral argumentations. Although the main guideline of this discourse, namely the possible strategies to protect the Armenian Republic, was of technical and legal characteristics, practically every government's representative that engaged himself in it saw the ultimate roots and reasons behind the question in the previously experienced and still ongoing genocide of Armenians. George Barnes, the first to address to topic at the seventh meeting pinned downed his and his government's attitude towards Armenia by stressing that "Armenia is perhaps the most tragic of all countries. After long tortures her people are now in danger of further terror" and "extinction."[2] Serb-Croat-Slovene representative Spalaikovitch also expressed his government's sympathy to

[1] Framed by Hymans. Cf. Provisional Verbatim Record, 31st Plenary Meeting, Saturday 18th Dec. 1920, at 4 P.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. Archiwum Akt Nowych, Archiwum Jana Paderewskiego, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 873. 282-285.

[2] Provisional Verbatim Record, 7th Meeting, Monday 19th Nov. 1920, at 10.30 A.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. Archiwum Akt Nowych, Archiwum Jana Paderewskiego, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 63.

the Armenian people and reminded the Assembly that the "cold-blooded murder and methodical extermination of people" was "still continuing" by the Kemalist army.[1] Swedish representative Branting also used a similar argumentation to justify measures on behalf of Armenia, by acknowledging the fact of the "extermination of the Armenian people [...] in a systematic manner." Lord Cecil also referred to the victims of the ongoing genocide as "[a] nation [that] is actually in process of extermination."[2] Another commonly used expression was "the Armenian massacre" – often used by, for example, Sir Balfour and Nansen –, in a context implying that it relates to the systematic and planned annihilation of the entire Armenian population of Turkey, both in the past and present, similar to the definition of Raphael Lemkin.[3]

All the proposals were justified by humanitarian argumentations on peace and justice in Armenia particularly, and globally in general. For example, Doherty, when arguing the necessity of a joint military intervention (war on the Kemalists), pointed out that "the one more precious thing than peace in this world is justice, and justice is the only foundation upon which peace can securely rest. This wrong [Armenian genocide, war in Armenia], and wrongs of this kind, appeal to humanity for redress, and, left unredressed, they carry within themselves a constant threat of war." His explicit argument for intervention was the future threat of continuing war in the region, however, he implicitly expressed global humanitarian concerns on peace and justice.[4]

---

[1] Discussion of the Proposition of Lord Robert Cecil concerning Armenia. Provisional Verbatim Record, 9th Plenary Meeting (Salle de la Reformation), Monday 22th Nov. 1920, at 10:30 A.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. Archiwum Akt Nowych, Archiwum Jana Paderewskiego, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 90-92.

[2] Ibid., 100.

[3] Cf. Daniel Marc Segesser and Myriam Gessler, „Raphael Lemkin and the international debate on the punishment of war crimes (1919-1948)," *Journal of Genocide Research* 7, no. 4 (2005): 453-468.

[4] Discussion of the Proposition of Lord Robert Cecil concerning Armenia. Provisional Verbatim Record, 9th Plenary Meeting (Salle de la Reformation), Monday 22th Nov. 1920, at 10:30 A.M.,

Moreover, the proclaimed aim of furthering and establishing global peace and justice was generally considered to be the core purpose of the League. Now, at the very first session of the Assembly, representatives of the "principal Governments" (as Ionesco referred to themselves) were facing an actual war, "if, indeed, this brutal massacre of a helpless people can be dignified by the designation of war", as Doherty noted, one that was fought disregarding the Treaty of Sèvres, thus, the whole post-war peace system, on a land for which the Allies have fought for in the Great War, annihilating a people to the protection of whom they publicly committed themselves. They feared that should the Assembly fail to carry out its adopted commitments to protect Armenia, its very *raison d'être* will have not been met, their eager endeavors for legitimization would have been abolished. Therefore, the Armenian question at the First Assembly exceeded its prior frames and became an existential question for the Assembly, a political-philosophical question of identification and justification of a proclaimed new world order (peace, justice, democracy), its instruments (mandate system, disarmament, etc.) and institutions (Assembly and Council of the League of Nations). As Lord Cecil pointed it out at the ninth meeting, the League, which "exists to maintain peace cannot stand, is not in a position to stand, indifferent to the outbreak of a new and terrible war" and he was to "regard with horror any decision of this Assembly which should definitely set aside action in this grave emergency and declare that a Society which had been brought into existence in order to preserve peace was powerless in the face of a great emergency of this kind."[1] Nansen expressed similar thoughts when admitting that the establishment of an inter-allied army exposes "a risk for the League to take up a question which it cannot solve, but as far as I can see it is a much greater risk to do absolutely nothing, and to say it is such a difficult and dangerous question that we dare not touch

First Assembly of the League of Nations, Geneva 1920. Archiwum Akt Nowych, Archiwum Jana Paderewskiego, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 96-97.

[1] Ibid., 99-100.

it."[1] Viviani also feared that if they fail to succeed in this matter, they "shall merely incur the ridicule of the world".[2]

To circumvent (or rather avoid) any commitments towards Armenia a certain (and implicit) mitigation of the Assembly's (and Allies) responsibility to the matter can be exposed. Although in general it was recognized by most of the state representatives, the discourse on responsibility gradually changed into a discourse on the limits of means to meet these responsibilities. As evidenced above, Barnes stressed that the Council's responsibility was met as it "has gone up to the limits of its powers", and its failure was not for "lack of will, but for lack of means."[3] Viviani later even relativized the very relevancy of the Armenian question to that of the authority of the Assembly. He argued that the reestablishment of a special committee on Armenia by the Assembly would lead to "anarchy" in the League, as it would conflict with the authority of the Council. He maintained that "however grave this Armenian question may be, this proposal [on reestablishing the Armenian committee] is still graver. [...] The Council is our Permanent Committee, and if any other Committee be established besides you destroy the Council's authority, and gradually rob it of its prerogatives."[4] Probably the most characteristic example of mitigating the Assembly's responsibility towards Armenia was provided by Branting at the ninth plenary meeting as follows:

"It is a tragic situation. We stand like people on the shore looking at the survivors of a wreck holding on to their ship which is about to be finally foundered. We give them words of encouragement, we express our horror at their position and our sympathy with their misfortunes, but so

[1] Ibid., 96.
[2] Ibid., 94.
[3] Provisional Verbatim Record, 7th Meeting, Monday 19th Nov. 1920, at 10.30 A.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. AAN AJP, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 63.
[4] Provisional Verbatim Record, 31st Plenary Meeting, Saturday 18th Dec. 1920, at 4 P.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. AAN AJP, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 873. 264

far we have not been fortunate enough to find a method of giving them effective aid."[1]

Using such a metaphor in a political statement in a legislative body on the course of a decision-making debate serves the sole purpose of abstracting the narrator from the narration, in this case, himself and the Assembly from the Armenian question and the ongoing humanitarian catastrophe of the Armenian people. He marked as nominative the Assembly ("We") and as accusative the survivors of the Armenian genocide. The position of the Assembly is that of a spectator, without any influence on the events. In his narration, to find a method of providing the survivors with effective aid is not a matter of willingness or authority, but is a subject to fortune ("have not been fortunate enough"), on which the Assembly evidently has no influence either. On accounts of this existing and inalterable situation (they are on the shore, while those are on a wreck), the only deed in their power was to express sympathy. And in fact, as it is evidenced in the previous chapters, that was all the First Assembly ventured to accomplish.

By analyzing the discourse on the Armenian question at the First Assembly of the League of Nations it is possible to come to a closer understanding on several other interesting aspects of the League's (and its member states') political-philosophical identification, legitimation and worldview; their (official) relations to the Kemalist and Bolshevik regimes; the League's institutional challenges (such as the delineation of collisional authorities of the Assembly and the Council or its inability to establish an inter-allied military force); and its (lack of) potentials to carry out their proclaimed humanitarian (and even strictly administrative) duties. However, all these exceed the purposes of this paper.

Conclusions

[1] Discussion of the Proposition of Lord Robert Cecil concerning Armenia. Provisional Verbatim Record, 9th Plenary Meeting (Salle de la Reformation), Monday 22th Nov. 1920, at 10:30 A.M., First Assembly of the League of Nations, Geneva 1920. Archiwum Akt Nowych, Archiwum Jana Paderewskiego, Stenogramy obrad I zgromadzenia Ligi Narodów, druki urzędowe. Folder 874. 94.

The Armenian question at the First Assembly of the League manifested itself in different contexts: human trafficking, minority rights and the prospects of international protection of the Armenian Republic. For the later, three schemes, three strategies had been proposed by members of the Assembly, that of Armenia's admission as a member state to the League, assigning a mandate over it to one of the Great Powers, and joint military intervention. The first two strategies had been found unachievable already preceding the Assembly that took place just three months after the Treaty of Sèvres, while the third was objected by most of the states, especially those members to the Council. Responsibility towards Armenia and the Armenians had been generally acknowledged on humanitarian grounds and the recognition of the Armenian genocide, however, the unwillingness of members of the Assembly to agree on a solution to the Armenian question had its roots in the fear of a possible (and potential) failure, which would have questioned the very *raison d'être* of the League, its identification as protectors of peace and justice, its legitimation. Thus, the Assembly sought to mitigate its responsibility to, and the relevancy of the Armenian question, the protection of the Armenian state.

As the Kemalist army advanced in Armenia, as Richard G. Hovannisian maintained, the "Allies sought to discharge their moral obligations to the Armenians without making military commitments",[1] and continued to do so at the Assembly. Although at that point a joint military intervention would have been accomplishable, but was supported solely by three states not members of the Council (Canada, Norway and Romania), and was objected by the Great Powers, states having military units already deployed on former Ottoman territories. Actual commitments to protect Armenia, other than expressing sympathy, have not been made. As Fridtjof Nansen in 1927 remembered, "separate and solemn pledges […] were given by the Governments of Western Europe to the Armenian nation during the

[1] Richard G. Hovannisian, *The Rpublic of Armenia, Vol. II, From Versailles to London, 1919-1920*, Berkeley–Los Angeles–London: University of California Press, 1982. 404.

course of the world war [...]. These pledges were sealed by the shedding of rivers of Armenian blood; but nothing has been done, nothing of any kind, to carry them out. Some private relief the Western peoples have been able to afford; but nothing real has been done at any time to help the Armenians to build up their National Home."[1] The Armenian Republic was *unprotected* by the Allies and the League of Nations in the early 1920s and was occupied by the Kemalists and Bolsheviks. This resulted in a status quo internationally recognized in 1923 by virtue of the Treaty of Lausanne, by the time of which the Great Powers, among others, in the frameworks of the Assembly of the League of Nations, dissolved the Armenian question into a discourse on humanitarian relief for the survivors of the Armenian genocide: the Armenian minority and abducted women and children in Turkey and Armenian refugees scattered throughout the globe. Although the protection of Armenia was not implemented, the work of the Commission of Inquiry regarding the deported Christian women and children in Turkey[2] (established by the Fifth Committee) and that of the High Commissariat for Russian and Armenian Refugees cannot be undervalued.

[1] League of Nations. Extract from the Minutes of the Twentieth Meeting of the Eighth Ordinary Session of the Assembly (September 26, 1927). Speech by Dr. Nansen. National Archives of Hungary, Fond K78 43/XIII-7. Original reference number: C.L.150.1927.IV. Annex.

[2] The commission found that an estimated 50% of the residents of Turkish orphanages were Armenians, and a great number dwelled in Turkish and other Muslim households. According to the estimations of the commission, some "6,000 children [...] detained in Moslem surroundings in Constantinople", and another 67,000 in the rest of the country. In the first months of its activities, the commission "reclaimed" some 2300 Christian women and children who have been taken after investigation from Muslim homes and institutions since the Armistice. Cf. Report by Dr. Kennedy, Member of the Commission. Work of the Commission of Enquiry with Regard to the Deportation of Women and Children in Turkey and Adjacent Countries. Armenian National Archives, Fond 430/1/1231. pp. .11746-11750. For more information, see: Péter Pál Kránitz, "Survivors, asylum seeking and repatriation. The case of Armenian refugees in Constantinople," *History and Social Sciences*, no. 1 (2015): 88-100.

11. ՖՐԱՆՍԻԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1901-1904 ԹԹ.

ԱՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ «Pro Armenia», հայանպաստ գործունեություն, Արևելյան հարց, Հայկական հարց, վեհաժողով, հայասիրական շարժում, հանրահավաքներ:

1901-1904 թթ. Ֆրանսիայում և Եվրոպայի այլ երկրներում ծավալվել է հայանպաստ շարժում, որն արտահայտվել է ինչպես տարաբնույթ հրատարակումներով (պարբերականներ, հոդվածներ, մենագրություններ), այնպես էլ տարբեր լսարանների առջև ներկայացված դասախոսություններով, խորհրդաժողովներով, ցույցերով և այլ միջոցառումներով:

«Pro Armenia» պարբերականից բացի, որին անդրադարձել ենք առանձին հոդվածով[1], 1901-1904 թթ. նման այլ հայանպաստ դրսևորումներ ևս եղել են Ֆրանսիայում և ֆրանսիացիների կողմից:

Ֆրանսիայի հայասերները մամուլի մի շարք օրգաններում, բացի «Pro Armenia»-ն, հանդես են եկել Հայկական հարցը և հայ ժողովրդի աղետալի վիճակը լուսաբանող հոդվածներով, հրապարակային ելույթներով ու դասախոսություններով, լույս են ընծայվել առանձին փոքրածավալ ու ծավալուն ուսումնասիրություններ: XIX դ. վերջից մինչև 1904 թ. տպագրված աշխատություններից, որոնցում Հայկական հարցը քննարկվում է իր ողջ սրությամբ ու հրատապությամբ, ուշադրության են արժանի Ալբեր Վանդալի «Les Arménies et la réforme en Turquie» («Հայերը և բարենորոգումները Թուրքիայում», Փարիզ, 1897), Հայր Շարմտանի, «L' Armenie agonisante et l'Europe chréstienne. Appel aux

[1] Տե՛ս Խաչատրյան Ա., «Pro Armenia»-ի գործունեությունը (1900-1908 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 1, էջ 188-192:

chefs d'etat» («Հայաստանը հոգեվարքի մեջ և քրիստոնյա Եվրոպան. կոչ պետությունների ղեկավարներին», Փարիզ, 1897), Պիեր Քիյարի «L'extremiation d'une race» («Մի ազգի կործանումը», Փարիզ, 1901), նույն գործչի՝ «Pour l'Armenie. Memoire et dossier» («Հայաստանի համար», Փարիզ, 1901) և Ֆրանսիս դը Պրեսանսեի «L'Armènie et Macèdonie» («Հայաստանը և Մակեդոնիան», Փարիզ, 1903) աշխատությունները: Այդ աշխատությունները, որտեղ մանրամասնությամբ ներկայացվում էր հայության աղետալի դրությունն Օսմանյան կայսրությունում, էականորեն ազդեցին հայության վիճակի վերաբերյալ ֆրանսիական հասարակության իրազեկվածությանը և հայության դատի նկատմամբ համակրանքի ձևավորմանը:

Սակայն նշված հեղինակները և ոչ միայն նրանք սոսկ հրապարակումներով չէին սահմանափակվում: Այդ շրջանում հայասիրական դրսևորումներն ակնառու էին նաև հասարակական միջավայրում: 1897 թ. փետրվարի 2-ին Ա. Վանդալը Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում, տպավորված Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի կոտորածներից, ավելի քան 1500 ունկնդիրների ներկայությամբ հանդես է եկել ընդարձակ զեկուցումով: Այն նվիրված է եղել Օսմանյան կայսրությունում հայերի ողբերգական վիճակի վերլուծությանը, պատճառների բացահայտմանն ու նրանց փրկության համար անհրաժեշտ միջոցառումների գործադրմանը: Այդ զեկուցումը հրատարակվել է նույն թվականին, ապա 1903 թ.՝ վերահրատարակվել Ժնևում: 1908 թ. այն տպագրվել է ռուսերեն[1], իսկ 2001 թ.՝ հայերեն թարգմանությամբ[2]:

Ֆրանսիայի պառլամենտի պատգամավոր Գ. Ռուանեն մի ուշագրավ հոդված է հրատարակել «Le petite Republeique» պար-

[1] Տե՛ս Вандал А., Армяне и турецкие реформы, С.Петербург,1908.

[2] Տե՛ս Վանդալ Ա., Հայերը և բարենորոգումները Օսմանյան կայսրությունում, թարգմանությունն ու առաջաբանը Վ. Պողոսյանի, Ե., 2001:

բերականի 1901 թ. օգոստոսի 2–ի համարում՝ «Հայաստանի համար» վերնագրով: Հեղինակը ահազանգում էր, որ հայ ժողովրդի գոյությունը Օսմանյան կայսրությունում վտանգված է. «Կ. Պոլսի մեջ թագավորող օսմանցի Կալիգուլան (իմա՝ Աբդուլ Համիդ Բ սուլթան-Ա. Խ.) 1895–1986 թթ. ընդհանուր ջարդերից հետո ավելի փորձված ու խոհեմացած՝ հիմա մասնակի կոտորածներով և սիստեմատիկ հարստահարությամբ նվազ աղմկալի մեթոդով առաջ կտանի ողջ հայ ցեղին բնաջինջ անելու իր ծրագրերը»[1]: Գ. Ռուանեն հայանպաստ առաջնորդող հոդվածով հանդես է եկել նաև «Lanterne» փարիզյան թերթի օգոստոսի 30-ի համարում, որում կոչ է անում Ֆրանսիային կատարել Բեռլինի վեհաժողովում ստանձնած պարտավորությունները[2]:

1902 թ. փետրվարի 10-ին «Եվրոպայի Հայ Ուսանողների Միությունը» Ժնևում դասախոսություն է կազմակերպում նվիրված Արևելյան հարցին ու մասնավորապես Հայկական հարցին: Նշված թեմաներով դասախոսությամբ ելույթ է ունենում հատուկ այդ նպատակի համար հրավիրված Ֆրանսիայի նշանավոր հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ և Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Ֆր. դը Պրեսանսեն[3]:

Իր դասախոսությունը Ֆր. դը Պրեսանսեն բաժանել էր երեք մասի.

1. Արևելյան հարցի ամփոփ տեսություն,

2. ֆրանս-թուրքական հակասություններ, և դրանց ընթացքում Ֆրանսիայի կողմից հայկական հարցը «լքել»-ու գործընթաց,

3. Հայաստանում հեղափոխության անհրաժեշտություն, որ հեղինակը համարում էր փրկության միակ ելք:

[1] «Դրօշակ»,1901, № 6:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1902, № 2, Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 249:

Բանախոսն իր ելույթում Արևելյան հարցը ևս բաժանել է պատմական երեք փուլերի.

1. թուրքերի հաղթարշավի շրջան,

2. Օսմանյան կայսրությունը անկման շրջան, երբ Եվրոպան շահագրգռված է նրա ամբողջականության պահպանումով, Ռուսաստանը նպաստում է Օսմանյան կայսրության տկարացմանը. այս փուլը տևում է մինչև Բեռլինի կոնգրեսը (1878),

3. Բեռլինի կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջան, երբ Անգլիան ընդդիմանում էր Օսմանյան ժառանգության բաժանմանը, Եվրոպան իր ներսում առկա հակամարտության պատճառով դիվանագիտական ասպարեզում Օսմանյան կայսրությունից պարտություն է կրում: Այդ ժամանակ սկսվում են հայկական կոտորածները: Օսմանյան կայսրությունը վարպետորեն օգտվում է եվրոպական երկրների իրարամերժ շահերի բախումից:

Ֆր. դը Պրեսանսեն հեղափոխությունից բացի հայ ժողովրդի փրկության համար այլ ուղի չէր տեսնում, քանի որ մնացած բոլոր միջոցները համարում էր սպառված: Միաժամանակ նա հերոսացնում էր Էդիրնեում կախաղան բարձրացած Մակեդոնիայի ազատության համար զոհված հայ հերոսներին:

Ֆր. դը Պրեսանսեի զեկուցումը հիացմունք է առաջացնում ունկնդիրների մեջ, մամուլում տպագրվում են դրվատանքով տոգորված հաղորդումներ ու հոդվածներ:

Հայանպաստ ելույթներով աչքի է ընկել նաև Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ա. Բոլիոն, որ 1902 թ. Սոցիալական բարձրագույն կրթության (Բարձր Ուսմանց) դպրոցի ռուսական բաժնի երկրորդ տարեշրջանի սկսվելու կապակցությամբ հանդես է եկել ուշագրավ դասախոսությամբ[1]:

Ըստ դասախոսության՝ Ռուսաստանը և Ֆրանսիան Ասիայի քրիստոնյաների նկատմամբ կատարել են իրենց

[1] Տե՛ս «Դրօշակ», 1902, № 1:

պարտքը: Նա մասնավորապես նկատի է ունեցել հայերին: «Սակայն հայերի գոյությունը այժմ վտանգված է». ասել է բանախոսը, նրանց փրկելու համար երկու երկրները պետք է սուլթանից պահանջեն Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի գործադրությունը: Այնուհետև Ա. Բոլիոն 1904 թ. մայիսի 7-ին Արևելյան հարցի մասին դասախոսություն է կարդացել Բոստոնում (ԱՄՆ), ուր նա հրավիրվել էր «Հայերի բարեկամներ»-ի կոմիտեի կողմից: Բնականաբար նա խոսել է նաև Հայկական հարցի շուրջ, անդրադարձել հայերի գաղթին, կոչ արել ԱՄՆ իշխանություններին խափանելու և կասեցնելու հայերի կոտորածները նրանց հայրենիքում[1]:

Նույն 1902 թ. «Europeén» թերթի համարներից մեկում լույս է տեսնում Ա. Բոլիոյի «Եվրոպական կոնֆերանսի անհրաժեշտությունը» վերնագրով հոդվածը: «Մուրճի» տեսաբանը ներկայացնում է հոդվածի մի մասի թարգմանությունը, ըստ որի՝ հեղինակը պատճառաբանում է կոնֆերանսի անհրաժեշտությունը՝ ելնելով հայկական նահանգներում և Մակեդոնիայում տիրող վիճակից: Ա. Բոլիոն առաջարկում է հետևյալը. «Գլխավոր դժվարությունն այն է, թե պետություններից, որը հանձն կառնե այդպիսի առաջարկության նախաձեռնությունը: Մենք կցանկանայինք, որ հանձն առներ Ֆրանսիան: Դա կլիներ մի դեր, արժանի նրա անցյալին, և կատարելապես կհամապատասխաներ նրա լավագույն ավանդություններին: Հանձն առնելով մի այդպիսի նախաձեռնություն՝ Ֆրանսիան իր ետևից կքաշեր ուրիշ ազգերին, պաշտպանելով Եվրոպայի պատիվը Արևելյան ժողովրդների աչքում և ամբողջ աշխարհի առաջ»[2]:

Ան. Բոլիոյի նախաձեռնություն-առաջարկությունն արձագանք չգտավ, իսկ եվրոպական կոնֆերանս այդպես էլ չհրավիրվեց:

[1] Տե՛ս «Pro Armenia», 1904, № 86, p. 508.
[2] «Մուրճ», 1902, № 10, էջ 198-200:

«Pro Armenia»-ն և նրա շուրջ համախմբված ֆրանսիացի գործիչներն անուրանալի ավանդ ունեն Ֆրանսիայում և այլ երկրներում հայասիրական շարժումը հանրահավաքների միջոցով խթանելու ասպարեզում: 1901-1904 թթ. ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ ժողովներից, միտինգներից ու ցույցերից նշանավոր են հետևյալները:

1903 թ. փետրվարի 15-ին «Pro Armenia»-ի և ՀՅԴ կուսակցության ջանքերով Փարիզի Chateau d'Eau թատրոնի սրահում կազմակերպվում է բազմամարդ ցույց՝ հօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի: Ցույց-հանրահավաքին մասնակցում էին տարբեր քաղաքական ուղղությունների պատկանող արդեն համբավոր հայասերներ դ'Էստուրնել դը Կոնստանը, Դնի Կոշեն, Անրի Լերուաև, Ա. Բոլիոն, Ժան Ժորեսը և Ֆր. դը Պրեսանսեն: Նախագահել է դ'Էստուրնել դը Կոնստանը: Թուրքական բռնությունները դատապարտող և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ հանրահավաքում ելույթներ են ունենում Դ. Կոշենը, Ա. Բոլիոն և Ժ. Ժորեսը: Վերջինս իր ելույթում ընդգծում է հետևյալ միտքը. «Այն, ինչ մենք իրավունք ունենք պահանջելու Եվրոպայից, դա պարտադրում է նրա իրավունքն ու պարտքը, որպեսզի թուրքական կառավարությունը իր բոլոր ժողովուրդներին, ռասաներին և նրանց կրոններին տրամադրի և բոլորին ապահովի տարրական անվտանգություն, ազատություն ու արժանապատվություն, որոնք կապահովեին ռասաների ու կրոնների միաժամանակ զարգացումն առանց փոխադարձ հալածանքների ու կուլ գնալու: Չի կարելի թույլ տալ, որ մահաբեր արյունռուշտ բարբարոսությունը լուծի խնդիրը ժողովուրդների մի մասի ոչնչացման ճանապարհով»[1]:

[1] «Геноцид армян в Османской империи», составители М.Г. Нерсесян, Р.Г. Саакян, Е., 1982, с.167-168.

Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում Ֆր. դը Պրեսանսեի ելույթը, որ պարունակում էր դիվանագիտական բնույթի առաջարկություններ Արևելյան հարցի կապակցությամբ.

1. չբաժանել երբեք Հայկական հարցը մակեդոնականից,

2. չմոռանալ Օսմանյան իշխանություններից դժվարությամբ ձեռք բերվածը, այսինքն՝ խոստացած բարենորոգումները,

3. չվստահել սուլթանին և վերահսկել նրա գործողությունները՝ ստեղծելով հատուկ եվրոպական հանձնաժողով:

Հանրահավաքն ընդունում է որոշում, որը ներկայացրել է Ա. Բոլիոն. «Չորս հազար ֆրանսիական քաղաքացիներ, տարբեր կարծիքների պատկանող, հավաքված Chateau d'Eau-ի թատրոնական դահլիճում,

Նկատելով Հայաստանի և Մակեդոնիայի ազգաբնակության ահռելի վիճակը և դեպքերի հարաճուն վտանգավորությունը,

Նկատելով, որ այդ վիճակը գրգռիչ մի հանգամանք է հանրային խղճմտանքի համար և մի վտանգ՝ ընդհանուր խաղաղության տեսակետից,

Նկատելով, որ միմիայն Բեռլինի դաշնագրի գործադրությունը՝ Հայաստանում և Մակեդոնիայում՝ կարող է վերջ դնել իրերի այդ անտանելի վիճակին,

Նկատելով այն հրամայական պարտքը, որ Բեռլինի դաշնագիրը առաջադրում է նրա ստորագրողներին,

Հայտնում են ցանկություն, որ ֆրանսիական կառավարությունը գործե կորովի կերպով, որպեսզի կարողանա վերջապես գլուխ բերել Բեռլինի դաշնագրի 23 և 61 հոդվածների իրագործումը, համաձայն 1882 թ. օգոստոսի ստատոտների և 1895 թ. մայիսի 11-ի մեմորանդումի, և որպեսզի դադարեցվի եղեռնափորձերի այն չափազանց երկար շարքը, որոնք տեղի ունեն Օսմանյան կայսրությունում մարդկության դեմ, առանց խտրության ցեղի, ազգության և կրոնի»[1]:

[1] «Դրօշակ», 1903, № 2:

Ակնհայտ է, որ նման բազմամարդ հանրահավաքները՝ հայտնի և սիրված գործիչների մասնակցությամբ՝ մեծացնելու էին Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրությունը:

Բրյուսելում նույնպիսի բազմամարդ հանրահավաք է կազմակերպվում Բելգիայի հայասերների կողմից: Հանրահավաքի մասնակիցները միաձայն միանում են Փարիզի հանրահավաքի որոշում-բանաձևին:

«Եվրոպայի հայ ուսանողների միության» նախաձեռնությամբ 1903 թ. մարտի 5-ին Ժնևի Victoria hall դահլիճում մոտ 2000 մասնակիցների առկայությամբ գումարվում է հրապարակային ժողով Շվեյցարիայի պետական գործիչ Ադրիան Լաշալի նախագահությամբ[1]: Ժողովում ելույթներ են ունենում Պ. Քիյարը՝ Հայկական հարցի և դոկտոր Լարգին՝ Մակեդոնական հարցի վերաբերյալ: Պ. Քիյարն դրվատանքով է ներկայացնում հայ ազատագրական շարժման հերոսներին, իր ելույթում շեշտում է Օսմանյան կայսրությունում գործադրվող հետևողական հայաջինջ քաղաքականության իրողությունը: Հանրահավաքում ցուցադրվում են հայկական կոտորածները պատկերող պատկերներ: Հանրահավաքն ավարտվում է Եվրոպային ուղղված կոչով ի նպաստ Հայաստանի և Մակեդոնիայի[2]:

1903 թ. հոկտեմբերի 25-ին ֆրանսիացի հայասերները Փարիզում ցույց են կազմակերպում, որին մասնակցություն են բերում ֆրանսիացի, անգլիացի, ռուս, իտալացի, գերմանացի, բելգիացի և ռումինիացի 60 պատգամավորներ: Ցույցը, որ ընթանում էր Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ Պասսեի նախագահությամբ, կազմակերպում է ի պաշտպանություն ճնշված ժողովրուդների, մասնավորապես հայ ու մակեդոնացի ժողովուրդների: Ցույցի ընթացքում, ի թիվս օտարերկրյա գործիչների,

[1] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 249-250:
[2] Տե՛ս Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 218:

ելույթով հանդես է գալիս Ֆր. դը Պրեսանսեն: Ցույցի մասնակիցները որոշում են ընդունում պահանջելու եվրոպական երկրների կառավարություններին՝ նշանակել Հայաստանում և Մակեդոնիայում պատասխանատու կառավարիչներ՝ Եվրոպայի իրական հսկողությունը սահմանելու նպատակով:

Ցույցի շարունակությունը, որը վեր է ածվում բազմամարդ ու զորեղ հանրահավաքի, ընթանում է նույն օրը Սառա Բերնարի թատրոնում: Հանրահավաքն աչքի է ընկել ոչ միայն բազմամարդությամբ ու բազմազգությամբ, այլև մասնակից հռետորների քաղաքական, մասնագիտական ու գիտական կարգավիճակների բազմազանությամբ: Հանրահավաքում ելույթով հանդես են եկել դը Կոնստանը, Ժ. Ժորեսը, Ֆր. դը Պրեսանսեն, Պ. Քիյարը, Վ. Բերարը, Պ. Մածձինին և այլք: Նախագահության սեղանի շուրջն են եղել Ֆրանսիայի ակադեմիայի անդամներ Բրեալը և Պասսին, նախագահել է Ֆր. դը Պրեսանսեն, համանախագահների դերում հանդես են եկել Պ. Քիյարը և Վ. Բերարը: Ընթերցվել է «Դրոշակ»-ի խմբագրության շնորհավորական հեռագիրը, ինչպես նաև բազմաթիվ նամակներ Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Իտալիայի նշանավոր հասարակական, քաղաքական գործիչներից:

Ֆր. դը Պրեսանսեն ելույթում կարևորել է երկու հանգամանք.

1. Հայաստանում և Մակեդոնիայում եվրոպական կառավարիչների նշանակում,

2. այդ երկրներում բարենորոգումների իրականացման համար Եվրոպայի իրական հսկողության սահմանում:

Պ. Քիյարը և Վ. Բերարը բանախոսել են իրենց ճակատագրով շատ ընդհանրություններ ունեցող հայերի ու մակեդոնացիների՝ թուրքական լծից ազատագրվելու եղանակների մասին: Նույնաբնույթ ելույթներ են ունեցել անգլիացի հնագետ, «Սուլթանը և Պետությունները» գրքի հեղինակ Էվանսը,

կանոնիկոս Մակ-Կոլը, որը խստորեն դատապարտել է Գերմանիայի ու Ռուսաստանի վարած քաղաքականությունը Արևելյան հարցի ու հայ ժողովրդի հանդեպ:

Հանրահավաքի ընդունած բանաձևը գրեթե նույնն էր, ինչ նախորդները՝ նշանակել պատասխանատու կառավարիչ և սահմանել իրական հսկողություն՝ բարենորոգումների ծրագրի գործադրման վրա[1]:

Կարևոր է նաև, որ հայանպաստ շարժման ներկայացուցիչները միշտ էլ փորձել են հարցի քննարկումը տեղափոխել Ֆրանսիայի խորհրդարան: Առաջին անգամ Ֆրանսիայի խորհրդարանում Հայկական հարցը քննարկվել է 1896 թ. նոյեմբերին[2]: Հայկական կոտորածների սարսափի ազդեցության տակ գտնվող ֆրանսիացի առաջադեմ պատգամավորները հանձինս Դնի Կոշենի՝ հարցապնդման միջոցով հարկադրում են կառավարությանը բացատրություններ տալ Օսմանյան կայսրության հանդեպ տարվող քաղաքականության վերաբերյալ: Իր ելույթում արտաքին գործերի մինիստր Գաբրիել Անոտոն, որին թրքասիրության պատճառով Անոտո փաշա էին անվանում, ըստ էության արդարացնում է Ֆրասիայի՝ «Հայաստանի գործերի» հանդեպ տարվող քաղաքականությունը: Հաղորդակցման ուղիների դժվարությունները, Հայաստանի մասնատվածությունը Ռուսաստանի, Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև, հայ բնակչության իբրև թե ցածր տոկոսը՝ 13 թուրքական նահանգներում (նա նշում է ըստ թուրքական աղբյուրների) խոչընդոտում են որոշակի ինքնավարության ստեղծմանը[3]:

---

[1] Տե՛ս «Դրօշակ», 1903, № 9:

[2] Տե՛ս Սահակյան Ռ., Հայկական հարցը և Ֆրանսիան (1870-1890-ական թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1-2, էջ 150:

[3] Տե՛ս նույն տեղում: Թուրքական պաշտոնական աղբյուրներն մշտապես ձգտել են խիստ պակասեցված ցույց տալ Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թիվը: Սակայն անվանի պատմաբան, թուրքագետ Ե. Սարգսյանը իր մի արժեքավոր հոդվածում համադրելով թուրքական, ռուսական և ֆրանսիական աղբյուրների տվյալները՝ հիմնավորում է, որ 20-րդ դ. սկզբների Արևմտյան Հայաստանում ապրել է ավելի քան 2.5 մլն. հայ, ըստ որում՝ հայերը կազմել են բնակչության

Անոտոն գտնում էր, որ անհրաժեշտ է Օսմանյան կայսրությանը ստիպել կատարելու բարենորոգումների ծրագիրն այնպես, որ Օսմանյան կայսրության ամբողջությունը չփլուզվի: Այդ status quo-ի քաղաքականությունը Ֆրանսիայի կողմից հետևողականորեն գործադրվեց 1901-1904 թթ.[1]:

«Հայաստանի գործերը» քննարկման առարկա դարձան Ֆրանսիայի խորհրդարանում 1901 թ. նոյեմբերի 4-ին: Քննարկումը տեղի ունեցավ ի պատասխան պատգամավոր-հայասերի համբավ վայելող Մ. Սանբայի հարցապնդմանը[2]: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դելկասեն, որը այդ պաշտոնը վարում էր 1898 թվականից, հայասերի համբավ էր վայելում[3]: Դելկասեն, պատասխանելով Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Մ. Սամբայի հարցապնդմանը, շեշտեց, որ Ֆրանսիան Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի ներքո մենակ չի ստորագրել, այսինքն միայն Ֆրանսիան չէ Հայկական հարցի հանդեպ տարվող քաղաքականության պատասխանատուն[4]: Խորհրդարանի նիստում քվեարկության դրված բանաձևի նախագիծը ստացավ 227 կողմ և 212 դեմ ձայներ: Կառավարության մոտեցման տապալումը անխուսափելի էր, եթե չլիներ վարչապետի միջամտությունը[5]: Իսկ Սամբայի առաջարկած բանաձևը հետևյալն էր. «Խորհրդարանը համոզված որ Ֆրանսա պարտազանց պիտի գտնվեր հայերը նորանոր ջարդերու դեմ չպաշտպանելով և այդ

ընդհանուր թվի 41,3%, այսինքն՝ մեծամասնություն տարածքում առկա այլ ազգությունների (թուրքեր, քրդեր, չերքեզներ և այլն) համեմատ: Տե՛ս Саркисян Е., Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», V, «Թուրքիա», Ե., 1970, էջ 372-374:

[1] Տե՛ս Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 150-151:

[2] Տե՛ս Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 282, «Դրօշակ», 1901, № 8:

[3] Տե՛ս «Անահիտ», 1902, №1, էջ 14-15:

[4] Տե՛ս Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 252-253:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 252:

պաշտպանությունը խաղաղական միջոցներով ապահովել որոշած՝ պետություններու հետ համաձայնությամբ»[1]:

Այնուամենայնիվ, Դելկասեի ելույթները և պատգամավորների մասնավոր հարցադրումներին ու հանդիպումների ժամանակ տրված պատասխանները և բացատրությունները[2] որոշակի դրական ազդեցություն գործեցին Եվրոպայի հասարակական կարծիքի ձևավորման վրա: Այդ առումով տպավորիչ է հատկապես արտաքին գործերի մինիստրի՝ 1902 թ. հունվարի 20-ի սոցիալիստ պատգամավոր Ռուանեի հարցադրմանը տրված պատասխանը, որի ընթացքում նա արտահայտեց հետևյալ արժանահիշատակ միտքը, որը նա հետագայում ևս քանիցս պաշտպանեց. «Անխուսափելի կթրվի որ ազգաբնակությունները, որոնց ինքերուն անպատիժ կերպով կողոպտվելը պիտի շարունակեին թույլ տալ, կամ որոնք զիրենք պիտի միշտ ենթարկված տեսնեին անպատուհաս դարձած ոճիրներու, սպանություններու, վերջ ի վերջո մտածեին թե ամեն բան նախամեծար, քան կոտորածի մը մղձավանջի ներքև այդ կյանքը»[3]: Դելկասեն իր այս հայտարարությամբ, փաստորեն, դատապարտում էր թուրք ջարդարարների գործողությունները:

Ֆրանսիայի հասարակական կարծիքը գրգռված ու վրդովված էր Օսմանյան կայսրությունում անընդհատ կրկնվող ու անպատիժ մնացած ոճրագործությունների կապակցությամբ: 1904 թ. Սասունի և Մուշի հայկական կոտորածներից անմիջապես հետո ֆրանսիական խորհրդարանը 1904 թ. հունիսի 9-ին դարձյալ անդրադարձավ Հայկական հարցին: Հասարակական կարծիքի արտահայտիչը եղավ Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Ֆր. դը Պրեսանսեն, որը կառավարությունից

[1] «Անահիտ», 1902, №1, էջ 15-18:
[2] Տե՛ս «Դրոշակ», 1902, №1,2, 1904, № 4-5:
[3] «Անահիտ», 1902, №1, էջ 19, Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 253:

բացատրություն պահանջեց հայկական կոտորածների վերաբերյալ[1]: Խորհրդարանի նիստը սկսվեց նրա մանրամասն և, միաժամանակ, զգացմունքային ելույթով, որը նվիրված էր Մշո և Սասնո շրջաններում կատարված գազանություններին, գյուղերի ավերմանն ու ոչնչացմանն և ընդհանրապես ստեղծված իրավիճակի՝ թուրքական իշխանությունների գործադրած ձգձգումների քաղաքականության վերլուծությանը: Նա իր ելույթում կոչ արեց հավատարիմ լինել Ֆրանսիայի բարոյական առաքելությանը և պաշտպան կանգնել արևելյան քրիստոնյաներին: «Ես ձեզանից խնդրում եմ,-դիմեց նա արտաքին գործերի մինիստրին,-ֆրանսիական ռազմանավերը կիրառել ավելի լուրջ դեպքի համար[2], դեպք, որը հետաքրքրում է ողջ մարդկությանը, մարդու իրավունքներին, պայմանագրեր հարգելուն և Արևելքում մեր վարկին»[3]:

Խորհրդարանական քննարկմանը մասնակցում էին նաև այլ գործիչներ: Արտաքին գործերի մինիստր Դելկասեն իր ծավալուն պատասխանում թվարկում է դիվանագիտական այն միջոցառումները, որ գործադրել է ֆրանսիական կառավարությունը Օսմանյան կայսրությունում ի նպաստ հայության մինչև 1904 թ.: «Հանրապետության կառավարությունը՝ հետամուտ լինելով իր կողմից ստորագրած 1878 թ. Բեռլինի համաձայնագրին, վերջին տարիների ընթացքում իր աջակցությունն է բերել ինչպես այս համաձայնագրի 23-րդ հոդվածի, որը վերաբերում է ինչպես Մակեդոնիայի, այնպես էլ Փոքր Ասիայի, մասնավորապես հայերով բնակեցրած շրջաններին առնչվող 61-րդ հոդվածի պահանջների գործադրմանը»[4]:

---

[1] Տե՛ս «Դրօշակ», 1904, № 6, «Pro Armenia», 1904, № 87-88, pp. 512-517.

[2] Խոսքը վերաբերում է 1901 թ. տեղի ունեցած միջադեպին, երբ ֆրանսիացի գործարարների՝ Օսմանյան կայսրությանը տրամադրած փոխառության վճարման ձգձգմանը ի պատասխան ֆրանսիական նավերը ցույց կազմակերպեցին Կ. Պոլսի դիմաց՝ պահանջելով անհապաղ վճարում: Տե՛ս «Դրօշակ», 1904, № 9, էջ 133:

[3] «Pro Armenia», 1904, № 87 -88, pp. 512-517.

[4] Նույն տեղում:

Այս քննարկման ծամանակ Դելկասեն ավելի է հստակեցնում իր տեսակետը հայ ժողովրդի ինքնապաշտպանական կռիվների վերաբերյալ. «Եթե մենք չենք կարող Բարձր Դռանը զրկել ապստամբությունները ճնշելու իրավունքից, այնուամենայնիվ, կարող ենք նրան նախատել իր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու և վատ վարչարարություն ունենալու համար, որի դեմ միակ բողոքի ձևը հուսալքված ժողովուրդների համար մնում է միայն ապստամբությունը»[1]:

Փաստորեն՝ հիմնական եզրակացությունն այն էր, որ Օսմանյան կայսրության կողմից նվաճված ժողովուրդների դեմ իրականացվող բռնությունների և կոտորածների քաղաքականության պայմաններում լիովին արդարացված են այդ ժողովուրդների ապստամբությունները բռնակալի դեմ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ փաստենք, որ ֆրանսիացի գործիչները խնդրո առարկա շրջանում ծավալել են ծավալուն հայանպաստ գործունեություն՝ Ֆրանսիայում և Եվրոպայի այլ երկրներում հայության դատի նկատմամբ ձևավորելով դրական վերաբերմունք: Սակայն այդ շարժումն իր բոլոր դրսևորումներով հանդերձ բոլորովին չազդեց Հայկական հարցի ուղղությամբ Ֆրանսիայի կողմից տարվող պաշտոնական քաղաքականության վրա: Նշված գործընթացի քննությունը ցույց է տալիս, որ Ֆրանսիայի և այլ երկրների առաջադեմ շրջանակները համակրանքով են լցված եղել հայության ազատագրական պայքարի նկատմամբ, մտահոգ՝ հայության ճակատագրով և լի վճռականությամբ՝ պաշտպանելու հայերին:

SUMMARY

PROARMENIAN ACTIVITY OF FRENCH POLITICAL AND PUBLIC FIGURES IN 1901-1904

KHACHATRYAN ARAM

[1] Նույն տեղում, «Մուրճ», 1904, № 6, էջ 178-179, Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 253:

In the research the pro-Armenian activity of French political and public figures in 1900-1904 is observed. Besides "Pro Armenia" magazine the pro-Armenian materials were published in many other magazines and journals as well as in some monographs and books. The French political and public figures were also participating in many forums, conferences and events where the Armenian cause was discussed. They made speeches concerning the situation of the Armenian people in the Western Armenia, about the Armenian massacres and the future of Armenian cause.

Such an activity formed pro-Armenian attitude in the public circles in France and other countries in Europe, but could not influence the foreign policy of France concerning the Armenian cause.

Key words: *"Pro Armenia", pro-Armenian activity, Western cause, Armenian Cause, congress, pro-Armenian movement, meetings.*

РЕЗЮМЕ

ПРОАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ФРАНЦУЗСКИХ ПОЛИТИЧЕСКИХ И ОБЩЕСТВЕННЫХ ДЕЯТЕЛЕЙ В 1901-1904 ГГ.

ХАЧАТРЯН АРАМ

Исследование касается проармянской деятельности французских политических и общественных деятелей в 1900-1904 гг. Кроме газеты "ProArmenia", проармянские материалы печатались во многих других газетах и журналах а также в отдельных монографиях и книгах. Французские политические и общественные деятели также участвовали во многих собраниях, конференциях и мероприятиях, где обсуждался Армянский вопрос. Они выступали о ситуации Армянского народа в Западной Армении, об Армянских погромах и о будущем Армянского вопроса.

Такая деятельность сформировала проармянские настроения в общественных кругах Франции и других стран Европы, но никак не повлияла на внешнюю политику Франции в Армянском вопросе.

Ключевые слова: *"Pro Armenia", проармянская деятельность, Восточный вопрос, Армянский вопрос, конгресс, проармянское движение, митинги.*

12. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ 1921 Թ. ԿՆՔՎԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՄԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ. ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԱՐՏԱՇԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԽԱԼԱԹՅԱՆ
ԱՆԻ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Մոսկվայի վեհաժողով, Մոսկվայի պայմանագիր, Ռուսաստան, Թուրքիա, Անգորայի կառավարություն, լեգիտիմություն, Հայաստանի Հանրապետություն:*

1921թ. Մոսկվայի պայմանագիրը հայոց նորագույն պատմության այն անկյունաքարային դրվագներից է, որը հսկայանական ազդեցություն ունեցավ Հայաստանի հետագա ճակատագրի վրա և կանխորոշեց նաև հայոց Երրորդ Հանրապետության տարածքային սահմաններն ու քաղաքական դերատակատարումն Անդրկովկասում: Սույն պայմանագիրն ահռելի վնաս հասցրեց Հայաստանին՝ իրավական հիմք դառնալով Թուրքիայի կողմից հայկական տարածքների բռնակցման (անեքսիայի) համար:

Մոսկվայի պայմանագիրը, որքան էլ հանդիսանա պատմական փաստաթուղթ, նաև գործող միջազգային իրավական ակտ է, քանզի չի չեղարկվել այն կնքող պետությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի կողմից: Հետևաբար այս պայմանագրի կնքման միջազգային-քաղաքական նախադրյալների ու միջավայրի, իրավաչափության խնդիրների ուսումնասիրությունը շատ կարևոր է կուտակված պատմաքաղաքական փորձի վերարժևորման, թույլ տրված սխալների գիտակցման և Հայաստանի անկախ պետականության արտաքին-քաղաքական ռազմավարության և մարտավարության բարեփոխման համար:

Մոսկվայի պայմանագրի էության և Հայաստանի համար դրա նշանակության լիարժեք ըմբռնման համար հարկավոր է միաժամանակյա ռեժիմում համադրել ինչպես պատմաքաղաքական, այնպես էլ միջազգային-իրավական գործոնները, որոնք ազդեցին Մոսկվայի վիճահարույց վեհաժողովի կազմակերպման ու ընթացքի վրա և բյուրեղացան բուն պայմանագրում: Ուսումնասիրությունն սկսենք Մոսկվայի

պայմանագրի բանակցման և կնքման պատմաքաղաքական կոնտեքստի ներկայացումից:

Մոսկվայի վեհաժողովի մասնակիցների կազմը և վայրը փաստացի որոշվեց 1920թ. դեկտեմբերի 8-ին: Վեհաժողովը պետք է լիներ խորհրդա-թուրքական և տեղի էր ունենալու Մոսկվայում: Հենց նույն օրը Թուրքիայի կառավարությունը հայտնեց Մոսկվա ուղարկվող պատվիրակության կազմը՝ Յուսուֆ Քեմալ, Ռիզա Նուրի և Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ: Դեկտեմբերի 9-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ողջունեց Թուրքիայի կառավարության առաջարկը և միաժամանակ նշեց, որ վեհաժողովում անհրաժեշտ է հայկական և ադրբեջանական կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությունը, քանի որ այդ պետությունների հետ առկա են տարածքային և այլ հարցեր[1]: Ռուս-թուրքական բանակցություններում Հայաստանի մասնակցությունը հատկապես պնդում էր Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (այսուհետ՝ նաև ՌՍՖԽՀ) արտգործժողկոմ Գ. Չիչերինը, ով ՌԿ(Բ)Կ ԿԿ ուղղված դեկտեմբերի 6-ի նամակում նշում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը պետք է որոշվի հայ-թուրքական խառը հանձնաժողովի միջոցով՝ Ռուսաստանի մասնակցությամբ, ընդ որում՝ տարածքային սահմանազատման հիմքում պետք է դրվեր ազգագրական (էթնիկ) սկզբունքը:

Նոր վեհաժողովում քեմալականների գլխավոր նպատակը նախ Անտանտի դեմ խորհրդա-թուրքական համատեղ պլանի հաստատումն էր՝ Ռուսաստանի օգնությամբ Սևրի պայմանագրի վերացումը և ապա անդրկովկասյան հանրապետությունների հետ քաղաքական հարաբերությունների կարգավորումը: Հենց սա էր գլխավոր պատճառը, որ թուրքական կողմը դեմ էր վեհաժողովում հայկական և ադրբեջանական կողմի ներկայությանը: Ինչպես վստահեցնում էր Ք. Կարաբեքիրը,

[1]Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Երևան, 2007, էջ 100:

թուրքական կողմը ցանկություն չուներ Հայաստանի հետ նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ պատճառաբանելով, որ չի վստահում Հայաստանում խորհրդային իշխանությանը, քանի որ կառավարության մեջ է գտնվում թուրքերի համար այնպիսի ատելի դեմք, ինչպիսին էր Դրոն և թուրք ժողովրդի կրած զոհերով: Սակայն, ինչպես նշվեց թուրքական կողմն ուներ այլ՝ ավելի հեռուն գնացող նպատակներ, և պետք է աներ ամեն ինչ, որ հայկական կողմը մասնակցություն չունենար նոր հրավիրվող կոնֆերանսին:

Չնայած Ռուսաստանի կառավարությունը թուրքական կողմին ծանուցում էր քառակողմ վեհաժողովի վերաբերյալ, բայց հենց 1921թ. փետրվարի 18-ին թուրք պատվիրակությունը հասավ Մոսկվա, իսկույն առաջ քաշեց երկկողմ՝ ռուս-թուրքական վեհաժողովի պայմանը՝ պատճառաբանելով, որ իբր իրենք լիազորված չեն Հայաստանի հետ բանակցելու: Իրականում ռուսական կառավարության որոշման փոփոխությունն, ուներ այլ պատճառներ: Բանն այն է, որ 1921թ. կեսերին Հայաստանում սկսվեց հակախորհրդային ապստամբություն, որը չէր կարող անհետևանք մնալ Հայաստանի համար և բացասաբար ազդեց Մոսկվայի վեհաժողովում Հայաստանի մասնակցության հարցի վրա:

Մյուս կողմից խորհրդային կողմը ընդառաջ գնաց թուրքերի առաջարկին և համաձայնեց նստել երկկողմ բանակցությունների, որպեսզի կանխի Թուրքիայի հնարավոր անցումը Անտանտի կողմը, ինչպես նաև թույլ չտա թուրքերի հետագա հարձակումը Բաթումի վրա:

Ահա նման միջազգային-քաղաքական պայմաններում 1921թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական վեհաժողովը: Վեհաժողովում ՌՍՖԽՀ ներկայացնում էին արտգործժողկոմ Գեորգի Չիչերինը (պատվիրակության ղեկավար) և ՌՍՖԽՀ Կենտգործկոմի անդամ Ջելալեդդին Կորքմասովը: Նախօրյակին Անգորայի գաղտնի խնդրանքով արտգործժողկոմի տեղակալ, հայազգի Լև (Լևոն) Կարախանը հեռացվեց բանակցային գործընթացներից և նրա փոխարեն ընդգրկվեց ժամանակին Իթթիհատի հետ համագործակցած, ծնունդով դաղստանցի Ջ. Կորքմասովը:

Թուրքական պատվիրակությունը ներկայացնում էին նախարարներ Յուսուֆ Քեմալ բեյը (ղեկավար), Ռիզա Նուր բեյը և ՌՍՖԽՀ-ում Թուրքիայի լիազոր-դեսպան Ալի Ֆուադ փաշան (անդամներ):

Այսպիսով՝ վեհաժողովն սկսեց իր աշխատանքներն առանց Հայաստանի պատվիրակության մասնակցության, թեև այստեղ շոշափվում էին հայ ժողովրդի կենսական շահերը[1]: Վեհաժողովում քննարկվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ Նախիջևանի, Ախալքալաքի և Ախալցխայի տարածքային հարցերը, և այլն: Ի վերջո, բանակցությունները եզրափակվեցին մարտի 16-ին՝ ժամը 22-ին, երբ ստորագրվեց «Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև», պայմանագիրը բաղկացած էր ներածական ամսից, 16 հոդվածներից և 3 հավելվածներից[2]:

Պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները թուրքաբնակ բոլոր վայրերում: Հիշենք, որ հայերի ցեղասպանությամբ կամ նրանց արտաքսելով թուրքաբնակ էին դարձվել Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը: Թուրքիայի հյուսիս-արևելյան (Խորհրդային Հայաստանի հետ) սահմանն անցնում էր Ախուրյան ու Արաքս գետերի հունով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ, որը չէր զիջվելու երրորդ պետության: Պարզ է, որ այդ պայմանն ուղղված էր Հայաստանի դեմ:

Ընդհանուր առմամբ, Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Հայաստանը մնաց 29 հազար քառակուսի կիլոմետրի սահմաններում (Լոռու և Զանգեզուրի միանալուց հետո): Եվ դա այն դեպքում, երբ մինչև 1920թ. թուրք-հայկական պատերազմը Հայաստանի Հանրապետության իշխանությունը տարածվում էր շուրջ 60 հազար քառակուսի կիլոմետրի վրա[3]:

[1] Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2010, էջ 106-111:
[2] Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ, էջ 105:
[3] Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 181-185:

Բնականաբար քաղաքական այն միջավայրը, որը ձևավորվել էր Մոսկվայի պայմանագրի բանակցման և կնքման պատմաշրջանում պայմանավորեց նրա միջազգային իրավաչափության աստիճանը: Միջազգային-իրավական կողմն այս հարցում խիստ կարևոր է և արդիական և ուղղակիորեն ազդում է տարածաշրջանային քաղաքականության բնույթի ու ռազմավարության վրա՝ պայմանավորելով հիմնական միջազգային դերակատարների և, նախևառաջ, Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությունն Անդրկովկասում: Դրա վառ ապացույցն են 2009թ. հոկտեմբերի 9-ին Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները, որոնցում չշրջանցվեց Թուրքիայի և Հայաստանի սահմանների փոխադարձ ճանաչման հարցը: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրությունում կարդում ենք. «…Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը … վերահաստատելով երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով … համաձայնեցին հիմնել դիվանագիտական հարաբերություններ»[1]:

Փաստորեն՝ Թուրքիան, գիտակցելով Հայաստանի հետ իր տարածքային սահմանների դելիմիտացիայի և դեմարկացիայի իրավաչափության բացակայությունը, ձգտում էր ձևավորել նոր իրավապայմանագրային հիմք ներկայիս փաստացի սահմանագիծը լեգիտիմացնելու համար: Ընդգծենք, որ հայ-թուրքական ներկայիս սահմանները գծվել են հենց Մոսկվայի պայմանագրի հիման վրա:

Մոսկվայի պայմանագրի անհրավաչափության հարցը բարդ և ծավալուն հիմնախնդիր է: Այդուհանդերձ, որոշ սկզբունքային հարցերի արծարծումը սույն հոդվածում անհրաժեշտ է Մոսկվայի այս տխրահռչակ պայմանագրի հակահրավական բնույթը ցուցանելու և այդ

[1] Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրություն, Ցյուրիխ, 2009թ. հոկտեմբերի 9:

լույսի ներքո անցյալի և ներկայի միջազգային-քաղաքական գործընթացներն ընկալելու և մոդելավորելու համար:

Նախ՝ հակիրճ ներկայացնենք, թե ինչ է նշանակում միջազգային պայմանագիր: Ըստ «Պայմանագրային իրավունքի վերաբերյալ» 1969թ. Վիեննայի կոնվենցիայի հոդված 2 {1} {ա}-կետի՝ միջազգային պայմանագիրը *«պետությունների միջև գրավոր կերպով կնքված և միջազգային իրավունքի վրա խարսխված միջազգային համաձայնություն է»*: Այս ձևակերպումից բխում է, որ միջազգային պայմանագրի իրավաչափության համար վճռորոշ է դրա համապատասխանությունը միջազգային իրավունքին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչը: Վիեննայի նշված կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետության կողմից պատշաճորեն չլիազորված ներկայացուցչի կողմից կնքված պայմանագիրն անվավեր է:

Ինչպես գրված է Մոսկվայի պայմանագրի նախաբանում, այն կնքվել է *«Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության»* միջև[1]: Ելնելով Վիեննայի պայմանագրի նշված դրույթներից՝ պետք է հստակեցնել պայմանադիր կողմ-պետություններից յուրաքանչյուրի կարգավիճակը 1921թ. մարտի 16-ի դրությամբ:

Մոսկվայի պայմանագիրը կնքելու ժամանակ Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ՌՍՖՍՀ) չէր հանդիսանում ճանաչված պետություն, հետևաբար նաև միջազգային իրավունքի սուբյեկտ: Բնականաբար նման խոցելի իրավիճակում գտնվող Ռուսաստանի կառավարությունը չուներ որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: ՌՍՖՍՀ-ի միջազգային-իրավական ճանաչումը տեղի ունեցավ արդեն ԽՍՀՄ-ի կարգավիճակում՝ սկսվելով 1924թ. Մեծ Բրիտանիայի ճանաչմամբ (1 փետրվարի,

[1] Պայմանագիր ՌԽՖՍՀ և ԹԱՄԺ կառավարությունների միջև, 16 մարտ, 1921 (1337)թ., Մոսկվա:

1924թ.)[1] : Հանուն ճշմարտության հարկ է նշել, որ 1924թ. Ռուսաստանը՝ որպես նոր՝ Սոցիալիստական Դաշնային Հանրապետություն ճանաչվել էր մի շարք պետական կազմավորումների կողմից, սակայն ճանաչման այդ ակտերը չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ կատարվել են չճանաչված պետությունների կամ վարչախմբերի կողմից:

Ընդհանրապես, որպեսզի ճանաչումը միջազգային իրավունքի տեսանկյունից իրավաչափ համարվի, այն պետք է կատարվի միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի պահպանմամբ և, մասնավորապես, միջազգայնորեն ճանաչված և միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ հանդիսացող պետությունների կողմից[2]: Օրինակ՝ 1920թ. սովետական կառավարությունը ճանաչել է Բալթյան պետությունները, սակայն այդ ճանաչումը չի ընդունվել Դաշնակից ուժերի կողմից, այն հիմնավորմամբ, որ սովետական կառավարությունն իր հերթին միջազգային իրավունքին համապատասխան ճանաչված չէր: Նման մոտեցումը հաստատվել է նաև դատական վճիռներով: Մասնավորապես, ՌՍՖՍՀ ընդդեմ Սիբրարիոյի դատական գործում (1923թ.) ԱՄՆ դատարանը մերժել է ընդունել սովետական կառավարության հայցն այն հիմնավորմամբ, որ վերջինս ճանաչված չէ: Նմանատիպ վճիռ, նույն հիմնավորմամբ կայացրել է Շվեդիայի Գերագույն դատարանը Սովետական կառավարությունն ընդդեմ Էրիքսոնի գործում (1921թ.)[3]: Այս և բազմաթիվ այլ դատական վճիռներ և կառավարական որոշումներ վերահաստատում են պետությունների միջազգային ճանաչման ակտի՝ միջազգային իրավունքի տեսանկյունից սահմանադիր բնույթը[4]:

Ըստ էության՝ ՌԽՖՍՀ-ի և իր իշխանության վերաբերյալ ներկայացված դիտարկումները վերաբերելի են նաև, այսպես կոչված, «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի» կառավարությանը, որի անունից

[1] Toynbee A.J. Survey of International Affairs 1924. London, 1926, p. 491.
[2]Moore J.B. Digest of International Law. Washington, 1906, h. I, p. 73.
[3]Hudson M.O. Annual Digest of Public International Law. Cambridge, 1931-1932, Case No 30.
[4]Chen T.-C. The International Law of Recognition, London, 1951, p. 138.

թուրքական կողմը ստորագրել է Մոսկվայի պայմանագիրը: Այդ ժամանակ Թուրքիայում, կարելի է ասել, երկիշխանություն էր. մի կողմից գործում էր սուլթանական կառավարությունը, իսկ մյուս կողմից առկա էր Մուստաֆա Քեմալի ժողովրդական շարժման քաղաքական ինստիտուտը՝ Ազգային մեծ ժողովը: Վերջինս ուներ ներկայացուցչականության և լեգիտիմության լուրջ դեֆիցիտ: Այն փաստացի ընտրված չէր ժողովրդի կողմից, այլ ձևավորվել էր Քեմալի նախաձեռնությամբ և իրենից ներկայացնում էր քաղաքական մեծ հավակնություններ ցուցաբերող Քեմալի կողմնակիցների համախմբում: Այդ կողմնակիցների թվում էին նախկին պատգամավորներ, պաշտոնանկ զինվորականներ ու այլ պաշտոնյաներ: Քեմալականների այս կառույցը ձևավորել էր կառավարություն, որը կոչվում էր Անգորայի կառավարություն: Վերջինս Մոսկվայի պայմանագրի կնքման նախօրեին որևէ պետության կողմից չէր ճանաչվել:

Թուրքիայում առկա երկիշխանական իրավիճակն իրականում վկայում էր այն մասին, որ այդ երկրում քննարկվող ժամանակշրջանում չկար լիարժեք օրինական իշխանություն, որը նաև կարող էր լեգիտիմորեն վարել Թուրքիայի արտաքին գործերը: Հիշարժան է, որ անգամ քեմալականները որևէ հավակնություն չունեին օրինական իշխանությունների առկայության դեպքում իրենց համարելու Թուրքիայի լիազոր ներկայացուցիչներ: Նրանք պայմանագրերը կնքում էին ոչ թե Թուրքիայի կամ Թուրքիայի կառավարության, այլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից:

Այսպիսով՝ Մուստաֆա Քեմալի վարչախումբը որևէ իրավական հիմք չուներ միջազգային հարաբերություններում ներկայացնելու թուրքական պետությունը: Աներկբայորեն, առնվազն մինչև 1922թ. նոյեմբերը, այսինքն՝ սուլթան Մուհամմեդ VI-ի մեկնումը Թուրքիայից, վերջինիս կառավարությանն էր վերապահված Թուրքիայի անունից միջազգային հարաբերությունների մեջ մտնելու իրավունքը, և միայն

սուլթանն էր կարող, ըստ Օսմանյան կայսրության սահմանադրության 7-րդ հոդվածի, լիազորել որևէ անձի՝ հանդես գալու երկրի անունից[1]:

Քեմալականների ոչ լեգիտիմությունը պայմանավորված էր նրանց կողմից պետական իշխանության վերցման հայտի ներկայացման ապօրինի միջոցներով: Քեմալականների շարժումը սկզբնավորվել ու ընթացել է օսմանյան սահմանադրության ոտնահարմամբ և միջազգային իրավունքի խախտմամբ: Խոսքը վերաբերում է երկրի օրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի, դեմ ապստամբությանը և Մուդրոսի զինադադարի (30 հոկտեմբերի, 1918թ.) ոտնահարմանը: Մուստաֆա Քեմալը 1921թ.-ին պարզապես փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր: Այդ իսկ պատճառով դեռևս 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի, ֆեթվայով (կոնդակով) Մուստաֆա Քեմալը մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը: Այս դատավճիռը 1920թ. մայիսի 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից: Ի դեպ, Քեմալի և քեմալականների նկատմամբ քրեական հետապնդումը կարճվել է միայն 1923թ. հուլիսի 24-ին՝ ներման համապատասխան հայտարարագրով[2] :

Ի լրումն սրա՝ Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի ևս մի խախտում է, քանի որ *«պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար առանց վերջինիս համաձայնության»*: Այս հիմնադրույթն ամրագրված է Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում[3]: Ակնայտ է, որ Մոսկվայի պայմանագրի կնքման ժամանակահատվածում Հայաստանը de jure անկախ պետություն էր, որտեղ

[1] O'Connell D.P. State Succession in Municipal Law and International Law, Cambridge, 1967, h. I, p. 211:
[2] Amnesty Declaration and Protocol, signed 24 July 1923.
[3] Jankovic B.M. Public International law. NY, 1984, p. 302.

պարզապես տեղի էր ունեցել իշխող վարչակազմի փոփոխություն, և իշխանությունն անցել էր բոլշևիկներին: Հետևաբար որևէ պետություն իրավասու չէր որևէ կերպ որոշել Հայաստանի անկախ Հանրապետության տարածքային ընդգրկման և հարևան պետությունների հետ նրա սահմանների հարցը, ինչը որ անհիրավաչափորեն արեցին Թուրքիան և Ռուսաստանը:

Ավելին՝ Մոսկվայի Պայմանագրի 15-րդ հոդվածով սահմանվում է Ռուսաստանի պարտավորությունը ձեռնարկել միջոցներ ապահովելու համար Անդրկովկասյան հանրապետությունների կողմից Մոսկվայի պայմանագրի՝ իրենց վերաբերող դրույթների ճանաչումը: Բնականաբար, խոսքը նախևառաջ Հայաստանի մասին է, որն առավելագույնս տուժեց Մոսկվայի համաձայնագրից: Մեջբերված հոդվածն ամփոփում է Հայաստանի համար Մոսկվայի պայմանագրի առոչինչ լինելու հանգամանքը, քանզի Ռուսաստանի կողմից նման պարտավորության ստանձնումը ոչ այլ ինչ է, քան ինքնիշխան պետության՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերին միջամտություն, որը հանդիսանում է միջազգային իրավունքի անբեկանելի հիմնադրույթի՝ jus cogens նորմի խախտում:

Վերոգրյալն ապացուցում է, որ Մոսկվայի պայմանագիրը չունի իրավական ուժ և միջազգային իրավունքի շրջանակներում անվավեր է: Սրանից բխում է նաև, որ այս միջազգային-իրավական ակտը չէր կարող որևէ պարտավորություն առաջացնել Հայաստանի Հանրապետության համար, առավել ևս՝ որոշել հայ-թուրքական սահմանը (Պայմանագրի հոդված 1) կամ Նախիջևանը որպես պրոտեկտորատ հանձնել Ադրբեջանին (պայմանագրում՝ հոդված 3), քանզի Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի անբեկանելի մի շարք հիմնադրույթների (*jus cogens*) բացահայտ ոտնահարմամբ: Այս կապակցությամբ Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածում ասվում է. *«Պայմանագիրն անվավեր է, եթե կնքվելու պահին հակասել է միջազգային հանրային իրավունքի անբեկանելի հիմնադրույթներին»*: Ընդհանրապես, սույն պայմանագրի

մեջբերումը դրա ընդունմանը նախորդած իրադարձությունների համատեքստում պատահական չէ, քանզի Վիեննայի պայմանագրի նորմերի մեծ մասը միջազգային սովորույթներ են, որոնց գործողությունն ունի տասնամյակների հնություն և ընդգրկում է նաև Մոկսվայի պայմանագրի կնքման շրջափուլը: Իսկ միջազգային պայմանագրի կնքման հարցում կողմերի ներկայացուցիչների չլիազորված լինելը, պայմանագիրը 3-րդ պետության իրավունքներին և պարատականություններին առնչվելը և մի շարք այլ հանգամանքներ, որոնց մասին այս հոդվածում չխոսվեց, հանդիսանում են միջազգային իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք աներկբայորեն առոչինչ են դարձնում Մոսկվայի պայմանագիրը: Սրանից բխում է, որ հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի Երրորդ Հանրապետությունը՝ իբրև Առաջին և Երկրորդ հանրապետությունների իրավահաջորդ, իրավասու է չճանաչել 95 տարի առաջ կնքված Մոսկվայի պայմանագիրը, որն անգամ Հայաստանը չի ստորագրել ու պահանջատեր լինել իր կորսված հողերին:

SUMMARY

HISTORICAL AND LEGAL NATURE OF THE MOSCOW AGREEMENT OF 1921: ARMENIAN VIEW

KHALATYAN ARTASHES, KHACHATRYAN ANI

The article is dedicated to historical and legal analysis of the Moscow agreement of 1921 concluded between Russia and Turkey. Based on historical records and international legal documents the authors prove that the Moscow agreement is invalid and, accordingly, it is of no legal force for Armenia who was deprived of part of its territory as a result of this annexation agreement between Turkey and Russia. Examination of legal nature and political context of the Moscow agreement and, in particular revealing its being null and void is very important for Armenia, because it enables Armenian diplomacy to realize explicit and implicit motives of international political actors in Transcaucasia region and in some respect to redefine and review the international policy of the Republic of Armenia.

Key words. *Moscow conference, Treaty of Moscow, Russia, Turkey, The Government of Angora, legitimacy, Republic of Armenia.*

РЕЗЮМЕ

ИСТОРИКО-ПРАВОВОЙ ХАРАКТЕР МОСКОВСКОГО ДОГОВОРА 1921Г.: ВЗГЛЯД С АРМЕНИИ

ХАЛАТЯН АРТАШЕС, ХАЧАТРЯН АНИ

Данная статья посвящена историческому и правовому анализу Московского договора, подписанного в 1921г. Между Россией у Турцией. На основе исторических сведений и международно-правовых документов в статье доказывается незаконность Московского договора и соответственно его правовая недействительность для Армении, которая потеряла часть совей территории в результате этого аннексионного соглашения между Россией у Турцией. Изучение правовой природы и политического контекста Московского договора и, в частности, выявление его юридической ничтожности очень важно для Армении, поскольку позволяет осознать явные и скрытые цели международных политических акторов в Закавказском регионе и дает возможность армянской дипломатии переосмыслить и пересмотреть многие подходы в международной политики Республики Армения.

Ключевые слово. *Московская конференция, Московский договор, Россия, Турция, правительство Ангоры, легитимности, Республика Армения.*

13. ՍԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՍՏՈՄԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Սիմոն Զավարյան, Դաշնակցություն, հայ ազգային-ազատագրական շարժում, հուշեր, «աշխարհիկ սուրբ»:*

Հայ ազգային-ազատագրական շարժումը տվել է բազում հերոսներ, որոնց շարքում իր ուրույն և անփոխարինելի տեղն ունի Հայ Հեղափոխական Դաշնակցության հիմնադիրներից Սիմոն Զավարյանը: Նա այն եզակի ազդեցիկ գործիչներից էր, որն ընդունվում էր ոչ միայն կուսակցական շրջանակներում, այլև՝ համազգային, համաժողովրդական ընդգրկումով:

Սիմոն Զավարյանի գործունեության, նրա բնավորության գծերի մասին հետաքրքիր հիշողություններ են թողել ժամանակակիցները:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հայ ազատագրական շարժման գործիչները հուշագրությամբ զբաղվելը հետաձգել էին խաղաղ օրերի: Երբ արդեն ժամանակները համեմատաբար խաղաղվել էին, բազմաթիվ հայ գործիչներ սկսեցին թղթին հանձնել իրենց գլխով անցած-գնացածը, այլ կերպ՝ գրել ազատագրական շարժման պատմությունը: Մի փոքր այլ եղավ Զավարյանի պարագան: Անժամանակ մահը նրան թույլ չտվեց հուշագրությամբ զբաղվելու: Սակայն պետք է նշել, որ լինելով գրչի մարդ, մամուլում հանդես գալով բազում հրապարակախոսական և գիտական հոդվածներով, Զավարյանը խուսափում էր Դաշնակցության պատմությունը գրելուց: Այս առումով հետաքրքիր դրվագ է հիշում ականավոր հրապարակախոս, հասարակական գործիչ Հակոբ Սիրունին. «Ատենը հասած չէր սեպեր յիշողութիւններ գրելու, ոչ իսկ պատմելու: 1910-ին, Դաշնակցութեան քսանամեակին առթիւ, ուզեցինք որ թերթին մէջ պատմէ կուսակցութեան հիմնուելուն պատմութիւնը. Քանի մը կցկտուր նօթեր միայն գրեց, ան ալ Թիֆլիսի «Յառաջ»-ին մէջ հինգ տարի առաջ իր հրատարակած տողերը գրեթէ ընդօրինակելով»[1]:

Փոխարենը ուրիշները գրեցին Զավարյանի և նրա կերտած պատմության մասին: ՀՅԴ պատմագիրներից Միքայել Վարանդյանը, որ երկար տարիներ առիթ է ունեցել շփվելու և աշխատելու Ս. Զավարյանի հետ, վերջինիս այսպես է բնորոշում «Աշխարհիկ Սուրբ մը… Դժուար է գտնել հայոց նորագոյն պատմութեան մէջ, անգամ ամենամեծ յեղափոխական նահատակներու շարքերում՝ ուրիշ մտաւորական գործիչ մը, որ կարողանայ նոյնքան իրաւունքով կրել այդ վեհ ու շոյիչ տիտղոսը: Իբրեւ այդպիսին՝ մեր բարձր մտաւորականութեան մէջ Զաւարեանի տեղը եզակի է»[2]: Ս. Զավարյանին ճանաչողները «աշխարհիկ սուրբ» բնորոշումը դարձրեցին նրա պատվանունը:

Հիմնականում լինելով մտավորական գործիչ՝ Ս. Զավարյանը առանձնապես հանդես չէր եկել մարտական գործողություններում: Սակայն, ազատագրական պայքարում նրա ունեցած դերն այնքան մեծ

[1] Սիրունի Յ., «Ազատամարտ»ի սերունդը, «Հայրենիք», Բոստոն, 1924, յունվար, էջ 68:
[2] Վարանդեան Մ., Սիմոն Զաւարեան (Գիծեր իր կեանքէն), Պոստոն, «Հայրենիք» մատենաշար, 1927թ., էջ 5:

ու ազդեցիկ էր, որ հայ աշուղները նրան գովերգում էին որպես Սասունի կռիվների հերոսի: Այսպիսի մի հետաքրքիր պատմություն է հիշում հայոց ազատամարտի մեծագույն հուշագիր Ռուբեն Տեր-Մինասյանը. «… աշուղներուն գլխաւորը երկու աչքերով կոյր աշուղ Ֆահրատն էր, որ ճառ կը խօսէր եւ թառ կը զարնէր ու կ'եչգէր «… Փըռփըռ քար, Անտոք ու Կեփին եւ քաջ Սիմոն Զաւարեան, երբ սուրը քաշեց»: Եվ եթե հանկարծ որևէ մեկը աշուղին դիտողություն աներ, որ Զավարյանը Սասունում չի եղել, Ֆարհադն պատասխանում էր, նրա նման մարդը, եթե չի եղել, ապա անպայման կլինի»[1]: Ըստ էության, Ս. Զավարյանը, անմիջականորեն չմասնակցելով արևմտյան Հայաստանում տեղի ունեցող կռիվներին, հայ ժողովրդի մեջ մարմնավորում էր այդ կռիվները, հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ:

Ռ. Տեր-Մինասյանն իր հուշերում անդրադառնում է նաև Ս. Զավարյանի և ՀՅԴ մյուս հիմնադիրների խորհրդավոր հմայքին և ազդեցիկությանը. «Անոնք չէին երեւար գործերի մէջ, բայց բոլոր գործերի մէջ անոնք մաս ունէին իբրեւ պարզ ներկայ, իբրեւ օժանդակ եւ կամ իբրեւ ոգի: Անոնք չէին հրամայեր, չէին խնդրեր, ոչ ալ կը համոզէին: Անոնք կը դիտէին եւ անկաշկանդ կարծիք կը յայտնէին…. Անոնք վախ չէին ներշնչէր, այլ ամօթ: Ոչ թէ գիտակցութիւն, այլ հաւատք, ոչ թէ սէր, այլ պատկառանք: Անոնք կը պաշտուին առանձին եւ յաճախ միասնաբար, բայց ոչ ոք չի կրնար լրիւ հասկնալ, թէ ինչո՞ւ կը պաշտուին: Անոնք անանուն են կամ ընդհանուր վերացական անուն ունին, ինչպիսին է Հոգին Սուրբը հաւատացեալ քրիստոնեայի համար: Անոնք կրօնքի հինադիրներն են»[2]: Ինչպես տեսնում ենք, ականավոր հուշագրի բեղուն գրիչը բառեր չի խնայում նկարագրելու հայ ազգային-ազատագրական շարժման ղեկավար գործիչների ունեցած անսահման հեղինակությունը:

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա., Լոս Անճելըս, Հորիզոն տպարան, 1951, էջ 81-82:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Զ., էջ 122:

ՀՅԴ բոլոր ժամանակների գործիչների համար Ս. Զավարյանը համարվում է կուսակցական միջոցների խնայողի իսկական խորհրդանիշ: Կուսակցական դրամները խիստ խնայողաբար օգտագործելու մոտեցումը, անձնական սակավապետությունը, ընկերների պատմելով, երբեմն ծայրահեղության էր հասնում: Այս առիթով Մ. Վարանդյանը գրում է. «Խնայողութիուն, խնայողութիւն» - այնքան կը քարոզէր Զաւարեանը ամէն տեղ, բոլոր ժողովներու, որ ընկերներէն ոմանք մանիակ կ'անուանէին զինքը: Խնայողութիւնը կուսակցական դրամներու վերաբերմամբ՝ անոր աչքին հոմանիշ էր շիտակութեան եւ ազնութեան, հոմանիշ էր մաքուր գաղափարականութեան»[1]: ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի գանձապետ Հովնան Դավթյանը որոշել էր «Դրօշակ»-ի կարիքի մեջ գտնվող խմբագիրների աշխատավարձը 150 ֆրանկից բարձրացնել 175 ֆրանկի: Կուսակցական ժողովներից մեկի ժամանակ Ս. Զավարյանն այնպիսի սրությամբ է բարձրացնում այդ 25 ֆրանկի հարցը, որ Հ. Դավթյանը ստիպված արտասվում է[2]: Զավարյանը ընկերներին ստիպում էր, որ խնայողաբար օգտագործեն ոչ միայն կուսակցության, այլև իրենց անձնական փողերը: «Զաւարեան, սակայն, միայն կուսակցական դրամները ծախսելու վերաբերմամբ չէր, որ ծայր աստիճանի խստապահանջ էր: Եթէ ընկերները նոյնիսկ իրենց անձնական դրամները, իր կարծիքով, շռայլօրէն կը ծախսէին, Զաւարեանը զանոնք ալ հանգիստ չէր ձգեր եւ կը պահանջեր, որ անոնք ինքզինքնին զրկէին եւ օրինակ, Մուշի աղքատ գիւղացիութեան օգնէին՝ գէթ այծ մը նուիրելով»,- գրում է Ռուբեն Դարբինյանը[3]: Փաստորեն, Ս. Զավարյանն, իր սակավապետությամբ և կուսակցական միջոցները խնայելու անզիջում կեցվածքով, յուրօրինակ էր հայ ազգային-ազատագրական շարժման մեջ: Լինելով ճշմարիտ հեղափոխական՝ Զվարյանն, ըստ էության, քաջ գիտակցում էր, որ կուսակցական

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 24:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 25:
[3] Դարբինեան Ռ., Երկեր, Ա հատոր, Կեանքիս գրքէն, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1972, էջ 130:

միջոցների թեկուզ մասնակի վատնումը թե նյութապես, թե բարոյապես կարող է վնասել գործի հաջողությանը:

Կուսակցական դրամների օգտագործման մի զավեշտալի դեպք է պատմում Սիմոն Վրացյանը: Վիեննայի 1907թ. Չորրորդ Ընդհանուր Ժողովի ժամանակ, երբ լարված քննարկում է եղել հայ-թաթարական կռիվների ինքնապաշտպանության նպատակով հանգանակված և դեռ չօգտագործված գումարի վերաբերյալ, որոշ ժողովականներ պահանջել են, որ այդ գումարը բաժանվի կարիքավոր ընկերներին: Սակայն Զավարյանը գտնում էր, որ այդ գումարը բարոյապես կարող էր քայքայել ընկերներին, և լրջորեն առաջարկում է այն բերել և այրել բոլորի ներկայությամբ[1]: Այս օրինակը ցույց է տալիս, որ Զավարյանի համար ազատագրական պայքարի համար հանգանակված գումարների նպատակային օգտագործումն ավելի քան սկզբունքային խնդիր էր: Սա, անշուշտ, բխում էր ազատագրական պայքարի ղեկավարների համբավը բարձր պահելու, ընդհանուր գործը չվտանգելու մտահոգությունից:

Լինելով կովկասահայ՝ Ս. Զավարյանը մեծապես տարվել էր տաճկահայությամբ: Նրա կարծիքով տաճկահայությունը ամբողջ հայության կորիզն է: Կովկասյան ռայոնական ժողովներից մեկի ժամանակ Ս. Զավարյանը տաճկահայության գործոնը կարևորող այնպիսի մի ճառ է արտասանում, որը մեծ ազդեցություն է թողնում ազատագրական շարժման մեկ այլ ականավոր գործիչ Մալխասի (Արտաշես Հովսեփյան) վրա: «Ոչ մէկ ճառ, երբեւիցէ չէ ձգած այնքան խոր, այնքան ազդեցութիւն իմ վրաս, որքան այդ մեծ ճառը»,- գրում է իր հուշերում Մալխասը[2]:

Մ. Վարանդյանը պատմում է Ս. Զավարյանի մեկ այլ կարևոր բնութագրի մասին ևս: Ժնևում որոշ ժամանակ Ս. Զավարյանը ստիպված էր աշխատել Ակնունու հետ: Նրանք միմյանց չէին սիրում: Թե Ակնունին, թե Զավարյանը, որ երկար տարիներ նույնիսկ Թիֆլիսում իրար հետ չէին խոսել, Ժնևում փորձում են մի կողմ դնել անձնական հակակրանքը: Մ. Վարանդյանը գրում է, որ եթե Ակնունու մոտ

[1] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Բ, Պէյրութ, Տպարան «Համազգային», 1960, էջ 93:
[2] Մալխաս, Ապրումներ, Ա. Հատոր, Պոսթըն, «Հայրենիք» տպարան, 1931, էջ 466:

«ջէնտլմէնութիւնը աւելի, այսպէս ասած, ուղեղային էր, արդիւնք երկարատեւ ինքնակրթութեան եւ կրած ազդեցութիւններու: Նրա մէջ խիստ շեշտուած էր ընդօրինակման, նմանողութեան բնազդը …»[1], ապա այլ էր Սիմոնի մոտ: «Տարբեր խմորէ կ'առաջանար Սիմոնի ջէնտլմէնութիւնը: Ան աւելի բնատուր էր, ինքնայորդոր, ինքնածին, ինչպէս շարք մը այլ յատկութիւնները: Չեմ կարծեր, թէ Սիմոն երբեւիցէ ուժգնօրէն ենթարկուած լինէր որեւէ ազդեցութեան: Չէմ կարծեր, թէ արտաքին ազդեցութիւնները, նմանողութիւնը, ընդօրինակումը վճռական դեր ունեցած են անոր բարոյական դէմքի կազմաւորման պրօցեսին մէջ»[2],- ավելացնում է Վարանդյանը: Փաստորեն, Ս. Զավարյանը հայ ազատամարտի այն մեծահոգի և վեհանձն գործիչներից, ում համար ազատագրական պայքարում հանուն ընդհանուր գործի հաջողության ստորադասելի էին անձնական հակակրանքն ու նեղմտությունը:

Հուշագիրների մոտ հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ս. Զավարյանին առաջին անգամ տեսնողները հուսախաբ էին լինում նրա վտիտ արտաքինից: Լսելով նրա խորհրդավոր կերպարի, ազդեցիկ բնավորության մասին՝ չճանաչողները նրան պատկերացրել էին մարմնեղ և աշխույժ մի մարդու: Ահա թե ինչ է գրում Մ. Վարանդյանը. «Առաջին անգամը զինքը տեսայ 1895-ի ամառը Թիֆլիսի մէջ: Բոլորովին տարբեր բան գտայ, քան իմ կազմած մտապատկերն էր: Երեւակայութեանս մէջ Զաւարեան կը պատկերանար, որպէս հրեղեն, փոթորկահունչ հերոս մը, մշտնջենաւոր շարժման ու յուզման մէջ, հզօր կիրք մը, անդուլ ֆռնկող եւ շանթող: Առջեւս կանգնած էր մէկը, որու մէջ կարծէք մեռած էր կեանքը… Քայլուածքը՝ դանդաղ ու ծոյլ, նայուածքը՝ պաղ ու թախծոտ, շարժուձեւերը՝ խոնարհ, անհամարձակ: Իմ յուսախաբութիւնը կատարեալ էր»[3]:

Հատկանշական է Ս. Զավարյանի կողմից ընկերներին բնորոշելու մոտեցումը: Նրա համար դաշնակցականին լավագույնս պետք է բնորոշել նրա նվիրվածությամբ: «Չէր ըսեր «անձնուէր է»: Բառը շատ էր

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 47:
[2] Նույն տեղում, էջ 48:
[3] Նույն տեղում:

ծեծուեր եւ դարձեր էր շաբլօնական: «Նուիրուած է…» Սիմոնի բարբառով դա լաւագոյն վկայագիրն էր եւ մեծագոյն ներբողը մէկ ընկերոջ հասցէին ու հաւատարիմ եւ մաքուր հայրենասէր եւ ազնիւ ու անկաշառ նկարագիր»,- գրում է Մ. Վարանդյանը[1]:

Ինչպես նշեցինք, Ս. Զավարյանի մասին ակնածանքով էին լցված, որ ոչ միայն կուսակցական ընկերներն ու համակիրները, այլև՝ քաղաքական ընդդիմախոսները:

Ս. Զավարյանին իր հուշերում գովեստի խոսքերով է անդրադառնում Հնչակյան կուսակցության հիմնադիրներից Ռուբեն Խանազատը: Վերջինս այսպես է նկարագրում 1889թ. տեղի ունեցած իրենց առաջին հանդիպումը. « Զաւարեանի հետ մենք հանդիպեցինք, որպէս հին ծանօթներ, եւ հէնց առաջին րոպէից նա ինձ գրաւեց իր պարզ ու շիտակ բնաւորութեամբ»[2]: Չնայած տարբեր կուսակցական պատկանելությանը, հեղափոխականների միջև համերաշխությունը բավականին մեծ էր: Ռ. Խանազատը հիշում է, որ 1889-ին իր Տրապիզոն մեկնելուց առաջ դաշնակցականները Ս. Զաւարյանի գլխավորությամբ հրաժեշտի ընթրիք էին կազմակերպել[3]: Ռ. Խանազատը մեկ տարի անց Տրապիզոնից վերադառնալով մեծ ցանկություն է հայտնում, որ հենց Ս. Զավարյանը, որպես դպրոցների տեսուչ մեկնի Տրապիզոն[4]:

Հետագայում, երբ ՀՅԴ և Հնչակյան կուսակցության միջև հարաբերությունները լարվեցին, Ս. Զավարյանը, այնուամենայնիվ, չնայած գաղափարական տարաձայնություններին, մնաց Ռ. Խանազատի ընկերն ու բարեկամը: Նրա ընկերասիրության բարձր որակների է պատմում Խանազատի հետևյալ հիշողությունը: 1896թ., երբ Ռ. Խանազատը ձերբակալվում է և բանտարկվում Թիֆլիսի Մետեխի բանտում, նրա անակնկալ այցելուներն են լինում Ս. Զավարյանի մայրը եւ քույրը: Վերջիններս իրենց օգնությունն են առաջարկում Ռ. Խանազատին[5]:

---

[1] Նույն տեղում, էջ 27:
[2] Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927թ., սեպտեմբեր, էջ 131:
[3] Նույն տեղում, 1927թ., սեպտեմբեր, էջ 133:
[4] Նույն տեղում, 1928թ., յունուար, էջ 120:
[5] Նույն տեղում, 1928թ., օգոստոս, էջ 140:

Արժանահիշատակ է նաև քաղաքական ընդդիմախոսներից Արշակ Չոպանյանի կարծիքը: Մահվան քառասնօրյակի առիթով Փարիզում տեղի ունեցած արարողության ժամանակ մեծանուն հայ հրապարակախոսը այսպես է բնորոշում Զավարյանին. «Սիմոն Զաւարեանը, … ինծի ծանօթ էր իր գործունէութեան ընդհանուր գծերով միայն: Բայց ինչ որ ծանօթ էր՝ կը բաւէր, որպէսզի յարգէի զինքը իբր մեր ցեղին ամենէն թանկագին ներկայացուցիչներէն մին: Գիտէի ինչպիսի մեծ տեղ մը կը բռնէր ան մեր ազգային կեանքին մէջ՝ իբր ազգասէր գործիչ, իբր հայոց ամենէն հզօր յեղափոխական կազմակերպութեան հիմնադիրներէն եւ ղեկավարներէն մին, իբր ուսուցիչ, իբր հայ գիւղացւոյն կացութեան բարելաւմանը հոգածու, անձնուէր ու հմուտ մասնագէտ. եւ ան ինծի ծանօթ էր մանաւանդ իբր այն անզուգական Հայը, որու մասին՝ զինքը ճանչցող հայէ, ինչ կուսակցութեան ալ պատկանէր, հիացման ու գորովի խօսքեր միայն լսած էի»[1]:

Ա. Չոպանյանն, իրավամբ Զավարյանին համարում էր հայ ժողովրդի լավագույն որակների մարմնավորում. «Զաւարեան մը եւ հայ ժողովուրդը անհնար է անջատել իրարմէ եւ մին միւսին հետ համեմատութեան դնել. Զաւարեան ուրիշ ոչինչ էր եթէ ոչ նոյն ինքն հայ ժողովուրդը իր բարոյական լաւագոյն տարրերուն մէջ խտացած, համադրուած, խորհրդանկարուած»[2]: Ինչպես տեսնում ենք, Ս. Զավարյանի մարդկային որակները, հասարակական կեցվածքը, քաղաքական սկզբունքայնությունը բարձր է գնահատվել նաև նրա ընդդիմադիրների կողմից: Սա խոսում է այն մասին, որ մենք հիրավի գործ ունենք համազգային գործչի հետ:

Այսպիսով՝ ժամանակակիցների հուշերում ներկայացվում է, թե հայոց ազատամարտի «աշխարհիկ սուրբը»՝ Սիմոն Զավարյանը ինչպիսի խորհրդավոր հմայք և ազդեցություն ուներ բոլորի նկատմամբ: Նա գաղափարական գործիչ էր, ընկերասեր, սակավապետ անձնավորութ-

[1] «Դրօշակ», 1913թ., թիւ 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր, , էջ 179:
[2] Նույն տեղում, էջ 212:

յուն, անշահախնդիր, նվիրյալ հեղափոխական: Զավարյանը ամենաբարձր գնահատանքի ու հարգանքի է արժանացել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, մշակութային տարբեր շերտեր և հոսանքներ ներկայացնող անհատների կողմից:

SUMMARY

SIMON ZAVARYAN IN THE MEMORIES OF THE CONTEMPORARIES

STEPANYAN KHACHATUR

The cherished image and activities of the prominent public figure, outstanding representative of the liberation movement Simon Zavaryan was highly appreciated by the contemporaries. Both party comrades and political opponents described Zavaryan as ideological, unselfish, consistent, friendly, needy and mysterious charming person.

***Keywords**: Simon Zavaryan, ARF Dashnaktsutyun, Armenian national-liberation movement, Memoirs, "Secular Saint".*

РЕЗЮМЕ

СИМОН ЗАВАРЯН В ВОСПОМИНАНИЯХ СОВРЕМЕННИКОВ

СТЕПАНЯН ХАЧАТУР

Заветный образ и деятельность выдающегося общественного деятеля, представителя национально-освободительного движения Симона Заваряна были высоко оценены современниками. И партийные, боевые товарищи, и политические оппоненты охарактеризовали Заваряна идеологическим, бескорыстным, последовательным, дружелюбным, неприхотливым и таинственно-очаровательным человеком.

***Ключевые слова:** Симон Заварян, АРФ Дашнакцутюн, Армянский национально-освободительное движение, воспоминания, "светской святой".*

14. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻԿ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Թուրքիա, Վան, Արևմտյան Հայաստան, զինվոր, քրդեր:*

Թուրք-իտալական և բալկանյան պատերազմների ժամանակ առաջնահերթ խնդիր դարձավ Օսմանյան Թուրքիայի ոչ մահմեդական հպատակների զինվորագրության հարցը, որի գաղափարը սկիզբ էր առել դեռևս 1909 թ. Վանում՝ Ա. Վռամյանի նախաձեռնությամբ:

Հայ ժողովուրդը մեծ գոհունակությամբ չընդունեց հուրրիեթի կողմից 1909 թ. հուլիսի 20-ին ընդունված օրենքը ոչ մահմեդականներին զինվորագրելու վերաբերյալ, ըստ որի պետության մահմեդական տարրն այլևս իրավունք չպետք է ունենար իրեն հռչակելու որպես տիրապետող ազգ՝ «միլլեթը հաքիմե» և Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ, զինապարտության մասին օրենքի համաձայն հայերն էլ իրավունք էին ստանում ծառայելու օսմանյան բանակում: Ի հետևումն դրա օսմանյան խորհրդարանը 1910թ. մարտի 1-ն հաստատեց քրիստոնյաների համար զինվորական տուրքի («բեդելի ասկերի») վերացման մասին օրենքը[1]: Բանն այն է, որ օրենքը որը քրդական վերնախավի մոտ առաջ բերեց մեծ անհանգստություն և դժգոհություն[2], որը գալիս էր ավելի սրելու հայ-քրդական առճակատումը: Քուրդ աշիրապետերն այն գնահատեցին որպես ոտնձգություն իրենց «դարավոր ադաթների» և «պատմական իրավունքների» նկատմամբ հայերի կողմից զենք կրելու իրավունքը վերացնում էր նրանց նկատմամբ անպատիժ գործողությունների հնարավորությունը[3]:

Սակայն հայ քաղաքական կուսակցությունները, մասնավոր, կամ հրապարակային հավաքույթների ժամանակ ամեն առիթով և պերճախոս

[1] Алиев Г.З.,Турция в период правления младотуро (1908-1918), с 154.

[2] Горблевский В. А., Силуеты Турции, М., 1972, с 128.

[3] Բայբուրդյան Վ. Ա., Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 196:

ճառերով բացատրում էին զինվորագրության օգուտները: Նորաշենի գերեզմանատանը Ա. Վռամյանի ղեկավարությամբ և երիտասարդ դաշնակցական Արմենակ Մաքսապետյանի մասնակցությամբ, որի հայրը՝ Մկրտիչը դրանից մեկ տարի առաջ անխնա խողխողվել էր թուրքերի ձեռքով, կազմակերպվեց միտինգ՝ խնդիրը հանրաքվեի ենթարկելու համար, որի արդյունքում աննկարագրելի խանդավառությամբ ի նպաստ զինվորագրության վճիռ կայացվեց: Նախագահի առաջարկությամբ ընտրվեց 15 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ խնդիրը քննարկելու համար և որի կազմի մասին նույն օրը հեռագրվեց Կ.Պոլսի՝ Պատրիարքարանին և Մեպուսանին: Հետագայում շատերը, այդ թվում հենց ինքը՝ Արմենակ Մաքսապետյանը, դպրոցում ուսուցիչ պիտի արտոնագրվեր՝ զինվորական ծառայությունից զերծ մնալու համար: Հետագայում Հ. Երամյանի հարցին նա պիտի պատասխաներ. «Ես չգիտէի թէ թուրք զօրանոցներու մէջ մաքրութիւնը կը պակսի և թէ անխտրականութեան աչքով չպիտի նայուի հայ զինուորներուն»[1]:

Դժվար է ասել, թե առանց այդ ցույցերի զինվորագրության հարցը պիտի առկախվե՞ր, ինչպես դա եղավ 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ, թե իթթիհատը, որին «այժ կուտար նաև Դաշնակցութիւնը»[2], արդեն վճռել էր հայերից ևս զորք կազմել:

Հայոց զինվորագրությանը, որը սկսվեց 1910 թ. օգոստոս-սեպտեմբերից, համակերպվեցին ինչպես հայերը, այնպես էլ թուրքեր: Սկզբում տեղի զինվորներն ուղարկվեցին Մուշ, իսկ մշեցի հայ զինվորները տեղափոխվեցին Վան[3]: Հայ զինվորները մահմեդականների հետ խառը ծառայում էին միևնույն զորամասում: Իսկ անձամբ այդ ծառայության կատարումից խուսափողները պետք է վճարեին «պէդէլի ասքերի» (զինվորական փրկագին) անունով տուրք: Աննկարագրելի էր Վանի հայության խանդավառությունը հայ զինվորների նկատմամբ, որոնք 1911 թ. սկսած, 600-700 հոգով ծառայում էին Վանի զորամասի մեջ և որոնք ս. Ծննդի և Զատիկի տոներին արձակուրդ ստանալով, խմբով եկեղեցի էին գնում և ապա հյուրասիրվում ժողովրդական

[1] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, էջ 152:
[2] Նույն տեղում, էջ 153:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1910 թ. նոյեմբերի 3, թիվ 244:

հանգանակությամբ նախապատրաստված ճոխ սեղաններով[1]:

Այսպես, Վանի հայությունը 1911 թ. Նոր տարվա և Ծննդյան տոների առթիվ ջերմ հյուրասիրություն կազմակերպեցին քաղաքում գտնվող հայ և քրիստոնյա մյուս զինվորներին: Հունվարի 1-ին քաղաքի Հիսուսյան վարժարանում կազմակերպվեց տոնական հանդես[2]:

Հայ զինվորները քաջությամբ և հավատարմությամբ կռվեցին թուրք-իտալական և բալկանյան պատերազմներում՝ արժանանալով իրենց թուրք հրամանատարների և մասնավորապես ռազմական նախարար՝ Նազըմ փաշայի բարձր գնահատականին: Վանի զինվորական հրամանատար Ճապիր փաշան 1912 թ. Զատիկի առիթով իր ջերմ շնորհակալությունը հայտնեց Վանի հայ զինվորականներին և մասնավորապես թնդանոթաձիգներին[3]:

Հաճախ հայերի զինվորագրության հարցը ստանում էր սուր կերպարանք: Հայերը չցանկանալով ծառայել, դասալիք էին լինում: Այսպես, վանեցի զինվորները, որոնք գտնվում էին Մուշի զորանոցում, փախել գնացել էին Վան: Նրանք գանգատվում էին իրենց ընկերակիցների ու ենթասպաների կոպիտ վերաբերմունքից, ծեծից, որոնք հայ զինվորներին կոչում էին «գյավուր», «քյաֆեր» և վիրավորում էին նրանց ազգային և կրոնական զգացումները: Ենթասպաները հաճախ խտրություն էին դնում հայ և թուրք զինվորների միջև, հայերին ավելի ծանր ծառայությունների էին պարտավորեցնում[4]:

Այսպես, Աղբակի բոլոր գյուղերի հայ ծնողները նամակներ էին ստացել Բաղդադ-Բասրայի շրջանը ուղարկված իրենց զինվոր-զավակներից, որոնք դառնորեն գանգատվում էին իրենց վիճակից, տաք՝ անտանելի կլիմայից և ֆիզիկական պայմաններից[5]:

Զինվորագրությունն ուներ նաև մեկ ուրիշ արատավոր կողմ: Լինում էին դեպքեր, երբ զինվորական ծառայություն կատարելու ժամանակ առևանգվում էին հայ և ասորի զինվորների կանայք և կրոնափոխ արվում: 1912 թ. այդպիսի դեպքեր էին արձանագրվել Աղբակ գավառում և Սղերդի

[1] Տե՛ս Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, էջ 153-154:
[2] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911 թ. հունվարի 26, թիվ 16:
[3] Տե՛ս Երամեան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, էջ 153:
[4] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911 թ. հունվարի 26, թիվ 16:
[5] Տե՛ս «Առաջամարտ», Կ.Պոլիս, 1912 թ., մայիսի 9, թիւ 891:

շրջակա գյուղերում: Անհետևանք են մնում գյուղի առաջնորդների բոլոր բողոքները: Միայն ազգային պատրիարքարանի բողոքից հետո հայ առևանգված կանանցից մեկին Փիրոյին թեև Սղերդ են տանում, սակայն պահում են թուրքերի և քրդերի տներում: Դեռ ավելին, քուրդ ավազակներից Մեհմեդ Էմինը նույնիսկ սպառնում է հայերին, որ եթե նրանք իրենց չհանձնեն առևանգված Փիրոյին, ապա ինքը հրո ճարակ կդարձնի քրիստոնեաբնակ իննը գյուղեր[1]:

Համանման դեպք է գրանցվում նաև Արճեշի Գոկըն գյուղում 1913 թ. փետրվարի 6-ին, երբ Ռեսուլ աղայի որդին՝ Զեյնալը առևանգում է 13-ամյա աղջնակ Սևգյուլին, որին 15 օր պահելուց հետո կառավարության ատյանի միջոցով կրոնափոխ է անում՝ հակառակ հայոց առաջներդական փոխանորդի բողոքի, որը աղջկա անչափահաս լինելն էր փաստարկում[2]:

1913 թ. փետրվարին ևս երկու հայ աղջիկներ առևանգվեցին Արճեշ և Բերկրի գավառներում, որոնք կրոնափոփոխության հայտարարություն տվեցին կառավարական ատյանում[3]:

Զարմանալին այն էր, որ մի կողմից կառավարությունը շրջաբերական գրություններով պատվիրում էր, որ ազգաբնակչությունը պատերազմի դաշտում գտնվող զինվորներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերի, նրանց արտերը մշակեն, ցորենը հնձեն, մյուս կողմից լուռ էր մնում, երբ հայ զինվորների կանայք առևանգվում էին:

Սրանք ապացույցներ էին այն բանի, թե ի՞նչ շահեցին հայերը զինվորագրությունից, թե հայ զինվորն այսուհետ էլ ի՞նչ սրտով պիտի ծառայեր «հայրենիքին»:

Վերջնական արդյունքում տապալվեց հայերին զորակոչելու մասին օրենքի կատարումը, որի դեմ ըմբոստացան քրդերը, քանի որ հայերը զենք կրելու իրավունք էին ստանում և փոշիացվում էր համիդիե անկանոն հեծելազորի նշանակությունը:

[1] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913 թ. փետրվարի 8, թիվ 30:
[2] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913 թ. փետրվարի 19, թիվ 38:
[3] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913 թ. մարտի 10, թիվ 53:

SUMMARY

THE ISSUE OF RECRUITMENT OF THE WESTERN ARMENIANS IN VAN PROVINCE ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

HARUTYUNYAN AVETIS, ARTIROSYAN AGHAVNIK

Military Conscription of non-Muslim subjects became a priority during the Italian-Turkish and Balkan war, the idea of which originated in Van, undertaken by A. Vram. Armenians were not satisfied. However, Armenian political parties were using every opportunity to explain the benefits of Military Conscription. In Turkish-Italian and Balkan war Armenian soldiers fought with courage and loyalty. On Easter 1912, Van military commander Chapir Pasha expressed his warm gratitude to the Armenian soldiery and particularly the gunners. The issue of the Military Conscription of Armenians often took a sharp form. Armenians, who were not willing to serve, fled from the army. There were cases when while performing military service the Armenian and Assyrian soldiers' women were kidnapped and converted .As a final result, the mission to lawfully deploy Armenians failed, and they got the right to bear arms, and this rebelled Kurds.

Keywords: *Turkey, Van, Western Armenia, soldier, Kurds.*

РЕЗЮМЕ

ВОПРОС ПРИЗЫВА НА ВОЕННУЮ СЛУЖБУ ЗАПАДНЫХ АРМЯН В ВАНСКОЙ ОБЛАСТИ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

АРУТЮНЯН АВЕТИС, МАРТИРОСЯН АГАВНИК

Во время итало-турецкой и балканской войны вопрос о немусульманских подданных Османской империи стал приоритетным, идея которого возникла в Ван, предпринятая А. Врама. Армяне не были удовлетворены. Армянские политические партии использовали любую возможность, чтобы объяснить преимущества призыва на военную службу. В турецко-итальянской и балканской войне армянские солдаты сражались с мужеством и верностью. На Пасху 1912 года, военачальник Вана, Чапир Паша, выразил благодарность армянской военщины особенно артиллеристов. Армяне, которые не были готовы служить, бежали из армии. Были случаи, когда во время военной службы, женщины армянских и ассирийских солдат были похищены и преобразованы. В конечном итоге, миссия на законных основаниях развернуть армянам не удалось, и они получили право на ношение оружия, и это восстал курдов.

Ключевые слова*: Турция, Ван, Западная Армения, солдаты, курды.*

15. ALACA HÖYÜK IN DER HETHITISCHEN ZEIT (1800-1200 VOR CHR.)

GRIGORYAN SONA

Keywords: *Alaca Höyük, Hethiter, zentralanatolische Archäologie, Zippalanda, Arinna, Fürstengräber, der Tempel-Palast, Bît Hilâni, hethitische Palastarchitektur, das Sphinx-Tor, die Reliefs von Alaca Höyük.*

Einleitung

Neben Böğazköy, Kültepe und Alişar ist Alaca Höyük eins der ersten hethitischen Siedlungsgebiete in der Kizilirmak Region, welches intensiv untersucht wurde und wo es Ausgrabungen stattfanden. Im Focus der Untersuchung der Forscher und Archäologen waren besonders die hethitischen Felsenreliefs und Skulpturen. Diese Arbeit hat das Ziel Alaca Höyük in allgemeinen Zügen zu präsentieren und seine Bedeutung für die zentralanatolische Archäologie zu definieren. Der Artikel ist auch in dem Zusammenhang von Bedeutung, dass es auch Licht auf die Klärung der Frage werfen könnte, ob die Träger der Kultur von Alaca Höyük möglicherweise Hattier waren, die aus Westkaukasus auswanderten (Maikop, Abchasien). Ausserdem, dieser archäologische Ort zeigt wesentliche Verbindungen mit den Denkmaelern, welche denen von Lchashen ähneln, die aber ca. ein Tausend Jahre älter sind. Die archäologische Stätte Alaca Höyük wurde von den Archäologen Armeniens bisher nicht gründlich untersucht.[1]

Lage

[1] Für die wertvollen sehr nützlichen zahlreichen Literaturhinweise und fachliche Vorschläge und Beratungen, die extrem hilfreich und notwendig für die Verfassung dieses Artikels waren, bedanke ich mich recht herzlich bei meinen wiss. Betreuern Herrn ***Prof. Dr. Felix Blocher***, Seminar für Orientalische Archäologie und Kunstgeschichte an der Martin-Luther Universität Halle-Wittenberg (Deutschland), bei ***Herrn Prof. Dr. Aram Kosyan***, Leiter der Abteilung des Alten Orients in der National Akademie der Wissenschaften der Republik Armenien (Armenien), und bei ***Herrn Dr. Arsen Bobochyan***, dem Redakteur der Zeitschrift "Etschmiadsin" (Armenien).

Alaca Höyük (auch Alaca Hüyük) ist ein Siedlungshügel in der Nähe des gleichnamigen Dorfes im Landkreis Alaca der türkischen Provinz Çorum in Zentralanatolien **(Abb. 1)**. Das Dorf Alacahöyük liegt ebenfalls in der Provinz Çorum und gehört zum Amtsbereich des Kaimakam von Alaca.[1] Der Hügel Alaca Höyük liegt am Nordrand der Region Kappadokien. Der Hügel, auf türkisch *höyük*, befindet sich 25 km nordöstlich Boğazkale.[2] M. Popko setzt ihn mit der hethitischen Stadt Zippalanda gleich[3], die sich ebenfalls in Zentralanatolien befand, und S. Erkut identifiziert Alaca Höyük mit Arinna[4], dem hethitischen Kultort der Sonnengöttin, der Hauptgöttin des hethitischen Pantheons.

Alaca Höyük ist auf der Hochebene von Bozok gelegen, in der nördlichen Zentraltürkei, auf einer Höhe von 1060 Meter. Der Siedlungshügel befindet sich ungefähr 50 km südöstlich der Stadt Çorum und 160 km nordöstlich von Ankara. Die antike Stätte liegt auf einer angeschwemmten Ebene, in der Nähe von vielen Quellen, wovon die Zuflüsse von Kizilirmak (Halys) gespeist werden.[5]

Alaca Höyük ist von breiten Flächen von bebaubaren Äckern umgeben, die sich in den unteren Gebieten unweit des Kizilirmak Tales

---

[1] Vgl. *Alacahöyük: Ethnographische Skizzen eines Anatolischen Dorfes: Ergebnisse einer Feldübung des Seminars für Ethnologie der Universität Bern*, Sonderdruck aus dem Jahrbuch des Bernischen Historischen Museums, Jahrgang 47/48, 1967/1968, Bern, 1971, S. 194.

[2]Vgl. Ch. Burney, *Historical Dictionary of the Hittites*, Lanham, Maryland, Toronto, Oxford, 2004, S. 9; T. Bryce, *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia: The Near East from the Early Bronze Age to the Fall of the Persian Empire*, London, New York, 2009, S. 20; und P. Taracha, „The Sculptures of Alacahöyük: A Key to Religious Symbolism in Hittite Representational Art", *Near Eastern Archaeology* 75:2 (2012), [S. 108-114], S. 108.

[3] Siehe M. Popko, *Zippalanda, ein Kultzentrum im hethitischen Kleinasien*, Heidelberg, 1994; M. Popko, „Zippalanda und Ankuwa once more", in: *Journal of the American Oriental Society* 120/3 (2000), S. 445-448. Siehe auch R. Naumann, *Architektur Kleinasiens*, Tübingen, 1971, S. 401-404.

[4] Vgl. S. Erkut, „Hitit cagini önemli kült kenti Arinna'nin yeri", in: H. Otten et al. (Hrsg.): *Hittite and other Anatolian and Near Eastern Studies in Honourof Sedat Alp* (Ankara: Türk Tarih Kurumu 1992), S. 159-165.

[5] Vgl. A. Gürsan-Salzmann, *Alaca Höyük: A Reassessment of the Excavation and Sequence of the Early Bronze Age Settlement*, Ann Arbor, Michigan, 2001, S. 1.

befinden. Vom Norden umgibt den Siedlungshügel das Pontus-Gebirge, welches dort eine Gipfelhöhe von 2335 m erreicht. Östlich von Ankara fließt der Fluß Kirzilirmak durch ein enges Tal, indem er eine rote Erde hervorbringt, welche reich an Mineralien und für die Herstellung der Ziegel und Töpferwaren gut geeignet ist. Alaca ist just an jenem Knotenpunkt gelegen, welcher das Zentrale Plateau, durch die Eskişehir Ebene, mit nordwestlichem Anatolien verbindet. Der Zugang zum Schwarzen Meer (Sinop) ist auf dem Landweg möglich, durch eine Route, welche bei Osmancik den Fluß Kizilirmak überquert. Diese Route, die schon in der Römerzeit benutz wurde, wurde wahrscheinlich noch in früheren Zeiten befahren.[1]

Südlich der Alaca Ebene befinden sich große vorhethitische und hethitische Siedlungen, wie zum Beispiel Boğazköy und Alişar, welche intermediäre archäologische Stätten sind, die zwischen Alaca und Kayseri Ebene liegen, welche, wiederum, durch die Pässe der Taurusgebirge einen direkten Zugang zur Kilikischen Ebene gewähren.

Daher ist es nicht erstaunlich, daß sich die Völker von Alaca, die in der Frühbronzezeit (FBZ) lebten, in der Alaca Ebene 1500 Jahre lang ständig ansiedelten und umsiedelten, welche ihnen ein fruchtbares Land anbot und eine Nähe zu den Hauptrouten gewährte.[2]

Forschungsgeschichte

Միջազգային խոշոր բանկիրները, ովքեր աշխարհի տնտեսական զարգացման իրենց ծրագրերում բացառում էին Գերմանիայի մասնակցությունը, ձգտում էին հնարավոր բոլոր միջոցներով ճնշել և վերահսկել Եվրոպայի տնտեսական, ռազմական ու քաղաքական հավասարակշռությունը խախտած և մեծ հավակնություններ ունեցող կայզերական պետությանը: Այդ գործում առավել մեծ ջանքեր թափեցին հատկապես բրիտանական քաղաքագետներն ու մասոնները: Նրանցից «Բրիտանական կայսրության հայր» մասոն Սեսիլ Ռոդսը[1] XX դարի վերջին ձևակերպեց բրիտանական իսթեբլիշմենթի խնդիրը: Նա ասում էր. «Ես աչքերս բարձրացրեցի դեպի երկինք և իջեցրի դեպի երկիր: Ապա ինքս ինձ ասացի. Թե մեկը և թե մյուսը պետք է դառնան բրիտանական: Եվ ինձ պարզ դարձավ ..., որ բրիտանացիները լավագույն ռասան են, արժանի համաշխարհային գերիշխանության»[2]:

Բրիտանական կայսրությունը հզորացնելու գործում կատարած նվաճումների համար «Աֆրիկյան Նապոլեոն» մականունը ստացած Սեսիլ Ռոդսի մասին Յոզեֆ Չեմբեռլենն ասում էր. «Հատկապես այնպիսի մարդկանց, ինչպիսին Սեսիլ Ռոդսն է, Անգլիան պարտական է իր կայսրության հզորության համար»: Վարչապետ լորդ Սոլսբերին գրում էր, որ «մեր թոռները մեզ երջանիկ մարդիկ կհամարեն, քանզի մենք «Մեծ Սեսիլ Ռոդսի ժամանակակիցն էինք»[3]: Վիկտորիա թագուհին Ս. Ռոդսին համարում էր «կատարյալ հրաշալի» մարդ և ափսոսում, որ իր «նախարարները նրա նման չեն»[4]: Գերմանիայի կայզեր Վիլհելմ II-ը Ս. Ռոդսին ասում էր. «Եթե ես ունենայի այնպիսի վարչապետ, ինչպիսին դուք եք, ապա ես կդառնայի աշխարհի ամենամեծ տիրակալը»[5]:

---

[1] Սեսիլ Ռոդս (1853-1902), անգլիական խոշոր բիզնեսմեն, «Դե Բիրս» ընկերության ղեկավար, ալմաստե թագավոր, Կապի գաղութի վարչապետ, Ռոդեզիա պետության հիմնադիր, Վիկտորիա թագուհու Գաղտնի խորհրդի անդամ: Տես՝ Давидсон А.Б. Сесиль Родс и его время. Пер. с. англ. М., 1984; его же. Сесиль Родс. Строитель империи. Пер. с англ. М., 1998.

[2] Robert Huttenback. British imperial experience. New York, 1966, p. 102.

[3] Տես՝ Дионео. Из Англии. Русское богатство, 1899, N 7/10, отдел II, стр. 74.

[4] Letters of Queen Victoria. Series III (1885-1901), vol. II, London, 1930.p. 13.

[5] Eyck E. Das persönliche Regiment Willhelms II. Erienbach – Zürich, 1948, S. 236.

Ամերիկյան հանրաճանաչ գրող մասոն Մարկ Տվենը[1] Սեսիլ Ռոդսի մասին ասում էր, որ նա «կանգնած է գլխապտույտ բարձունքում, երկնքի գմբեթի տակ, մնալով իր ժամանակի հրաշքը, ներկա դարի առեղծվածը, թևերով հրեշտակապետ՝ աշխարհի մի մասի համար և պոզերով սատանա՝ մյուս մասի համար: Ո՞րն է նրա ամենազորության գաղտնիքը»[2]: Ս. Ռոդսի մասոնական գաղտնագործունեությունը բացահայտած ամերիկյան պատմաբան Ջիմ Մարսը «Գաղտնիության կանոնները» գրքում նրան անվանում է «ժամանակակից գաղտնի ընկերությունների նախահայրը»[3]:

1891թ. փետրվարի 5-ին Սեսիլ Ռոդսն ստեղծեց իլյումինատների և մասոնական օթյակի տիպի գաղտնի «Ընտրյալների ընկերություն», որը պատմության մեջ մտել է «Կլոր սեղան» անունով: Ընկերության մեջ ընդգրկվեցին բրիտանական հայտնի քաղաքական գործիչներ լորդ Էշերը, լորդ Ալֆրեդ Միլները, լորդ Արթուր Բալֆուրը, հրապարակախոս Ուիլյամ Սթեդը, իսկ մի փոքր ուշ՝ լորդ Գրեյը, Սոլսբերին, Ռոզբերին, Առնոլդ Թոյնբին և ուրիշներ: «Կլոր սեղանին» հովանավորում և աջակցում էր դրան անդամագրված բրիտանական խոշոր բանկիր Նաթան Ռոտշիլդը[4]:

Արևմտյան պատմաբանների ուսումնասիրություններից և վկայակոչած փաստերից հետևում է, որ «Կլոր սեղանի» նպատակն էր վերականգնել մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների կապը, ապահովել անգլո-սաքսոնական ռասայի ազդեցիկ ներկայացուցիչների կողմից աշխարհի գաղտնի կառավարումը, տնօրինել համաշխարհային կապիտալը: Ս. Ռոդսի երազանքն էր ունեցած ահռելի հարստությունն օգտագործել այնպես, որ կառավարություններն ու քաղաքագետները

[1] Մարկ Տվենը (1835-1910) մասոն ձեռնադրվել է 1861թ. մայիսի 22-ին Սենտ Լուիսի Polar Star Lodje N 79 օթյակում: Տես՝ Пэт Морган. Указ. соч., стр. 74; Морамарко М. Указ. соч., стр. 272; Карпачев С.П. Указ. соч., стр. 416.

[2] Марк Твен. Собр. соч. Том 9. М., 1961, стр. 562-564.

[3] Jim Marrs. Rule by Secrecy. Paperbacks, 2001, p. 119.

[4] Տես՝ Давидсон А.Б. Сесил Родс. Пер. с англ. Смоленск, 1998; Хаггер Н. Синдикат. История мирового правительства. Пер. с англ. М., 2009.

ծառայեն «Կլոր սեղանին», բրիտանական գերիշխանությունը տարածվի ամբողջ աշխարհում, և անգլերենը դառնա համաշխարհային լեզու: Նաթան Ռոտշիլդի միջոցով «Կլոր սեղանը» կապեր հաստատեց սիոնիստների, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներում չափազանց ազդեցիկ և ամենազոր ֆինանսիստներ մասոններ Յակոբ Շիֆֆի, Ֆելիքս Վարբուրգի, Օտտո Կանի, Ռոկֆելլերի, Ժերոմ Խանաուերի, Կարնեգիի և Դանիել Գուգենհայմի հետ[1]:

«Կլոր սեղանը» բրիտանական գերիշխանություն հաստատելու նպատակով կառավարությանը դրդեց Աֆրիկայի հարավում 1899-1902թթ. անգլո-բուրական պատերազմ սկսել: Պատերազմի գլխավոր հրահրողը Ռոտշիլդների տան ներկայացուցիչ և համաշխարհային մասոնության գլխավոր դեմքերից լորդ Ալֆրեդ Միլներն էր: Կապի երկրի նահանգապետ և գերագույն կոմիսար[2] Ա. Միլները 1902թ. Ս. Ռոդսի մահից հետո գլխավորեց «Կլոր սեղանը»: Նրա ղեկավարությամբ մասոնական այդ ընկերությունը մեծ դեր խաղաց նոր համաշխարհային կարգ հաստատելու գործում: «Կլոր սեղանը» Անգլիայի «հավերժ շահերը» և գերիշխանությունը պահպանելու նպատակով ձգտում էր. ա/ հսկողության տակ վերցնել համաշխարհային և հատկապես Աֆրիկայի ու Ռուսաստանի տնտեսական պաշարները, բ/ վերջ տալ Գերմանիայից ու Ռուսաստանից սպառնացող մրցակցությանը, թույլ չտալ նրանց միջև դաշինք, գ/ վերահսկել համաշխարհային ֆինանսական համակարգը՝ ԱՄՆ ֆինանսների նկատմամբ հսկողություն սահմանելու ճանապարհով, դ/ վերացնել Եվրոպայում ազգային պետությունները և ստեղծել Եվրոմիություն, ե/ սանձազերծել համաշխարհային պատերազմ՝ այս խնդիրները կյանքի կոչելու համար[3]:

[1] Տես՝ Gerry Docherty, Jim MacGregor. Hidden history. The Secret Origins of the First Warld War. Edinburg, 2013; Carroll Quigly. The Anglo-American Establishment. New York. 1981; Carroll Quigly. Tragedy and Hope: A History of the World in Our Time. N.Y. 1966.

[2] Տես՝Парфенов И.Д. Колониальная экспансия Великобритании в последной трети XIX века, М. 1991; Никитина И. А. Захват бурских республик Англией (1899-1902). М. 1970.

[3] Տես՝ Платонов О.А. Тайное мировое правительство. М. 2014, стр. 14; Хаггер Н. Синдикат. История мирового правительства. Пер. с англ. М. 2009, стр. 39; Алексеева И. Миссия Мильнера. §Вопросы истории¦. 1989, N 10, стр. 145.

Պատերազմները բրիտանական շահերին ծառայեցնելու գաղափարը XIX դարի կեսերին ձևակերպել էր անգլիական հայտնի պատմաբան մասոն Թոմաս Կարլեյլը, ըստ որի՝ «Մայրցամաքային բոլոր պետությունների պարտականությունն է պատերազմներ վարել Անգլիայի շահերի համար»:

«Կլոր սեղանի» հետ սերտորեն համագործակցող Յակոբ Շիֆֆը նոր համաշխարհային կարգ հաստատելու գաղափարն իրականացնելու ճանապարհին, 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմում, ցանկանալով Ռոմանովների միապետության անկումը, իր գլխավորած սինդիկատով 110 մլն դոլար փոխառություն հատկացրեց Ճապոնիային, որի համար արժանանացավ այդ պետության բարձրագույն պարգևներին[1]:

ԱՄՆ մասոն նախագահ Թեոդոր Ռուզվելտի[2] միջնորդությամբ 1905թ. ամռանը Պորտսմուտում ընթացող հաշտության բանակցությունների ժամանակ Յ. Շիֆֆը պարտություն կրած Ռուսաստանի կառավարության ղեկավար Ս. Յու. Վիտտեին առաջարկեց Ռուսաստանի հրեաներին շնորհել հավասար իրավունքներ: Մերժում ստանալով՝ նա ֆինանսավորեց իր համոզմամբ «համայն մարդկության թշնամի Ռուսաստանում» 1905-1907թթ. հեղափոխության բռնկմանը[3]:

Սկսած 1908թ. համաշխարհային պատերազմ սկսելու մասոնական դավադրության կենտրոնը գտնվում էր մասոնության բնօրրան Անգլիայում, որտեղից եվրոպական երկրների մասոններին ուղարկվում էին համապատասխան հրահանգներ: «Կլոր սեղանը» սերտ համագործակցում էր «Ֆրանսիայի Մեծ Արևելք» և հրեական «Բնայ Բրիտ» մասոնական օթյակների հետ, որոնք ակտիվ հակագերմանական

[1] Տես՝ Naomi Wiener Cohen. Jacob H. Schiff: a study in American Jewish leadership. New England, Hanover, 1999, p. 129-134; Cyrus Adler. Jakob Henry Shiff: A Biographical Sketch. N.Y., 1921, p. 12-14.

[2] Թեոդոր Ռուզվելտը (1858-1919) բարձրաստիճան մասոն էր, Օյսթեր Բեյի Մաթիևեքոք թիվ 806 օթյակի անդամ, Փենթալփա թիվ 23 օթյակի պատվավոր անդամ: Տես՝ William R. Denslow. 10000 Famous Freemasons. N.Y. 1957; Roberd Hovard. United Stated States Presidents and the Illuminati. Masonic Power Structure. N.Y. 1999.

[3] Տես՝ Naomi Wiener Cohen. Op. cit. p. 32, 137; Витте С.Ю. Воспоминание. М. 1960, том 2, стр. 440; Фроянов И.Я. Октябрь семнадцатого. СПб, 1997, стр. 160.

քարոզչություն էին իրականացնում, առաջ քաշում Գերմանիայի դեմ անհապաղ պատերազմ սկսելու անխուսափելիության գաղափարը:

«Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հետ սերտորեն կապված էր և նրա գաղափարական ցուցումներով առաջնորդվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը[1], որի վերնախավը կազմում էր «Երիտասարդ Թուրքիա» մասոնական օթյակի ղեկավարությունը: Երիտթուրքերը հանդես էին գալիս դեմոկրատական բարեփոխումներ իրականացնելու և Թուրքիան եվրոպականացնելու կեղծ ու սին կարգախոսներով: Նրանք համագործակցելով հրեական, հայկական, արաբական, ալբանական քաղաքական ուժերի և մասոնական օթյակների հետ ու մշակելով պայքարի կոնկրետ պլան[2], բարձր պարզած հեղափոխական կարմիր դրոշներն ու մասոնական «Ազատություն, հավասարություն, եղբայրություն, արդարություն» պաստառները[3], 1908թ. հուլիսին երկրում հեղափոխություն իրականացրին և սահմանադրություն հռչակեցին[4]:

Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հետ իշխանությունը կիսած երիտթուրքերը կամ մասոն իթթիհատականները «Թուրքիայի Մեծ Արևելք» մասոնական օթյակի[5] հովանու ներքո, 1909թ. ապրիլին տապալելով սուլթանին՝ բռնազավթեցին իշխանությունը[6]: Առաջնորդվելով մասոնական գաղափարախոսությամբ՝ երիտթուրքերի պարագլուխներից Էնվերը հայտարարեց. «Մենք բոլորս եղբայրներ[7] ենք: Բուլղար, թե հույն, սերբ թե ռումին, մահմեդական թե հրեա, մենք բոլորս օսմանցի ենք»[8]:

---

[1] Տես՝ Петросян Ю.А. Младотурецкое движение, М. 1971, стр. 201-2015.

[2] Տես՝ Ramsaur E.E. The Young Turks. Prelude to the Revolution 1908, New York, 1957, p. 67.

[3] Տես՝ Алиев Г.З. Турция в период правления младотурок. М., 1972, стр. 105.

[4] Տես՝Габидуллин Х.З. Младотурецкая революция. М. 1936.

[5] Այս օթյակի Մեծ Վարպետ հեղաշրջումից հետո՝ 1909թ. օգոստոսին, դարձավ Թալեաթ փաշան, ով մինչ այդ §Երիտասարդ Թուրքիա¦ մասոնական օթյակի վարպետն էր, 33 աստիճանի մասոն:

[6] Տես՝ Ramsay W.W.The Revolution in Constantinople and Turty. London, 1909, p. 95-101.

[7] Մասոնները միմյանց համարում են եղբայր, իսկ օթյակը՝ եղբայրական միություն:

[8] Кúосев Д.Г. Борбите на Македонская народ за освобождение. София, 1950, стр. 63.

«Կլոր սեղանի» հրահրմամբ իտալական մասոնները իրենց կառավարությանը դրեցին 1911թ. պատերազմել Թուրքիայի դեմ և նվաճել Լիբիանը:

Ամերիկյան խոշոր բանկիրներ Ռոկֆելլերի, Յ. Շիֆֆի, Մ. Վարբուրգի, Բ. Բարուխի ֆինանսական աջակցությամբ և մասոնական վերնախավի հովանավորությամբ Միացյալ Նահանգներում 1912թ. նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ հանրությանը քիչ հայտնի քաղաքական գործիչ Վուդրո Վիլսոնը: Նա դարձավ այդ ուժերի կամակատարը, ում ներքին և արտաքին քաղաքականությունում ուղորդում էր իր խորհրդական և բարձրաստիճան մասոն Էդվարդ Մանդել Հաուսը[1]: Այդ մասին նախկին նախագահ, բարձրաստիճան մասոն Թեոդոր Ռուզվելտն ասում էր. «Տեսանելի կառավարության հետևում գահին բազմել է անտեսանելի կառավարությունը»[2]:

«Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հավանությամբ 1913թ. նախագահական ընտրություններում Ֆրանսիայի նախագահ դարձավ հակագերմանական քաղաքականության կողմնակից, պատերազմի ջատագով մասոն Ռայմոն Պուանկարեն: Նրան դեմոկրատական շրջաններում անվանում էին «Պուանկարե պատերազմ»:

Առաջին աշխարհամարտից առաջ Մեծ Բրիտանիայի վարչապետեր մարքիզ Սոլսբերին, Արթուր Բալֆուրը, Հենրի Քեմբելլ-Բաններմանը և Հերբերտ Ասկվիտը համագործակցելով «Կլոր սեղանի» հետ և հանդիսանալով բրիտանական գերիշխանության պահպանման ջերմեռանդ կողմնակիցներ՝ նույնպես վարում էին հակագերմանական քաղաքականություն:

«Կլոր սեղանը» նոր համաշխարհային կարգ հաստատելու ծրագրի շրջանակներում հրեաներին առաջարկում էր ինքնուրույն պետություն ստեղծել Ուգանդայում: Արևմտյան Եվրոպայի հրեաները պատրաստ էին դրան, մինչդեռ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի,

[1] Տես՝ Гершов З.М. Вудро Вильсон. М., 1983; Уткин А. И. Вудро Вильсон, М., 2010.
[2] Цит. по: Дитер Рюггеберг. Тайная политика, М., 1999, стр. 75.

հատկապես Ռուսաստանի հրեաները, կտրականապես դեմ էին Պաղեստինից դուրս որևէ վայրում պետություն հիմնադրելուն: Վերջիններս կարողացան համոզել Ա. Բալֆուրին հրաժարվել այդ մտադրությունից:

«Կլոր սեղանը» և «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակը բալկանյան երկրներում ձևավորեցին սլավոնական հարցը՝ կատարյալ մի կռվախնձոր, որի վերջնական նպատակը սերբական մեծ պետություն ստեղծելն էր՝ ի հեճուկս Ավստրո-Հունգարական իրեն սպառած և մասոնների համար անցանկալի կայսրության:

«Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակը Սերբիայում ներդրեց մասոնությունը[1], որի անդամները շուտով իրենց ձեռքը վերցրին երկրի քաղաքական ու զինվորական ղեկավարությունը: 1912թ. Բալկանյան պատերազմում Թուրքիայի դեմ հարավսլավոնական ժողովուրդների և Հունաստանի տարած հաղթանակը լրջորեն անհանգստացրեց Ավստրո-Հունգարիային: Նրա կառավարությունը Սերբիային հստակ հասկացրեց, որ թույլ չի տա ելք ունենալ դեպի Ադրիատիկ ծով: Դա կնպաստեր Ավստրիական կայսրության կազմում ապրող հարավսլավոնների անկախության համար պայքարին: Այս հարցում Ավստրո-Հունգարիային աջակցում էր Գերմանիան, իսկ Սերբիային սատարում էր Ռուսաստանը:

Եվրոպական պատմաբանների միահամուռ կարծիքով Առաջին աշխարհամարտի սկիզբը դրեց Ավստրո-Հունգարիայի և Սերբիայի միջև արհեստականորեն հրահրած հակամարտությունը, որը 1912թ. քիչ էր մնում հանգեցներ պատերազմի:

Պատերազմի առիթը դարձավ 1914թ. հունիսի 28-ին ավստրիական գահաժառանգորդ արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդի իդեալական սպանությունը: Նրա անձի և օրվա[2] ընտրությունը պատահական չէր: Քաղաքականության մեջ իրատես արքիդուքսը հայտարարել էր, որ

[1] Տես՝ Nenzic Z. D. Masoni i Jugoslaviji (1764-1980). Beograd, 1987.

[2] Հունիսի 28-ը սերբերի ազգային սգո օրն է՝ Վիդովանը կամ սուրբ Վիտայի օրը: 1389թ. հունիսի 28-ին սերբերը Կոսովոյի դաշտում պարտություն կրեցին Թուրքիայից և կորցրին իրենց անկախությունը:

կայսր դառնալու դեպքում Ավստրո-Հունգարական կայսրությունը վերափոխելու է Մեծ Ավստրիայի Միացյալ Նահանգների: Նա դեմ էր Սերբիայի դեմ պատերազմին, Ռուսաստանի հետ հակամարտությանը և գտնում էր, որ պատերազմ ցանկանում է Ֆրանսիան: Դա էր պատճառը, որ միապետությունները կործանել ցանկացող ֆրանսիական մասոնները Ֆրանց Ֆերդինանդին չներեցին[1]:

Մասոնությանը դիմակազերծող ֆրանսիացի աբբա Ժյուլ Տուրմանտենը 1912թ. սեպտեմբերի 15-ին գրում էր, որ Ֆրանց Ֆերդինանդը դատապարտված է մահվան և պետք է նահատակվի գահի աստիճաններին[2]: Գահաժառանգորդի սպանությունը ձգձգվեց պարզապես համապատասխան կատարողներ չլինելու պատճառով[3]:

Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հանձնարարությամբ նախապատրաստել էր 1911թ. մայիսի 28-ին Բելգրադում կազմավորված «Սև ձեռք» (մյուս անվանումը՝ «Միություն կամ մահ») մասոնական գաղտնի ընկերությունը: Այս օթյակը սկսած 1913թ. գնդապետ Դրագուտին Դմիտրևիչի[4] գլխավորությամբ հանդես էր գալիս մեծ պանսերբական պետություն ստեղծելու օգտին: Կարճ ժամանակում ակտիվ դիրքեր ձեռք բերած այս օթյակն իր մարդիկ ուներ ամենուրեք՝ կառավարությունում, սկուպշինայում և նույնիսկ արքունիքում[5]:

«Սև ձեռք» օթյակի անմիջական ղեկավարությամբ գահաժառանգորդի սպանության կազմակերպիչներ Դանիլո Իլիչը, Վելկո Կուբրիլովիչը, Միշկո Յովանովիչը, Վ. Տանկոսիչը, Ցիգանովիչը, Կազիմի-

[1] Տես՝ Lane Ann. Yugoslavia: when ideals collide. London, 2004.

[2] Տես՝ Платонов О.А. Тайная история масонства, М., 1996, стр. 196-200; Его же: История руссого народа в XX веке, том 2, стр. 57-65.

[3] Տես՝ Бегунов Ю. Указ. соч., стр. 150.

[4] Դրագուտին Դմիտրևիչ (1876-1917), սերբ հայրենասեր, սերբական բանակի հետախուզության բաժնի պետ: 1917թ. զինվորական տրիբունալի վճռով դատապարտվեց մահվան:

[5] Տես՝ Calic Marie-Janine: Geschichte Jugoslawiens im 20 jahrhundert. München, 2010, p. 65; Sundhausen Holm: Geschichte Serbiens, 19-21, Jahrhundert, Wien-Koln-Weimar, 2003, p. 211-222.

րովիչը, ինչպես նաև սպանությունն անմիջական իրականացնող բոսնիացի ուսանողներ Գավրիլո Պրինցիպը, Նելեդկո Չաբրինովիչը և Տրիկո Գրաբեցը «Մլադա Բոսնա» (Երիտասարդ Բոսնիա) մասոնական օթյակի անդամ էին[1]:

1912թ. գրող և գրականագետ Վլադիմիր Գաչինովիչի ղեկավարությամբ ստեղծված «Մլադա Բոսնան» հանրապետական գաղափարների և աթեիզմի կողմնակից էր, ակտիվորեն պայքարում էր բալկանյան ժողովուրդներին միավորելու հարավսլավոնականության գաղափարի շուրջը և ձգտում Սերբիայի հետ Բոսնիայի ու Հերցեգովինայի միավորումով ստեղծել Մեծ Սերբիա[2]:

Համաշխարհային մասոնության հրահրած Առաջին աշխարհամարտը մղվում էր ոչ միայն հանուն մասոնական գաղափարախոսության հաղթանակի, այլև ռուսական ինքնակալության պարտության: Այս հարցում շահագրգռված էին Ռուսաստանի հակառակորդ Գերմանիայի, չեզոք Ամերիկայի Միացյալ Նահանգների և դաշնակից Մեծ Բրիտանիայի մասոնական կառավարություններն ու օթյակները[3]:

Դուգլաս Ռիդն ընդգծում է, որ այդ երեք տարատեսակ ուժերի գործողությունների համախմբումը չէր կարող տեղի ունենալ առանց կենտրոնացված ղեկավարության, որը կառավարում էր համաշխարհային իրադարձությունները[4]: Այս ուժերը ղեկավարվում էին գերմանական ռազմական պատմաբան Կառլ Կլաուզեվիցի հայտնի այն մտքով, որ «Պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով»[5]:

Բրիտանական մասոնական կառավարությունը մինչ պատերազմի բռնկումը Ռուսաստանին խոստանում էր համակողմանի ֆինան-

[1] Տես՝ Бегунов Ю. Указ. соч., стр. 149; Писарев Ю.А. Тайны первой мировой войны. Россия и Сербия в 1914-1915гг., М., 1990.
[2] Տես՝ Dejan Djokic. Yogoslavism: histories of a failed idea, 1918-1922, London, 2003, p. 59; Steven K. Pavlovich. Serbia: The History of an Idea, New York, 2002, p. 90-91.
[3] Ланин П. Указ. соч., стр. 256.
[4] Տես՝Дуглас Рид. Спор о Сионе, Иоганесбург, 1986.
[5] Клаузевич К. О войне. Пер. с нем., М., 2013.

սական և ռազմական աջակցություն: Օգնության փոխարեն բրիտանական ֆինանսական օլիգարխները «Կլոր սեղանի» դրդմամբ Ռուսաստանում քայքայիչ գործողություններ իրականացրին սոցիալական վիճակը վատթարացնելու ուղղությամբ: Այս իրողությունը փաստում է Ֆիլիպ Փրայսը, ըստ որի՝ Ռուսաստանի հետ հարաբերություններում անգլիական և գերմանական կառավարություններն «իրենց դրսևորում էին որպես նույն երամի գիշանգղներ»[1]: Ռուսաստանի նկատմամբ երեք ուժերի դավաճանական դիրքորոշումը պատերազմի ավարտից հետո բազմաթիվ փաստաթղթեր վկայակոչելով բավականին համոզիչ հիմնավորում է ռուս վտարանդի բարոն մասոն Ա. Վ. Միլլեր-Զակոմելսկին[2]:

Մասոնության գիտակ ռուս վտարանդի պատմաբան Վասիլի Իվանովը մեծ թվով փաստերի հիման վրա գրում է, որ մասոնությունը Ռուսաստանն օգտագործեց որպես խոյահարում, որպեսզի կործանի Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, իսկ այնուհետև նրան նետեց հեղափոխության և կոմունիզմի կրակը[3]:

Յուրի Բեգունովի կարծիքով համաշխարհային պատերազմ չէր սկսվի, եթե «Ռուսաստանը մինչև 1906թ. հակադրվեր մասոնությանն ու սիոնիզմին և եվրոպական վեճերում հանդես գար հաշտարար դատավորի դերում»[4]:

Ռուսաստանն այդպիսի դեր իրականացնել չկարողացավ, բայց ռազմական հաջողություններ ունեցավ պատերազմի արևելյան և կովկասյան ռազմաճակատներում: Դա առաջ բերեց Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ մասոնական կառավարությունների և ֆինանսական օլիգարխների անհանգստությունը, որոնք ֆինանսավորեցին Ռուսաստանում 1917թ. փետրվարյան հեղափոխության իրականացումը:

Գերմանական կառավարությունը մասոն Ալեքսանդր Պարվուս-Գելֆանդի միջոցով այդ նպատակով ծախսեց 10 մլն դոլար: Նույնքան

[1] Տես՝ Муров Н. Е. Указ. соч., стр. 65.
[2] Տես՝ Миллер-Закомельский барон. Страшный вопрос. Париж, 1923, стр. 28-31.
[3] Տես՝ Иванов В.Ф. От Петра I до наших дней, русская интеллигенция и масонство. Харбин, 1934.
[4] Бегунов Ю. Указ. соч., стр. 147.

դրամ հատկացրին նաև «Անգլիայի Մեծ Օթյակի» Մեծ Վերահսկիչ, հայտնի քաղաքագետ և բանկիր լորդ Միլները[1] և ամերիկյան խոշոր բանկիր Յակոբ Շիֆֆը, ովքեր ղեկավարում էին Ռուսաստանում ցարին տապալելու գործընթացը[2]:

Հակառուսական երեք հիմնական ուժերը կատարյալ մասոնական դավադրություն կազմակերպեցին ռուսական միապետությունը կործանելու համար: «Կլոր սեղանի» և «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի գործակալներ էին Սանկտ Պետերբուգում Անգլիայի դեսպան Ջորջ Բյուքենենը, Ֆրանսիայի դեսպան Մորիս Ժորժ Պալեոլոգը, ինչպես նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն իրականացնող դեմքերը՝ արտաքին գործերի նախարար Ս.Դ. Սազոնովը, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում ռուսաց դեսպաններ Ա. Կ. Բենկենդորֆը, Բ. Ա. Բախմետևը, Ս. Պ. Իզվոլսկին, ովքեր որպես մասոն կողմնակից էին ռուսական կայսրության տապալմանը[3]:

Մասոնական դավադրությանը նպաստում էր նաև այն, որ ռուսական կառավարության շատ բարձրաստիճան պաշտոնյաներ և կայսերական կամարիլիան քաղաքական անհրաժեշտ փորձ, գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ չունեին ստեղծված իրավիճակում հստակ կողմնորոշվելու և ցարին գործնական խորհուրդներ տալու համար[4]: Ռուսական կառավարող շրջաններում խոսվում էր պետական հեղաշրջում իրականացնելու անհրաժեշտության մասին[5]:

1915թ. հունվարի 12-ին անգլիական մասոնների նախաձեռնությամբ ստեղծված «Միացյալ կոմիտեն» արտաքին գործերի նախարա-

[1] Տես՝ Goulevitch A. Gzarism and Revolution. Nawthorn, California, 1962, p. 230.
[2] Ланин П. Указ. соч. , стр. 256-257.
[3] Տես՝ Берберова Н. Люди и ложи. Русские масоны XX столетия. М., 1997.
[4] Տես՝ Шевельский Г. Воспоминание последнего протопресвитера русской армии и флота. Нью Йорк, 1954, том 1, стр. 330-340; Мосолов А. При дворе императора. Рига, 1937, стр. 92-97; Записки Н. М. Романова. Красный архив, 1931, том 49, стр. 105-106.
[5] Տես՝ Врангель Н. Воспоминание. Берлин, 1924, стр. 199; Мосолов А. Указ. соч., стр. 47; Милюков П. Россия на переломе, том 1, Париж, 1927, стр. 22.

րությանը ներկայացրեց Ռուսաստանը թուլացնելու ծրագիր: Անգլիական ֆորին օֆիսը փորձեց այն համաձայնեցնել պաշտոնական Փարիզի և Հռոմի հետ[1]:

Պատերազմում Ռուսաստանը թուլացնելու և հաղթողների շարքից բացառելու մասոնական դավադրության կենտրոնում էին «Կլոր սեղանը» և դեսպան Ջ. Բյուքենենը, ով ակտիվորեն համագործակցում էր ռուսական կառավարության ու Պետական դումայի անդամ մասոնների հետ: Ռուսաստանում պետական հեղաշրջում նախապատրաստում էին ոչ միայն այս ուժերը, այլև ընդդիմադիր քաղաքական գործիչներ Ա. Ի. Կոնովալովի, Ն.Վ. Նեկրասովի, Ի.Ն. Եֆրեմովի, Ա.Ֆ. Կերենսկու, Մ.Ի. Տերեշչենկոյի գլխավորած «Ռուսաստանի ժողովուրդների գերագույն խորհուրդ» օթյակը[2] և Երրորդ դումայի նախագահ Ա.Ի.Գուչկովի գլխավորած «Ռազմական օթյակը», որի մեջ մտնում էին ռուսական բանակի շտաբի պետ Ա.Մ. Ալեքսեևը, գեներալներ Ա.Մ. Կրիմովը, Ա.Ա. Բրուսիլովը, Ն.Վ. Ռուզսկին, Ի.Վ. Գուրկոն, Պ.Ա. Պոլովցևը և ուրիշներ[3]:

1916թ. դեկտեմբերին անգլո-ռուսական մասոնների դավադրության զոհ դարձավ Նիկոլայ II-ի ֆավորիտ Գրիգորի Ռասպուտինը[4]: Նիկոլայ II-ն անտեսում էր պետական հեղաշրջման և անգամ արքայատոհմի փոփոխության նախապատրաստման մասին լուրերն ու նախազգուշացումները[5]:

1917թ. հունվարի 17-ին Նիկոլայ II-ի հետ առանձնազրույցի ժամանակ դեսպան Ջ. Բյուքենենը փորձեց համոզել նրան գործել «Առաջադիմական խմբավորման» պահանջների ոգուն համապատասխան: Սակայն ցարն այդ նախազգուշացումից գործնական հետևություններ

[1] Տես՝ Меллер-Закомельский А.В. Указ. соч. стр. 28-31.
[2] Տես՝ Старцев В.И. Революция и власть. М. 1978, стр. 204-207; Аврех А.Я. Масоны и революция. М., 1990, стр. 21; Берберова Н. Указ. соч., стр. 40-47 .
[3] Ланин П. Указ. соч., стр. 257; Берберова Н. Указ. соч., стр. 48.
[4] Տես՝ Юсупов Ф.Ф., Конец Распутина. Воспоминания, М., 2007, стр. 59-116.
[5] Տես՝ Аврех А.Я. Царизм на кануне революции, М., 1989, стр. 56-60.

չարեց[1]: Այդ օրերին գործելու փոխարեն Նիկոլայ II-ը հիասթափված իր օրագրում գրում էր. «Ամենուրեք դավաճանություն է, վախկոտություն և խաբեություն»[2]:

1917թ. փետրվարին մասոնությունը Ռուսաստանում իրականացրեց հեղափոխություն: «Ռազմական օթյակի» անդամների նախաձեռնությամբ Նիկոլայ II-ին ստիպեցին հրաժարվել գահից՝ իբր թե պատերազմում Ռուսաստանի հաղթանակն ապահովելու նպատակով: Ռոմանովների արքայատոհմի տապալման լուրը բրիտանական խորհրդարանում ընդունեցին հոտնկայս և բուռն ծափահարություններով, իսկ վարչապետ մասոն Լլոյդ Ջորջը հայտարարեց. «Պատերազմը հասավ իր նպատակին»:

Իշխանության գլուխ եկած Ժամանակավոր կառավարության 11 անդամները, որոնց կազմը որոշվել էր դեռևս 1916թ., մասոն էին[3]: Մասոն Գ.Ե. Լվովի կառավարությունը շուտով փոխարինվեց մասոն Ա.Ֆ. Կերենսկու կառավարությամբ, ով կատարելով «Կլոր սեղանի» հանձնարարությանը, սահուն ապահովեց բոլշևիկների իշխանության գլուխ գալը: Դրան նպաստեցին նաև ԱՄՆ և Գերմանիայի կառավարություններն ու մասոնները, որոնք նոր իշխանափոխություն իրականացնելու նպատակով Ռուսաստան ուղարկեցին Վ. Լենինին ու Լ. Տրոցկուն՝ առատաձեռնորեն ֆինանսավորելով նրանց կողմից նախապատրաստած 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը: Մասոն Ուինսթոն Չերչիլի[4] դիպուկ բնութագրմամբ՝ Վ.Ի. Լենինի «կործանարար ճարպիկ գործողությունների հետևանքով Ռուսաստանն ընկավ: Այն փոշիացավ»[5]:

---

[1] Տես՝ Бюкенен Дж. Моя миссия в России: Воспоминания дипломата. Париж, 1924, том 2, стр. 34-39.

[2] Ланин П. Указ. соч., стр. 258.

[3] Տես՝ Мельгунов С.П. На путях к дворцовому перевороту. Париж, 1939; Катков Г. Россия 1917. Нью-Йорк, 1967; Его же: Февральская революция. Париж, 1984; Берберова Н. Люди и ложи, Нью-Йорк, 1986; Алданов М. Заговор. Берлин, 1927; Бостунич Г. Масонство и русская революция. Правда мистическая и правда реальная. Новий Сад, 1922.

[4] Ուինսթոն Չերչիլը (1874-1965) անգլիական Սթադհոլլ օթյակի անդամ է եղել 1901-1912թթ.: Տես՝ Пэт Морган, Указ. соч., стр. 78.

[5] The Cause of World Unrest. New York and London: G.P. Putman's Sons. 1920, p. 2 (XXXV).

Բոլշևիկների՝ մասոններից բաղկացած կառավարությունը հնազանդորեն կատարեց Արևմուտքի իրենց տերերի հանձնարարությունը: «Հանուն իր դաշնակիցների իրեն զոհաբերած Ռուսաստանը»[1] միակողմանիորեն դուրս եկավ պատերազմից և Բրեստ-Լիտովսկում կնքեց հաշտության խայտառակ պայմանագիր, որը ռուս ժողովրդի շահերի նկատմամբ բացարձակ դավաճանություն էր:

«Ոչ մի երկրի ճակատագիրն այնքան դաժան չստացվեց,-գրում է Ու. Չերչիլը,-որքան Ռուսաստանի: Նրա նավը սուզվեց, երբ նավահանգիստը տեսանելի էր[2]»:

Դրան հետևեց Ռուսաստանում քաղաքացիական պատերազմն ու Մեծ Բրիտանիայի նախաձեռնած Արևմուտքի տասնչորս երկրների խաչակրաց արշավանքը: Անգլիայի ֆինանսական և ռազմական աջակցությունը սպիտակ բանակներին ու ինքնահռչակ կառավարություններին նպատակ էր հետապնդում թույլ չտալ Գերմանիային տիրել Ռուսաստանի տարածքներին ու նյութական միջոցներին և Ռուսաստանը վերածել եվրոպական մասոնների երազած դեմոկրատական հանրապետության:

SUMMARY

THE ROLE OF THE MASONARY IN CONNECTION WITH THE 1ST WORLD WAR OUTBREAK

MOVSISYAN FELIKS

According to the conspiracy theory accepted in the Western Historical Science, the 1st World War outbreak is conditioned by the Masonism secret activities. The “Great English Loge”, “The Round Table”, “The Great French East”, “The Bnay Brit” masonic loges in cooperation with their countries masonic governments and financial oligarchs contributed to the outbreak of the 1st World War. The Masonary at tht time set itself an object to destroy empires, establish new World order, and create world imperceptible government.

[1] Лиддел Гарт Б.Х. Правда о войне 1914-1918гг. Пер. с англ. , М. 1935, стр. 187.
[2] Черчилль У. Мировой кризис. М.-Л., 1932.

***Key words**: masonary, conspiracy theory, 1st World War, Mason Secret Activities, "The Round Table", "The Great French East", three powers, downfall of empires, republic affirmation, New World order.*

РЕЗЮМЕ

РОЛЬ МАСОНСТВА В РАЗЖИГАНИИ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

МОВСИСЯН ФЕЛИКС

Согласно теории заговора, получившей распространение в западной исторической науке, разжигание Первой мировой войны было обусловлено тайной деятельностью международного масонства. Масонские ложи ,,Великая ложа Англии'', ,,Круглый стол'', ,,Великий Восток Франции'', ,,Бнай-Брит'', сотрудничая с масонскими правительствами и с финансовыми олигархами своих стран, по заранее подготовленной программе способствовали разжигнию Первой мировой войны. Целью масонства в войне было свержение империй, утверждение нового мирового порядка и создание невидимого масонского мирового правительства.

***Ключевие слова**: масонство, теория заговора, Первая мировая война, тайная масонская деятельность, "Круглый стол", Великий Восток Франции'', три силы, свержение империй, утверждение республик, новый мировой порядок.*

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

17. «ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՎ «ԱԶԳ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

ԱՇՈՏ ՎՈՒԼՈՂՅԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Բանալի բառեր՝ *գեղարվեստական վավերագրություն, հասկացույթ, ասույթ, զուգորդում, նկարագրական խոսք, բնանկար, լեզվական կաղապար, հատուկ անուն:*

Գեղարվեստական վավերագրությունը առանձին և ուրույն ժանր է, որի լեզվաոճական հետազոտությունը զգալի հետաքրքրություն է ներկայացնում: Այս ժանրի մեջ լայն առումով մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, օրագրությունը և էսսեն:

Ուսումնասիրությունները փաստում են, որ գեղարվեստական վավերագրության լեզվատիրույթում առկա են լեզվական տարբեր նշաններ, միկրոհամակարգեր, որոնք տեքստի ոճաբանության հետաքրքիր իրողություններ են:

Ժամանակակից ճանաչողական լեզվաբանության հիմնահարցերից մեկը տիպաբանական հասկացույթների իրացումն է: Հասկացույթը մտքի կառուցվածքային միավոր է, որը կոդավորված է լեզվատիրույթում. այն հեղինակի մտածական գործընթացի արդյունք է:

Վ. Կարասիկը դիտարկում է որոշակի սոցիալական խմբի ներսում լեզվական մշակույթ կրող անձի հասկացույթներ, որոնք ըստ էության դառնում են անհատի վարքի և արժեքային համակարգի բնութագրիչներ[1]: Հասկացույթի կարևոր բաղադրիչներից մեկը բառի իմացական հիշողությունն է, լեզվական այդ նշանի իմաստային բնութագրությունը, որն ըստ էության կապվում է բառի արմատական նշանակության և լեզուն կրողների հոգևոր արժեհամակարգի հետ: Այս

[1] Карасик В. И., *Языковой круг: личность, концепты, дискурс*, Волдоград, Перемена, 2002, с. 52.

առումով հուշերում և ուղեգրություններում ուշագրավ է «հայրենիք» և «ազգ» հասկացույթների ակտիվ գործածությունը:

Գեղարվեստական վավերագրության հեղինակների լավագույն մտքերը ներթափանցում են լեզվափիլիսոփայական լայն խոհի ու ընդհանրացման տիրույթ՝ հարստացնելով արևելահայ գեղարվեստական վավերագրության համապատասխան լեզվաոլորտը: Հեղինակային մտածողության յուրատեսակ դրսևորումներ են *ասույթները*, որոնք մի առանձին հմայք են տալիս գեղարվեստական վավերագրության լեզվին, պատումը հագեցնում արդի ոճաձևերին բնորոշ արտահայտություններով, որոնց մեծ մասը համամարդկային արժեք ունի: Ինչպես հավաստում է Ավ. Իսահակյանը, ասույթները պիտի օգնեն, որպեսզի «մարդկային ցեղը ազնվանա»[1]:

«Հայրենիք» հասկացույթի կիրառությունը լայն դրսևորումներ ունի: Նվարդ Թումանյանի «Հուշերը…» հեղեղված է Հ. Թումանյանի մտքերով, որոնք հետագայում ընդհանրացվել և մտել են բանաստեղծի վավերական ասույթների շարքը: Օրինակ՝ «*Հայրենիքի ծուխն էլ քաղցր է*»: Արևելյան հայտնի առածն ասում է. «*Օտարությունը դրախտ դառնա, նորեն հայրենիքը լավ է*»[2]:

«Հայրենիք» և «ազգ» հասկացույթները գեղարվեստական վավերագրության լեզվում կիրառվում են այլ ընկալումներով ու բնորոշումներով, այսպես՝ *հայրենի փուն*, *ազատություն*, *միասնականություն*, *Արարատ*, *Սևանա լիճ* և այլ ազգային սիմվոլներ:

Ասվածը հավաստենք բառարանային բացատրությամբ: Հայոց լեզվի հոմանիշների բառարանի «հայրենիք» բառահոդվածում նշվում են *բնաշխարհ, բնօրրան, երկիր, հայրենի հող, հայրենի երկիր, մայր հայրենիք, մայր հող, Հայաստան, հայ ժողովրդի արդի և պատմական երկիրը, 2. Ծննդավայր* զուգահեռները[3]:

---

[1] Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, «Սարգիս Խաչենց» հրատ., Երևան, 2006, էջ 222:

[2] Նույն տեղում, էջ 65:

[3] Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009, էջ 585:

Ազգ բառույթը հոմանշային տարբեր իմաստներ է արձանագրում՝ *ազգություն, ազգատոհմ, ցեղ*. Այնուհետև բացատրությունը. *տարածքի, լեզվի, մշակույթի, հոգեբանության ընդհանրությամբ, ազգային գիտակցությամբ և այլն մարդկանց՝ պատմականորեն առաջացած հանրություն*[1]:

Ս. Կապուտիկյանի ուղեգրություններում պատումը հաճախ է հյուսվում թևավոր խոսքերով, առած-ասացվածքներով, որոնք բանաստեղծուհու խոհերին նոր լիցք են հաղորդում՝ ասելիքը ընդհանրացնելով հայրենիքին և ազգին բնորոշ լեզվական հյութեղ տարրերով: Պատումներից մեկում ընդգծվում է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի *«Միասնականություն՝ ամեն բանե առաջ և ամեն բանե վեր»* ասույթը[2]:

Մեկ այլ դեպքում հեղինակային խոսքն ամփոփվում է գրաբար աֆորիզմով. «Ազատությունն է մայր բարեաց»[3]:

Հուշագիրների վկայությամբ՝ «թևավոր խոսքերը շուտ են թռչում» և դառնում ընթերցողի սեփականությունը[4]: Մի քանի նմուշներ, որոնք քաղաբերել ենք արևելահայ հուշագրության լեզվից. *«Գրքերը, ինչպես և մարդիկ, թափառումներից հետո թակում են հայրենի տան դուռը»*: «Արարատը… մեր ազգի խտացված խորհրդանիշն է»: *«Ամենայն ազգ իր այբբենն ունի»*: «Հայ ազգը շատ ընդունակ ազգ է, մանավանդ լեզվագիտության մեջ» (Լ. Տոլստոյ): «Սևանը հայ ժողովրդի դարավոր արցունքներից գոյացած սուրբ լիճն է» (Մաքսիմ Գորկի):

Ս. Կապուտիկյանի «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ուղեգրության սկզբնամասում հեղինակն անմիջապես անցնում է բուն նյութին, և ընթերցողը հայտնվում է նկարագրվող իրադարձության կիզակետում: Հենց սկզբում արաբ ուղեկցորդուհին բանաստեղծուհուն խնդրում է լրացնել հարցաթերթիկը և այդպես էլ չի կարողանում

[1] Նույն տեղում, էջ 7:
[2] Ս. Կապուտիկյան, *Իմ կածանը աշխարհի ճանապարհներին (ուղեգրություններ)*, Երևան, 2002, էջ 265:
[3] Նույն տեղում, էջ 16:
[4] Հ. Ղանալանյան, *Հուշ-դիմանկարներ, Անմարելի անուններ*, Լույս, Երևան, 1987, էջ 61:

պարզել, թե ո՛ւմ մոտ է գնում տիկինը: Պատասխանը երևում է միակողմանի երկխոսության մեջ, որտեղ ժողովուրդը *ազգ* բառի զուգորդումն է. *«Մի՛ դժգոհիր ինձնից, բարի՛ աղջիկ, որ քո իմացած լեզուները չգիտեմ: Իմանայի նույնիսկ, ոչ մի ուրիշ լեզվով չէի կարողանա պատմել ու թե պատմեի էլ, չէիր հասկանա, թե ի՛նչ կա հիմա իմ հոգում…*

*Այնտեղ՝ Միջերկրականի ափով մեկ, փռված է իմ **ժողովուրդը**: Նրանք, որ կենդանի մնացին, որ հարության հրաշքի պես իջան խաչափայտերից ու շարունակեցին ապրել: Նրանց մոտ եմ գնում ես, հասկանո՞ւմ ես, նրանց մոտ…»* [1]:

Ավ. Իսահակյանի օրագրերում արտահայտչական կարևոր նշանակություն ունեցող շարահյուսական իրակություններից են *Հայաստա՛ն աշխարհ*, *հայի՛ ոգի*, *ժողովո՛ւրդ* կոչականները, որոնց հիմնական գործառությունը հաղորդման վրա խոսակցի ուշադրության հրավիրումն է. «*Ժողովո՛ւրդ, որ ծով ես անհուն, հանգիստ ու անալիք. ես մի մեծ ալիք էի քո մեջ. բխելով քո կրծքից՝ հասա մինչև քո եզերքը*»[2]:

Գ. Էմինը «Ազգային դրոշմով ու արմատով» էսսեում կերտում է Ամերիկայում ապրող հայազգի գրողների դիմանկարները: Նրանք ներկայանում են տարբեր բնութագրումներով՝ *Սփյուռքի միջին տարիքի հայեր, մեր օրերի ամերիկացու և հայոց հին արմատների մի յուրօրինակ խառնուրդ, աֆորիզմների ու թևավոր խոսքերի բանաստեղծ, հայազգի ուսուցիչ, որը հավանաբար հայերեն չգիտե և անգլերեն լեզու է ուսուցանում* և այլն: Ներկայացնենք բնագրային նմուշ. «*ՀԵԼԵՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԸ, լռակյաց ու համեստ մի հայուհի, որին ես հանդիպեցի Բոստոնում, նույնպես կես հայի և կես ամերիկացու բնորոշ օրինակ է. հա՛յ, որն ուզում է հասկանալ Ամերիկայի քաոսային կյանքն ու ռիթմերը, և ամերիկացի՛, որն ուզում է տագնապով լսել իր արյան ներքին ձայնը, որն ամերիկյան չէ և գալիս է Միջերկրական ծովի ջերմ ու արևոտ ափերից*»[3]:

Ուսումնասիրելով գեղարվեստավավերագրական արձակի կաղապարային բաղադրիչները՝ նկատում ենք հայի տեսակին բնորոշ

[1] Ս. Կապուտիկյան, *նույն տեղում*, էջ 183:
[2] Ավ. Իսահակյան, *Հիշատակարան*, Երևան, 1977, էջ 402:
[3] Գ. Էմին, *Երկերի ժողովածու, հ. 3*, Երևան, 1986, էջ 580:

հիմնաբառեր: Հուշային պատումներում ուշագրավ է հայ ազգային մշակույթին հատուկ «*կարոտ*» հասկացույթի գործածությունը, որը զուգահեռվում է «հայրենիք» հասկացույթին. «Չգիտեմ՝ ուրիշներն ինչպես, բայց ես *կարոտս* առնում եմ աղբյուրներից»: «*Կարոտով* էին հիշում սիրելի Ավոյին, պատմում իրական դեպքեր, որոնք գեղեցիկ էին անիրական լինելու աստիճանի, և իմաստուն, ինչպես հեքիաթը»: «Ու ծանր հոգոցին խառնվում է *կարոտը*»:

«Կարոտ» հասկացույթի գործածության հայեցակարգը հատուկ է հայի ազգային նկարագրին, որը հաճախ երևում է գեղարվեստական վավերագրության խոսքային հաղորդակցության մեջ:

Ինչպես նկատելի է օրինակներից, հասկացույթը մտածական բազմաչափ բաղադրիչ է, որը կարող է իր մեջ արտացոլել աշխարհընկալման գործընթացներ և մարդկային գործունեության արդյունքներ: Այն մեծ չափով ճանաչողական և հոգեկան դրսևորումների կառույց է, որի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս իրական կյանքն արտացոլելու տարաբնույթ տեսանկյունների ամբողջության մեջ: Ինչպես նշում է Մ. Անգելովան, հասկացույթը տեսակետի և գիտելիքի ենթահամակարգերի ամբողջություն է[1]:

Վերջին ժամանակների հուշագրության դաշտը հաճախ է ամբողջանում արցախյան գոյապայքարի և նրա քաջասիրտ հայորդիների հուշափաստերով: Այդ հիմնապատկերում ամենայն մանրամասնությամբ է կերտված «*մեր ժողովրդի երևակայությունից և ազատաբաղձությունից ծնված առասպելական հերոս*» Մոնթե Մելքոնյանի անընդգրկելի դիմանկարը:

Հուշագիրները հաճախ են անդրադառնում հայազգի հերոսի՝ այս կամ այն առիթով ասված արտահայտություններին, որոնք թևավոր խոսքի ուժ են ստանում: Տողերի միջից կարծես զգում ես Ավոյի խոսքի բազմերանգությունն ու հարստությունը. «…Աշնան մի օր բարալիկ մի օձ հազիվ սողում էր դեպի դիրքերը: Մարտիկների առաջին մղումն այն էր,

[1] Ангелова М., *"Концепт" в современной лингвокультурологии, Актуальные проблемы английской лингвистики и лингводидактики. Сборник научных трудов. Выпуск 3.* М., 2004. с. 9.

որ պիտի սպանեն. օձ է, սողուն, թշնամի: Ավոն վերցրեց օձին, շոյեց, շոյեց այնքան, որ սա տաքացավ ու արագորեն սահեց, հեռացավ:

«*Օձն էլ բնության արարած է և իրավունք ունի ապրելու*»,-ասաց Ավոն»[1]:

Այլ ասույթներ. «*Եթե Ղարաբաղը կորցնենք, կշրջենք հայոց պատմության վերջին էջը*» (12, 143): «*Մեր պայքարն Արցախով չի ավարտվելու*» (12,170) և այլն:

Հուշագրության երկխոսություններում զուգորդման օրենքով տունը դառնում է հայրենիքի մասնիկը.

«*Մոնթեն ճանաչեց իրենց երկհարկանի փունը:*

- Մերն է, չէ՞:

Հայրը գլխով արեց:

-Բա ինչո՞ւ ներս չենք մտնում» (12, 9):

Նկատելի է, որ արևելահայ հուշագրության լեզվում շոշափելի թիվ են կազմում *հայ* և *փուն* վերջնաբաղադրիչով կաղապարները: Գործածության հաճախականության առումով ակտիվ են *հայ* բաղադրիչով կազմությունները՝ արցախահայություն, լիբանանահայություն, սփյուռքահայ, արևելահայ, ֆրանսահայ, պարսկահայ, իրանահայ, ամերիկահայ, վիրահայ, ռումինահայ, հունահայ, կովկասահայ, գաղութահայ, հայախոս, հայապատկան, հայակնիք, հայաշատ, հայաբույր, հայանկար, հայամերժ և այլն:

Տուն վերջնաբաղադրիչով կաղապարներ՝ *ժամափուն, սեղանափուն, դիվանափուն, դասափուն, վարչափուն* և այլն*:*

«Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում» գրքում *փուն* վերջնաբաղադրիչով բառամիավորները գերակշռում են: Այսպես՝ *մենափուն* «Տրամադրեցին Գևորգ և Սարիբեկ եղբայրների կանաչապատ ու ծառապատ *մենափունը*», *առանձնափուն* «Պոետը միայնակ նստել էր *առանձնափան* այգում», *գինեփուն* «Մետեխի բերդի տակ՝ Քռի ափին, մի *գինեփուն* կա»[2]:

---

[1] Ա. Ծառուկյան, *Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք…, Հուշեր*, Երևան, 2007, էջ 42:

[2] Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, «Սարգիս Խաչենց» հրատ., Երևան, 2006, էջ 84-112:

Որբատուն կազմությունը գործածված է Գ. Ջանիբեկյանի «Իմ աշխարհից» հուշերի գրքում. «Երեկոյան՝ ժամը 7-ին, մենք հավաքվելու ենք դիմացի *որբատան* կողքի շենքում»[1]:

Ս. Խանզադյանի «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակում գործածված միավորները՝ *բերդատուն, տոհմատուն, գլխատուն, քարատուն, այրատուն* և այլն:

Հուշերում կիրառված է *մոմատուն* բառամիավորը, որը բառարաններում վկայված չէ. «… Սարոյի հետ բարձրացա *մոմատան* սենյակն ու մոտեցա մի կրակոտ քահանայի»[2]:

Վազգեն Առաջինին նվիրված հուշերում՝ առանձնատուն, գանձատուն, ձեռագրատուն, զանգակատուն, նամակատուն[3], Հովհաննես Շիրազի հուշերում՝ *երգատուն*[4], *Նվարդ Թումանյանի հուշերում՝ Վերնատուն*[5] *և այլն:*

Հայտնի իրողություն է, որ հայերենը հատկանշվում է բառակազմական լայն հնարավորություններով, որոնց բազմաթիվ դրսևորումների հանդիպում ենք հուշագրության լեզվում: «Հայրենիք» հասկացույթի հետ աղերսվում են *ռազմ* և *զեն(ք)* բաղադրիչներով կազմությունները[6], որոնք գործածական են արցախյան գոյապայքարին նվիրված հուշերում՝ *ռազմադաշտ, ռազմաճամբար* «Բուն ռազմադաշտում և ռազմաճամբարում ռազմական գործը յուրացրել էր հիմնովին»: (էջ 64), *ռազմարվեստ* «Գործում էր ռազմարվեստի բոլոր կանոններով»: (էջ 123), *ռազմավար* «-Դուք զենք ունեք, այս ռազմավարով պետք է զինել ուրիշ զինվորների»: (էջ 105), *ռազմարշավ* «Ես տպավորված էի ողջ ռազմարշավով»: (էջ 110), *ռազմաճակատ* «…Ունենք 1000 կմ երկարությամբ ռազմաճակատի գիծ»: (էջ 157), *ռազմակայան* «Քելբաջարը

[1] Գ. Ջանիբեկյան, *Իմ աշխարհից,* Երևան, 1980, էջ 66:
[2] Պ.Պռոշյան, *Երկերի ժողովածու, հատոր յոթերորդ,* «Հայաստան» հրատ., Երևան, 1964, էջ 62:
[3] Ապրել գալիքի տեսիլքով: *Վազգեն Ա. երջանկահիշատակ հայրապետի ծննդյան 100-ամյակին: (Հուշեր Վազգեն Վեհափառի մասին)*, Ս. Էջմիածին, 2008:
[4] Հ. Շիրազ, *Մի փեփուր իմ արծիվ կյանքից*, «Հայաստան» հրատ., Երևան, 1984:
[5] Ն. Թումանյան, *Հուշեր և զրույցներ*, Էդիթ Պրինտ, Երևան, 2009:
[6] Օրինակները քաղել ենք «Ա.Ծառուկյան, *Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք…, Հուշեր*, Երևան, 2007» աղբյուրից:

թշնամու մի ռազմական էր»: (էջ 221]), *ռազմագետ* «Ինչպես ռազմագետներն են բնորոշում, սահմանագծում փխրուն խաղաղություն է»: (էջ 161), *ռազմավարական* «Պայքարը պիտի ունենա քաղաքական հստակ նպատակ, իսկ զենքը լինի ընդամենը դրան հասնելու ռազմավարական հիմնական միջոց»: (էջ 68), *ռազմամարզական* «Ռազմամարզական վարժարան-ուսումնարանը կոչվեց Մոնթեի անունով»: (էջ 108), *ռազմագերի* «Երևի թե չգիտեր ռազմագերիներին վերաբերող միջազգային օրենքները»: (էջ 178), *զինատեսակ* «Նա լիովին տիրապետում էր ձեռքն ընկած կամ փորձարկած ամեն մի զինատեսակ»: (էջ 63), *զենք-զինամթերք* «Մեր պաշտպանական շրջանը զենք-զինամթերք առգրավեց»: (էջ 76), *զինամթերանոց* «Քելբաջարը մի զինամթերանոց էր»: (էջ 221), *զինամիջոց* «Սկսեցինք օգտագործել տանկեր, ԲՄՊ զրահամեքենաներ, այլ ծանր զինամիջոց»: (էջ 147), *զինադադար* «Ուս ուսի տված՝ նրանք ճակատը պահեցին մինչև զինադադար»: (էջ 123), *զինուժ* «Մոնթեի առաջին գործը եղավ շրջանի ամբողջ զինուժի հաշվառումը»: (էջ 126), *զինապարտ* «Բոլորը զինապարտ չէին» (էջ 149):

Տրամաբանները կարևոր են համարում տարբերակել անվան նշանակությունը և իմաստը: Բ. Ռասելը տարբերակում էր գոյականի հատուկ և հասարակ անունները: Հատուկ անունները նա համարում էր թերի սիմվոլներ, որոնք վերաբերում են որոշակի առարկաների՝ ռեֆերենցիա ստանալով նախադասության կազմում[1]:

Ուշագրավ է, որ հուշագրության բառապաշարում զգալի կշիռ ունեն հատուկ անունները. «հայրենիք» հասկացույթի հետ զուգորդվում են *շեն* և *ավան* բաղադրիչներով տեղանուններ. այսպես՝ *Մաճկալաշեն, Բերդաշեն, Սպիտակաշեն, Խոնաշեն, Մյուրիշեն, Կարմիրավան, Գևորգավան և այլն:*

Իրենց իմաստային և քերականական ընդհանուր հատկանիշներով հանդերձ հատուկ անունները միաժամանակ ձեռք են բերում մի շարք այլ առանձնահատկություններ:

[1] Գ. Բրուտյան, *Փիլիսոփայություն և լեզու*, Երևան, 1973, էջ 205:

Ընդհանրապես հուշագրությանը հատուկ է բառարանային իմացաբանական արժեքը: Հուշագիրները հաճախ են մեկնում այս կամ այն բառը, բառակապակցությունը, թարգմանում բառամիավորների հայերեն իմաստներ, որով և ամբողջական ու ճշգրիտ է դառնում պատումը: «Աջ ուղղությամբ դեպի Ղիյամաթլու (թարգմանաբար՝ ցուրտ) գյուղը Հայկ Սարգսյանի ու Գրիշա Ազիզյանի գումարտակներն էին»: «Մենք դիրքավորվեցինք Դավաբելի (ուղտի մեջք) բարձունքում և գրե–թե մեկուկես ամիս պահում էինք այդ դիրքերը»[1]:

Հուշագրության պատումին հաճախ է ձուլվում բնանկարը՝ որպես գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարր: Բնանկարներում նկատելի են փոխաբերության տարատեսակ դրսևորումներ, որտեղ հաճախ «հայրենիք» հասկացույթի զուգորդումներն են երևում. «Մայր մտնող արևը հրդեհել է *երկնակամարի* մութ ամպերը, շողի մի ծվեն դիպել է *խաչքարի* թևին: Խաչքարը դեմքով է նայում *սահմանին*. այն ասես *սահմանը* հսկող մշտարթուն պահապան է ու մեզ ուղեկցում է դեպի սահմանագիծ՝ *դիրքեր*» [2]:

Լավագույնս է գծագրված Մակարավանքի նկարագրությունը. «Անտառի մեջ է Մակարավանքը: Ամեն կողմ սքանչելիորեն քանդակազարդ, ոչ միայն նախշային, այլև ֆիգուրային: Մանավանդ գլխավոր եկեղեցու բեմառաջքի քանդակները. ասես ոսկերչություն քարի վրա, մանրաքանդակ ֆիգուրներով, մի թեթև մամռապատ, ասես ժանգակալած բրոնզ լինի…»[3]:

Ինքնատիպ փոխաբերությամբ է հարուստ Հ. Շիրազի ինքնակենսագրական արձակը. օրինակ՝ «*Յոթ զավակ եմ տվել ազգիս, յոթ Մասիս*»[4]:

«Հայրենիք» և «ազգ» հասկացույթները հստակ երևում են, երբ դիտարկում ենք հայոց շեներն ու նրանցում ապրող մարդիկ. Օրինակ՝

[1] Ա. Ծառուկյան, *նույն տեղում*, էջ 119, 244:
[2] *Նույն տեղում*, էջ 40:
[3] Կ. Սուրենյան, *Օրագիր. 1943-2001*, հ. 2-րդ, «Սարգիս Խաչենց» հրատ., Երևան, 2007, էջ 649:
[4] Հ. Շիրազ, *նույն տեղում*, էջ 89:

հետաքրքրական պատկեր է ստեղծվում Վանը և վանեցու դիմանկարը լեզվամշակութային տեսանկյունից դիտարկելը:

Հայտնի է, որ Վանի հոգևոր-մշակութային դիմանկարի ամբողջության մեջ հայտնի են եկեղեցականները, աշուղները, գրողներն ու դերասանները: Վկայություններում երևում են վանեցիների անձնային-ընտանեկան ազգային օրենքները՝ ընտանեսիրություն, հարգանք ավագների նկատմամբ, որդիական խոնարհում և այլն: Ուշագրավ է հատկապես Վանին և վանեցուն աղերսվող բառամթերքը. դրանք բաղադրյալ բառեր են, բարբառային բառամիավորներ, բանահյուսական նմուշներ (երգեր, օրինանքներ, առած-ասացվածքներ և այլն), որոնք «հայրենիք» և «ազգ» հասկացույթների լայն կիրառական դաշտում հուշագրական լեզուն սնուցող կարևոր երակներ են:

Ամփոփենք: Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվատիրույթն ընդգրկում է լեզվական տարբեր նշաններ և ենթահամակարգեր: Դրանցից էականորեն առանձնանում են հասկացույթները՝ որպես հեղինակային մտածական բաղադրիչներ: Հուշագրության լեզվատիրույթում «հայրենիք» և «ազգ» հասկացույթներն արտացոլում են աշխարհընկալման գործընթացներ, մարդկային գործունեության արդյունքներ:

SUMMARY

THE USE OF CONCEPTS "FATHERLAND" AND "NATION" IN THE FICTION DOCUMENTARY WRITINGS OF EASTERN ARMENIAN

GALSTYAN ASHOT

The linguistic field of Eastern Armenian includes various linguitic signs and subsystems. Among them, concepts can be set apart as they derive from the writer's thinking. In fiction documentary writings the concepts of "Fatherland" and "Nation" reflect processes of world recognition and results of human activities. These are concepts of a person who carries liguitic culture. These concepts become depictions of a peprson's behaviour and value-system in the speeh.

Key words: fiction documentary, concept, sayings, correlation, descriptive langauge, landscape, linguistic matrix, proper names.

РЕЗЮМЕ

ПРИМЕНЕНИЕ ПОНЯТИЙ «ОТЕЧЕСТВО» И «НАЦИЯ» В ВОСТОЧНО-АРМЯНСКОМ ХУДОЖЕСТВЕННО-ДОКУМЕНТАЛЬНОМ ЯЗЫКЕ

ГАЛСТЯН АШОТ

Сфера восточно-армянского художественно-документального языка охватывает различные языковые знаки и подгруппы. Из них существенно выделяются понятия как составляющие авторского образа мышления. В мемуарах понятия «отчество» и «нация» отражают процессы восприятия мира, продукты деятельности человека. Они – понятия, носящие языковую культуру и характеризующие поведение и систему ценностей индивидуума.

Ключевые слова: художественная документалистика, понятие, афоризм, ассоциация, описывающее слово, пейзаж, языковая модель, личное имя.

18. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀՆՈՒՐԻ ԵՎ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆԻ ՏՈՆՈՅԱՆ

Բանալի բառեր՝ *սփյուռքահայ գրականություն, Նահանջ, Կարոտ, հայկական սփյուռք, Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան:*

Առաջին հայացքից թեև Շահան Շահնուրը և Վազգեն Շուշանյանը սփյուռքահայ գրականության երկու ծայրաթևերում էին, և նրանց միջև առաջացած գրական անդունդ կար, այնուամենայնիվ, նրանք միասնական ճանապարհ ունեին, ազգային հետագծի նույն առաքելությունը:

Նրանք լուրջ ուշադրություն էին դարձնում ընթացիկ քննադատությանը և կարևորում նրա տեղը գրական զարգացման միտումներում: Մեզ հատկապես հետաքրքրում են Շ. Շահնուրի և Վ. Շուշանյանի՝ գրականության նշանակությանը տրված գնահատությունները: Այս դաշտում գրողները, թվում է, հաշտ են, կարելի է նույնիսկ ասել՝ իրար փոխլրացնում են:

Ե՛վ Շ. Շահնուրը, և՛ Վ. Շուշանյանը գրականության պատմության մեջ առանձնանում են ոչ միայն գեղարվեստական մտածողության

ինքնատիպությամբ, այլ նաև գրական տեսաբանական սթափ հայացքով: Ինչ վերաբերում է գրաքննադատությանը, երկու գրողն էլ աչքի են ընկնում խիստ, անգամ որոշ իմաստով՝ կամուրջներ այրող դիրքորոշումներով:

Նրանք՝ իբրև Փարիզի «Մենք» գրական շարժման երբեմնի գաղափարակիցներ, հանդես եկան նորովի արժևորումներով՝ դառնալով սփյուռքահայ գրական տիրույթում ազգային ինքնության երկու զսպանակները:

Պետք է նկատել, որ Շ. Շահնուրն իր գրական հայացքի և կողմնորոշումների մասին հնարավորություն է ունեցել խոսելու և՛ գեղարվեստական գործերում, և՛ հոդվածներում, և՛ նամակներում, որտեղ լրացվում, շաղախվում են գեղարվեստական ըմբռնումի առանձին տարրերը: Նրա գրականությունը լի է ներքին ալեբախումով ու տառապանքով: Գրողի սուր գնահատություններն ազգային տարաբնույթ խնդիրների շուրջ բացահայտում էին համայն հայության տագնապները, ուր նետված խոսքը ցավ էր, ափսոսանք ու արցունք:

Վերարծարծելով շահնուրյան այն միտքը, թե գրողը իր գրածի ոգուն ու ուղղությանը պիտի հավատա՝ մտաբերենք 1964-ին Գր. Քյոսեյանին հղած նամակներից մեկը, որտեղ ֆրանսահայ արձակագիրը շարադրում է իր տեսակետը Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի խմբագրված տարբերակի առիթով (Կ. Զարյանի ստեղծագործության շուշանյանական գնահատանքին անդրադարձել ենք «Մենք»-ի մասին խոսելիս): Շ. Շահնուրի համար այդ վեպի մշակումը քաղաքական պատվիրված «զառանցանք» է: Ինչ վերաբերում է վեպի ձևին, այն շարունակում է մնալ «հիւանդկախ», ինչպիսին, իր կարծիքով, 1943-ի բոստոնյան հրատարակությունն էր: Ուստի Կ. Զարյանն իր վեպով չի կարող ակնկալել, թե «ապրող երկ մըն» է թողել: Շահնուրն ընդունում էր երկը գաղափարական փոփոխությունների ենթարկելու հեղինակի իրավունքը, բայց այդ փոփոխության խորքում իսկ նա տեսնում էր գրողի և խորհրդային գործակալների հարաբերության «պարկեշտության» պակասը. «Գրած էր բան մը, որուն ինքն իսկ չէր հաւատար: Ահա հո՛դ էր վէրքը: Չեն հաւատար իրենց գրածին: Գիրը ընել հաւատարիմ

արտայայտութիւնը մտածման - ահա բաներ՝ որ եղերականօրէն պակսած են մեր գործիչ-գրագէտներէն ոմանց»[1]: Շահնուր քննադատն իր դիրքորոշումներում երբեմն ծայրահեղ է, հաճախ՝ աներեր, սակայն այս պարագայում հարկ է նշել, որ ֆրանսահայ գրողը կանգնած է «Նավը լեռան վրա» վեպի ճշմարիտ տարբերակի կողքին: Նա, իրեն հատուկ խստությամբ, հայոց համար կարևորում է ինքնության, պետականության խորհուրդ ստացած Առաջին հանրապետության դերը՝ անողոքաբար քննադատելով Կ. Զարյանի որդեգրած խորհրդային հասարակարգի ջատագովի անակնկալ կեցվածքը:

Մինչդեռ Կ. Զարյանն առիթ ունեցել է խոսելու «Նավ...»-ի երևանյան հրատարակության մասին: Նա ափսոսանքով գրում է. «Ես ուզում եմ իմացվի, որ «Նավի» երկրորդ հրատարակությունը լույս է տեսել ճնշման, խաբեության և սպառնալիքի տակ»[2]: Ապա շարունակելով՝ ընթերցողին հորդորում է, որ ի՛ր գրչի գործը համարեն արտասահմանում լույս տեսածը. «Իմ գրած վեպը այն է, ինչ որ տպված է արտասահմանում (շատ աննշան փոփոխություններով) և իմ մահից հետո, երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակությունը»[3]:

Շ. Շահնուրի բնագրի նկատմամբ տարակարծիք վերլուծությունները, քննադատությունները, գովեստի խոսքերը բխում էին ստեղծագործությունների դրամատիկ նյութի հագեցվածությունից: Շահնուրն այն գրողն էր, որ «համարձակվում էր» դիպչել հայի՝ դեռ չսպիացած վերքերին: Ահա սա էր, որ չներվեց մի խումբ գրաքննադատների կողմից:

Նրա գրականության մեջ առաջնային էր սուր արձագանքը գեղարվեստական ավանդույթին, նրա հաջորդական զարգացումներին: Գրական ձախողանքն ու վրեպը ընդունում էր բուռն զայրույթով: Հատ-

[1] Շահնուր Շ., Նամականի, հ. Ա., Երևան, 1982, էջ 57:
[2] Զարյան Կ., Նավատոմար, Երևան, 1999, էջ 567:
[3] Նույն տեղում:

կապես դժգոհում էր, երբ հայ գրողը դասեր չէր քաղում իր պատմությունից ու անդադար հայտնվում էր նույն «ծանոթ» պատրանքների մեջ և որովհետև «…անհուն խանդով կը սիրէր հայ ժողովուրդը, հայ գրականութիւնը, հայերէն լեզուն ու… գաղթական հայը՝ անոր ապրած ողբերգութեան մէջ, կ'ուզէր աւելի ապահով, աւելի լուսաւոր ճամբայ մը բանալ սփիւռքահայ առօրեային եւ մտաւորական մացառուտին մէջէն»[1]: Սա գրական հայացքի նշանակություն է ստանում. հիշենք, թե 1929-ին Փարիզում ինչ սառն էր դիմավորել Համաստեղին, ում մեջ տեսել էր գրական հակառակորդի: Այս միջադեպի ծիլերը պետք է որոնել 1927-ին ամերիկահայ վիպագրի «Անսովոր կինը» պատմվածքում, ուր և որսացել էր իր դեմ ուղղված սուր սլաքներ: Փաստորեն՝ անձնական հարաբերություններում գերիշխող էր դառնում Կարոտի և Նահանջի թույլ կամ ուժեղ բախումը:

Բարձր, ճշմարիտ արվեստը բոլոր ժամանակներում էլ հասարակության նեղ շրջանակներին է հասու և ընդունելի: Բնավ կարիքը չկա, որ Շ. Շահնուրի գրականությունը դառնա լայն զանգվածների սեղանի գիրք ու անխտիր ընդունվի մտավորական խավերի կողմից: Այս հարցի շուրջ գրականագետ Շ. Մուղնեցյանը գտնում է, որ Շահնուրի գրականությունը բոլորովին էլ «դյուրամարս» ու «թեթև» չէ, որովհետև նա մեծ մասամբ խորհրդածում է սիմվոլներով: «Ասվածից պետք չէ բխեցնել, թե Շահնուրը դեմ է գրականության ժողովրդայնությանը»[2],- եզրակացնում է գրականության պատմաբանը:

Վազգեն Շուշանյանի համար գրականության նշանակությունը հարաբերվում էր գրական նյութի ընտրության հետ: Իսկ այստեղ զգայությունների «հղկումը» առաջնային բնագծերում է: Սերը, կիրքը գաղափար է ինքնին, երջանկության խորհրդի նախապայման: Վ. Շուշանյանի ստեղծագործության առանցքը կինն է: Արձակագիրը

[1] Անդրէասեան Ա., Գրականութեան եւ գրողներու մասին դատումներ եւ գնահատումներ, Լոս Անճելըս, 1988, էջ 182 (Տե՛ս՝ «Շահան Շահնուր» հոդվածը, էջ 181-187):
[2] Մուղնեցյան Շ., Նահանջի ահազանգը, Երևան, 1984, էջ 57:

փորձեց ապացուցել, որ կինը միայն առօրյայի կամ կենցաղի, սիրո խաղի լծորդը չէ: Կինը կիրքն է, գեղեցիկն է, մարմինը:

Չնայած այն հանգամանքին, որ Վ. Շուշանյանի ստեղծագործություններում կանայք բացարձակի ընկալման սահմանում են, իսկ հեղինակին անհնարին է պատկերացնել առանց կնոջ ու նրա աշխարհի՝ պետք է նկատել, որ բոլոր կանացի կերպարներն անրջային երանգ ունեն, պատրանքային յուրօրինակ հանդերձ, իրենց մեջ տղամարդկանց համար կրում են սեռի հրավերի մելամաղձ: Սա Վ. Շուշանյանի ստեղծագործություններին բնորոշ հատկանիշ է:

Սակայն առաջին հայացքից սա կարող է հնչել որպես մարտահրավեր՝ ուղղված գրական կարծրատիպերին. չէ՞ որ նրա շենշող գրականության մեջ կինը հայտնվում է նոր միջավայրում՝ օտարության մեջ ազգային արժեքների պաշտպանության ենթաբնագրերում, ով անգամ կարող էր շեղել, բայց պահպանել հմայքի զորությունը («Ճերմակ Վարսենիկ», «Բանաստեղծը եւ կինը», «Մթին պատանութիւն», անգամ օրագրային գրառումները՝ ներանձնական տառապանքի օրինակներով):

Այսուհանդերձ, Շուշանյանի քնարական արձակը լիարժեք պատկերացում է տալիս հայկական Սփյուռքի 20-30-ական թթ. ազգային-բարոյական փոփոխվող արժեքների մասին: Նրա ստեղծագործություններում կարմիր ժապավենի նման ձգվող, մի ողջ սերնդի ու մաքառող հայության կենսապատում կա, քաղաքական դիրքորոշումների ու տեսակետների արտացոլում, անհատի դժվարին պայքար՝ հաճախ և անտեսանելի թվացող՝ ներքին ու արտաքին աշխարհների միջև: Անշո՛ւշտ, դա նույնքան կարևոր տեղ է գրավում գրողի կենսահայացքում, բայց անվերապահ պետք է ընդունել Վ. Շուշանյանի ստեղծագործության գլխավոր հատկանիշը՝ մարդկային բուռն զգացումների ձևավորման, զարգացման հակվածությունը:

Խոսելով Շուշանյանի արձակի ոճային առանձնահատկությունների մասին՝ արձակագիր և գրականագետ Գեղամ Սևանը գրում է. «Միատեսակ են բոլորը՝ միօրինակ չլինելով հանդերձ, և յուրաքանչյուրը

մի խոր ապրումի տարբեր հատվածները կարծես լինեն»[1]: Իսկապես, Շուշանյանի ստեղծագործությունները միօրինակ չեն, քանի որ բացառապես ինքնակենսագրական բնույթի գունային հարուստ ենթահողով հանդերձ՝ նրանց մեջ բարձրանում ու թևածում է մարդկայինը:

Ըստ էության՝ պետք է ընդգծել, որ այս հակվածությամբ Շուշանյանը գրական դպրոց ստեղծեց, որի հավատավոր աշակերտները դարձան արձակագիրներ Գեղամ Սևանը և Գևորգ Աճեմյանը[2]: Եվ երբ Գ. Սևանը վերը նշված «հայտարարությամբ է» հանդես գալիս, ապա կարծում ենք, մեծ չափով գործ ունի նաև իր ստեղծագործական զգայական ակունքի հետ: Մասնավորապես նկատի ունենք 1959-ին լույս տեսած «Բյուրեղյա դղյակը» ինքնակենսագրական վիպակը:

Սփյուռքահայ գրականության ուսուցիչ Հակոբ Օշականը թեև քննադատում է Վ. Շուշանյանին նրա բանաստեղծական ընկալման յուրահատկության համար, գտնում, որ հուզականության շնչի տակ Շուշանյանը ենթագիտակցական ծալքերում կորցնում է իմացականությունը, այնուհանդերձ չի թաքցնում, որ «Ամէնէն առաջ համակրած եմ իր զգայնութեան: Նորերէն շատ քիչեր միայն բերին մեր գրականութեան այդքան առատ ջիղերու սարուածք մը»[3]: Սա հնչում է որպես խոստովանություն, որպես «կենսաբանական ջիղի» ջղուտ վերաբերմունք:

Վ. Շուշանյանի վիպակներում ակնհայտ է կրքի բախումի, սիրո հայտնության և գեղեցիկի պաշտպանության խոլական ձգտումը: Ահա թե ինչու ամեն ինչից վեր Շուշանյանը մնաց գեղեցիկի և երիտասարդության երգիչ, սերը մնաց գեղագիտական բարձրագույն նպատակ, կինը՝ հոգեաշխարհի լուսավոր կենտրոն, ցանկալի, հաճախ նաև՝ աննվաճ:

---

[1] Սևան Գ., Վազգեն Շուշանյան (կյանքն ու ստեղծագործությունը), Երևան, 1968, էջ 17:

[2] Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Գ. Աճեմյանը մեծագույն սիրով դիմում է նաև շահնուրյան զինանոցին («Ակամայ ծաղրածուն եւ այլ դերասաններ», «Ապագայի հետքերով»)՝ ևս մեկ անգամ տալով ապացույցը Շ. Շահնուրի և Վ. Շուշանյանի հայացքների խաչաձևումի:

[3] Թաշեան Բ., Մայրիներու շուքին տակ (զրոյց Յ. Օշականի հետ), Պէյրութ, 1983, էջ 33:

Նրա ստեղծագործություններն առանձնանում են իրենց խոր քնարականությամբ, ապրումի պոռթկումով, ներքին ջերմությամբ, գեղեցիկի գնահատությամբ, համարձակ գաղափարներով, հարուստ բառապաշարով: Մի առիթով գրականագետ Վազգեն Գաբրիելյանը գրել է. «Սիրո խոհն ու փիլիսոփայությունը, սիրո պատճառած տառապանքներն ու հրճվանքները, հուզումներն ու զանազան ապրումները, մարմնական ու «կեղծ» սերերի դեմ՝ աստվածային ու «հեթանոս» սիրո որոնման, երազի ձգտումները Շուշանյանը դրել է արձակ ու չափածո բազմաթիվ ստեղծագործությունների հիմքում»[1]:

Վ. Շուշանյանը գրականության նշանառությունը որսում է անձերի ճակատագրերում, հոգեբանական նուրբ հանգույցներում, ասել է, թե կարողանում է իր ապրումը, հույզը, ցավն ու ներշնչանքն արտահայտել մարդկային ճակատագրերի համադրական քննական եղանակներում:

Շ. Շահնուրին վերապահվել է հայ գրականության մեջ «խիստ և դառը քննադատի» անունը (Վ. Թեքեյան): Եթե ուշադրություն դարձնենք տպագրության ընթացքում նրա՝ տպագրական վրիպակների հանդեպ ունեցած անհանդուրժող վերաբերմունքին, կհասկանանք, թե որքան խստապահանջ պիտի լիներ գաղափարական հարցադրումների նկատմամբ: Գր. Քյոսեյանը, որ բախտ է ունեցել դեռ Շահնուրի կենդանության օրոք հրատարակության պատրաստելու «Թերթիս կիրակնօրեայ թիւը» հատորը, գործել է գրողի անհանգիստ և խուզարկու հայացքի ներքո: Այդ օրերին գրած Շ. Շահնուրի նամակներից ակնհայտ է դառնում, թե որքան նրբանկատորեն էր սրբագրում իր գրվածքները՝ նույն վերաբերմունքը պահանջելով բոլորից[2]:

Բազմաշերտ է շահնուրյան գրական ժառանգությունը: Նրա գրականության առանցքում համամարդկային խնդիրներ են, որոնք իրենց կենսունակությունը հաստատում են նաև ազգային ավազանում:

Գրողի մտածումների մեջ միշտ ինչ-որ «անհայտ» մի բան ներքնապես անվստահության տարր էր բերում: Եվ սա չի վերաբերում միայն

[1] Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Երևան, 2008, էջ 232:
[2] Շահնուր Շ., Նամականի, հ. Ա., էջ 20-21:

իրեն. այն դարձրել է շարունակական հայ գրական զարգացումներում: 1964 թվականի սեպտեմբերի 15-ի թվակիր նամակում Գր. Քյոսեյանին փոխանցում է իր անհանգստությունը՝ կապված հայ ժողովրդի, նրա գրականության ըմբռնման հետ. «Հայ ժողովուրդը աւելի՛ վեր՝ քան իր տկար գրականութիւնը»[1]: Իսկ ինչպե՞ս է հայ ժողովուրդը «վեր կանգնում» «տկար» գրական շնչից: Պատասխանը ծայրահեղության դուռն է հասցնում նրան, ինչն անակնկալ չէ, եթե ճանաչում ենք արվեստագետի վարքագիծն ու պոռթկումի հակումը. «Հայը ամուլ է, անծին, անպտուղ: Հայը դատարկ է, փուճ, ունայն, սնոտի»[2],- ինչպես ասում է վեպի հերոսը: Նման զայրալից, թունոտ արտահայտությունները, իհարկե, առարկայորեն անընդունելի են, սակայն խորքի մեջ միայն՝ պայմանականորեն բացատրելի:

Շ. Շահնուրը, թվում է, մարտնչում էր գրական բոլոր ճակատներում՝ չհանդուրժելով «թափթփված», պարզունակ, լալկան, «քաղցր» գրականությունը, հորդորում շարժվել համաշխարհային գեղարվեստական ընթացքներին համաքայլ: Նա գտնում էր, որ հայ ժողովուրդը իր գրական չափումներում կարող է վեր բարձրանալ անցյալի «մոխիրներից», թոթափել հիշողությունների «արյունամած» բեռը և ստեղծել զգայական տիրույթից դուրս արժեքներ, որոնցով կարելի կլիներ «գլուխը բարձր» ներկայանալ համաշխարհային մշակույթին:

Շ. Շահնուրի ստեղծագործության մասին գրականագետ Ստեփան Թոփչյանն «Էտյուդ Շահնուրի մասին» հոդվածում (անցյալ դարի 80-ական թթ.) գրում է. «Շահնուրի արվեստը էմոցիոնալ հագեցվածության, ուժգին ապրումների, ցնցումների, պոռթկացող կրքերի ազատագրումն է. դառնություն, ցավ, հավատ, հուսախաբություն, մտերմություն թե սեր»[3]: Մեր կարծիքով էլ, Շ. Շահնուրի գրականության մեջ որքան էլ տեսանելի է հույզի, ապրումի պոռթկումը, սակայն գրողը երբեք չի պարտադրում այն իր ընթերցողին, ավելին՝ նա միշտ ազատ է,

[1] Նույն տեղում, էջ 57:
[2] Շահնուր Շ., Նահանջը առանց երգի, Փարիզ, 1981, էջ 138:
[3] Թոփչյան Ս., Կերպ և իսկություն, Եր., «Սովետական գրող», 1987, էջ 451 (Տե՛ս՝ «Էտյուդ Շահնուրի մասին» հոդվածը, էջ 429-482):

առանց «ձեռնաշղթաների»: Երբ ասում ենք «առանց ձեռնաշղթաների», նկատի ունենք առաջին հերթին շահնուրյան մտքի ազատ սլացքը, անկաշկանդ ու անմիջական գրական-գեղարվեստական թռիչքը, ինչով նա առանձնանում է ֆրանսահայ միջավայրում:

Շահնուր գեղագետի համար առանցքային նշանակություն էր ստանում գրական նյութի ապրվածությունը, որը հակադրում էր մտացածին կառույցին:

Իր գեղագիտական որոնումներում նա ավելի ու ավելի հարում է գերիրապաշտական հանգույցի այն մեկնակետին, թե «գրականությունը մանավանդ անձնական փորձառության հարց է, և մարդ իր տեսածն ու ապրածն է, որ կրնա տալ ջերմությամբ»[1]: Այստեղ էլ քննադատության սլաքն ուղղում է Րաֆֆու, Ավետիս Ահարոնյանի, Լևոն Շանթի գրական հայացքների դեմ: Նա գրում է. «Հակառակ երևակայության նպաստին, հակառակ գրողի արհեստին բազմաթիվ ճարտարություններուն, աշխատությունը, կեղծ ու շինծու կըլլա, կարը և խծիպը կերևա, երկը կը դադրի գրականություն ըլլալե: Եվ ան կը ըլլա Շանթի թատերգություն, Ահարոնյանի պատմվածք մը կամ Րաֆֆիի «Սամվել»[2]:

Նկատենք, որ Շ. Շահնուրն անունների թվարկումը տանում էր հեգնական վերաբերմունքի ուղիով, չէր ընդունում գրական նման երկերի գերիշխանությունը:

Վ. Շուշանյանը ևս «անհանգիստ» էր հայ գրականության երեկով և այսօրով: Նրան էլ չէր բավարարում անցյալի ամբարված հունձքը: Իսկ ներկայում գտնում էր, որ ասպարեզը աղմկարարներինն է, ու դժգոհ էր, քանի որ արվեստի լուրջ գործերը պիտի որ լռության մեջ հյուսվեն: Շուշանյանն այն տեսակետն ուներ, թե լավագույն երգերը նրանք են, որ դեռ չեն գրվել[3]:

[1] Շահնուր Շ., Երկեր երկու գրքով, գիրք II, Երևան, 1982, էջ 76-77:
[2] Նույն տեղում, էջ 77:
[3] Շուշանեան Վ., Մահուան առագաստը: Առաջին սէրը, Պէյրութ, «Էտվան» տպ., 1959, էջ 19:

Արվեստագետը փաստում էր, որ ճշմարիտ գրողներն իրենց աշխատանքները փողհարելու անհրաժեշտությունը չունեն, և որ նրանց պետք է փնտրել աշխարհի աղմուկներից հեռու. «Ու մարդիկ կան, որ բանաստեղծները կ'որոնեն մեծ քաղաքներու կաճառներուն մէջ, ուր բառը ոջլոտ իշխանի մը պէս՝ իր կռնակը կը քերէ, ուր բառը զազրելի քրքիջով մը կը խնդայ՝ արարչութեան վրայ: Չեն գի՞տեր միթէ, որ հոտաւէտ մանիշակները հարուստ ածուներու մէջ չեն բուսնիր»[1]:

Նմանատիպ հայացք ունի նաև Շ. Շահնուրը: Նա, սակայն, իր դժգոհության ալիքն ուղղում է Ատոմ Յարճանյան «կորուսեալ երախայի» «հօնքուր-հօնքուր լացին»[2] դեմ: Գտնում է, թե որքան բարձր ինչի գրողի խոսքը, այնքան ասելիքը երկրորդական կդառնա. «Բանաստեղծը քանի բարձրացնէ իր ձայնը, մենք այնքան գէշ կը լսենք զինքը, բանաստեղծը՝ որ ամէն ինչ է, բայց ոչ՝ երախայ»[3]: Շահնուրը Սիամանթոյի հետ «չի հաշտվում», իր տպավորությամբ, եղեռնի նյութից վեր ելնել չկարողանալու համար: Ինչ խոսք, արևմտահայ գրողի բանաստեղծական ժառանգությունը բացառապես կապվում է դարասկզբի արյունալի դեպքերին, սակայն չպիտի անտեսել նրա՝ կատարելության հասնող արվեստի ոճն ու լեզուն:

«Ո՞վ է մտաւորականը» գրությունը, որ Վ. Շուշանյանի վերջին գործն էր, մահվանից երկու ամիս առաջ էր հանձնել տպագրության: Սակայն ինչ-ինչ պատճառներով չի տպվում. այն լույս է տեսնում միայն 1942-ին՝ մահվան Ա. տարելիցի առթիվ, ընկերների ջանքերով: Այստեղ գրողը խոսում է իր անհանգստությունների մասին՝ կապված արվեստագետի, մտավորականի իրական պատկերացումների հետ: Նա գրում է. «Իրական պատմաբան՝ հայ ազգը չէ ունեցած ցարդ: Այսինքն՝ հայ պատմաբաններուն մէջ շատ քիչերը ու շատ աղօտօրէն ցոյց տուած են բարձր յատկանիշներ: …Նոյն դիտողութիւնները կարելի է կրկնել նաեւ

[1] Շուշանեան Վ., Խառնիխուռն, Երևան, 2001, էջ 158:
[2] Շահնուր Շ., Կրակը կողքիս, Փարիզ, 1973, էջ 88:
[3] Նույն տեղում:

բանասիրութեան, գրականութեան մասին,- այլեւ աշխարհագրութեան, լրագրութեան, բժշկութեան»[1]:

Խոսելով հայության երկու բևեռների «անհաշտ» բարեկամության մասին՝ Շահան Շահնուրը վրդովմունք է արտահայտում խորհրդային հասարակարգի՝ արևմտահայ զանգվածի հանդեպ ունեցած գրեթե ժխտողական քաղաքականության առիթով: Նրա համոզմամբ՝ արևմտահայ մշակույթը, արհավիրքից հետո պահպանելով բավարար ներուժ ու կամք, հետևեց գրական նոր զարգացումներին: Գրական տեսաբանական հարցերում Շ. Շահնուրն այս առիթով ցուցաբերում է քաղաքական պատմության ընկալման խոր հասողություն. «Մեր ժրաջան մշակները լաւ կը ճանչնային վար ու ցանը, բայց ըլլալով հայ գրականութեան մշակներ, անոնք կը մնային անգործ մեր փոքր աճուին դիմաց: Անոնք կը մնային իրենք իրենց մէջ կծկուած եւ գլխիկոր, վասնզի ձիւն (ասել է թե՝ խորհրդային քաղաքական – Լ. Տ.) կը տեղար իրենց գլխուն: Պէտք եղաւ սպասել երկար ժամանակ, մինչեւ պատմական ձիւնհալը, երբ մեր գրականութեան արեւելահայ թեւը դէպի մեզ երկարեցաւ անհամբեր աշխուժութեամբ, եւ մենք՝ արեւմտահայերս, իրենց փոխանցեցինք օրհնեալ հացահատիկը»[2]: Եվ սա ասում է մեր ամենից «անհամբեր», ազգային-քաղաքական նշանակության տեսակետից՝ անգամ «անհանդուրժող» Շահնուրը: Այստե՛ղ է նրա ուժը:

Վազգեն Շուշանյանը, անդրադարձ կատարելով արևմտահայ և արևելահայ գրականությունների՝ ընթերցողների կողմից ճանաչվածությանը և ընդունվածությանը, եզրակացնում է, որ այսօր արևելահայ մտավորական զանգվածը չի ճանաչում արևմտահայ գրականությունը, քանի որ միևնույն ժողովրդի տարբեր թևերն այլևս կորցրել են հոգեկան աննյութեղեն կապը, նրանք զգացական և իմացական տարբեր աստիճանի վրա են: Շուշանյանը պակաս կարևոր չի դիտում նաև լեզվի երկատվածության հարցը. չեն սիրում, որովհետև չեն հասկանում[3]:

---

[1] Շուշանեան Վ. (Ձոն տարաբախտ Վազգէնի յիշատակին, Մահուան Ա. տարելիցին առթիւ, իր բարեկամերուն կողմէ), էջ 29:
[2] Շահնուր Շ., Կրակը կողքիս, էջ 71:
[3] ՀՀ ԳԱԹ, Վազգեն Շուշանյանի ֆոնդ, գործ 1, Ալեկոծ տարիներ, էջ 465:

Փաստորեն՝ Վ. Շուշանյանը և Շ. Շահնուրն իրենց ապրած ժամանակաշրջանում արդեն ունեին միևնույն մտահոգությունները, տագնապների նորագույն ծիրը, ինչ մենք այսօր: Արևմտահայ զանգվածն ու նրա հզոր մշակույթը կորցնում ենք ամեն օր՝ «առանց երգի», փողի ու թմբուկի, քանի որ առաջին հերթին մեր ձեռքից «փախչում է» ոսկեղենիկ լեզուն: Նահանջի ավերիչ ակոսները տեսանելի են բոլոր ոլորտներում, բայց հատկապես անդառնալի է լեզվի նահանջը:

Շահնուրը նամակներից մեկում այսպես է գրում. «Գալով խնդրին բո՛ւն էութեան, ճիշդ է թէ մեր արեւմտահայերէնը կը նահանջէ տարուէ-տարի, ինչպէս որ կը նահանջեն բոլոր այն արժէքները որ հայը կը պահէր հայ, բայց ճիշդ է նաեւ թէ սփիւռքահայը բնա՛ւ տրամադիր չէ վերջ դնելու իր ստեղծագործական ճիգին: Արդիւնքը համեստ է, բայց այն մե՛րն է, եւ պէտք է որ մենք հպարտ ըլլանք մեր պտղաստանին հունձքով»[1]:

Արևմտահայերենի, գրականության, մշակույթի կորստյան ազնիվ երկյուղն էր, որ միավորում էր արվեստագետներին:

Հատկանշականն այն է, որ Շահան Շահնուրը «քիչիկ մը» հավատ ուներ, որ Սփյուռքի մտավորականը հակված չէ զենքերը վայր դնելու, այլ խնդիր ունի մղվող անտես մարտում հաղթող դուրս գալու: Նույն գաղափարական մոտեցումն ուներ նաև Վ. Շուշանյանը, ով ևս հավատում էր, որ սփյուռքահայի մեջ մայրենիի հանդեպ սերն այնքան զորեղ է, որ կարող է հույս ներշնչել չձուլվելու համար: Իսկ գրականության մեջ շուշանյանական հայտնի գնահատանքը՝ տրված արևմտահայերենին, ինչում է իբրև աղոթք. «Հայո՛ց լեզու, որքա՜ն կը սիրեմ քեզ: Ո՛չ մէկ աղջիկ երկրի վրայ կրնայ պարծենալ թէ այդքան խանդաղատանք, այդքան գորով, այդքան աղապատանք ստացած է ինձմէ: Հաւատարմութիւնը որ կը զգամ քեզի հանդէպ աւելի զօրաւոր է քան մեր այս եղկելի կեանքը»[2]:

[1] Շահնուր Շ., Նամականի, հ. Ա., էջ 122:
[2] Շուշանեան Վ., Օրագիր /1939-1941/, Երևան, 1999, էջ 151-152:

30-ական թվականները սփյուռքահայ նորահաս սերնդի համար լինելության տեսակետից թերևս ամենից բարդ ու ներհակ շրջանն էր: Այս տարիների Սփյուռքի մտավորականի կյանքի խոսուն վկայություններ են Վ. Շուշանյանի ինքնակենսագրական գործերն են: Եվ եթե նրա ստեղծագործությունները բացառապես ինքնակենսագրական են, ուստի գլխավոր կերպարը միշտ հեղինակ է, ում միջոցով էլ մեզ համար տեսանելի է դառնում Շուշանյան մարդու դիմանկար-բնութագիրը:

Քննելով արձակագրի գրական զինանոցը՝ ակնառու են դառնում նրա անձի հոգեբանական խնդիրները: Հաճախ է ընթերցողը ականատես լինում նրա ես-ի երկվությանը: «Դառն հաց» գործում ինքնիրեն խոստովանում է. «Ինչ որ անհրաժեշտ է ինձ հաշտութիւնն է ներքին անձիս ու արտաքին իրականութեան հետ: Ու այս հաշտութիւնն է, որ կարելի չէ»[1]: Հիրավի, ամենից բարդ ու պատասխանատու գործը ինքդ քեզ հետ հաշտ լինելն է, ինչը և պակասում էր Վ. Շուշանյանին:

«Ամրան գիշերներ» ծրագրային վիպակում հանդիպում ենք անհատ-իրականություն, անհատ-անհատ բախումներին: Ե՛վ ես-ի, և՛ շրջապատի հետ ունեցած անհաշտությունները, անշո՛ւշտ, ներքին խռովքով էին պայմանավորված: «Ինչո՞ւ համար ես այդպէս մարդ մը եղայ եւ ո՛չ ուրիշ կերպ: Ինչո՞ւ համար անընդհատ հոգիս նեղութեան մէջ է գեղեցիկ կիներու, քաղքենիներու, մտաւորականներու ու այլ կրթուած մարդոց ներկայութեան ու ընդհակառակն ազատ ու ուրախ չորրորդ դասակարգի, վարի խաւի մարդոց հետ: Ինչո՞ւ համար, այս եօթը տարիներու ընթացքին ո՛չ մէկ մտաւորականի լրիւ վստահութեան ու բարեկամութեան արժանի ըլլալ: Իմ ճանչցած բո՛լոր մտաւորականներս ալ, իրենց հոգւոյն խորը, չեն սիրեր զիս: Հեռաւոր թշնամիներ ունիմ՝ որ զիս չեն ճանչնար, բայց որ կ՛ատեն զիս»,- կսկիծով գրում է Շուշանյանը: Ինչ խոսք, սա խոստովանելն արդեն մեծ մարդու վարքագիծ է:

«Ներքին դաշտանկար»-ում հերոսը պարուրված է հիվանդագին, խիստ զգացական ու հակասական մտքերով: Կարծես տենդի մեջ է, բոլոր գաղափարները հոռետեսական ու անարյուն են: Եվ նրան

[1] Շուշանեան Վ., Ընտրանի, Երևան, 2010, էջ 386:

նորից ապրելու տենչը վերադարձնում է հայոց լեզուն: Սկսում է տենդագին սիրով ուսումնասիրել գրաբարյան գաղտինքները: Բայց Շուշանյանի համար միշտ էլ երազ է մնացել գրաբարին կատարելապես տիրապետելու ցանկությունը. «Կ'ուզէի քեզ սովրիլ, մինչեւ վերջին վայրկեանը, քու յետին շեշտերդ ու քու յետին բառերդ: Քու ներքին երաժշտութիւնդ ու քու գծած ճամբադ՝ պատմութեան մէջ»[1]:

Լեզվին խորապես տիրապետելու ճանապարհով հեգնում է ինքն իրեն Շուշանյանը, բացվում է ուղիղ ճանապարհ դեպի նորոգված գեղարվեստական մտածողություն, դեպի «հոգևոր մշակութային հայրենիք», որով գրողը հայտնաբերում է լինելության՝ իրեն սահմանված առեղծվածը. «Ու հայոց լեզվին շնորհիվ էր, որ ամիսներու ընթացքին, հայրենիքի գաղափարին ու այս անոք և նժդեհ տղուն միջև, որ ես էի,- նետված գաղափարներու տարագնաց քառուղիներուն վրա,- հաստատվեցավ մնայուն ու անքակտելի կապ մը»[2]:

Մահից անմիջապես առաջ գրված «Լեզու սրբազնագույն» փորձագրության մեջ Շ. Շահնուրը հետաքրքիր ու յուրօրինակ կերպով ներկայացնում է իր անհանգստությունը «աշխարհի գեղեցկագույն, աշխարհի սրբազնագույն» լեզվի կորստյան համար: Հեղինակը Անդրանիկ Ծառուկյանին, ասել է թե արևմտահայ նորահաս սերնդին փորձում է զգուշացնել արևմտահայերենի՝ արևելահայերենի «զիջողական», թույլ քայլերի համար, ով հանդիպում է փողոցում, ով, անհանգստությամբ բաց անելով տաքսու դուռը, ինչ-որ ծրար է փնտրում, որտեղ պահել էր անցյալ կատարյալները և մի քանի անկանոն բայեր: Հետո պարզում են, որ կորցրել են մակբայները, վերադիրները, և այսպես հայոց լեզվի ամբողջ «գանձարանը»:

Իսկապես, Շ. Շահնուրը գրողական հնարանքով ընթերցողին մատնանշում է, որ ահա այս կերպ ենք կորցնում մեր լեզուն. գուցե անփույթ ենք, գուցե անտարբեր, իսկ միգուցե այլ ճանապարհ չունե՞նք. շա՛տ է «անկախացել» արևելահայերենը: Անդրանիկն ընկերոջ

[1] Նույն տեղում, էջ 152:
[2] Շուշանյան Վ., Ներքին դաշտանկար, Երևան, 1995, էջ 20:

«ականջն ի վար» արդեն գոռում է. «Մեր լեզուն դատապարտված է կորստյան»[1]:

Ֆրանսահայ երկու արձակագիրները սկզբունքորեն դեմ էին գրականության քաղաքական ընկալման գերակայության հայտնի փորձերին: Այս պարագայում Շահնուրը գործում էր առավել հավասարակշռված, թեև ընդգծված ենթախորքով, սուր սլաքներով: Շուշանյանի դիրքորոշումները մի փոքր ենթակայական էին, քանի որ իր կարճ կյանքի ընթացքում ունեցել էր «ձախ որոնումների» երկարատև շրջան: Նա իր 1941 թվականի գրառումներից մեկում ներկայացնում է մի միջադեպ՝ կապված Շ. Շահնուրի հետ, որտեղ խոր ափսոսանքով, որ ինքը երբևէ եղել է կուսակցական շահի «գերին», խոստովանում է. «Երբեք կուսակցական չես եղած, հետևաբար «խոտելի անցեալ» չունիս»[2] (խոսքը Շ. Շահնուրի մասին է - Լ. Տ.):

Հայտնի է, որ Վազգեն Շուշանյանն իր քաղաքական համոզումներով արտահայտում էր ՀՅԴ կուսակցության հայացքները և կյանքի բոլոր հատվածներում եղել է հեղափոխական դիրքերում՝ թե՛ քաղաքական, թե՛ գրական առումներով:

Կարո Փոլատյանը վկայում է, որ առաջին անգամ գրողին հանդիպել է 1932-ի աշնանը, Մարսելում՝ մարտկոցական հարափոփոխ շարժման փոթորկահույզ օրերին: Գրադատը բախտ է ունեցել մտերմիկ զրույց ծավալելու Շուշանյանի հետ և բարձրաձայնել է նրա ծայրահեղ քաղաքական դիրքորոշումների մասին. «Սիրելի Շուշանեան, վայրկեան մ'իսկ չեմ կասկածիր «Մարտկոցական շարժման» կարեւորութեան եւ անհրաժեշտութեան, բայց դո՛ւն, նախ եւ առաջ գրագէտ ես, չե՞ս կարծեր, որ երիտասարդ տաղանդ կը մսխես, ոտքով գլխով նետուած այդ սպառիչ պայքարին մէջ»[3]: Հարցադրմանը հաջորդում է «տաքգլուխ» գրողի հատու պատասխանը. «Չէ՞ք հասկնար, չէ՞ք անդրադառնար, թէ Սփիւռքի մեր հայութիւնը իր մահու եւ կենաց պայքարն է, որ կը մղէ այս

[1] Շահնուր Շ., Երկեր երկու գրքով, գիրք II, էջ 93:
[2] Շուշանեան Վ., Օրագիր /1939-1941/, էջ 134:
[3] «Բագին», Պէյրութ, ԻԲ. տարի, թիւ 1, Յունուար, 1983, էջ 20 (Տե՛ս՝ Կ. Փոլատեանի նշված հոդվածը):

օրերուն, եւ դո՛ւք ելեր էք ինծի գրականութեան մասի՞ն կը խօսիք»[1]: Նրա համար գրականությունը և զուտ ազգային-քաղաքական շահը անջրպետված չեն, փոխներթափանցված են :

Իսկ ավելի ուշ, երբ Վ. Շուշանյանն արդեն հեռացել էր կուսակցությունից և ապրում էր բացարձակ միայնության մեջ, օրագրային նոթերից մեկում անսահման թախիծով, ափսոսանքով ու ընդգծված վիրավորվածությամբ նշում է. «Կը յիշեմ «Մարտկոց»-ի օրերը: Մեզմէ ո՛չ ոք աւելի վիրաւոր դուրս եկաւ այդ պայքարէն: Ու վճռական ժամուն, երբ անհրաժեշտ էր ամէ՛ն ինչէ հրաժարիլ պարկեշտ մնալու համար,- ապահովութենէ, ապրուստէ, բոլոր բարեկամութիւններէն, հրաժարիլ նոյնիսկ գրականութենէն՝ որ կեանքիս էութիւնն իսկ էր, վայրկեան մը վարանեցա՞յ միթէ: Վայրկեան մը չմտածեցի անգամ թէ կրնայի այլապէս վարուիլ»[2]:

Հետաքրքրական է մի հանգամանք ևս, որ դեռ 1930-ականներին ինքը՝ Շուշանյանը, այս անգամ գեղարվեստական բնագրում հասցրել էր բանաձևել. «Կուսակից չըլլալ եւ ոչ մէ՛կ մարդու: Բարձրանա՜լ առանց յենարանի: Մէկ գերութիւն եւ մէկ հպատակութիւն կարելի է ընդունիլ - գաղափարի գերութիւնը: …Տապալե՜լ կուռքերը, ընկե՛ր, ազատ ու երիտասարդ մարդու վայել՝ անգթութեամբ մը, կուռքեր չունենա՜լ»[3]: Արվեստագետի բացարձակ ազատության պահանջն էր սա, իր դեպքում՝ թերևս ուշացած :

Թերևս առաջին անգամ հայ քաղաքական-գրական կյանքում մենք տեսնում ենք մի ուշագրավ մոտեցում. բոլոր կուսակցությունների գլխավոր և, ինչու չէ, միակ նպատակը պիտի լինի հայ ժողովրդի, հայ տեսակի պաշտպանության խնդիրը:

[1] Նույն տեղում:
[2] Շուշանեան Վ., Օրագիր /1939-1941/, էջ 22:
[3] Շուշանեան Վ., Ամրան գիշերներ (երիտասարդ, անոք մարդու մը թղթերէն), Գահիրէ, 1930, էջ 43:

Ամենախիստ քննադատությունն այս պարագայում իր կուսակցությանն է վերաբերում. «Ո՛չ. հապա ուրեմն ինչո՞ւ լուռ, գրեթէ մեղսակից հանդիսատես կ՚ըլլաս այս դանդաղ, յուզիչ մահուան: Տե՛ս, ինչպէս աստիճանաբար կը մահանայ այս վաղեմի ժողովուրդը»[1]:

Այս հարցադրումն իր մեջ ուներ բավական առողջ ելակետեր: Այսօր էլ, երբ Շուշանյանի մտորումներից անցել է գրեթե 90 տարի, հարցադրումը չի կորցրել իր արդիականությունն ու սրությունը: Սփյուռքում հայ մնալու, հայորեն ապրելու օրհասական խնդիրը մնում է օրակարգում:

Դառնալով Շահան Շահնուրի հայացքի «ապաքաղաքական» շարժառիթներին՝ նկատենք, որ նա ևս անտարբեր չէ ազգային մեկնական ընկալումներին, բայց աշխատում է զուսպ լինել: Այն կարծիքին էր, որ լավ է, երբ գրողը զբաղվում է իր բուն գործով, ինչն այս պարագայում կարելի է համարել առաքելություն՝ փոխանակ «…երթալ փնտռելու աժան ժողովրդավարութիւնը մը»[2], ինչը ավելի շատ է պատահում մեզ մոտ: Նա ընդդիմանում էր գրողների ներգրավվածությանը ընկերային, մանավանդ քաղաքական հարաբերություններում: Սփյուռքահայ գրողն այստեղ հեգնանքով ավելացնում է. «Եւ կամ թէ՝ պէ՞տք է խորհիլ որ իրենց մէջ ազգային գործունէութեան փափաքը աւելի զօրաւոր է, քան թէ սէրը արուեստին»[3]:

Շահնուրի գեղարվեստական բնագրում տեսանելի է նրա անհանդուրժող վերաբերմունքը հատկապես ազգային ավանդական կուսակցության՝ ՀՅԴ-ի հանդեպ:

«Զաթոսթե» խորհրդապաշտական պատմվածքում հեղինակը ուղղակի աղաղակում է. «Եթե առողջ ըլլայիր, դո՛ւն, գաղթահայություն, մենք քեզ տուն կկանչեինք, Հայաստանի դռները կբանայինք քու առջև: Բայց դուն հիվանդ ես: Դաշնակցության թույնով վարակված ես, դո՛ւն, գաղթահայություն»[4]: Այստեղ, ինչ խոսք, քննադատության սլաքի մեկ

[1] Նույն տեղում:
[2] Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, Պէյրութ, 1958, էջ 14:
[3] Նույն տեղում:
[4] Շահնուր Շ., Երկեր երկու գրքով, գիրք I, էջ 273:

այլ կողմն ուղղված է նաև համայնավարներին, ովքեր կանգնած էին մյուս ծայրահեղ գծին:

Շ. Շահնուրը սրությամբ քննադատում էր այն գրողներին, որոնք կուսակցական այսրոպեական շահը վեր են դասում մշակութային առաքելությունից: Ֆրանսահայ արձակագրի համոզմամբ՝ գրողը, քննադատը չպիտի հարեն որևէ կուսակցության, որովհետև այդ հանգամանքը հաճախ խանգարում է անկողմնակալ գնահատություններին. «Երբ դաշնակցական գրիչ մը բերուի թուել մեր գրական տաղանդները, լեզուն առաջ չ'երթար յիշելու համար Վահան Թէքէեանը: Իսկ համայնավարին համար գոյութիւն չունի Համաստեղ անուն մէկը: Եւ ըսել թէ՝ այս երկուքին գրականութեան մէջ քաղաքական շեշտուած դիրք գտնելու համար, մարդ պէտք է իսկապէս կողմնակալ ըլլայ»[1]: Հեղինակը հավաստիացնում է, որ այս խնդիրը պարզ ուշադրության արժանի չէր լինի, եթե հայ մամուլը և հայ գրականությունը գործեին տարանջատ: Նրանք սնվում են միևնույն ակունքից[2]:

Այստեղ Շահնուրը բարձր է գնահատում Դ. Վարուժանի և Մ. Մեծարենցի արվեստը, նշելով, որ նրանց գրականությունը խորքում համամարդկային է, քաղաքական առումով որևէ մեկի սեփականությունը չէ, և նրանք պարտական են բացառապես իրենց տաղանդին[3]:

Վ. Շուշանյանը խիստ քննադատում է խորհրդային շրջանի հայ գրական ձեռքբերումները՝ հենց քաղաքական ենթիմաստների պատճառով: Նրա համոզմամբ գրականությունը տուժում է, կորցնում գեղարվեստական արժեքը, երբ որևէ քաղաքական ուժի է ծառայում: Արձակագրի կարծիքով համայնավարական գաղափարախոսությունը կապում-շաղկապում է գրողի միտքը, նրան դնում կաղապարների մեջ: «Ներկայի կարճամիտ բանտարկեալներ» է անվանում այն գրողներին, ովքեր կարծում էին, որ գեղարվեստական գրականության նյութը սահմանափակվում է այսօրվա իրենց կուսակցական այս կամ այն դիրքորոշմամբ: Վ. Շուշանյանը տագնապում է, որ նոր գրականության մեջ

[1] Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, էջ 109:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 108:

կորցնում ենք ամենից կարևորը՝ «խորապէս մարդկային յատկանիշները»[1]: «Մարդ երբ կը կարդայ զիրենք,- գրում է արձակագիրը,- այն տպաւորութիւնը կը կրէ, թէ քաղաքակրթութիւնը կը սկսի Հոկտեմբերեան կամ Նոյեմբերեան յեղափոխութենէն: Պատմական հսկայ վայրիվերումներու, կեանքի տարերային ալեկոծութեանց անմիջաբար մասնակցող սերունդները միշտ ցոյց տուած են անցեալը ուրանալու եւ ապագան վերացականօրէն ըմբռնե–լու այս հակամիտութիւնը»[2]:

Գալով առավել խորքային համեմատությունների՝ Շուշանյանը եզրակացնում է, որ այդ շրջանի արևելահայ բանաստեղծությունը գնում էր արտաքին փայլի ու գույնի ետևից, մինչդեռ արևմտահայ գրականության համար դա վաղուց ապրված, անցած իրողություն էր, այն «արդէն երանգներու գիտութիւնը ունի»[3]: Այս դիրքորոշումներից բխեցնելով՝ արձակագիրը գտնում է, որ արևմտահայ բանաստեղծության ներկայացուցիչ Մ. Մեծարենցն ավելի գեղագետ է, քան «արևելահայ մեծագույն բանաստեղծ» Թումանյանը:

Այնուհետև, համարելով, որ Ալ. Շիրվանզադեինն է թերևս արևելահայ վիպասանության դափնեպսակը, համեմատական է անցկացնում նրա և Գր. Զոհրապի միջև: Վ. Շուշանյանն այսպես է դատում. «Շիրվանզադէին մօտ միշտ նո՛յն արտաքին դէպքերն են, խոշոր դիպախաղերը, միշտ նոյն քիչ մը կոպիտ ու փաթեթիք ողբերգութիւնները, կրկնուած գրեթէ իր բոլո՛ր երկերուն մէջ, տեղի ու ժամանակի տարբերակներով: Մինչդեռ Զօհրապի արուեստը, նոյնպէս իրապաշտ, աւելի՛ ներքին է, աւելի՛ սուր, աւելի՛ կիրթ»[4]:

Մեր կարծիքով բանաստեղծության տիրույթում և արձակի մեջ ներկայացող այս հեղինակները բացահայտվում են տարբեր գրառճային մտածողության շաղախում, էպիկական և քնարական բևեռային կենսադաշտերում: Այստեղ Վ. Շուշանյանը երևան է հանում գրական ուղղությունների մեջ իր նախասիրությունը, որն էլ ինքնատիպ հայացքի

[1] ՀՀ ԳԱԹ, Վազգեն Շուշանյանի ֆոնդ, գործ 1, Ալեկոծ տարիներ, էջ 454:
[2] Նույն տեղում, էջ 456:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 476:

ուղիղ արտահայտություն է. Մեծարենցն ավելի բանաստեղծ է, այսինքն՝ գեղագետ, քան էպիկական աշխարհի մեկնիչ, ամենատես Թումանյանը:

Սակայն մի այլ հոդվածում Վ. Շուշանյանը փոփոխության է ենթարկում գեղագիտական տրամադրությունների ծնունդ իր տեսակետը. նա արևմտահայ ու արևելահայ հեղինակներին այլևս չի զատում միմյանցից ու փորձում է ավելի սթափ նայել գրական համադրություններին. «Հայ գրականութեան մէջ եղած են անոնք, որ երակի մը բարութիւնը բերած են մեր շնչերակին: Այսպէս, Պ. Դուրեան մեզի բերած է ցաւը, Վարուժան՝ գեղեցիկը (պաղ), Մեծարենց՝ մելամաղձոտն ու մտերիմը, Վ. Տէրեան՝ ջերմը, Սիամանթօ՝ շարժումը, Յ. Թումանեան՝ երգը (գիւղական), Ա. Ահարոնեան՝ ցեղին վիշտը, Լեւոն Շանթ՝ ազնիւն ու բարձրը, Համաստեղ ու Թլկատինցին՝ գեղջուկը, Ռուբէն Զարդարեան՝ վայրենին (լաւագոյն առումով), իսկ Օշական՝ կիրքը»[1]:

Եվ մենք այստեղ որսում ենք Շուշանյանի բանաստեղծական ճկուն տեսողական ընկալումը, ինչով նա մոտենում է Հ. Օշականի քննական համակարգին:

Միջնադարյան հայ գրականությանն անդրադառնալիս Վ. Շուշանյանը Շնորհալուն համարում է հեշտահոս, քաղցրաբարբառ, Թլկուրանցուն՝ մի քիչ դառնացած ու տրտում[2]: Գտնում է, որ Սայաթ-Նովայի արվեստը խոր լինելով՝ երբեմն ողբերգական է, սակայն, ուրիշ է, իր սրտին ամենից մոտը, դուրեկանը. «Իր երգը քաղցր մագիլներ կը խրէ մսերուդ մէջ ու կարծես ընդերքներէդ, մեծ ու ճակատագրական ձայն մը կ'աղաղակէ: Իր նուագը կը խռովէ ամբողջ անձդ, անկարելի երազի մը կամ դաժան սիրոյ մը ցանցերուն մէջ»[3]:

Այս համատեքստում նա զարգացնում է Սիամանթոյի ազգային-մշակութային աշխարհի պատկերման յուրահատկությունը, ով

[1] «Բագին», Պէյրութ, 1983, Յունուար, ԻԲ. տարի, թիւ 1, էջ 53 (Տե՛ս՝ Շուշանեան Վ., «Գետին ինկած հասկեր»):
[2] Շուշանեան Վ., Խառնիխուռն, էջ 123:
[3] Նույն տեղում, էջ 125:

անակնկալ «քերթողահայր» է անվանում Նահապետ Քուչակին՝ «ճանապարհ բացելով» Ե. Չարենցի պոեզիայում սայաթնովյան երակին:

Իր հերթին Վ. Շուշանյանը, արժանին մատուցելով միջնադարյան խոշորագույն ներկայացուցչին՝ Սայաթ-Նովային, անվանել է նրան Մեծ Նարեկացի[1] հենց Սիամանթոյի քննական ոճով:

Մեր գիտական սևեռուն նպատակներից մեկն էլ Նարեկացու հանդեպ երկու գրողների վերաբերմունքի յուրահատկությունների մեկնությունն է:

Վ. Շուշանյանի «Առաջին սէրը» վիպակում հերոսուհին օտար, տխուր ու ցուրտ միջավայրում իրեն սրտակից, հուսադրող միակ մխիթարությունը համարում է «Մատյան ողբերգությանը»: Նա լիանում, լցվում է «Նարեկ»-ով. «Դարերու մէջէն ան կը հասնի ու կը մրմնջէ մեր ականջներուն իր խռովիչ նուագը: Եւ ես հիմա՝ այս հսկայ քաղաքին մէջ՝ պանդուխտ աղջիկ՝ կրնամ բանալ Նարեկը…»[2]:

Իսկ Շ. Շահնուրը հաճախ ամենադաժան քննադատանքների է արժանացել Գրիգոր Նարեկացուն տրված գնահատությունների համար: Ինչ խոսք, ֆրանսահայ գրողը հաճախ է հայտնվել ծայրահեղ վիճակներում՝ բխեցնելով ենթակայական տեսակետներ, որոնք գրականագիտության մեջ ստանում են բացառապես շահնուրյան հայացքի մեկուսի արժեք և ոչ ավելին:

Բայցևայնպես, անդրադառնալով Շահնուրի այսօրինակ վերլուծություններին, հարկ է ընդգծել, որ, նրա համոզմամբ, Նարեկացու պոեմում չկա մարդկայինը, «միսին չքացումն է» գերիշխող, և որ ոճի ու բառապաշարի հարստության շնորհիվ է գայթակղում ու հետաքրքրում ընթերցողին. «Մարդկայինը չկա իր գործին մէջ, այլ կան անթիւ չնչնազարդեր: Եւ մենք կուրացած ենք, եւ մենք շլացած ենք ոճի ու լեզուի այդ չնչնազարդերէն»[3]:

[1] Նույն տեղում, էջ 123:
[2] Շուշանեան Վ., Մահուան առագաստը: Առաջին սէրը, էջ 53:
[3] Շահնուր Շ., Սիրտ սրտի, Փարիզ, 1995, էջ 9:

Փաստորեն՝ անգամ Նարեկացու պարագային՝ միմյանց հանդեպ Շահնուրն ու Շուշանյանը ժխտողական, անհադուրժող կեցվածք են որդեգրում:

Շ. Շահնուրը միշտ պայքարել է հայ ժողովրդի կրավորական վարքագծի դեմ: Նրա համոզմամբ՝ մեր գրականության մեջ շատ են զգուշավորության կոչ անողները: Իսկ ահա Գր. Նարեկացուն համարում է հայ ժողովրդի խեղճության, համակերպվածության համար «ծանր» պատասխանատվություն կրողը: Սփյուռքահայ գրողի կարծիքով, բարձյալի կատարելությունը շեփորելով, մարդու մեջ անձնականը փոքրանում ու մարմրում է: Նա համբերությունն ու հանդուրժողականությունը համարում է աղքատների սրտաճմլիկ տաղանդը[1]:

Խոսելով Շ. Շահնուրի՝ Նարեկացուն տրված գնահատանքի մասին՝ Ա. Ավագյանը նկատել է. «Գրողը ոչ մի կերպ չի ընդունում մարդու բացարձակ նվիրվածությունը Աստծուն՝ տիեզերքի ու մարդկային ցեղի միակ տնօրինողին»[2]: Շահնուրը կարևորում է անհատի գիտակցական ու տրամաբանական մոտեցումը ազգի ինքնաճանաչման ու ինքնադրսևորման մեջ:

Շ. Շահնուրն իր «Գրական էջ մը» հոդվածում խոր վերլուծության է ենթարկում Ռուբեն Զարդարյանի «Գամփռը» գործը: Նա հենց այս մեկ գործով ընթերցողին հանձնում է իր պատկերացումը գրականության նշանակության մասին: Հարկ է ընդգծել, որ այստեղ ֆրանսահայ գրողը մեր առջև հառնում է որպես մոտեցումներում կտրուկ, անհանդուրժող քննադատ:

Շահնուր քննադատին «Գամփռ»-ի մեջ առաջինը «զայրացնում է» այն, որ հեղինակը ընտրել է խորհրդապաշտության ուղին: Արձակագիրը հարցին մոտենում է «գերիրապաշտ» դիրքերից՝ այս հարցում հետևելով Դ. Վարուժանի սկզբունքին, ով ճանաչողական մյուս ակունքների կողքին արժանի տեղ էր հատկացնում իրապաշտական հայացքին: Շահնուրի համոզմամբ՝ Ռ. Զարդարյանն ընտրել է թերևս ամենից

[1] Շահնուր Շ.,, Թերթիս կիրակնօրեայ թիւը, էջ, 143:
[2] Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, 2007, էջ 113:

դժվարին ուղին, քանի որ «խորհրդանշանը» ամենանուրբն է, դյուրաբեկը, բավական է փոքրիկ վրեպ, և ամբողջ ստեղծագործությունը, որ կառուցված էր այդ կիզակետում, կարող է փլուզվել: «Գամփռ»-ի առիթով Ռ. Զարդարյանի պաշտպանությամբ Վ. Շուշանյանը հանդես է գալիս իր օրագրային գրառումներում: Նա ընդգծում է, որ բազմիցս Շահնուրին ասել է, թե իր «պզտիկ տաղանդը կրնար գործածել աւելի օգտակար ձեւով մը»[1]: Վ. Շուշանյանը մտածում է, որ Շահնուրի գնահատանքը «Գամփռ»-ի վերաբերյալ խիստ ենթակայական է, և որ նա ուղղակի չի հասկացել նյութի իմաստը: «Զգուշացի՛ր, ե՛ս է որ պիտի պայթեցնեմ պարապ օդապարիկդ,- զայրալից հայտարարում էր Վազգեն Շուշանյանը:- Ու ցոյց տամ, թէ լոկ հիւանդ ատելութիւն մըն է, որ կ՛առաջնորդէ քեզ»[2]:

Կարծում ենք, թե Վ. Շուշանյանը շահարկում է իր գրական գերադասության իրավունքը մեծանուն գրողի հանդեպ: Լավ չէ նաև այն լպրծուն քամահրական ոճը, որ որդեգրել է «քնարաշունչ» քննադատը:

Հաջորդ կարևորագույն հարցադրումը, որ առանձնացրել ենք երկու արձակագիրների որոնումներում, վերաբերում է նրանց բերած զգացմունքի ազատագրությանը, բարոյականի ու գեղեցիկի ըմբռնումներին, վերջապես՝ արվեստի սահմանների իրենց ընկալումներին:

Հետաքրքրականն այն է, որ և՛ Շահնուրը, և՛ Շուշանյանը մարդու ազատության սահմանափակման մեջ մատնանշում են քրիստոնեական սրացված ըմբռնումը: Իսկ ահա հայ ժողովրդի «գլխահակ», հաճախ կրավորական կեցվածքը բացատրում են քրիստոնեության կաղապարված, շղթայական աշխարհընկալումով:

Շ. Շահնուրը, չդավաճանելով «գիտակցական ներհոսի» իր միջնորդավորված սկզբունքներին, այնուհանդերձ հանդես էր գալիս ազգային գրական բարձրերից՝ գտնելով, որ ճշմարիտ գրականության մեջ կարևորը բոլորովին էլ ազգանպաստ տարրը չէ, և այն չպիտի ընկալել

[1] Շուշանեան Վ., Օրագիր /1939-1941/, էջ 155:
[2] Նույն տեղում:

իբրև չափանիշ: Արվեստագետը գրականության մեջ գաղափարականից առավել կարևորում էր գեղարվեստական արժեքների առկայությունը: Եվ իբրև Նահանջի շարժման առաջնորդ՝ նրա համար գրական ծառայությունը մեզ անծանոթ արևմտյան որակների պաշտպանությունն էր: Հայապահպան դեր տալ գրականությանը, նույնն է, թե նրա ուսերին դնել մի բեռ, որն ի զորու չէ հաղթահարելու. «Գրականութիւնը անհրաժեշտ նկատել՝ որպէսզի Հայուն մէջ վառ մնայ ազգասիրութիւնը կը նշանակէ գրականութեան վերագրել զօրութիւն մը՝ որ ան չունի: …Մեծամիտ գրագէտներն են միայն որ կը յաւակնին Հայուն մէջ վառ պահել ազգասիրութիւնը, շնորհիւ իրենց գիրքերու»[1]: Մեզ մնում է ավելացնել՝ «ավանդական» գրքերի շնորհիվ, որոնցից ինքը «գերհոգնած էր»:

Իսկ «Գրականութենէն անդին եւ այլուր» հոդվածում Շահնուր քննադատը, խորհրդածելով հայ գրականության մեջ այդքան կարևորվող ազգային, բայց ոչ համամարդկային նյութի շուրջ, եզրակացնում է, որ հայը՝ իբրև տեսակ, անհատականություն, երկտակվում է, երբ առաջնայնությունը տրվում է հայկականությանը, հայի հավաքական խորհրդին. «Գրագէտը կը շարժի տրամաբանականօրէն, երբ իր նախապատուութիւնը կու տայ Սուրբին եւ ո՛չ թէ Սրբութեան: Բայց տրամաբանական է նաեւ ազգայնականը, որ գրականութիւնը կը մեծարէ այն չափով՝ ինչ չափով որ գրականութիւնը նպաստաւորած է հիմնական արժէքը, Հայը, ինքն իսկ մնալով երկրորդական պլանի վրայ, այսինքն մնալով՝ իբրեւ ստորադաս արժէք (աւելորդ է ըսել, թէ գրականութիւնը ո՛չ գերադաս, եւ ո՛չ ալ ստորադաս արժէք է: Այլ՝ տարբեր)»[2]:

Մեր գրականության մեջ, պետք է նկատել, սեռի ու սիրո, հեթանոսության ու քրիստոնեության հարատև ձգվող հարաբերություններն առավել սուր կերպով է քննել Վազգեն Շուշանյանը:

[1] Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, էջ 112£
[2] Շահնուր Շ., Զոյգ մը կարմիր տետրակներ,Պէյրութ, 1967, էջ 90:

Ճշմարիտ արվեստագետը, ըստ նրա, պետք է ազատագրված լինի բոլոր տեսակի կապանքներից, հրաժարված՝ բոլոր կաղապարներից: Նա ի վիճակի պիտի լինի խոսելու այն ամենից, ինչ հուզում է իրեն ու մարդկանց: Ինչպես ընդունված է նաև հոգեբանության մեջ (իսկ գրականությունը սերտորեն առնչակից է հոգեբանությանն ու փիլիսոփայությանը), մարդուն ներսից կեղեքող խնդիրները պահանջում են դուրսբերում, որպեսզի դրանք ապրվեն, հաղթահարվեն, ամբողջանան: Վ. Շուշանյանը պատկերավորություն է հաղորդում իր մտքին. «Ինչպէս մէզն ու քրտինքը, որ մեր մարմինը կ'ազատեն աւելորդ ու վնասակար տարրերէ, այդպէս ալ բառը խողովակ կը ծառայէ հոս մաքրելու համար կեանքը իր աղտեղութենէն ու թոյներէն: Վէրքը կարելի է բուժել՝ դուրս ցայտեցնելով թարախը, ազատելով արիւնը վարակումէ ու նեխումէ, զտելով զայն»[1]: Ներսում հավաքված թույնն է, որ մեզ այդքան հեռացնում է իրական արժեքներից, գեղեցիկից ու մարդկայինից: Այդ «նեխումէն» վայրկյան առաջ պիտի ազատվել:

Հետաքրքրական մի հանգամանք, որ գրավել է մեր ուշադրությունը, կապվում է Թ. Թորանյանի շահնուրյան գրականության գնահատության հետ: Նրա համոզմամբ Շ. Շահնուրի գործերն ունեն բժշկող ազդեցություն այն առումով, որ մաքրում են հոգու մաղձը, թոթափում ներսում կուտակված ասելիքը: Գրադատի խոսքը ճիշտ և ճիշտ այն է, ինչ Վ. Շուշանյանի մտքինը. «Ու վա՛յ վէրքը փակ պահողին: Բժիշկ ըլլալու պէտք չկայ, պարզ խոհեմութիւն մը կը բաւէ գիտնալու համար, որ երբ կայ թարախակալած վէրք մը, անհրաժեշտ է ճանապարհ տալ թարախին, որ դուրս գայ»[2]: Մեր տպավորությամբ այստեղ համընկնում են Շ. Շահնուրի ու Վ. Շուշանյանի խոսքի սլացքների ուղղությունը:

«Գարնանային…»-ում Վ. Շուշանյանը շեշտադրում է տասական թվականներին ծավալված «հեթանոսական» գրական շարժման հատկանիշները՝ այդտեղ հաստատելով ազգայինը պաշտպանելու եղա-

[1] Շուշանեան Վ. Բանաստեղծն ու կինը, Երևան, 2005, էջ 8:
[2] Թորանեան Թ., Վերստին կարդալով Շահան Շահնուրը, Հալէպ, 1971, էջ 13:

նակը: Գրողի խորին համոզմամբ՝ սերը պիտի մնա ձերբազատ՝ բնական զգացումի խորությամբ: Գեղագետի կարծիքով, երբ սերը «բանտարկում ենք», դրանով պղտորում ենք մարդկային գեղեցկության ակունքը, որն այլևս հորդահոս չէ: Իսկ սերը «կաղապարել» սկսել ենք քրիստոնություն դավանելուց հետո. «Ապականած ենք մենք մեր սէրը քսան դարէ ի վեր:... Նազովրեցին՝ տառապանքի, չարչարանքի, ինքնախարազանումի հասկացողութիւնը բերաւ մարդկութեան: Սէրը՝ որ իրմէն առաջ մեհեաններուն մէջ կը պատարագէր ու անտառներուն մէջ կը ցնծար՝ թաքչեցաւ մութ ու բուրաւէտ խուցերու մէջ»[1]:

«Մարմին մեղապարտ» վիպակում, ուր չկա սյուժե, գրողը կրկին մարմնի և հոգու, սեռի և սիրո հորձանուտում է: Ինչպես հեղինակն է հուշում, այս ստեղծագործությունը «ախտաճանաչութեան համեստ փորձ մըն է...»[2]: Այստեղ Շուշանյանը կարծես քաշում է «փողոցի», վայրի սիրո վարագույրները և նախաբանում ընդգծում, թե որտեղից է առաջ գալիս այն. «Նազովրեցին՝ տառապանքի հասկացողութիւնը բերաւ խոնջ ու ձանձրացած հեթանոս հասարակարգին: Իր առաքեալները ուրացան մարմինը որ մեծագոյն հարստութիւնն է այս վաղանցուկ ու հողէ աշխարհին մէջ ու սրբազան անօթը մեր հոգիին, (գեղեցիկ բնակավայր): Որպէս հետեւանք՝ մարմնական սէրը՝ որ ամէնէն առողջ ու ամէնէն գեղեցիկ բնազդն է գուցէ, դարձաւ արգիլուած հաճոյք: Յետագային ապականեցան մարդիկ»[3]:

Նույն ձևով չի՞ մտածում արդյոք Շ. Շահնուրը, երբ Նարեկացու ստեղծագործական ենթախորքում օտարված է տեսնում «մարմինը», «միսին չքացումը», համարում, ըստ էության, ողբերգական:

Վ. Շուշանյանից առաջ հեթանոս սերը դարձավ Դանիել Վարուժանի բանաստեղծական այցեքարտը: Նա մի ամբողջ գիրք գրեց՝ բերելով արբշիռ, համարձակ պատկերներ: Դ. Վարուժանը ծառանում էր քրիստոնեական շրջանում սիրո վաճառքի օրինակների դեմ. նրա հա-

[1] Շուշանեան Վ., Գարնանային սիրոյ հեզ նամակներ, Պէյրութ, 1956, էջ 78:
[2] Շուշանեան Վ., Բանաստեղծն ու կինը, էջ 119:
[3] Նույն տեղում:

մար հեթանոս կիրքը, ազատ հարաբերությունը մաքրության խորհրդանշան էր ներկա օրերի «Գողգոթայի» ճանապարհին, ուր ծաղիկները մարդիկ էին, նրա սիրո կենսահորդ վկայությունը: Այդ ազատությունը, որպես գեղեցիկի հատկանշական մեկ կողմ, բանաստեղծը գտել է հեթանոս դարերում: Այնտեղ է կինը՝ հորձանքի մեջ, ինքը՝ հորձանքը, ինքը՝ բնությունը:

Վ. Շուշանյանն իր «Ամրան գիշերներ» գործում դիմում է հենց «հեթանոսական» գրական շարժման առաջամարտիկին՝ ուղղակի մեջբերումներ կատարելով հեղինակի բնագրերից: Դրանով նա հաստատում է, որ շատ մոտ է կանգնած Դ. Վարուժանի բանաստեղծական աշխարհին ու փիլիսոփայական հայացքին: Վ. Շուշանյանը «ճամբորդութիւն» է կատարում «բանաստեղծի պարտէզէն ներս»[1], ինչը նրան հոգեկան մեծ բավականություն է բերում: Սփյուռքահայ գրողն այստեղ կարծես գտնում է ինքն իրեն, մարմնի և հոգու ներդաշնակում է ապրում: Վարուժանի բերած «հեթանոսական» պատկերներն օգնում են նրան լսելու մարմնի կանչը, ներսում եռացող կրքի ձայնը: «Կղէոպատրա», «Ո՛վ Լալագէ», «Գեղեցկութեան արձանին», «Բանուորուհին» քերթվածները Շուշանյանին կտրում են «մթար կեանքի» գորշությունից ու փոխադրում երազային ու միևնույն ժամանակ հնարովի մի աշխարհ: Անցելապաշտ հեղինակը գրում է. «Ու ածուէ ածու եւ երգէ երգ՝ հոգիս կը ճամբորդէ հիմա, թեթեւտն ու մրրկավազ, կը հպիմ ծաղիկներու, կը կախուիմ ճիւղերէ, տող առ տող, բառ առ բառ կը յառաջանամ ու կը զգամ, որ սիրտս երջանկութենէն կը տրոփէ: Ահա՛ կեցած եմ արձանական մերկութեան մը առջեւ (ինքնի՛ն վարուժանյան պատկեր – Լ. Տ.) ու շշուկ մը կը բարձրանայ՝ խոտերէն ու ծոթրիններէն, ռեհանի ծղօտներէն եւ անանուխի ծիլերէն՝ ու կ՚ըսէ ին–ծի – ծռէ՛, ծռէ՛, ինչպէս երգիչը կ՚ըսէր, վայրահակ ու կործանած, ու տառապէ՛ «գեղեցութեան արձանին» առջեւ…»[2]:

[1] Շուշանեան Վ., Ամրան գիշերներ, էջ 11:
[2] Նույն տեղում, էջ 12:

«Ալեկոծ տարիներ» գործի 29-րդ գլուխը կազմող «Գրգռութեան կարմիր լաթը» հոդվածում, որ գրվել է ի պաշտպանություն Հրաչ Զարդարյանի «Մեր կյանքը» վեպի, Շուշանյանի մտորումներն են սեռի և սիրո, բարոյականի խնդիրների շուրջ: Այստեղ նա խոսում է գեղեցիկի, իսկական արվեստի, գրականության, բանաստեղծության և իրական բարոյական չափանիշների իր ըմբռնումների մասին:

Վ. Շուշանյանը համարձակորեն է քննել «վրանբաց» թվացող խնդիրները՝ առանց վարանելու բարձրացնելով «արդեօք պոռնկագի՞ր է արուեստագէտը»[1] հարցը, անմիջապես մատնանշելով, որ սրանք միմյանց հետ առնչություն չունեն: Չի կարող արվեստագետը պոռնկագիր լինել, երբ խոսում է մարդու նվիրական զգացումներից, հոգու կրակներից: Այս կենսադաշտը մարդունն է ու արվեստագետինը, բանաստեղծինը: Ինչպես վկայում է Վ. Գաբրիելյանը, Շուշանյանը հաճախ է քննադատվել բաց նկարագրությունների համար: Մեր կարծիքով, խնդիրը բոլորովին էլ այն չէ, որ երբեմն կերպարն առավել թանձրացնելու, խտացնելու կամ տեսարանն ավելի ազդեցիկ դարձնելու համար հեղինակը դիմում է նման պատկերների, այլ՝ «...պոռնկագիր է այն, որ գրիչ կը վերցնէ՝ նիւթական կամ այլ վարձատրութեանց փոխարէն, գրգռելու համար սուտ-մաքրակրօնի աղտեղի հաճոյքդ: Պոռնկագրութիւնը մտադրութեան մէջ է, յետին մտքին»[2]: Հեղինակը մարտնչում է ի շահ գեղեցիկի, մաքուր կրքի պաշտպանության:

Խոսելով շահնուրյան ու շուշանյանական գեղարվեստական մեկնության ենթախորքի մասին՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև նրանց՝ համաշխարհային գրական բերքին տրված գնահատություններին:

Մարտկոցական պայքարի շրջանում՝ երեսնական թթ., Վ. Շուշանյանը նոր պատուհանով է քննում ռուս գրականությունը, ինչը հուշում է իր գրական հայացքների որոշակի տեղաշարժի մասին՝ Մերժելով ռուսական հեղափոխական վայրիվերումները մեր ժողովրդի

[1] Շուշանեան Վ., Բանաստեղծն ու կինը, էջ 5:
[2] Նույնը, էջ 6:

ճակատագրում՝ «Մահուան առագաստ»-ում արձակագիրը խոստովանում է. «Մասնաւոր սէր մը կը զգամ ռուս հեղինակներու հանդէպ, մինչդեռ առաջ կը նախընտրէի ֆրանսացիները: Եղբայրս կը ծիծաղէր վրաս: Հիմա կը զգամ, որ իրաւո՛ւնք ունի: Ո՛չ թանձր Զօլան, ո՛չ խորաթափանց ու նուրբ Գի տը Մօբասանը եւ ո՛չ զանգուածեղ Պալզաքը չեն կրնար այնքան յուզել զիս, որքան Տասթայեւսքին կամ Տօլստոյը»[1]:

Այս միտքն ավելի է զարգացնում «Առաջին սէր» վիպակում, ուր գրում է. «Ի՞նչ խօսք, Տասթայեւսքին շատ կը սիրեմ, իր ոճին մութ ու մռայլ տխրութիւնը ու խորութիւնը, որ գարնան առտուան մը խաղաղութեան պէս քաղցր է ինծի համար»[2]:

«Բանաստեղծն ու կինը» գրվածքում Շուշանյանը «Մարդը անդունդ մըն է»[3] բազմիմաստ բանաձևումով վերարծարծում է ռուս գրող Ֆ. Դոստոևսկու ներաշխարհի քննության փորձը: Այդ անդունդում եռևեփում են բնազդը, կրքերը, իմացական տարերքը, սերը առ Աստված, որից «ծլարձակ» պիտի ծավալվեն խիղճը, մեղքի ենթագիտակցումը, ինքնամաքրումի պատրաստ պայծառատեսությունը: «Ու զարմանալի չէ, որ պարզամիտներն են լոկ…, որ ամբողջովին կլանուած իրենց տգիտութեամբ ու ցաւով, առիթ ու ժամանակ չունին չափելու այդ անդունդը»[4]:

Շ. Շահնուրն էլ, դառնալով փիլիսոփայական ենթիմաստ ստացած «պարապին», «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքում եզրակացնում է. «Հավանաբար աստվածը միմիայն պարապն է, բացարձակ պարապը…»[5]: Ցանկացած հանգրվանից հետո կրկին ու կրկին մարդ բախվում է տիեզերական անսահմանության, հոգու դատարկության հետ: Իսկապես. ով է Աստված, եթե ոչ ինքը՝ «պարապի» տիրակալը:

Այստեղ խաչաձևվում են Շահնուրի և Շուշանյանի աստվածորոնման զուգահեռները: Կարող ենք ասել, թե նույնական է նրանց

[1] Շուշանեան Վ., Մահուան առագաստը: Առաջին սէրը, էջ 36:
[2] Նույն տեղում, էջ 122:
[3] Նույնը, Բանաստեղծն ու կինը, էջ 55:
[4] Նույն տեղում:
[5] Շահնուր Շ., Երկեր երկու գրքով, գիրք I, էջ 304:

մտածողության ելակետը. ոչ մի տեղ գրողների հայացքի սրությունը այդքան սերտաճած չէ, որքան «անհունի», «պարապի» զուգահեռներում:

Կարելի է վստահաբար հաստատել, որ մեր հիշատակած փիլիսոփայական մեկնակետը երկու հայ արվեստագետների ստեղծագործական հանգույցներում ածանցվում է եվրոպական և ռուսական գեղագիտական քննության «միջնորդությամբ»:

Ուշագրավ է, որ ժամանակակից ռուս գրականագիտության մեջ մեծ տեղ է հատկացվում «անդունդի», «անհունի», «պարապի» փիլիսոփայական խորհրդին, ինչը սփյուռքահայ գրականության մեջ երեսնական թվականներին և այսօր գեղագիտական սրությամբ արծարծել են Վ. Շուշանյանը, Շ. Շահնուրը, Զ. Խրախունին[1]:

Իսկապես հետաքրքիր է. ինչո՞ւ Վ. Շուշանյանի փիլիսոփայական ընկալումն այս կերպ փոխվեց, ինչո՞ւ նկատելիորեն հեռացավ ֆրանսիական «բերրի» միջավայրից: Պատասխանը թերևս միանշանակ չի կարող լինել. բանն այն է, որ էկզիստենցիալիստական նախադուռը կամ գիտակցական ներհոսը յուրատեսակ պատուհան էր Վ. Շուշանյանի հետաքրքրությունների դաշտում, իսկ «անդունդի» ընկալումը կազմում էր նրա ճանաչողական հանգուցային բաղադրիչներից մեկը:

Խոսելով Շ. Շահնուրի՝ ռուս գրականության հետ կապի մասին՝ սփյուռքահայ գրագետ Արշավիր Գապպենճյանն անդրադառնում է գրողի աղմկահարույց «Ազատն Կոմիտաս»-ի առիթով Վահագն Դավթյանի անհիմն զայրույթին՝ դիպուկ նկատելով, որ Շահնուրն իր այն միտքը,

[1] Ժամանակակից սփյուռքահայ գրող Զարեհ Խրախունին 1996-ին հրատարակած իր «Սրտի խօսք» հատորում է զետեղել «Ծայրագրութիւն» բանաստեղծությունը: Փիլիսոփա-բանաստեղծը հաջողությամբ արծարծում է ավագ գրչեղբայրների բերած «պարապի» գաղափարը: Պոլսահայ գրողը «անդունդը» համադրում է «անհունի», «անէության», վերջում արդեն «անմահության» եզրույթներին: Հատկանշականն այն է, որ Զ. Խրախունին «վերելքի» ճանապարհին է «բախվում» «անդունդի» փիլիսոփայությանը: Հակառակ նրա, որ գրողը գիտի «Քայլ մը եւս, եւ անդունդն է ոտքիս տակ» (էջ 227), առանց «շունչ առնելու» բարձրանում է.... (Խրախունի Զ., Տօնազանգ, Եր., «Զանգակ-97» հրատ., 2007):

թե՝ «Աշխարհը բան մը պիտի չկորսնցնէ, եթէ իր երեսէն Հայը անհետանայ վերջնական չքացումով…»[1], բառացիորեն վերցրել է Տուրգենևի «Ծուխ» վեպից, որտեղ ռուս գրողն ասում է. «Եթե երկրագնդի վրայից Ռուսիան անհետանար, ոչ մի կորուստ չէր լինի…»: Այնուհետև մատնանշում է, որ սա ոչ թե պատահական զուգադիպություն է, այլ ուղղակի ազդեցություն[2]: Ա. Գապպենճյանը, մեջբերելով Շահնուր-Վրացյան նամակագրությունից մի հատված, «ապացուցում է» նրա կապը ռուս գրականության հետ: Չպետք է մոռանալ նաև, որ ռուս մեծանուն գրողի գործերը լույս էին տեսել շուրջ 70 տարի ավելի վաղ, քան Շահնուրինը. «Չեմ յայտներ նաեւ իմ գրական նախասիրութիւններս, քանի որ պիտի թուեմ միջազգային հանրածանօթ մեծերը եւ կ'ենթադրեմ որ անոնց թուումը մեծ բան չի բացատրեր իմ գրութիւններէս: (Եւ յետոյ շատ երկար պիտի ըլլայ այս նամակս): Միայն կը խորհիմ, որ «Նահանջը» կ'երթայ կը կապուի իր խորքով հետեւեալ երրորդութեան – Tourgeneff – Pe′res et enfants (Տուրգենև, «Հայրեր և որդիներ» - Լ. S.), Thomas Hardy – Jude l'obscur (Թոմաս Հարդի, «Աննկատելի Ջուդը» - Լ. S.), Flaubert – L'Education Sentimentale» (Ֆլոբեր, «Զգացմունքների դաստիարակություն» - Լ. S.)[3]:

Այս խոստովանությունը գալիս է վկայելու, որ Շ. Շահնուրը իր քննադատ-գրչեղբոր՝ Վ. Շուշանյանի պես հմայված էր ռուսական մշակույթի հսկա զինանոցով և դեռ ավելին՝ խորապես ազդվել էր այս գրականության մեծերի համամարդկային գաղափարներից:

Շ. Շահնուրն իր՝ ռուս գրականության հանդեպ ոգևորությունն արտահայտել է նաև 1974-ին գրած «Սոլժենիցին» հոդվածում: Այստեղ նա հիացմունք է արտահայտում Սոլժենիցինի քաղաքական և քաղաքացիական գաղափարների հանդեպ և գրում է. «Ան չէր գոհանար քննադատելով թերութիւններ, որ անխուսափելի տկարութիւններն են

[1] Շահնուր Շ., Բաց տոմար, Փարիզ, 1971, էջ 135:
[2] «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Բ.-Գ. տարի, Անթիլիաս, Կաթողիկոսարան հայոց, 1981-1982 (Տե՛ս՝ Գապպէնճեան Ա., «Գրիգոր Շահինեանի «Կենսագրութիւն եւ մատենագրութիւն Շ. Շահնուրի» հոդվածը, էջ 573-576):
[3] Շահնուր Շ., Նամականի հ. Գ., Ուոթերթաուն, 2004, էջ 115:

ամէն վարչակարգի, այլ կը մերժէր վարչակարգի բուն իսկ վարդապետութիւնը, տոկմը (դոգմա - Լ. Տ.)»[1]: Շ. Շահնուրը խորհրդային վարչակարգից իր դժգոհությունը անուղղակիորեն կապում է ազգային հեռանկարի խորհրդի հետ, ինչը նշանակում է, որ հեռու է խորհրդային հեռապատկերը իբրև ազգային տեսլական ճանաչելու գաղափարից:

Անդրադառնալով ֆրանսիական նորագույն շրջանի գրական միջավայրի ճանաչողությանը՝ Շ. Շահնուրը դիպուկ նկատում է. «Սէն Միշէլի մէջ ես զիս կը զգամ ֆիզիքապէս ներկայ, բայց ո՛չ աւելի…»[2]: Իսկապես էլ, արձակագիրն այն համոզմանն էր, որ օտարները հայ թեկուզ ամենատաղանդավոր գրողին ընկալում են որպես օտար, թումանյանական բնորոշմամբ՝ նրա ցավին անտեղյակ են, դավին՝ անտեղյակ: «Ֆրանսահայ տողանցք» գրության մեջ Շ. Շահնուրն անդրադարձ է կատարում հենց այս խնդրին: Նրա կարծիքով ֆրանսիացի գրողները, արտաքուստ լինելով բարեհաճ ու ապրումակցող, ներսում միայն քամահրանք ու ծաղր ունեն հայ երիտասարդ գրողների գրչափորձերի հանդեպ: Նա համբերատարությամբ «տողանի» է շարում այն գրողներին, ովքեր անդրադարձել են հայկական թեմային, և եզրակացնում. «Կարելի՞ բան է Հայուն նման ազգ մը, որ կու գայ այնքա՜ն հեռուներէն, որ կու գայ ալեկոծ դարերու խորէն եւ խորխորատէն, իր հետ բերած չըլլայ առաքինութիւն մը»[3]: Ճանաչելով ազգային արժանիքները սակայն՝ Շ. Շահնուրը ցավով հարում է Ժան Ժիրոդուի այն կարծիքին, թե «Հայը գէշ կը հոտի»[4]: Այստեղ Շ. Շահնուրը կարծես կրկնում է Մայքլ Առլենի հայտնի դժգոհությունը իր հայրենակիցներից, որոնք, շահարկելով իրենց հայ լինելը, Լոնդոնի հրապարակներում բացահայտորեն մուրում էին: Շ. Շահնուրը հուշում է իր ընթերցողին, որ փող և պատիվ մուրալը օտար հասարակության մեջ իմաստների համանմանության խորհուրդ են ստանում:

[1] Շահնուր Շ., Սիրտ սրտի, էջ 256:
[2] Շահնուր Շ., Բաց տոմար, էջ 51:
[3] Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, էջ 75:
[4] Նույն տեղում, էջ 73:

Այսպիսով՝ գրական հայացքի առումով միմյանցից այդքան տարբեր թվացող արձակագիրներ Վ. Շուշանյանը և Շ. Շահնուրը կարծես նույն պատգամ-ուղերձն են թողնում հայ ժողովրդին, որի գաղափարական հենքը հավատն է սեփական ուժերի հանդեպ, տոկունությամբ պայքարն է ուծացման դեմ, որտեղ իրենք և՛ պատանդ են, և՛ այդ հորձանքում ինքնության կերպը պահող-պաշտպանողներ: Սակայն, ելնելով իրենց՝ գրականության հանդեպ տարբեր մոտեցումներից, տարբեր դիտանկյուններից են նույն հորդորը ձևակերպում:

Վազգեն Շուշանյանը գտնում էր, որ սփյուռքահայը պիտի պահանջատեր լինի, չպիտի գլխահակ ենթարկվի օտարին և պիտի կանգնած լինի դեմքով դեպի հայրենիքը: Այստեղ նա հավատում է իր ժողովրդի արարչական ներուժին և այն անհանգստությունն է հայտնում, թե «դրամատիրական շները» ցանկություն ունեն ականատես լինելու հայ ժողովրդի «համր ու դանդաղ մահվանը»: Եվ իրեն բնորոշ հուզականությամբ գոչում է. «Աշխատաւո՛ր ժողովուրդ, պնդէ գօտիդ: Թոյլ մի՛ տար, որ թշուառութեան յետին ցեխը խեղդէ քեզ: Թոյլ մի՛ տար, որ զօրաւորները քեզ վերստին նուաստութեան մսուրին կապեն: Աշխատաւո՛ր ժողովուրդ, գոռալով բարձրացուր ձայնդ ու պահանջէ՛ շուտափոյթ, անհրաժեշտ վերադարձդ: Ո՛չ ոք իրաւունք ունի խափանելու ճամբադ: Ընթացիկ ու պարագայական բոլո՛ր հոգերէն վեր կատարէ՛ պատմութեան այս հրամանը, - յեղափոխական միութիւն երկրիդ շուրջ ու վերադարձ»[1]:

Շահան Շահնուր գրողի աշխարհայացքի կիզակետում էլ սփյուռքահայի վաղվա լինելության օրհասական հարցադրումն էր: Նա ևս մտահոգ էր Սփյուռքի մշուշոտ ապագայով ու բազմահոգս ներկայով: Սակայն, ի տարբերություն Շուշանյանի, ակնարկը երբեք չի ուղղում դեպի հայրենիք: Նա ո՛չ հեղափոխությանն էր հավատում, ո՛չ էլ առավել ևս Խորհրդային Հայաստանին: Շահնուրը չէր ճանաչում երազային որևէ հեռանկար, այլ կարևորում էր ազգային մեկնության որոշակիությունը, խորությամբ հասկանալը, թե որն է պայքարիդ իմաստը և ինչ

[1] Շուշանեան Վ., Քրոնիկոն քնարական, Երևան, 2000, էջ 51:

ես ակնկալում կատարածդ քայլերով: Այդ էր պատճառը, որ նա ամբողջ կոկորդով աղաղակում է. «Ամբողջ ուժովդ վազէ՛ դէպի նպատակը, բայց նախ նայէ որ նպատակը վազած ուղղութեանդ վրայ ըլլայ: Ամուր կառչէ՛ տեսութեանդ, բայց նախ նայէ որ ընտրած տեսութիւնդ ամուր ըլլայ»[1]:

SUMMARY

SIGNIFICANCE OF LITERATURE IN CONCEPTIONS OF SHUSHANYAN AND SHAHNUR

TONOYAN LUSINE

Two French-Armenian writers, Sh. Shahnour and V. Shushanyan were seemingly contrasting literary poles - Shahnour was a realist, Shushanyan was a romantic. In our article, we have shown that even though they had different perceptions of development of culture, but they had a common and unified understanding of significance of literature. Both of them were interested to see a strong literature.

Keywords: *Armenian Diasporan Literature, Retreat, Nostalgia, the Armenian diaspora, Shahan Shahnur, Vazgen Shushanyan.*

РЕЗЮМЕ

ЗНАЧЕНИЕ ЛИТЕРАТУРЫ В КОНЦЕПЦИЯХ ШУШАНЯНА И ШАХНУРА

ТОНОЯН ЛУСИНЕ

Два франко-армянские писателя, Ш. Шахнур и В. Шушанян были, казалось бы, контрастные литературные полюса - Шахнур был реалистом, Шушанян - романтиком. В нашей статье мы показали, что даже если у них были разные представления о развитии культуры, но они имели общее и единое понимание значимости литературы. Оба они были заинтересованы видеть сильную литературу.

Ключевые слова: *Армянская диаспорная литература, Отступление, Ностальгия, армянская диаспора, Шаан Шахнур, Вазген Шушанян.*

[1] Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, էջ 21:

19. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆ ԻՐԱՆԱՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1921-1945 ԹԹ.)

ԱՍՏՂԻԿ ՀՄԱՅԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ *իրանահայ երաժշտություն, երաժիշտ, երգահան, խմբավար, երգչախումբ, նվագախումբ, համերգներ:*

Յուրաքանչյուր երկրի պատմությունն ուսումնասիրելիս կարևորվում է պատմական ճակատագրի բերումով այդ երկրից դուրս կազմավորված համայնքների պատմության ուսումնասիրությունը, հակառակ պարագայում այն կլինի թերի: Մեր հետաքրքրության շրջանակը ներառող իրանահայ համայնքի երաժշտական կյանքի լուսաբանումը, որն ընդգրկում է 1921-1945 թվականները, ունի գիտապատմական կարևորություն և արդիական հնչեղություն, քանզի իրանահայերի ստեղծած երաժշտական մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունները, արտահայտելով հայ ժողովրդի հոգևոր ողջ ներուժը, տարածում են գտնում ոչ միայն իրանահայ համայնքի շրջանում, այլև իրանցիների միջավայրում՝ ծանոթացնելով վերջիններին հայ երաժշտական մտքի նվաճումներին:

Ստորև փորձել ենք ներկայացնել իրանահայ երաժշտության բնագավառում իրենց շնորհաշատ վաստակն ունեցող անձանց, ովքեր նպաստեցին հայ և իրանցի ժողովուրդների երաժշտական ճաշակի ձևավորմանը՝ կրթելով երաժշտագետների մի ամբողջ սերունդ: Այս իրողությունը հայ-իրանական բազմադարյան մշակութային առնչությունների հարթության վրա համակողմանիորեն լուսաբանելու փորձը հանդիսանում է սույն ուսումնասիրության գիտական նորույթը:

Իրանահայ համայնքում երաժշտական արվեստն սկսել է զարգանալ դեռևս 17-րդ դարում: Այն գոյություն ուներ գուսանական երգի ձևով:

Ժամանակակից հասկացությամբ երաժշտությունն իրանահայ համայնքում սկսել է երևան գալ 19-20-րդ դարերում: Իրանահայ երաժշտության ձևավորման գործում որոշակի դեր խաղաց Կովկասի երաժշտական մշակույթը:

Իրանահայության շրջանում երաժշտության զարգացման և տարածման գործում շնորհակալ վաստակ ունի երաժիշտ և խմբավար Լևոն Գրիգորյանը: Կրթությունն, այդ թվում՝ նախնական երաժշտական, ստացել է ծննդավայրի՝ Թավրիզի «Հայկազյան» դպրոցում: 1904 թվականին Լևոն Գրիգորյանը երաժշտություն է դասավանդել Ռաշտի

հայկական դպրոցում, իսկ 1905 թվականին՝ Թավրիզի «Հայկազյան-Թամարյան» դպրոցում: Երաժշտական կրթությունը խորացնելու նպատակով նա մեկնել է Թիֆլիս և ուսանել ժամանակի հայտնի ջութակահար Վասիլևի մոտ: Երաժշտական ասպարեզում կատարելագործվելու ցանկությունը 1910 թվականի սեպտեմբերին նրան տանում է Բելգիա, որտեղ հաճախում է բրյուսելցի նշանավոր ջութակահար Թոմսոնի դպրոցը: 1912 թվականին վերադառնալով Թավրիզ՝ Լևոն Գրիգորյանը երգ և երաժշտություն է դասավանդում թեմական և Արամյան դպրոցներում: Ուսուցչական աշխատանքին զուգընթաց՝ նա այս դպրոցներում ծավալում է նաև խմբավարական գործունեություն[1]: 1916 թվականին Թավրիզում Լ. Գրիգորյանը հիմնում է շուրջ քսան հոգուց բաղկացած «Սալոն» նվագախումբը: Այն գոյություն ունեցավ մինչև 1946 թվականը: Նվագախմբի անդամների թիվը փոփոխական էր: Ամբողջ երեսուն տարի նվագախմբի ղեկավարութունն ստանձնեց Լևոն Գրիգորյանը: «Սալոն» նվագախմբը մեծ համբավ էր վայելում Թավրիզի երաժշտասեր հասարակայնության շրջանում:

Լևոն Գրիգորյանի գրչին են պատկանում հայկական ժողովրդական և պարսկական մի շարք երգերի մշակումներ: Իր վաղամեռիկ Հրաչիկ որդու հիշատակին նա Ավետիք Իսահակյանի «Է՞յ, դու ջահել» և «Ուռիների տակ» բանաստեղծությունների համար գրեց երաժշտություն, որը լույս ընծայեց առանձին տետրակով[2]:

Լևոն Գրիգորյանն իրանահայ միջավայրում ծնունդ տվեց երաժիշտների շնորհալի սերնդի՝ ուսուցիչներ, ջութակահարներ, դաշնակահարներ, խմբավարներ, երգիչներ, մեներգիչներ և այլն:

Լ. Գրիգորյանի ծավալած երաժշտական մեծավաստակ գործունեությունը չէր պարփակվում իրանահայության միջավայրում: Նա առաջինն էր, որ թավրիզաբնակ իրանցիներին սովորեցրեց նվագել եվրոպական գործիքներ՝ ջութակ, դաշնամուր, սրինգ և այլն: Թավրիզաբնակ պարսիկներից նա կազմում է հատուկ նվագախումբ, երգի և ձայնագրության դասեր տալիս Թավրիզի իրանական դպրոցներում: Այդ դպրոցներում Լ. Գրիգորյանն ստեղծում է նաև քառաձայն երգչախմբեր:

1946 թվականին Լևոն Գրիգորյանը տեղափոխվում է Թեհրան և շարունակում իր բեղմնավոր գործունեությունը:

---

[1] Տե՛ս «Յոյս», 7 մարտի 2012, Ե տարի, թիվ 118:

[2] Տե՛ս նույն տեղում:

Իրանահայ լավագույն ջութակահարներից էր Բաբկեն Թամրազյանը: Նա ծնվել է Թավրիզում, նախնական երաժշտական կրթությունն ստացել Լևոն Գրիգորյանի մոտ: Այնուհետև երաժշտական կրթությունը շարունակել է Թիֆլիսում և Երևանում: Վերադառնալով Իրան՝ Բաբկեն Թամրազյանը դառնում է Թեհրանի սիմֆոնիկ նվագախմբի առաջին ջութակահարը[1]:

Իրանահայ երաժշտական ասպարեզում իր ծանրակշիռ վաստակն ունի հայ ականավոր երգահան Նիկոլ Գալանտերյանը: Նա ծնվել է 1881 թվականին Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում: Որոշ ժամանակ ապրել է Բուլղարիայում: 1900-1903 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև կրկին վերադարձել է Բուլղարիա և մինչև 1910 թվականն ապրել ու պաշտոնավարել է այնտեղ, ապա՝ Թիֆլիսում:

Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործական ուղին սկսվել է Սուխումի (Աբխազիա) մոտ գտնվող Ցեբելդա գյուղից, որի հայկական դպրոցում 1910-1911 թվականներին նա երաժշտություն էր դասավանդում: Այստեղ Գալանտերյանը գրում է իր առաջին երգը՝ Ավետիք Իսահակյանի «Ա՞խ, աչերդ արև ու մութ» խորագիրը կրող բանաստեղծության հիման վրա[2]: 1911 թվականի օգոստոսին նորից անցնում է Թիֆլիս և Վահան Տերյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա մի քանի նոր երգեր գրում:

1911-1912 ուսումնական տարում Թեհրանի «Հայկազյան» դպրոցի հոգաբարձության հրավերով Նիկոլ Գալանտերյանը, որպես երաժշտության ուսուցիչ, հաստատվում է Թեհրանում, որտեղ էլ 1944 թվականի մարտի 2-ին կնքում է իր մահկանացուն:

Թեհրանում բնակվելու առաջին տարիներին նա Վահան Տերյանի բանաստեղծությունների հիման վրա գրում է ևս երկու երգ, ինչպես նաև՝ «Չարի վերջը» մանկական օպերան՝ Հովհ. Թումանյանի համանուն բալլադի հիման վրա:

1924 թվականից սկսվում է Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործական կյանքի ամենաբեղուն շրջանը: 1925 թվականին բարեկամների ու երկրպագուների օժանդակությամբ նա հանդես է գալիս հասարակական առաջին համերգով: Այնուհետև Նիկոլ Գալանտերյանը

[1] Տե՛ս Փահլևանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 240-241:
[2] Տե՛ս Երեմեան Ա., Երգահան Նիկոլ Գալանդէրեան, Թէհրան, 1947, էջ 12:

պարբերաբար կազմակերպում է համերգներ[1]: Գալանտերյանը կազմակերպել է 35-ից ավելի համերգներ՝ գլխավորապես հանդես գալով երաժշտական ինքնուրույն ստեղծագործություններով և իր հիմնած «Գողթան» երգչախմբով[2]: Այդ կապակցությամբ Նիկոլ Գալանտերյանը գրում է. «Իմ երգերը, թէև այսքան քիչ հրատարակուած, բայց այսօր շատ տարածուած են, շնորհիւ իմ տուած համերգների, ընդհանրապէս երգչախմբի, իսկ մասնաւորապէս օր. Լորիկ Մովսիսեանի և պ. Արա Տէր-Յովհաննիսեանի»[3]:

1927 թվականին նա գրում է իր առաջին մեծածավալ ստեղծագործությունը՝ Վահան Միրաքյանի «Լալվարի որսը» պոեմի հիման վրա ստեղծված համանուն օպերան: Չնայած մի շարք դժվարությունների՝ 1928 թվականին ԹՀԵԴՆԱ (Թեհրանի «Հայկազյան» երկսեռ դպրոցի նախկին աշակերտներ) միության նախաձեռնությամբ «Հայկազյան» դպրոցի դահլիճում բեմադրվում են օպերայի նախերգանքն ու երկրորդ գործողության առաջին պատկերը: Մի քանի ամիս անց «Հայկազյան» դպրոցի դահլիճում օպերան բեմադրվում է ամբողջությամբ: 1930 թվականի դեկտեմբերի 30-ին Թեհրանի զրադաշտականների ամառային թատրոնում նորից ամբողջությամբ բեմադրվում է օպերան, որի մասին պարսկական «Էթելաաթ» թերթում լույս է տեսնում ներկայացման երաժշտական արժեքն արձանագրող հոդված[4]:

1931-1932 թվականներին Ն. Գալանտերյանը գրում է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի թեմայով համանուն օպերա:

1932 թվականին մեծանուն արվեստագետը հայ երաժշտությունը հարստացնում է ևս մեկ օպերայով: Դա «Հովիվ» օպերան էր, որի համար հիմք էր ծառայել Վրթանես Փափազյանի «Լուր-դա-լուր» պատմվածքը:

Նիկոլ Գալանտերյանը գրել է նաև մանկական երգեր, որոնք առանձին շարք են կազմում: Առանձնահատուկ տեղ են գրավում մանկական օպերաները՝ «Չարի վերջը», «Պողոս-Պետրոս», «Պապն ու շաղգամը», «Ուլիկը» և այլն:

---

[1] Տե՛ս «Վերածնունդ», 16 մայիսի 1930, Ա տարի, թիվ 14, Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 13:
[2]«Գողթան» երգչախումբը հիմնվել էր 1925 թվականին: 1942 թվականին այն վերանվանվեց «Գալանտերյան»:
[3] Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 46:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 24-25:

Կյանքի վերջին տարիներին Նիկոլ Գալանտերյանն աշխատում է «Անուշ» օպերայի վրա: Նա գրեց օպերայի նախերգանքն ու մի քանի հատվածներ, սակայն մահվան պատճառով մնաց անավարտ: Երգահանի թաղումը կատարվեց «Անուշ» օպերայի քառաձայն նախերգանքի հնչյունների ներքո:

Իր երեսնամյա գործունեության ընթացքում Նիկոլ Գալանտերյանը երաժշտական ստեղծագործության նյութ դարձրեց հայ բանաստեղծական գրականության լավագույն էջերը: Նա երաժշտական հնչյունների վերածեց արևելահայ, արևմտահայ և սփյուռքահայ 105 բանաստեղծների 519 բանաստեղծություններ[1]:

Հատկապես սիրված էին Նիկոլ Գալանտերյանի սիրային-քնարական երգերը: Դրանցից չորսը՝ գրված Վահան Տերյանի, Մարգար Ղարաբեկյանի (Դև) և Արամ Երեմյանի խոսքերով, հրատարակվեցին Թեհրանում և Նոր Ջուղայում: Նրա ստեղծագործություններից լույս տեսան Կահիրեում տպագրված «Գանձարան» երգարանի 5-րդ և 6-րդ գրքերում: Ն. Գալանտերյանի մանկական վեց երգերը տպագրվեցին Մ. Սարվարյանի «Նոր հասկեր» հանդեսում: Պարսկերեն մանկական չորս երգերի նրա մշակումները հրատարակվեցին Թեհրանի «Ռահնամայե զենդեգի» թերթում[2]:

Իրանահայ համայնքին քաջածանոթ է վաստակաշատ երաժիշտ, երգահան ու խմբավար Համբարձում Գրիգորյանի անունը: Նա ծնվել է Թավրիզ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի Կենտրոնական թեմական դպրոցում: 1914-1915 թվականներին նա աշխատել է Ղազվինի հայկական դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ, իսկ 1917-1918 թվականներին նույն պաշտոնն է զբաղեցրել Ռաշտում: 1923 թվականին մի խումբ հայ ուսանողների հետ մեկնում է Պրահա՝ Չեխոսլովակիայի կառավարության հատկացրած կրթաթոշակով այնտեղ ուսանելու համար[3]: Սովորում է Պրահայի Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի անվան երաժշտական դպրոցում: Չհարմարվելով տեղի կլիմային՝ հիվանդանում է և տեղափոխվում Փարիզ: 1924-1927 թվականներին սովորում է տեղի Երգեցողության դպրոցում (Schola Cantorum)՝ աշակերտելով Վենսան դը Էնդիին: Ուսանել է նաև Սորբոնի համալսարանում: 1927 թվականին Իրան վերադառնալուց հետո նախ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 35-37:
[2] Տե՛ս Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 42-43:
[3] Տե՛ս Գէորգեան Կ., Ամէնուն տարեգիրքը 1958, Ե տարի, Բեյրութ, 1957, էջ 406:

դասավանդում է Ռաշտում, ապա՝ 1928 թվականին վերջնականապես հաստատվելով Թեհրանում՝ երկար տարիներ երաժշտության դասեր վարում տեղի «Քուշեշ-Դավթյան» դպրոցում:

1929 թվականին Համբարձում Գրիգորյանը հիմնում է «Կոմիտաս» երգչախումբը՝ բաղկացած 60 երգիչ-երգչուհիներից: Երկսեռ երգչախումբն իր հմուտ ղեկավարի շնորհիվ վայելում էր թեհրանահայության սերն ու հարգանքը[1]: Կազմակերպվում էին տարեկան համերգներ, որոնք հասարակական մեծ պահանջարկ էին վայելում: Տասնամյակներ շարունակ «Կոմիտաս» երգչախումբը մեծ դեր է խաղացել հայ երգի տարածման գործում և նպաստել իրանահայության մշակութային կյանքի զարգացմանը:

Հ. Գրիգորյանի գրչին են պատկանում հարյուրից ավելի ստեղծագործություններ՝ մեներգեր, զուգերգեր, խմբերգեր, սիրային երգեր, աշուղական երգեր (այդ թվում՝ Սայաթ Նովայի «Բլբուլի հիդ» երգի մշակումը) և այլն:

Համբարձում Գրիգորյանն իր երգերի մեծագույն մասը գրել է Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի, Արամ Գառոնեի, Հայկ Օհանյանի և այլ բանաստեղծների խոսքերով: Նա գրել է նաև Կոմիտասի կյանքի և գործունեության վերաբերյալ ուսումնասիրություններ[2]:

1920-ական թվականներին Ռաշտում գործում էր «Քնար» նվագախումբը, որը մասնակցում էր հասարակական բոլոր հանդեսներին և հաճույք պատճառում ունկնդիրներին[3]: Այդ ժամանակաշրջանում Սուլթանաբադում երաժշտական գործունեություն էր ծավալում փոքրաթիվ նույնանուն նվագախումբը, որն իր ընտիր երգացանկով շուք էր հաղորդում մշակութային միջոցառումներին[4]:

Դաշնակահարուհի Տանյա Խառատյանի ծավալած մանկավարժական գործունեությունն Իրանում մեծ գնահատանքի է արժանի: Նա երաժշտական սկզբնական կրթությունն ստացել է Մոսկվայում, ապա ավարտել Թիֆլիսի կոնսերվատորիան: Աշխատել է Փարիզում[5]: 1930 թվականին Տանյա Խառատյանը հաստատվել է Թեհրանում և սկսել

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 405:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 407:
[3] Տե՛ս «Պարսկահայ տարեցոյց», Առաջին տարի, Թեհրան, 1927, էջ 75:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 107:
[5] Տե՛ս Փահլևանյան Հ., նշվ. աշխ., էջ 244:

դաշնամուրի դասեր տալ: 1935 թվականին հրավիրվել է Թեհրանի կոնսերվատորիայում դասավանդելու[1]:

Տանյա Խառատյանն ուսուցանել է մեծ թվով աշակերտների, արվեստի ասպարեզում անգնահատելի ծառայություն մատուցել երկրին և պատիվ բերել իրանահայ համայնքին:

Պարարվեստի ասպարեզում ևս հայերն առաջին հորիզոնականում էին: 1920-ական թվականներին Ելենա Ավետիսյանը Թավրիզում հիմնեց Իրանի առաջին բալետի ստուդիան: Այն 1945 թվականին տեղափոխվեց Թեհրան՝ վերածվելով պարարվեստի դպրոցի[2]:

Իրանահայերը նպաստեցին ոչ միայն ազգային, այլև իրանական երաժշտական մշակույթի զարգացմանը:

Իրանահայ երաժշտությունը, լինելով հայ երաժշտական մշակույթի լավագույն արժեքների կրող, մայր հայրենիքից դուրս գտնվող հայության ազգային դիմագծի պահպանման գրավականը դարձավ:

SUMMARY

IDEOLOGICAL EMPHASIS OF PATRIOTISM IN THE IRANIAN-ARMENIAN MUSIC (1921-1945)

HAKOBYAN ASTGHIK

By the modern notion music in the Iranian-Armenian community emerged in the 19-20th centuries. In the formation of the Iranian-Armenian music it is the culture of the Caucasian music that played a certain role.

In this study we have tried to present the heritage of the individuals who had their grateful contribution in the field of the Iranian-Armenian music and their works done for the development and dissemination of music with the timeframe of 1921 to 1945. Besides having a cognitive goal, the enlightenment attempt of these realities promotes also the evaluation and perception of Iranian-Armenian musical culture that embraces the best qualities of the Armenian culture. The Iranian-Armenian culture supplements the treasury of the Armenian culture. The Iranian-Armenians have influenced and continue to have their impact on the Iranian culture. This fact is the expression of the age-old Armenian-Iranian cultural ties.

Keywords: *Iranian-Armenian music, musician, composer, a choirmaster, chorus, orchestra, concerts.*

[1] Տե՛ս «Վերածնունդ», 9 հունիսի 1951, թիվ 23 (2286):

[2] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 261:

РЕЗЮМЕ

ПАТРИОТИЧЕСКОЕ ИДЕЙНОЕ АКЦЕНТИРОВАНИЕ В ИРАНСКОЙ АРМЯНСКОЙ МУЗЫКЕ (1921-1945 гг.)

АКОПЯН АСТХИК

По современным понятиям музыка в иранской армянской общине начала проявляться 19-20 веках. В деле формирования иранской армянской музыки большую роль сыграла Кавказская музыкальная культура.

В данном исследовании, обхватывая хронологические рамки 1921-1945гг., мы попытались представить оставивших в иранском армянском музыкальном искусстве свое заслуженное благодарное наследие личностей, их проделанную работу в развитии и распространении в Иране музыки. Попытка освещения этих фактов, имея также научно-познавательную цель, способствует восприятию и оценке иранской армянской культуры, которая включила в себе наилучшие ценности армянской культуры. Иранская армянская культура восполняет сокровище армянской культуры. Иранские армяне веками воздействовали и продолжают оставлять свое воздействие на иранскую культуру. Факт этот выражает вековую связь армянской и иранской культуры.

Ключевые слова: *ирано-армянская музыка, музыкант, композитор, дирижер, хор, оркестр концерты.*

20. РОЛЬ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ МИРА В СТАНОВЛЕНИИ И РАЗВИТИИ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В XXI ВЕКЕ

РОЕВА ЕКАТЕРИНА БОРИСОВНА

Ключевые слова: *армянская диаспора, образование в Армении, инвестиции, национальное образование, Фонд Айб, Араратский бакалавриат.*

В настоящее время наблюдается растущий интерес к изучению роли диаспор, а также их влиянию на развитие отношений материнского государства[1] и страны проживания членов диаспоры. На сегодняшний день количество национальных диаспор быстро растет во всем мире,

[1] Солопова О.В. Особенности становления новейших диаспор в странах ближнего зарубежья (на примере российских белорусов)// Многоликий и беспокойный славянский мир: Научный сборник в честь 50-летия Юрия Аркадьевича Борисёнка, серия Историки-слависты МГУ, место издания Издатель Степаненко Москва, том 11, с..613

поскольку интенсификация потоков миграции в международном масштабе идет параллельно с оформлением внутри этих процессов новых этнических общин, землячеств и т.д.

В некоторых случаях современные диаспоры оказывают существенное влияние на внутреннюю ситуацию и направления внешней политики страны проживания, а также материнского государства, способствуют развитию транснациональных связей, действуют в качестве медиатора между исторической родиной и принимающим гражданским обществом.

Дезинтеграция Советского Союза в 1991 году повлекла за собой серьезные изменения во всех бывших республиках. Новые независимые государства оказались перед необходимостью определения для себя пути развития, который был бы отличен от предлагавшегося советской властью предыдущие 70 лет. Именно в этот период началось повсеместное национальное возрождение – отличительная черта постсоветсткого пространства начала 90-х годов XX века.

Не стала исключением и Республика Армения. Помимо решения конфликта в Нагорном Карабахе и преодоления экономического кризиса, связанного с последствиями землетрясения в Спитаке, распадом единой системы СССР, блокадой со стороны Турции и Азербайджана, Армении, которая, как государство, стремилась к полной свободе и независимости, в этот период нужно было вырабатывать новую систему образования. Эта система должна была быть направлена на то, чтобы граждане страны имели возможность получать высококачественное образование «не пересекая границу».

С этой целью правительство Армении стало проводить ряд реформ. Реализацию этих нововведений в сфере образования можно разделить на три этапа[1]:

[1] О некоторых вопросах общеобразовательной системы в республике Армения после распада СССР http://np-intesco.org/media/cms_page_media/13/Armenian%20Educational%20Aspects.pdf (Дата последнего обращения 27.09.2016)

Первый этап (1998-2002гг.) – это начало реформ, направленный на структурное преобразование системы образования и включает в себя реформу ее управления и финансирования. Особое внимание уделено процессу децентрализации.

Второй этап (2003 – 2009 гг.) направлен на улучшение организации содержания образования, повышение ее качества и обеспечение соответствия системы современным требованиям «информационного общества».

Третий этап (2009 – по н/в) начался принятием закона об общем образовании[1] и государственных стандартов образования. Этот документ дал импульс более эффективному выполнению вышеуказанных реформ и их углублению.

В настоящее время система образования Армении включает:

- Вновь созданную сеть образовательных учреждений разных типов от детских садов до высших учебных заведений;
- комплекс государственных образовательных стандартов, программ разного уровня и направленности, обеспечивающих последовательность образования;
- систему органов управления образованием и подведомственных учреждений.

Государственная политика в сфере образования определена Конституцией Республики Армения и законом «Об образовании», принятом в 1999 году.

Закон «Об образовании» устанавливает принципы государственной политики в области образования и организационно-правовые и финансово-экономические основы системы образования.

Государственная политика включает в себя следующие основные принципы:

[1] Закон Республики Армения об образовании http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=rus (Дата последнего обращения 10.05.2016)

- Опорой государственной политики является национальная школа, главная цель которой – формирование всесторонне развитой личности, преданной своему государству, идеалам гуманизма и гражданственности;
- Республика Армения провозглашает и гарантирует приоритетное развитие образования как важнейшего фактора укрепления государственности;
- Содействие армянофильской образовательной деятельности в диаспоре.

Кроме этого, в законе «Об образовании» в статье 6 «Государственные гарантии образовательного права» прописано то, что государство способствует, чтобы в образовательной деятельности участвовала также и армянская диаспора[1].

«Мы хотим осуществлять благотворительные проекты, которые окажут влияние на будущее Армении, помочь ей перейти от модели выживания, которая сегодня доминирует, к модели процветания. А для этого необходимо трансформировать образ мысли людей, приучить их работать «в длинную» и думать на 20-30 лет вперед», - эта мысль видного представителя деловых кругов России Рубена Варданяна[2] является квинтэссенцией того «экономического» интереса, которую проявляли и проявляют армяне диаспоры во всем мире к своей Родине.

Инвестирование средств в систему образования Армении армянами Спюрка идет по двум основным направлениям. Первое и наиболее очевидное - это финансирование строительства новых школ, спортивных комплексов, центров высоких технологий и дополнительного образования, ремонт уже существующих школ и детских садов, благоустройство территорий образовательных учреждений, пополнение фондов школьных библиотек, публикацию учебников. На все это, по

[1] Закон Республики Армения об образовании http://www.parliament.am/ legislation.php?sel =show&ID=1494&lang=rus (Дата последнего обращения 10.05.2016)

[2] Р. К. Варданян http://m.mediamax.am/ru/news/98/7625 (дата последнего обращения 13.12.15)

самым скромным оценкам, которые приводит Министерство диаспоры Республики Армения, в период с 2003 по 2015 год различными благотворительными фондами было потрачено около 30 млрд драм, т.е порядка 63 млн долларов[1].

Второе направление, которое 1-е десятилетие XXI века развивается особенно активно - это инвестиции во всестороннюю реорганизацию системы образования Республики Армения, создание новых образовательных программ, направленных на то, чтобы школьники Армении получали такое среднее образование, которое позволило бы им на равных претендовать на места в лучших университетах мира.

Здесь следует ответить на вопрос: почему армяне из диаспоры вкладывают такие колоссальные средства именно в систему образования?

Главная задача и стремление армян диаспоры – воспитание патриотически настроенных граждан, которые будут обладать таким багажом знаний и умений, что смогут возродить Республики Армения в таком качестве, как это видят армяне Спюрка. По их мнению, это должна быть страна устойчивая от экономических кризисов, независимая от сырья и ресурсов соседних государств. «Строя современную национальную школу, которая зиждется на лучших достижениях мировой технологической и образовательной мысли, мы учитываем и то, что ей предстоит воспитывать гражданина Армении. Не напрягая учеников идеологически, мы пытаемся усилить национальный окрас»[2].

Поскольку формирование этнической идентичности у человека совпадает с периодом его обучения в школе, армяне диаспоры инвестируют средства именно в среднее образование. Одним из первых

---

[1] По материалам, предоставленным из архива Министерства диаспоры Республики Армения младшему научному сотруднику Лаборатории истории диаспор исторического факультета МГУ имени М.В. Ломоносова Е.Б. Роевой в рамках практики в июле-августе 2016 года.

[2] А. Ашотян Школа должна давать инструменты познания себя и мира, 03.09.2012 http://www.edu.am/index.php?id=5737&topMenu=-1&menu1=205&menu2=205&arch=0 (Дата последнего обращения 09.09.2016)

концепцию развития у ребенка осознания принадлежности к этнической группе предложил Ж. Пиаже[1]. Он выделяет три этапа в развитии этнических характеристик: 1) в 6-7 лет ребенок приобретает первые – фрагментарные и несистематичные - знания о своей этнической принадлежности; 2) в 8-9 лет ребенок уже четко идентифицирует себя со своей этнической группой, выдвигает основания идентификации – национальность родителей, место проживания, родной язык; 3) в младшем подростковом возрасте (10-11 лет) этническая идентичность формируется в полном объеме, в качестве особенностей разных народов ребенок отмечает уникальность истории, специфику традиционной бытовой культуры.

Где бы не проживали армяне, материнское государство и его благоденствие для них является приоритетом. Именно это мобилизует диаспору как в старых государствах, так и в новых. Материнское государство как самостоятельный объект развития - особый интерес любой диаспоры. Эти чаяния характерны для диаспоры даже больше, чем для самих граждан Республики Армения. «Независимо от процессов интеграции в ЕАЭС для Армении приоритетом является национальное образование»[2].

Одним из крупнейших инвесторов в сферу образования в республике Армения является Образовательный фонд «Айб». Этот Фонд в 2006 году организовали несколько друзей, членов армянской диаспоры, живущих в разных странах мира. Их объединила идея развития и преображения независимой Армении через образование. Детально изучив состояние учебных программ ереванских школ, выявив плюсы и минусы современной системы образования Армении, ее сильные и слабые стороны, а также передовой международный опыт, они пришли к пониманию необходимости не корректировать старое, а строить новое. От идеи до ее реализации прошло пять лет, и в 2011 г. в

[1] Пиаже Ж. Избранные психологические труды.М., 1994, с. 153

[2] А. Ашотян http://www.tert.am/ru/news/2014/10/21/Armenia-arneb-ashotyan-interview/1223671 (Дата последнего обращения 09.09.2016)

столице Армении городе Ереване свои двери открыла гимназия будущего - Школа «Айб». Эта школа стала первым социальным проектом в сфере частного образования в Армении. Ее открытие стало началом широкомасштабной долгосрочной многовекторной программы по созданию «Образовательного узла Айб».

Министерство образования Республики Армения и Министерство наук вместе с Центром образования «Айб» запустило в 2014 году проект «Национальная программа высококлассного образования» в сотрудничестве с Кембриджским университетом и Лондонским институтом образования.

На пресс-конференции министр образования Армен Ашотян сказал, что государство готово распространять успешный опыт учебного учреждения «Айб» по всей Армении. Также он отметил, что данная программа включает в себя несколько ступеней.

«На первом этапе «Айб» получает аккредитацию международной образовательной программы. На втором этапе уже аккредитованная образовательная программа готовит преподавателей и уже на третьем этапе учителя приступают к работе в школах. Государством будет утвержден перечень школ, которые будут работать с этой программой. Отбор коснется и старших классов (по одной в каждой области и двум в столице). Первый этап среди выбранных школ будет длиться от 3 до 5 лет», — сказал министр, отмечая, что учителя из других школ, также могут принять участие[1].

Армен Ашотян отметил, что учителя данной программы будут получать высокую зарплату – около 400 000 драм: «Такая зарплата не только поднимет на новый уровень эту профессию, но и поспособствует

[1] Национальная программа высококлассного образования http://repatarmenia.org/rus/%D0%BD%D0%B0%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D0%B0%D1%8F-%D0%BF%D1%80%D0%BE%D0%B3%D1%80%D0%B0%D0%BC%D0%BC%D0%B0-%D0%B2%D1%8B%D1%81%D0%BE%D0%BA%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D1%81%D1%81%D0%BD/#.V-5X_dSLTGg (Дата последнего обращения 15.09.2016)

желанию преподавателей развиваться и использовать новейшие технологии и методы в процессы обучения»[1], - говорит он.

Основной целью этой программы является развитие и сохранение высоких стандартов образовательных площадок Армении и, соответственно, подготовка будущих поколений учителей.

Предполагается, что эта программа станет ресурсным центром, который поможет улучшить навыки учителей и процесс обучения в Армении.

В рамках «Национальной программы высококлассного образования» был учрежден армяноязычный образовательный проект «Араратский бакалавриат». В сентябре 2016 года он получил международный статус. Отныне армянские школьники смогут сдавать на армянском языке международные экзамены, по результатам которых получат возможность поступать в лучшие учебные заведения мира.

В заключение Национального агентства признания и сертификации Великобритании (NARIC) отмечено, что программа полностью соответствует квалификации британского уровня A (Cambridge A Levels) и американского AP (Advanced Placement).

Все эти программы сегодня носят не только прикладной значимый для армянского государства характер, эта деятельность является, несомненно, особо исключительной с точки зрения проектов других диаспор. Внутри армянской диаспоры подобного рода образовательные проекты еще есть – это Международная школа в Дилижане, Центр высоких технологий ТУМО, проект Teach for Armenia и др. Однако, масштабы деятельности Фонда «Айб» выводят его за скобки перечисления. Программы «Айб» на сегодняшний день не только часть реально развивающейся системы образования Армении, но и часть истории страны, истории формирования ее системы образования. «Айб» реализовывает абсолютно новаторскую программу, вобравшую в себя не только лучший опыт западных стран, но и лучшие образцы

[1] Там же.

традиционного армянского образования, с этой точки зрения она, несомненно, является объектом исторического изучения. Необходимо именно сейчас зафиксировать все эти процессы, собрать воедино, чтобы в дальнейшем иметь опорную точку и проанализировать результаты деятельности Фонда, когда выпускники «Айб» будут формировать новую Армению.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՌՈԵՎԱ ԵԿԱՏԵՐԻՆԱ

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի զարգացման ու կայացման հարցերին՝ 1990-ական թթ. սկսած: Հեղինակն իր ուշադրությունը սևեռում է ողջ աշխարհի հայկական սփյուռքի կողմից հայրենիքի կրթության համակարգում կատարած ներդրումներին և տվյալ երևույթի պատճառներին: Հոդվածում առաջին անգամ գիտական շրջանառություն են մտցվում նոր տվյալներ սփյուռքահայերի դրամական միջոցների քանակի վերաբերյալ՝ սփյուռքահայերի կողմից հատկացված Հայաստանի կրթական համակարգին 2003 թվականից առ այսօր:

Բանալի բառեր՝ *Հայկական սփյուռք, կրթությունը Հայաստանում, ներդրումներ, ազգային կրթություն, ԱՅԲ հիմնադրամ, Արարատյան բակալավրիատ:*

SUMMARY

THE ROLE OF THE ARMENIAN DIASPORA OF WORLD IN THE FORMATION AND DEVELOPMENT OF NATIONAL EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE XXI CENTURY

ROYEVA EKATERINA BORISOVNA

The article is dedicated to the issues of development and establishment of the system of education in Republic of Armenia since 1990s. Author paid great attention to the investments of Armenian diaspora to education system of its motherland and to the reasons of such phenomenon. Data of amounts allocated by Armenians of Spyurk at the education in Armenia since 2003 is introduced for the first time.

Key words: *Armenian diaspora, education in Armenia, investment, national education, AYB Foundation, Ararat Baccalaureate.*

21. ԱԶԳԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ

ՄԱՐԻԱՄ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *քաղաքական արդիականացում, ազգ, ինքիշխանություն, կառավարող ընտրանի, պրիմոնդիալիզմ, պետականաշինության մշակույթ, nation-building, քաղաքական գործունեություն, ազգային շահ:*

Պատմականորեն «ազգ» հասկացությունը (հուն. nascor – ծնվել) օգտագործվում էր դեռևս Հին Հռոմում հպատակ ժողովուրդներին բնորոշելու համար: Միևնույն ժամանակ այն օգտագործվում էր հունական ծագում ունեցող «էթնոս» հասկացության հետ միասին, որը նշանակում է ցեղ (մարդկանց հանրույթ)՝ միավորված բարեկամական կապերով, արյամբ, ընդհանրություններով, լեզվով և տարածքով: «Ազգ» հասկացությունն օգտագործվում է նաև արտագաղթի, տարածքների բռնազավթման կամ հողերի միավորման միջոցով տեղի ունեցած մի քանի էթնոսների միաձուլման արդյունքի բնորոշման համար: Ֆրանսիական ակադեմիան 1694 թ. ազգը բնորոշեց որպես «միևնույն պետության, միևնույն երկրի բոլոր բնակիչների միասնություն, ովքեր ապրում են միատեսակ օրենքներով և օգտագործում են միևնույն լեզուն»[1]: Համաձայն աբբա Սիյենի՝ ազգը «….Միասնական խումբ է, որն ապրում է ընդհանուր օրենքով, և ներկայանում է միևնույն օրենսդրությամբ և այլ ընդհանրությամբ»[2]:

[1] Попов О., Еврейский этнос, иудаизм и этническая конкуренция http://pravaya.ru/faith/13/4317?print=1

[2] Попов О., Еврейский этнос, иудаизм и этническая конкуренция http://pravaya.ru/faith/13/4317?print=1

Նշված ձևակերպումներով Էռնեստ Ռենանը (1882) ընդգծեց ազգի սուբյեկտիվ բնույթը. «Ազգը հոգի է, հոգևոր սկզբունք: Որպես առանձին երևույթ ազգը համարվում է հեռավոր անցյալի վերջնական կետ՝ կազմված տանջանքներից, զոհերից և ինքնամերժումից: Ընդհանուր հոչակն անցյալում է, ընդհանուր կամքը՝ ներկայում՝ ուղղված մեծ բաների իրականացմանը և ցանկությանն անել այդպիսի բաներ. այս ամենը ժողովուրդ համարվելու էական հիմքերն են»[1]:

Տարբեր իրավիճակներում «ազգ» հասկացությունն ընկալվում է և՛ էթնիկական հանրույթ, և՛ պետության բնակչություն, և՛նույնականանում է հենց պետության հետ: Այսպիսի մոտեցումը հանգեցրեց նրան, որ արդի գիտական մոտեցումներում ազգը, դիտարկվելով որպես քաղաքական արդիականացման դերակատար, համարվում է պետականաշինության մշակույթի ձևավորման և կայացման պատասխանատու: Վերոշարադրյալից ակնհայտ է, որ պետականաշինության մշակույթն անվտանգության, հասարակական դաշինքի, միջազգային իրավունքի, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների և ազատությունների, ժողովրդավարության, իշխանության տարաբաժանման սկզբունքների վրա կառավարվող ազգ պետությունների գործառման արդյունք է: Ազգը պետություն հիմնական բնութագիրչն ընդհանուր մշակույթ, լեզվի, էթնիկականության և պատմական կարծր հիշողություն ունեցող մեկ ազգի ինքնիշխանության բնականոն արդիականացման գործընթացն է: Պատմության հոլովույթում այն ունեցել է մեծ ազդեցություն՝ հանդիսանալով քաղաքական լեգիտիմության և կայունության ապահովման երաշխիք: Որպես քաղաքական կազմակերպություն՝ ազգ պետությունն ապահովում է ինքնիշխանություն թե՛ աշխարհագրական սահմանների ներքո և թե՛ այլ ինքնիշխան պետությունների հետ հարաբերվելիս՝ նպաստելով կառավարող ընտրանու բաց հավաքագրմանը:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ ազգի ընկալումը ձևավորվել է XVII դարի վերջին՝ կապված ֆրանսիական Մեծ

[1] Pierre Manent, What Is a Nation? THE INTERCOLLEGIATE REVIEW—Fall 2007, p. 23-24

հեղափոխության ժամանակ քաղաքական հնչեղություն ստացած պետական ինքնիշխանության պահանջների և սկիզբ առած ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացի հետ: Ֆրանսիացի հեղափոխականները հանդես էին գալիս որպես հայրենասերներ, և այդ ժամանակներից «հայրենիք» բառը (հուն. patria) դարձավ ազգի խորհրդանիշ՝ կապվելով այն պետականության և քաղաքացիական ինքնության հետ: Վաղ բուրժուական դարաշրջանում առաջացած ընդհանրության զգացողության այս առանձնահատուկ արտահայտումը հետագայում հարստացավ նոր խորհրդանիշներով՝ պայմանավորված ազգային պետությունների ձևավորմամբ, ազգային ազատագրական պայքարի և ստրկատիրական, ավատատիրական համակարգերի փլուզմամբ, տարբեր մայրցամաքներում էթնոսների վերաբնակեցման հետ կապված սահմանների վերակառուցմամբ:

Քաղաքական մտքում առկա է ազգի տեսական մեկնաբանությունների բազմազանությունը պայմանավորված է քաղաքական ժամանակի առանձնահատկություններով: Ուստի, չմերժելով նրանցից և ոչ մեկը, կարևորենք արդի պայմաններում ընդունված երկու հիմնական տեսական մոտեցումների անառարկելի գերիշխանության մասին՝ կառուցվածքային և պրիմորդիալիստական:

Կառուցվածքային ուղղության կողմնակիցներն ազգը դիտարկում են որպես այս կամ այն սուբյեկտի նպատակաուղղված գիտակցված գործողության արդյունք: Այս տեսանկյունից ազգը մեկնաբանվում է կա՛մ որպես «երևակայական հանրույթ» (Կ. Անդերսոն)[1], կա՛մ որպես ազգային համերաշխության պատկերներ ստեղծող իմացական ընտրանու գործունեության արդյունք (Կ. Կասյանովա)[2], կա՛մ որպես իշխանությունների կողմից համապետական համերաշխության արմատավորման հետևանք (Վ. Ռոզենբաում)[3]: Այս մոտեցման առավել հայտնի

[1] Anderson K., “Accountability” as “Legitimacy”: Global Governance, Global Civil Society and the United Nations/Washington College of Law, Research Paper N 28, 2011, pp. 841–890

[2] Касьянова К., О русском национальном характере. — М.: Институт национальной модели экономики, 1994, с. 27

[3] Rosenbaum W.A., Political Culture: Basic Concepts in Political Science , New York, 1975. p. 170

ներկայացուցիչ Է. Գելները գտնում է, որ ազգը պետություն ծնող արտադրող հիմնական սուբյեկտ է: Որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ միայն նրա կողմի «միմյանց հանդեպ որոշակի ընդհանուր իրավունքների և պարտականությունների» կոշտ ընդունմամբ «մարկանց խմբերը վերածվում են ազգի»[1]: Այդ պատճառով էլ հենց պետական կառույցների՝ ազգային շարժումներ ձևավորելու գիտակցված գործողություններն էլ զարգացնում են ազգին: Նրա համախոհ Է. Հոբսբաումն ազգի ձևավորման գործընթացում նույնպես կենտրոնական տեղ է հատկացնում պետական ընտրանու կողմից իրենց քաղաքացիների էթնիկական զգացմունքների մոբիլիզացման կառուցակարգերին և էթնիկական ինքնության տեղափոխմանը դեպի պետության մակարդակ[2]: Այսպիսով՝ այս դեպքում երևակայական ազգի պաշտպանությանն ուղղված քաղաքական գործունեությունը ճանաչվում է ազգի՝ որպես որոշակի հանրույթ հորինելու գլխավոր գործոն: Ընդունվում է, որ այս խմբի ձևավորման վրա պետությունն ավելի շատ է ազդում, քան կենսաբանական կամ որևէ այլ նախախնամություն: Բայց միևնույն ժամական հաստատվում է և այն, որ պետության այսպիսի կառուցողական գործունեությունը պետք է զուգակցվի քաղաքացիների ընդհանուր բարի կամքի, ինչպես նաև մի շարք անհրաժեշտ նախադրյալների հետ, մասնավորապես, մշակութային համաձնության (համախմբվածության) որոշակի մակարդակի և հասարակության կրթվածության:

Ըստ էության՝ պատմականորեն ազգային հանրույթի տվյալ ընկալումը, որն ենթադրում է պետության տարածքում բնակվող մարդկանց միավորում, հիմնվում է ազգի ձևավորման այսպես կոչված՝ ֆրանսիական (արևմտյան) ձևաչափի վրա: XVIII-XIX դարերում Ֆրանսիայում ստեղծված քաղաքացիական հասարակության օրինակը պատմականորեն կանխորոշեց ազգի առաջին ընկալումը՝ որպես համաքաղաքացիության որոշակի ձև, որն իր մեջ է ներառում որոշակի տարածքում

[1] Гелнер Э., Нация и национализм. М.: Прогресс, 1991, с. 35
[2] Hobbsbawm E. J., Nations and Nationalism Since 1780, Cambridge: CUP, 1992, p.p.14-45

ապրող մարդկանց՝ անկախ նրանց օգտագործած լեզվից, մաշկի գույնից և կրոնական համոզմունքներից: Ազգի այսպիսի ազատական ընկալումը կողմնորոշված է քաղաքացիների որոշակի գաղափարական ընդհանրությամբ և քաղաքական ընտրությամբ, որոնք պետական ինստիտուտների հետ մեկտեղ հանդես էին գալիս որպես խմբային համերաշխության և հասարակության ինտեգրման խրախուսման կառուցակարգեր: Միաժամանակ ազգային շահերի հիմքում գլխավորապես դրվեցին նյութական հետաքրքրություններ, որոնք պահանջում էին հստակ և ռացիոնալ գնահատական: Ազգի այսպիսի ընկալմամբ սահմանվեց հետևյալ բանաձևը «մեկ ժողովուրդ – մեկ տարածք – մեկ պետություն», որը XIX դարում Եվրոպայում ազգային պետությունների առաջացման համար դարձավ առաջնային կողմնորոշիչ: Ազգի ձևավորման գաղափարի և փորձի մեկ այլ մոտեցումը՝ գերմանականը, բխում էր նրա՝ որպես օրգանական հանրույթի, մարդկանց համար ընդհանուր մշակույթի սերտ միաբանության ճանաչումից: Ազգակերտման այսպիսի ընկալման և ձևի պայմաններում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեցին էթնոգենետիկական գործոնները և հատկապես լեզուն, ավանդույթները և սովորույթները՝ ուշադրությունը կենտրոնացնելով մարդկանց ծագման ընդհանրության, բնակչության տվյալ խմբի արյունակցական կապի և հոգևոր հանդուրժողականության գործոնների վրա: Իր հերթին դա անշեղորեն խթանեց բարդ ռացիոնալականացվող շահերի առաջացմանը, մարդկանց մոտ ակտիվացրեց իռացիոնալ հույզեր և զգացումներ, որոնցում լսվում էր «արյան ձայնը», «նախնիների կանչը», «հողի շունչը» և այլն: Այս պատմական և հոգևոր փորձի հիմքի վրա աստիճանաբար առաջացավ պրիմորդիալիստական մոտեցումը, համաձայն որի՝ ազգը մարդկանց օբյեկտիվորեն ձևավորված հանրույթն է, որը տիրապետում է բավականաչափ որոշակիացված արժեշահային համակարգի և որի գոյությունը կախված չէ որևէ մեկի գիտակցված ու անգիտակցված գործողություններից: Այս իմաստով ազգն սկսեց հիմնականում ընկալվել նրա բնույթը և էությունը բացահայտող այս կամ այն հատկանիշների ամբողջության միջոցով: Այս տեսանկյունից առավել հատկանշական է հայտնի գերմանացի Օ. Բաուերի կողմից

ազգի մեկնաբանությունը: Ըստ նրա՝ ազգը խումբ է, որին բնորոշ է «տարածքի, ծագման, լեզվի, բարքերի և ավանդույթների, ապրումների և պատմական անցյալի, օրենքների ու կրոնի ընդհանրությունը»: «Ազգը,- գրում էր նա,- մարդկանց ամբողջությունն է, որոնք ճակատագրի ընդհանրության հողի վրա կապված են բնավորության ընդհանրությամբ»[1]:

Հետագայում պրիմորդիալիստական մոտեցման շրջանակներում ձևավորվեցին տարաբնույթ հայեցակարգեր, որոնցում ոչ միայն առաջարկվում էր ազգային խմբերին բնորոշ հատկությունների իր ամբողջությունը, այլև առաջադրվեցին առավել յուրօրինակ գաղափարներ: Այսպես, սոցիոկենսաբանական մեկնությունները (Վ. Ռեյնպոլդս, Վ. Ֆալգեր, Յա. Վին), ինչպես նաև ռասիստական գաղափարներ ծնող Ժ. Գոբինոն, Խ. Մեյներսան և ուրիշներ շեշտադրումը կատարում էին մարդկանց ռասիստական պատկանելիության, նրանց արյունակցական մերձավորության վրա, պնդում էին ազգի առաջացման բնական-գենետիկական բնույթը: Այս տեսանկյունից, օրինակ՝ մարդկանց կողմից ծնունդով ժառանգական ճանաչված այս կամ այն հայացքները ու կարծրատիպերն ընկալվում էին որպես ժամանակի ընթացքում անփոփոխ և այլ ազգերի ներկայացուցիչների հանդեպ կամ կոմպլիմենտար կամ բացասական վերաբերմունք պահպանող:

Ռուս Լ. Գումիլովն առաջարկեց էթնիկական (ազգային) շարժումները (հանրույթները) դիտարկել նրանցում առկա շարժումների երկու ձևերի տեսանկյունից: Նրանցից մեկը՝ կենսաբանականը, իր մեջ ներառում էր աշխարհագրական լանդշաֆտի, մշակութային գործոնների ազդեցությունը, հարևանների հետ փոխհարաբերությունները և այլն, մյուսը՝ սոցիալականը, ենթադրում էր այսպես կոչված «պասսիոնառության» զարգացման որոշակի աղբյուրի առկայություն, որը կենտրոնացնում էր մարդկային էներգիայի լարվածությունը և արտահայտվում էր

[1] Бауэра О., Национальный вопрос и социал-демократия, изд. “Серп”, 1909 г., с. 139

որոշակի մարդկանց գործողություններում, որոնք թելադրում էին տվյալ հանրույթի զարգացման եղանակը և ուղղությունը[1]:

Ազգի ձևավորման և գործառման առումով հատուկ մոտեցում ունի մարքսիզմը, որն ազգը մեկնաբանում էր որպես դասակարգերի նկատմամբ երկրորդական նշանակություն ունեցող յուրահատուկ հանրույթ, իսկ ազգային հարցը ներկայացնում էր որպես կապիտալիզմի շրջանում դասային պայքարի բաղկացուցիչ մաս: Ուղիղ հակառակ գաղափարներ են առաջարկում մշակութաբանական մոտեցման կողմնակիցները (Մ. Վեբեր, Ջ. Բրենդ), որոնք ազգը դիտարկում էին որպես միևնույն մշակույթին պատկանող մարդկանց գաղտնի հանրույթ: Այս մոտեցման ներկայացուցիչ Ֆ. Բարտը կարծում է, որ էթնիկականությունը (տվյալ պարագայում որպես ազգի դրսևորումներից մեկը) իրենից ներկայացնում է մշակութային տարբերությունների կազմակերպվածության ձև, որոնք համարվում են յուրահատուկ «ընդգծիչներ»՝ տարբերակելով նրա (էթնիկականություն) սկզբունքային գծերը[2]: Վերջիններս, ըստ նրա, ձևավորվել են ավանդույթների, պատմական, տնտեսական գործոնների ազդեցության ներքո: Այս հատկությունների ամբողջության գիտակցումն արտահայտվում է մարդկանց կողմից իրենց ազգային ինքնության ընկալման մեջ, այսինքն՝ այդ խմբային միավորմանն իր անհատական պատկանելիության ճանաչման մեջ: Չափազանց ուշագրավ է Կ.Դոյչի մոտեցումը, համաձայն որի ազգը սոցիալական զարգացման և պրոգրեսիվ հաղորդակցության արդյունք է[3]:

Այսպիսի ընկալման պայմաններում ազգի համախմբումը տեղի է ունեցել մարդկանց կողմից խմբային արժեքների՝ որպես նրանց աշխարհի ճանաչումը համակարգայնացնող առաջատար կողմնորոշիչների, գիտակցման և տիրապետման շրջանակներում: Լեզվի գերակա-

[1] Гумилев Л. Н., Этногенез и биосфера Земли, изд. АСТ, Астрель, 2005, с. 16-52
[2] Barth F., (ed.)Etnic Groups and Boundaries. The Social Organisation Of Culture Differences. Bergen/Lon¬don, 1969, p. 12-38
[3] Deutsch K., National integration some concepts and research approaches, Jerusalem Journal of International Relations, 1977, pp. 26-29

յության՝ որպես մշակութային կյանքին մարդկանց հաղորդակից դարձնելու կարևորագույն կրող և պայման, ինչպես նաև մարդկանց կողմից բնական ճանապարհով յուրացվող կյանքի համար անհրաժեշտ արժեքների առաջնայնության ճանաչումը ներդաշնակվեց տարածքի գերիշխող ազդեցության բացառման հետ, որի վրա ապրում էին այդ արժեքների կրողները՝ մշակութային մոտիվացիաների, ավանդույթների, մարդկանց կենսական կարծրատիպերի հիման վրա: Այս իմաստով ենթադրվում էր, որ նույնիսկ արժեքների միևնույն համակարգը յուրացրած և դրանով ղեկավարվող տարբեր էթնոսների ներկայացուցիչներ կարող են դիտարկվել որպես մեկ ազգի ներկայացուցիչներ:

Կառուցվածքային և պրիմորդիալիստական մոտեցումների տեսական տարբերությունները ձևավորվել են քաղաքական արդիականացման գործընթացում: Առաջին, այսպես կոչված, եվրոպական ազգերը, որոնք առաջացել են կապիտալիստական հարաբերությունների ձևավորման դարաշրջանում, նշանակալի չափով հիմնվում էին ինտեգրման բնական կառուցակարգերի վրա, որոնք գործում էին ոչ միայն մշակութային, այլև տնտեսական գործոնների հիման վրա: Առավել ուշ շրջանում, երբ արդեն ձևավորվել էր ազգի կառուցման որոշակի փորձ, երբ այս կամ այն պետությունների շրջանակներում ցուցադրվեցին նրանց գործառման օրինակները, հասարակության ինտեգրման այդպիսի կառուցակարգերն սկսեցին օգտագործվել նաև այն երկրներում, որոնք նոր-նոր էին սկսում լուծել իրենց ամբողջականության ամրապնդման հարցերը, հարթել տարածքային վեճերը և այլն: Այս տեսանկյունից ազգի կերտումն սկսեց դիտարկվել որպես որոշակի քաղաքական ծրագրերի իրականացում, որը նախաձեռնված է կառավարող կամ քաղաքական ընտրանու այլ շրջանակների կողմից՝ կողմնորոշված նմանատիպ հանրույթների գիտակցված կառուցմանը: Ընդ որում՝ այսպիսի գործընթացներ տեղի էին ունենում ոչ միայն XIX դարում այլև XX դարի վերջերին: Օրինակ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր պետությունների ձևավորման գործընթացը, Բելովեժյան դաշնագրի կնքումը (Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի մասնակցությամբ ԱՊՀ ձևավորելու

վերաբերյալ պայմանագրի ստորագրման վայր), նրանց կողմից պետական ինքնիշխանություն նվաճելը ուղեկցվեց ազգային գաղափարախոսությունների, ինստիտուտների և նորմերի արհեստական ստեղծման գործընթացներով: Ազգի ձևավորման այսպիսի տիպը համարվում է փորձի ընթացքում ձևավորված գիտելիքի (aposteriori) հիման վրա ժողովուրդների միաձուլման անհրաժեշտ պայման:

Այսպիսով՝ ոչ միայն ազգի ներքին միաձուլվածության օբյեկտիվ գործոնների պարզաբանման վրա հիմնված պրիմորդիալիզմը, այլև կառուցվածքայինն իրենից ներկայացնում է ազգի ձևավորման գործընթացի մեկնաբանման լիարժեք իրատեսական բանաձև՝ հատկապես արդի գլոբալ զարգացումներում: Ազգի կառուցվածքային և պրիմորդիալիստական մեկնաբանությունների գործնական քաղաքական մեկնաբանությունն առաջին հերթին արտահայտվում է այնտեղ, որ նրանց կողմից առաջարկված գաղափարներն առաջացնում են տարաբնույթ հասկացութենական (ինստիտուցիոնալ) շրջանակներ ազգային խմբերի կողմից պետական իշխանությանն ուղղված պահանջների ձևակերպման համար, առանձնացնում են ազգի ձևավորման և զարգացման կարևորագույն կառուցակարգեր միջազգային հարաբերությունների կարգավորման գործում: Այսպիսի կառուցվածքային մոտեցումները հիմնական շեշտը դնում են պետության, կուսակցությունների, շարժումների հնարավորությունների և նրանց տիրապետած ռեսուրսների վրա: Օբյեկտիվիստական գաղափարների շրջանակներում շեշտադրվում են այլ նպատակներ և նախասիրություններ: Օրինակ՝ հոգեբանական «արյան գերազանցության» գաղափարի վրա հիմնված սոցիոկենսաբանական մոտեցումներն անխուսափելիորեն կանխորոշում են քաղաքական պահանջների էթնոհեգեմոնիկ համակարգը, որոնք արտահայտում են մեկ ազգի գերազանցությունը մյուսի նկատմամբ, համապատասխան տարածքում նրանց ներկայացուցիչների բացարձակ գերիշխանության ցանկությունը, այս կամ այն խմբի կյանքի ոճի հաստատման ձգտումը մեկ այլ խմբի հաշվին:

Միաժամանակ՝ կողմնորոշումը բացառապես մշակութաքաղաքակրթական արժեքների վրա, արդի զարգացումներում հաճախ հան-

գեցնում է կոսմոպոլիտիզմի սահմանաների ընդարձակմանը կամ ընդհանրապես կոսմոպոլիտիզմի գերակայություն: Տարբեր տեսական և գաղափարախոսական մոտեցումների քաղաքական նշանակությունն առավել լիարժեք արտահայտվում է նացիոնալիզմի այս կամ այն ձևերում կամ տեսակներում: Ինչպես նշում էր դեռևս Շ. Մոնտեսքիոն, «ազգի ոգին, սերը Հայրենիքի հանդեպ համարվում են «օրգանական» հասարակության գոյության միակ հիմքը:

Պայմանավորված քաղաքական ժամանակի հրամայականներով՝ նացիոնալիզմը ներառում է նաև պետության գործունեության արդյունավետության, նրանում այս կամ այն ազգության կամ էթնիկական խմբերի քաղաքացիների մշակութային և սոցիալական պաշտպանվածության մակարդակի որակական բարձրացմանն ուղղված բարեփոխումների իրականացման քաղաքականություն: Այս գործընթացում առանձնահատուկ է ազգային ընտրանիների դերը: Հենց նրանք են ստեղծում ազգային հանրույթներն ինտեգրող արժեքները, լուսաբանում պատմական ավանդույթների և սովորույթների ժամանակակից նշանակությունը, ձևավորում ազգային շահերը, որոնք ընկած են այդ քաղաքական ուժերի յուրաքանչյուր օրվա գործունեության հիմքում:

Ազգային շահի ապահովումը պետական իշխանության կողմից իրականացվող ռազմավարական քաղաքական գործունեություն է՝ կողմնորոշված ազգապահպանման և ազգային մրցունակության քաղաքականության ապահովմանը: Ազգային շահը համարվում է մարդկանց կողմից ազգային և մշակութային ինքնության ձեռքբերման հիմնարար պայմաններից մեկը, բացի դրանից, այն խտացված ձևով արտահայտում է դրանց հասնելու այն նպատակները և միջոցները, որոնք ազգայնական շարժումներին տալիս են այս կամ այն քաղաքական կարգավիճակը՝ ինչպես պետության ներսում, այնպես էլ միջազգային ոլորտում: Վերջապես, որպես ազգային պետության գործունեության հիմք, ազգային շահը հանդես է գալիս նաև որպես երկրի ներքին և արտաքին քաղաքականության որոշակիության ցուցանիշ:

Այդուամենայնիվ, չնայած ազգային շահի այսչափ մեծ նշանակությանը, գիտության մեջ դեռևս համաձայնություն գոյություն չունի ոչ

միայն նրա մեկնաբանման, այլև նրա գոյության ճանաչման հարցում[1]: Ազգային շահերի տվյալ մեկնաբանությունն առաջին հերթին ծրագրում է որոշակի ազգերի (պետությունների) ներկայացուցիչների քաղաքական վարքագծի հուզական-զգայական մոտիվացիաները, նրանց քաղաքական ծրագրերում և կարգախոսներում որոշակի արտաժամանակյա գնահատականների, մոտեցումների, կարծրատիպերի ամրագրումը: Ազգային շահերի և համապատասխան գործողությունների, որոնք արտահայտում են, օրինակ՝ քաղաքականության «սկզբունքայնությունը», նրա՝ «իդեալներին և սկզբունքներին պատկանելիությունը», այսպիսի ընկալման որոշակի պոզիտիվության պայմաններում համընդհանուր նպատակների նմանատիպ ձևերը, ինչպես ցույց է տալիս գործնական փորձը, միայն խորացնում է տարաձայնությունները մրցակիցների հետ՝տրոհելով քաղաքական իրադրության ընկալումը: Բացի դրանից այդպիսի վիճակը պետությանը՝ որպես քաղաքական ինստիտուտի, ի սկզբանե դնում է պարտված դրության մեջ մրցակիցների հետ պայքարում, որոնք կարող են առավել ճկուն վերաբերվել իրադրության գնահատմանը, մանևրել, ճշգրտել իրենց նպատակները և այլն: Ուստի ազգային շահը ենթադրում է պրագմատիկ վերաբերմունք քաղաքական արդիականացման նկատմամբ, որի միջոցով իրականացվող համապատասխան սուբյեկտիվ շահերը գնահատվում են համընդհանուր բարիքի և շահի շրջանակներում: Այսպիսի մոտեցման պայմաններում ազգային շահերի բոլոր բովանդակային չափորոշիչներն արդիականանում են և՛ իրավիճային, և՛ ռազմավարական արժեքայնության տիրույթներում: Այդ պատճառով ազգային շահերի այս կերպ ընկալող ընտրանիների մոտ անընդհատ փոխվում են և «հնարավոր» դաշնակիցները, և ազգի (ազգային պետության) «պոտենցիալ» հակառակորդները, և ներքին ու արտաքին իրադրությունների դրական և բացասական գնահատականները: Այդուամենայնիվ, այս ամենով հանդերձ, պահպանվում են երկու

[1] Мнацаканян М. О., Национализм и глобализм. Национальная жизнь в современном мире, М.: Анкил, 2008, с 27

հանրային նպատակներ. քաղաքացիների բարգավաճումը և պետության հզորության ամրապնդումը: Սրա հետ մեկտեղ ազգային շահերի բնականոն արդիականացումը լուծում է անվտանգ ապագայի և ազգային մրցունակության ապահովման խնդիրները:

SUMMARY

NATION AS AN ACTOR OF POLITICAL MODERNIZATION PROCESS

MARGARYAN MARIAM

Political modernization is a difficult and polyhedral process suggesting the presence of many actors. In the article the nation is observed as a specific actor of political modernization process. Modern process of political modernization bears the game logic of interaction between network and hierarchic governance. From this point of view forming and development of the nation assume evolutionary modernization of ethnonational identity. Hence political elite as an actor of political modernization must develop strategy and bring into life sustainable reforms. This will alllow the nation to react adequately at rising challengies through nation-building. As a result political elite will get an opportunity to modernize the national interest in the process of network administration.

Key words: *Political modernization, nation, sovereignty, ruling elite, primondializm, nation-building, political actions, national interest, network governance.*

РЕЗЮМЕ

НАЦИЯ КАК АКТОР ПРОЦЕССА ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ

МАРГАРЯН МАРИАМ

Политическая модернизация является сложным и многогранным процессом, предполагающим наличие множества акторов. В статье в качестве специфического актора процесса политической модернизации рассматривается нация. Современный процесс политической модернизации несет в себе игровую логику взаимоотношений сетевого и иерархического управления. С этой точки зрения формирование и становление нации предполагает эволюционную модернизацию этнонационального «Я». Следовательно политическая элита как актор политической модернизации должна разработать стратегию и проводить в жизнь продолжительные реформы. Это позволит нации адекватно реагировать на возникающие вызовы посредством nation-building. в результате

чего правящая элита получит возможность модернизировать национальные интересы в условиях сетевого управления.

Ключевые слова: *политическая модернизация, нация, суверинитет, правящая элита, примондиализм, nation-building, культура государствостроения, политические действия, национальный интерес, сетевое управление.*

22. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՍԵՐՈԺԻ ՍԱՐՎԱԶՅԱՆ

«Առանց ազգային լրիւ գոյութեան, առանց պետական անկախութեան՝
հայ քաղաքակրթութիւն ունենալու գաղափարը անճար
ինքնախաբէութիւն մըն է կամ կէս-գիտակից խոստովանութիւն մը,
որ ինքը հայ ժողովուրդի օրերը համրուած կը կարծէ»:
Լևոն Շանթ

Բանալի բառեր՝ *Լ.Շանթ, անկախություն, քաղաքակրթություն, ազգային գործոն, ազգային-քաղաքական ինքնություն, պետական ինքնիշխանություն, ազգի ինքնակառավարում:*

Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի և աշխարհաքաղաքական ժամանակակից իրողությունների համատեքստում առանձնակի կարևորվում են քաղաքակրթությունների բնապատմական ակունքների ու զարգացման միտումների, ժողովուրդների մշակութային ինքնության և ազգային նույնականացման հիմնահարցերը: Դրանց մեկնաբանությունն անհրաժեշտ է՝ հիմնավորելու քաղաքական անկախությունն ու ազգային-պետական ինքնիշխանությունն իբրև բարձրագույն արժեքներ, բացահայտելու միջքաղաքակրթական և տարածաշրջանային բախումների կանխման հնարավորությունը: Այս առումով արդիական հնչեղություն ունի XIX-XX դդ. հայ ականավոր մտածող Լևոն Շանթի փիլիսոփայական-քաղաքական հայեցակարգը:

Քաղաքակրթական բուն օրրանների պատմափիլիսոփայական հետազոտության հիման վրա Շանթը փաստարկում է ***քաղաքակրթության բազմակենտրոնության գաղափարը,*** որով հիմնավորում է տարբեր քաղաքակրթությունների փոխազդեցությունը: Ըստ նրա՝ «Մարդկային քաղաքակրթութիւնը ծայր է տըւած աշխարհիս զանազան անկիւններուն մէջ, բայց տեղի, դիրքի, կլիմայի եւ այլ աշխարհագրական-տնտեսական պատճառներով՝ բարդ ու բարձր զարգացման հասած է առաջին անգամ Ասիայի հողին վրայ, գլխաւորապէս չորս մեծ գետերու աւազանին մէջ, Եանցենկեանկ (Յանցզի.- Լ.Ս.), Գանգէս, Եփրատ եւ Նեղոս…»[1]: Չինաստանը և Հնդկաստանը նա դիտում է մեկուսի երկրներ: Առավել կարևորելով Միջագետքի ու Եգիպտոսի քաղաքակրթությունների մշակութային ներունակությունը՝ Շանթը հավաստում է. «…անոնց խառնուրդէն առաջացած ժառանգութեան վրայ է, որ հիմնըւած ու կառուցուած է մարդկային քաղաքակրթութեան արդի հոյակապ շէնքը»[2]: Մշակութային-քաղաքակրթական այս ժառանգությամբ է փաստարկում նաև եվրոպական-արևմտյան արդի քաղաքակրթության գոյությունը՝ եզրակացնելով. ***չկա զուտ, մաքուր եվրոպական քաղաքակրթություն*** և առանց ժառանգորդման՝ գոյություն կունենար միայն ասիական քաղաքակրթությունը:

Շանթը մեկնաբանում է ասիական ու եվրոպական քաղաքակրթությունները որոշարկող էական ատրիբուտները: ***Ասիան ցամաքային քաղաքակրթություն է,*** ինչով պայմանավորված են ասիական ժողովուրդների բնական ու հոգևոր կեցությունը, պետաիրավական համակարգերը, կառավարման կրոնապետական եղանակը: ***Կրոնական գործոնը*** գերակա է մշակութային-քաղաքակրթական գործընթացներում: Ըստ նրա՝ Ասիական քաղաքակրթության մեջ «…կրօնական կապն ու գիտակցութիւնը… շատ աւելի խոր է եւ ուժեղ, քան պետական ու ազգայինը…»[3]:

[1] Շանթ Լ., Անկախութիւնը պահանջ ազգային գոյութեան, Երկեր, Հ. Ե, Ընկերաբանական ու գրաբանական հարցեր, Պէյրութ, 2008, էջ 157:
[2] Նույնը:
[3] Նույն տեղում, էջ 159:

Եվրոպան, հակառակը, ***ծովային քաղաքակրթություն է,*** և «…ամբողջ եւրոպական ցամաքին վրայ զգալի է ծովուն շունչը, կարեւորութիւնն ու ազդեցությունը»[1]: Պատմականորեն այդ ազդեցությունը զգալի էր անտիկ քաղաք-պետություններում, Հին Հռոմում, եվրոպական երկրներում: Առավել «ծովային» Շանթը համարում է անգլոսաքսոնական ժողովրդին, որը մեծ դեր է ունեցել արևմտյան քաղաքակրթության կայացման գործում: Ծովային քաղաքակրթությունն առավել դինամիկ է, գործնական՝ հակված ***քաղաքական անկախության ու ժողովրդավարության*** սկզբունքներին:

Այնուհանդերձ՝ քաղաքակրթության երկու տիպերն էլ միանշանակ չեն: Հայ մտածողի համոզմամբ՝ «Եւրոպայի բոլոր մասերը հաւասարապէս եւրոպական չեն, ո՛չ ալ բոլոր դարերն ու բոլոր ժողովուրդները նոյն քաղաքակրթական արժէքը կը ներկայացընեն»[2]: Ասիական ժողովուրդները ևս տարբեր պատմաշրջաններում դրսևորվել են ասիականության տարբեր երանգներով, տեղական կամ ցեղային յուրակերպությամբ, բայց հիմնականում կրում են նույն քաղաքակրթության կնիքը:

Շանթը նշում է նաև ասիական ու եվրոպական քաղաքակրթությունների՝ որպես արմատական պահպանողականության և առաջադիմության, բռնակալության ու ժողովրդավարության մարմնացումների հակադրությունը: Այստեղից էլ՝ դարավոր թշնամանքը նրանց միջև ու պայքարը, որն ընթացել է քաղաքակրթություններից որևէ մեկի գերակայությամբ: Այս գերակայության պատմական հաջորդափոխությունը փիլիսոփան ներկայացանում է հետևյալ պատմաշրջաններով.

- ***Ասուրաբաբելական*** քաղաքակրթության 1000-ամյա հաղթարշավ, որին հաջորդել է պարսկական քաղաքակրթությունը:
- ***Հունահռոմեական*** հազարամյակ՝ արևմտյան ոգով, մշակույթի և պետականության նոր արժեհամակարգով, որը դարձավ Արևմուտքի քաղաքակրթական գերիշխանության հիմք: Շանթն այս

[1] Նույն տեղում, էջ 160:
[2] Նույն տեղում, էջ 162:

շրջանում նաև կարևորում է ***հելլենականության*** ու ***քրիստոնեության*** քաղաքակրթիչ դերը բազում ժողովուրդների կյանքում: Քրիստոնեությունը մեկնաբանելով որպես մերձավորարևելյան և հունահռոմեական կրոնական ըմբռնումների համադրություն՝ նա հաստատում է, որ այն «…իբրեւ բարոյական ու ընկերային իտէալ բոլորովին նոր թռիչք մըն է մարդկային մտքի ու զգացման, ծովու բերած քաղաքակրթութենէն ալ անդին անցնելու ոստնում մը»[1]: Այնուամենայնիվ՝ ժամանակի քաղաքական իրողություններն աղճատեցին արևմտյան ոգին, հունահռոմեական քաղաքակրթությունն անկում ապրեց:

- ***Մահմեդական*** հազարամյակ, որը սկզբնավորվեց Մերձավոր Ասիայում մահմեդականության ծավալմամբ, արաբական պետականության կայացմամբ ու զանազան ժողովուրդների աշխարհակալությամբ: Արաբական քաղաքակրթությունը ծաղկեց մշակույթի տարբեր ոլորտների բուռն զարգացմամբ: Ըստ Շանթի՝ այս շրջանում «Արեւելք ու Արեւմուտք գաղափարները կը նոյնանան «մահմետական» ու «քրիստոնեայ» բառերուն: Եւ կ'ըսկսի անհաշտ… կռիւը այդ երկուքին միջեւ…»: Նա նաև ընդհանրություն է տեսնում քրիստոնեության ու մահմեդականության միջև՝ քաղաքական հետևյալ ուշագրավ դիտարկմամբ. «…թէ՛ բիւզանդիոնը եւ թէ՛ պապականութիւնը… ինքնին իրենց ոգիով եւ ըմբռնումով դարձած են բոլորովին արեւելեան», և «Պապականութիւնը բուռն ձգտում մըն է նմանուելու արեւելքի խալիֆայութեան»[2]: Մահմեդական քաղաքակրթության անկման պատճառ դարձան թուրանական ցեղերը, որոնք, ոչինչ չավելացնելով այս քաղաքակրթությանը, տիրապետեցին արաբական ու պարսկական մշակույթին:
- ***Նոր քաղաքակրթական դարաշրջան***, որը նշանավորվեց XV դարում սկսված՝ Արևմուտքի զարթոնքով: Այն պայմանավորված էր ծովային նոր ուղիների ու երկրների բացահայտմամբ, գաղութային

[1] Նույն տեղում, էջ 164:
[2] Նույն տեղում, էջ 165:

քաղաքականությամբ, տնտեսության, առևտրի ու քաղաքական զարգացումներով: Ըստ Շանթի՝ վերածնվում էր արևմտյան ոգին, «…հին յունահռոմայեցին՝ հին եւրոպացի մարդը, միայն շա՛տ աւելի լայն հորիզոններով… բազմաթիւ ազգերու մասնակցութեամբ…»[1]: Արդյունքում արդիական դարձան ***պետական կառույցի ազատ ձևերը, ժողովրդավարական սկզբունքները, կրոնական ազատախոհությունը, մարդու արժանիքների անփոխ ըմբռնումն ու գործնական փիլիսոփայությունը:*** Այս նոր արժեհամակարգին Արևելքը դիմադրել չէր կարող:

Շանթի հայեցակարգում առկա է ***քաղաքակրթությունների փոխազդեցության*** ինքնատիպ փաստարկում: Ըստ նրա՝ որևէ քաղաքակրթության ծաղկման շրջանում պարտվող քաղաքակրթությունը միշտ ենթարկվում է գերակա քաղաքակրթության ըմբռնումներին, կառավարման ոգուն՝ կրելով նաև մշակութային ազդեցություններ: Ուստի՝ ինչպես մահմեդական քաղաքակրթության գերիշխանության ժամանակ Արևմուտքը կրեց արևելյան ոգու և մշակույթի ազդեցությունը, այնպես էլ «…մահմետական երկիրները՝ իրենց գոյութիւնը պահպանել կարողանալու համար գոնէ իբրեւ երկրորդական պետութիւններ, ստիպուած են փոխ առնելու Եւրոպայէն զէնքեր, մտքեր, հաստատութիւններ, պարլամենտներ ու տնտեսական ձեւեր՝ բոլորովին հակառակ իրենց էութեան ու հոգեբանութեան»[2]: Խոսքը բնավ ընդօրինակման մասին չէ: Իբրև օրինակ՝ նա նշում է ճապոնական ժողովրդին, որն առավել մոտ է ծովին, քանզի «…ան Եւրոպան է Ասիայի ամենաարեւելեան ծայրին»[3]:

Արևմտյան քաղաքակրթության հեռանկարը Շանթը միանշանակ չի կանխատեսում. ո՛չ ենթադրում է անկում, ո՛չ էլ աննախադեպ զարգացում: Պարզապես քաղաքական լավատեսությամբ նշում է, որ ***Արևմուտքը դեռևս չսպառված ներուժ ունի,*** որը կարող է բացահայտվել արևմտյան քաղաքակրթության տարբեր օրրաններում. «Երբ

[1] Նույն տեղում, էջ 167:
[2] Նույն տեղում, էջ 168:
[3] Նույնը:

յօգնի… Անգլօ-սաքսոն տարրը՝ ետեւը կեցած է Գերմանիան եւ Հիւսիսը… Իսկ Գերմաններուն ետեւը սլաւոն տարրը, ռուսները մասնաւորապէս, այնպէս որ դեռ շատ մեծ են եւրոպական մտքի ու ոգիի պահեստի ուժերը եւ պատմական հնարաւորութիւնները»[1]:

Շանթը մերժում է ***միակենտրոնությունը*** ոչ միայն միջքաղաքակրթական, այլև ներքաղաքակրթական հարաբերություններում: Նա չի բացառում նաև արևելյան ոգու գերիշխանությունը՝ որպես եվրոպական ոգու նահանջի հետևանք: Այս պարագայում հնարավոր է համարում Չինաստանի զարթոնքը՝ նորակոնֆուցիականության հիման վրա: Ու եթե դա տեղի ունենա, անհատականության ու ազատամտության միակ ուղին համարում է «…ճամբան՝ դէպի Ամերիկա, դէպի կղզիները»: Այդպիսով՝ ընդունելով ***բոլոր երկրների քաղաքակրթական ինքնությունն ու ազգերի անկախության իրավունքը***՝ նա շեշտում է «ծովային քաղաքակրթության» որակներն ու պատասխանատվությունը՝ աշխարհի ժողովուրդներին միավորելու գործում: Բայցև բնավ չի քարոզում արևմտյան քաղաքակրթության մենաշնորհի գաղափարը:

Քաղաքակրթությունների հիմքերը և ազգերի նույնականացման չափորոշիչները Շանթը փաստարկում է ***Ազգության գաղափարի*** հիման վրա: Նա վերլուծում է ազգագոյության ու ժողովուրդների տարորոշման ***բնապատմական գործոնները.***

- ***Ծագում, արյունակցական կապ և ցեղային փիպաբանություն.*** ընդունելով, որ ընտանիքը, ազգակցությունն առաջնային բնական կապն է մարդկանց միջև՝ Շանթը հաստատում է, որ մարդիկ իրենց ինքնությունը մեկնաբանում են ազգային նախահոր կերպարանքով: Ու թեև ոչ բոլոր ժողովուրդների անհատներն են կապված ցեղային ծագումով, այնուամենայնիվ՝ «…ցեղագրական իրեն յատուկ բաղադրութեամբ» է, որ մի ժողովուրդը տարբերվում է մյուսներից:
- ***Հայրենիք, աշխարհագրական գործոններ.*** սրանք կարևոր են ազգակազմության ու ազգագոյության համար: Բացի այդ,

[1] Նույնը:

«Ժողովուրդի մը մեծութեան ու անկման, ծաւալման ու կծկումին, յաջողութիւններուն ու ձախողանքին մայրը… իր ապրած երկրին դիրքն է ու վիճակը եւ այդ դիրքին զուգորդուող պատմական պայմանները»[1]: Բայց երբեմն նույն երկրում ապրում են տարբեր ժողովուրդներ, կամ նրանք բաժանվում են մի քանի պետության միջև: Հայրենիքի սահմանագիծը առաձգական է, և «…հայրենիքի մը բոլոր մասերը աշխարհագրական նոյնութիւն չեն ներկայացներ», ուրեմն՝ «ժողովուրդի մը զանազան մասերը ենթակայ չեն նոյն աշխարհագրական ազդակներուն»[2]: Արժևորելով աշխարհագրական գործոնների ազդեցությունը ժողովուրդների վրա՝ Շանթը եզրակացնում է, որ հայրենիքը չէ ազգերին տարանջատող ու ժողովրդի տարբեր մասերը միավորող հիմնապայմանը:

- ***Պատմություն,*** որի դերն առավել կարևոր է ժողովրդի լինելիության համար: Որևէ ազգի անցյալը միայն իրենն է, որով նա զատվում է այլ ազգերից: Բայց, ինչպես նշում է մտածողը, պատմությունը կարևորություն ունի միայն իմացողների համար: Ուրեմն՝ «Ո՛չ ծագումը, ո՛չ հայրենիքը, ո՛չ ֆիզիքական ու հոգեկան կազմը, ո՛չ ալ անցեալը» բաւարար չեն «…ընդգրկելու ամբողջ ժողովուրդ մը ինքն իր մէջ»[3]:

Բնապատմական այս գործոնները Շանթի հայեցակարգում արժևորվում են որպես ժողովրդի գոյացման, կերպավորման, ազգային հատկորոշման ու զարգացման հիմնարար պայմաններ, որոնց ազդեցությամբ ձևավորվում են ***մշակութային-քաղաքակրթական գործոնները:*** Դրանք են.

- ***Սովորույթներ, ավանդույթներ***, որոնք ներգործում են ազգային հոգեբանության վրա. «Ամէն ժողովո՛ւրդ, ամէն ազգ… ունի իր ուրոյն ու ինքնատիպ ազգային գունաւորումը ապրուստի, աշխատանքի,

[1] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան (Ժխտում մեր շուրջի ապազգային քարոզչութեան), Պէյրութ, 1979, էջ 23:
[2] Նույն տեղում, էջ 25:
[3] Նույն տեղում, էջ 28:

բարքի ու կենցաղի»[1]: Սակայն հայտնի է, որ քաղաքակրթությամբ մոտ ժողովուրդները (օրինակ՝ եվրոպացիները կամ ասիացիները) ունեն նույնատիպ բարքեր, որոնք չեն հատկանշում ազգային ողջ ինքնությունը:

- ***Լեզու.*** այն բխում է ժողովրդի հոգևոր կերտվածքից, ազգային հոգեբանության խորքերից: Լեզուն կապված է ազգի մտածողության, դատողունակության, բնավորության հետ: Այն մեծ դեր ունի պաշտամունքային, գիտակրթական, մշակութային, վարչակառավարման և այլ գործընթացներում՝ լինելով պետական արժեք: Բայցև լեզուն չէ ժողովուրդներին տարբերող հիմնական գործոնը:
- ***Կրոն,*** որն առնչվում է ժողովուրդների քաղաքական, բարոյահիրավական կեցությանը: Շանթը հատկանշում է ***ազգային եկեղեցիների ինքնությունը.*** «…ամէն ժողովուրդ ունի իր յատուկ աստուածը, իր յատուկ եկեղեցին, իր յատուկ դաւանանքն ու եկեղեցական կազմը»[2]: Դրա ապացույցը բուդդայական, մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների ոչ միակերպությունն է՝ թե՛ ***միջկրոնական,*** թե՛ ***ներկրոնական*** (դավանական) իմաստով. «Նոյն ընդհանուր սկզբունքներն ու պաշտամունքը ամէն ժողովուրդ իր հոգիին, իր պատմութեան ու իր պայմաններուն համեմատ կը ձեւակերպէ»[3]: Օրինակ՝ կաթոլիկությունը տարբեր է ֆրանսիացու, իսպանացու ու լեհի համար, ինչպես բողոքականությունը՝ պրուսական, անգլիական կամ գերմանական տարբերակով: Ուղղափառ ժողովուրդները ևս նույնական չեն: Այդպիսով՝ Շանթը կրոնը չի համարում ժողովուրդներին տարորոշող միակ գործոնը, մանավանդ որ՝ երբեմն նույն ազգի առանձին հատվածներ տարբեր դավանության են պատկանում, ինչպես հայերը՝ լինելով հայադավան, հունադավան, կաթոլիկ:

[1] Շանթ Լ., Անհաւասարութիւնը ընկերային կեանքին մէջ (Ընդգծում մը իրականութեան), Երկեր, Հ. Ե, Պէյրութ, էջ 85:
[2] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 33:
[3] Նույն տեղում, էջ 34:

- ***Պետություն.*** պետության կառույցի ու կառավարման ձևերը, վարչաիրավական մարմինները համապատասխան են ժողովուրդների քաղաքակրթության աստիճանին: Շանթի դիտարկմամբ՝ «…ինչքա՛ն քաղաքակրթութիւնը բարձր այնքան շա՛տ եւ այնքան խո՛ր են նաեւ տարբերութիւններն ու անհաւասարութիւնը»[1]: Նա ընդունում է նաև պետաիրավական համակարգերի փոխառման փաստը՝ միաժամանակ հաստատելով, որ ***պետական կառույցի միևնույն ձևը տարբեր ժողովուրդների մոտ դրսևորվում է յուրովի,*** հատկապես՝ հասարակության քաղաքական կազմակերպման, պետական ապարատի ձևավորման և իշխանության իրացման ժամանակ. «Ամէն ժողովուրդ իր ցեղին, իր տեղին, իր պատմութեանն ու իր կազմին համեմատ կը ձեւէ իր պետութիւնը, կամ կը յարմարցնէ իր կազմին…»[2]: Ըստ Շանթի՝ պետությունը ժողովրդի ամենատեսանելի արտաքին ամբողջությունն է: Ու եթե նա միավորված է մեկ պետության մեջ, վերջինս դառնում է ժողովրդին առանձնացնող ու ներկայացնող սուբյեկտ: Բայց կան նաև ***«արհեստական»*** պետություններ՝ բազմաթիվ ցեղերի ու ազգերի հպատակությամբ: Եվ այս դեպքում «…պետութիւնը չի կրնար ժողովուրդ մը անձնաւորել, չի կրնար ժողովուրդ մը զատել ու ամբողջացնել»[3]:
- ***Մշակույթ.*** մշակութային ստեղծագործությունները ազգային հոգևոր ներունակությունը, գաղափարներն ու հույզերը արտահայտելու միջոց են, որոնք միավորում են ժողովրդին և ներդրվում «մարդկության մտատաճարին մէջ», բայց դրանք նույնպես տարբերակիչ միակ գործոնը չեն:

Այդպիսով՝ Շանթի հայեցակետով՝ ժողովուրդներին հատկորոշող թե՛ բնական, թե՛ մշակութային գործոններից որևէ մեկն ***առանձնակի*** չի կարող «…բացարձակ սկզբունք մը դառնալ ժողովուրդ մը միւսներէն անջատելու եւ իրմով ընդգրկելու ժողովուրդի մը բոլոր

[1] Շանթ Լ., Անհաւասարութիւնը ընկերային կեանքին մէջ, էջ 70:
[2] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 31:
[3] Նույն տեղում, էջ 32: «Բնական» և «արհեստական» պետությունների վերաբերյալ տես՝ Սարվազյան Լ., «Մաղաքիա Օրմանյան» (Ազգային-փիլիսոփայական հայեցակարգը), Եր., 2013, էջ 86-89:

մասերն ու անհատները, իբրեւ ուրոյն ամբողջութիւն մը»[1]: Ըստ նրա՝ որոշ գաղափարախոսներ այս բացարձակ սկզբունքի «պակասը» դիտել են ժողովուրդների՝ իբրև ազգային առանձին հանրույթների ժխտման հիմք: Նրանց կարծիքով՝ գոյություն ունեն միայն մարդկային որոշակի խմբեր, որոնք ծագումով կապված են մարդկային մի ընդհանրության հետ, լեզվով՝ էթնիկ ուրիշ խմբերի, իսկ պետությամբ՝ այլ ազգերի հետ: Ուստի՝ անհնար է ամրագրել ժողովուրդներին տարբերակող մեկ սկզբունք:

Առարկելով այս տեսակետին՝ Շանթը հիմնվում է տրամաբանության պարզ կանոնի վրա, այն է՝ որևէ հասկացություն սահմանելիս անհրաժեշտ է բացահայտել սահմանվող առարկայի էական հատկանիշները: Օրինակ՝ ***«ժողովուրդ»*** հասկացությունը նա սահմանում է հետևյալ կերպ. որոշակի ցեղային ծագում ունեցող, աշխարհագրական որոշակի միջավայրում ապրող, պատմական անցյալ ու ներկա ունեցող, որոշակի հոգեկերտվածք, բարքեր, ավանդույթներ, կրոն ու պետական կառույց ունեցող, ինքնատիպ մշակույթի ժառանգորդ եղող ժողովուրդը «…բոլորովին տարբեր եւ ուրոյն էութիւն մըն է իր նման ուրիշ էութիւններու հանդէպ»[2]: Այդպիսով՝ ժողովրդի անհատականությունը բացահայտվում է միայն բնական ու մշակութային-քաղաքակրթական ներունակությունների համադրությամբ:

Շանթն անհատականությունը մեկնաբանում է «***ազգություն***» հասկացությամբ. «Ժողովուրդներու անհատականութիւնը կ’անուանենք ազգութիւն», քանզի «Ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդներէն զատողն ու առանձնացնողը իր ազգութիւնն է եւ ժողովուրդի մը մասերն ու անհատները իրարու կապողը՝ իր ազգային գծերը»[3]: Հետևաբար՝ ***ազգությունն է ժողովուրդներին նույնականացնող, հատկորոշող հիմնարար սկզբունքը,*** որը պայմանավորում-համադրում է մյուս գործոնները:

[1] Շանթ Լ., նշվ. աշխ., էջ 40-41:
[2] Նույն տեղում, էջ 42:
[3] Նույն տեղում, էջ 43:

Շանթի հայեցակարգում ինքնատիպ է այն գաղափարը, որ ***քաղաքակրթության զարգացմամբ բյուրեղանում է ազգային անհատականությունը:*** Նա ելնում է իր իսկ կանխադրույթից, որ «…մարդկութիւն ըսուածը… ո՛չ թէ իրարու նման ու հաւասար, ողորմ ու կլորիկ հոգիներու կանոնաւոր շարան մըն է», այլ «…կենդանի անտառ մըն է, անթիւ գոյներով, անհուն ձեւերով… անվերջ հիւթերով, ուր կ'աճի, կ'ապրի… ամէն մէկը իր կեանքով… ի՛ր համար, եւ ամենքը իրարու համար»[1]: Եթե մարդն ունի անհատականություն, նրա ըմբռնումները, ձգտումները կրում են ինքնության կնիքը, և նա առավել գնահատում է իր ***Ես-ի անկախությունը:*** Համանմանորեն՝ որքան ցածր է քաղաքակրթության աստիճանը, այնքան նվազ նկատելի է ժողովրդի յուրակերպությունը: Իսկ քաղաքակրթության զարգացմամբ՝ «…կը շեշտըւին տարբերութիւնները… ճիւղաւորումները. ամէն մէկուն մասնաւոր հակումներն ու մասնաւոր զարգացումը. իր ձեւի լեզու… նոր ձեւի ըմբռնում, իր տեսակի կրօն, այլ տեսակի պետական կազմ, նոր տեսակի ժողովուրդ»[2]: Նախկին «համայնական եսի» զգացումը վերածվում է ***ազգային գիտակցության,*** ինչի արդյունքում ***ազգային ինքնությունն արժևորվում է որպես ազգի անհատականության անկախություն:***

Ըստ Շանթի՝ մերժելի են այն տեսակետները, որոնց համաձայն՝ ազգայինն ու ազգերը անհետանում են քաղաքակրթական շարժընթացում: Ճիշտ հակառակը՝ «քաղաքակրթուիլը… ամենէն հիմնական պայմանն է ազգութիւններու զարգացման, ազգային գծերու ուժեղացման… ու իր ուրոյնութեան գնահատումին»[3]: Ժողովուրդներն այն չափով են արժևորվում, որքանով հատկորոշված են նրանց ազգային ինքնությունը, մշակութային կենսունակությունը, ինքնակազմակերպվելու կամքը:

Քաղաքակրթության սուբյեկտը ազգերն են, քանզի «***Ազգի մը բոլոր օրգանները քաղաքակրթական օրգաններն են. և ազգը ինքը***

[1] Շանթ Լ., Անհաւասարութիւնը ընկերային կեանքին մէջ, էջ 88:
[2] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 49:
[3] Նույն տեղում, էջ 50-51:

քաղաքակրթութիւնը արտադրող օրգանիզմ է (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]: Շանթը մեկնաբանում է ***«ազգ»*** հասկացությունը. «Ազգը պարզ հաւաքածու մը չէ նոյնացեղ անհատներու, այլ այդ անհատներու կապակցումէն կազմուած եւ աւելի բարդ, աւելի բարձր տեսակի ուրոյն ու ամբողջական մարմին մը… իրեն յատուկ կազմով, նոր երեւոյթներով, նոր ոյժերով, նոր հետեւանքներով»[2]: Իսկ «Քաղաքակրթութիւնը այն վիճակն է, որուն հասած է ազգ-օրգանիզմը»[3]: Ազգերը կազմավորվել են բնապատմական անհրաժեշտությամբ, ուստի՝ հնարավոր չէ կամայականորեն փոխել, ձուլել կամ ոչնչացնել նրանց:

Ուշագրավ է ***ազգ-պետություն*** հարաբերակցության Շանթի փաստարկումը: Առանց վերապահումի՝ նա հաստատում է, որ «…***ազգութիւնը աւելի լայն շրջանակ է, քան պետութիւնը»:*** Իրոք, խնդիրը պատմականության սկզբունքով քննելիս ակնհայտ է դառնում, որ ազգն ավելի հին կատեգորիա է, քան հասարակությունը, պետությունը կամ քաղաքակրթությունը: ***Ազգերը մարդկության բնական նախասկզբնական տեսակներն են:*** Նրանք ձևավորում են քաղաքական ու վարչատնտեսական ուրույն համակարգեր: Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց, մանր իշխանապետությունները միավորվում են՝ կազմելով «…մէկ տնտեսական-վարչական ամբողջութիւն մը, մէկ կեդրոնով, որ ընդգրկէ… ամբողջ ազգը, այսինքն՝ դառնայ ազգային պետութիւն»[4]: Փաստորեն՝ Շանթը նկատի ունի ***բնական պետությունը,*** որը կատարում է ազգին համախմբող քաղաքական գործառույթ: Սակայն իրավիճակն այլ է տիրապետության պարագայում, երբ տիրող ու հպատակ ժողովուրդների միջև իրավահավասարության բացակայության հետևանքով ստեղծվում է պետության նոր տիպ՝ ***արհեստական պետություն:*** Նա նշում է տիրապետության երեք ձև.

[1] Նույն տեղում, էջ 69:
[2] Նույն տեղում, էջ 64:
[3] Նույն տեղում, էջ 69:
[4] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 86:

➢ ***Հարկային տիրապետություն***՝ տիրողի գերիշխանությամբ ու հպատակի ազգային ինքնիշխանության որոշակի աստիճանի պահպանմամբ:

➢ ***Լրիվ տիրապետություն,*** երբ գրավված երկիրը բռնակցվում է տիրող պետությանը՝ ենթարկվելով նրա իրավաքաղաքական համակարգին: Այս դեպքում հպատակը կորցնում է պետականությունը, բայց ո՛չ ազգությունը:

➢ ***Ցեղասպանություն,*** երբ զանգվածային կոտորածներով փորձում են հայրենազրկել և ոչնչացնել ազգերին, նրանց մշակույթն ու քաղաքակրթությունը:

Ըստ Շանթի՝ երբ գերիշխան պետությունը հպատակներին թույլ է տալիս պահպանել իրենց ազգային քաղաքակրթության տարրերը, մշտապես վախենում է, որ դրանք կհանգեցնեն քաղաքական անկախության և ինքնիշխանության: Կարող ենք եզրակացնել, որ ***ազգային քաղաքակրթական արժեհամակարգը հպատակ ազգի անկախության և պետական ինքնիշխանության վերականգնման հիմքն է:***

Մտածողի դիտարկմամբ՝ «Տիրապետութիւնը ըստ իր էութեան թշնամի է միշտ տիրուած ազգերուն եւ ընդհանրապէս «ազգ» գաղափարին. անիկա առաջ կը քշէ «պետութիւն» գաղափարը»[1]: Տիրող կառավարությունը կարևորում է պետական՝ իր երկրի լեզուն, կրոնը, մշակույթը՝ հպատակներին ստիպելով նույնականանալ այդ օտար քաղաքակրթական արժեքներով, իսկ դրանց բացակայության պարագայում ուղղակի ոչնչացնում է հպատակների մշակույթը՝ ձգտելով ձուլել նրանց: Ակնհայտ է, որ պետության գաղափարը շահարկվում է՝ հանուն գերիշխան երկրի ազգության, քաղաքակրթության ու մշակույթի գերակայության: Հետևաբար, ըստ Շանթի, ***բռնակալության օրոք է միայն, որ պետության գաղափարն առաջնային է ազգի գաղափարից:*** Ու այս դեպքում դրսևորվում է «…ազգերու անհատականութիւնը (ինքնությունը.- Լ.Ս.) ճզմելու եւ ոչնչացընելու երեւոյթը, ինչպէս եւ ազգային գաղափարի արհամարհանքը, թէեւ այդ բոլորը կը

[1] Նույն տեղում, էջ 88:

կատարուի տիրապետող ազգի թիւը, դիրքը եւ քաղաքակրթութիւնը բարձրացնելու ու տարածելու նպատակով, այսինքն՝ վերջ ի վերջո նորէ՛ն ազգային գաղափարի յաղթանակին համար»[1]:

Քննարկվող խնդրին առնչվում է ***ինքնիշխանության հիմնահարցը,*** որը Շանթի հայեցակարգում փաստարկվում է ազգային, պետական և քաղաքակրթական հարթություններում: Ըստ նրա՝ անկախ ժողովուրդը «…ինքը պիտի ըլլայ իր երկրին, իր կառավարութեան, իր քաղաքակրթութեան, իր տնտեսութեան տէրը, տնօրինողն ու վարողը. ընկերային ամէն երեւոյթի հիմքը ժողովուրդն է, եւ ինչ որ կատարուի՝ պէտք է կատարուի ժողովուրդի կամքով ու ժողովուրդի համար»[2]: Նա հենց ***ժողովրդի գերիշխանության*** («սիւզերէնիտէի») գաղափարն է համարում XIX դարի քաղաքական ու մշակութային շարժումների գլխավոր լծակը: Բոլոր հեղափոխությունները դիտում է որպես այդ գաղափարի ծնունդ, նույնիսկ Արևելքում՝ հակառակ այն կարծիքների, թե ժողովրդավարական գաղափարները խորթ են արևելյան ըմբռնումներին:

Ժողովրդի գերիշխանության գաղափարի իրացման արդյունքն են ***պառլամենտական կառավարումը, ներկայացուցչական համակարգը, հանրապետությունները*** և այլն: Շանթի համոզմամբ՝ «Այդ գաղափարի մէկ անխուսափելի եզրակացութիւնն է նաեւ հպատակ ու տիրուած ազգերու ***անկախութեան պահանջը.*** եւ այդ պահանջի գործադրութիւնն է վերջին մէկ ու կէս դարու ազատական կռիւներուն շարքը»[3]: Նա արժևորում է այն երկրների (հատկապես՝ Անգլիայի) խոհեմ քաղաքականությունը, որոնք ինքնին ստանձնում են անկախության, ինքնիշխանության սկզբունքների գործադրությունը՝ կայսերական կառավարությունը փոխակերպելով կամ դաշնային կառավարման: Այս համատեքստում նա հիշատակում է նաև Խորհրդային պետությունը, որն անվանում է «կեղծ դաշնութիւն»:

[1] Նույն տեղում, էջ 90:
[2] Նույնը:
[3] Նույն տեղում, էջ 91:

Շանթը քաղաքական լավատեսությամբ կանխատեսում է, որ մարդկային քաղաքակրթությունը կարող է դատապարտել ցանկացած տիրապետություն, ինչպես անցյալում մերժեց մարդու ստրկությունը: Ըստ նրա՝ «…արդէն հասունցած ըմբռնում մըն է եւ վաղուան իրականութիւնը, թէ ***ամէն ազգ իրաւունք ունի եւ պէտք է ունենայ իր անկախ գոյութիւնը, իրաւապէս հաւասար միւսներուն,*** ինչքան ալ որ փոքր ըլլայ. բաւական է, որ հասած ըլլայ որոշ հասունութեան աստիճանի (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]: ***«Ամէն ազգ իր պետութիւնը»*** կարգախոսը համարժեք է ***արդարության*** սկզբունքին: Այն դարերով եղել է բոլոր ժողովուրդների բնական ձգտումը, իսկ ներկայում դարձել իրավական գիտակցություն ու քաղաքական պահանջ: Ազգի և պետության հարաբերակցությունը համակարգվում է Շանթի հետևյալ եզրակացություններում.

1. Երբեք չի եղել որևէ պետություն, որ ազգություն չունենա. «…ամէն պետութիւն… ջանացեր է ամրացնել ու տարածել իր սեփական քաղաքակրթութիւնը»[2], չհանդուրժելով ազգային այլ քաղաքակրթության գոյությունը իր պետական սահմաններում: Իսկ հպատակ ազգի գլխավոր խնդիրն իր ազգային ինքնությունն ու քաղաքակրթական անհատականությունը պահպանելն է:

2. Բնապատմական պայմաններում պետությունը «…ազգութեան մը մէկ գործարան է միայն… տեսակ մը ընկերային ջղային սիստեմ ու ջղային կեդրոն»: Եթե հասարակության զարգացման վաղ շրջաններում վարչաքաղաքական մարմինները բազմաթիվ են, ապա «…քաղաքակրթութեան զարգացման հետ կը ձգտին միանալու եւ կազմելու մէկ կէդրոն, մէկ իշխանութիւն, ազգային պետութիւն»[3]:

3. Տիրապետության հետևանքով ազգերը կորցնում են պետական կառույցները, բայց քաղաքակրթական գործընթացը հանգեցնում է ինքնորոշման սկզբունքի, ազգերի ինքնակառավարման իրավունքի և քաղաքական անկախության վերականգնման:

[1] Նույն տեղում, էջ 94
[2] Նույն տեղում, էջ 95:
[3] Նույն տեղում, էջ 95-96:

Շանթի հավաստմամբ՝ իդեալական է քաղաքակրթական այն մոդելը, ըստ որի՝ «Ամէն ազգ միայն մէկ պետութիւն ունի, եւ ամէն պետութիւն կը ծառայէ միայն մէկ ազգի, երբ մարդկութիւնը պիտի ճանչնայ միայն ազգ-պետութիւնը»[1]: Իհարկե այս մոդելը տարբերվում է ազգ-պետության ***եվրոպական*** ըմբռնումներից, որոնցում անտեսվում է ազգային գործոնը, և ազգերի ծագումը՝ դիտվում իբրև նորագույն ժամանակների սոցիալ-տնտեսական զարգացումների արդյունք[2]: Պետականության լինելիությունը պայմանավորելով ազգային ամբողջականությամբ ու միասնությամբ՝ նա հաստատում է. «Ամեն ազգ ինքն է տէրը եւ պէտք է ընտրէ ինչպէս իր ներքին կառավարութեան եղանակը, այնպէս ալ իր պետական արտաքին վիճակը»[3]:

Շանթը չի ընդունում ***աշխարհաքաղաքացիության*** գաղափարը՝ մերժելով «Ամբողջ աշխարհը իմ հայրենիքն է, ողջ մարդկությունը՝ իմ ցեղը» կարգախոսը: Ըստ նրա՝ ժողովուրդների քաղաքականությունը և նրանց փոխհարաբերությունները հիմնված են ***ազգային անկախության*** գաղափարի վրա: Եթե նախորդ դարերում կարևորվում էին թագավորական տան իրավունքները, այժմ ***անկախ ազգի ինքնիշխանության գաղափարն*** ընկալվում է որպես ***քաղաքակրթության զարգացման գործոն:*** Իսկ բռնակալությունը, ժողովուրդների ստրկացումը, ապազգայնացումը «…կը նկատուին… իբրեւ արգելք քաղաքակրթութեան զարգացման եւ իբրեւ անբարոյական երեւոյթ»: Դրանից բխում են «…բռնի կերպով միացուած ազգութիւններու անջատման հարցը. եւ նոյն ազգութեան բռնի կերպով բաժնուած մասերը միացնելու պահանջը, որով հետզհետէ պատմութիւնն ու իրականութիւնը կը բռնեն ազգային ճամբան»[4]: Այդպիսով՝ քաղաքակրթական շարժընթացը դրսևորվում է 2 միտումով. մի կողմից՝ ***պետությունների մանրացում և***

[1] Նույն տեղում, էջ 96-97:

[2] Հիմնահարցի վերաբերյալ եվրոպական տեսությունները տես՝ Нация и национализм (Перевод с англ.). М., 2002, с. 26-51, 121-145, 236-263, 332-346, 364-380. Хюбнер К., Нация: от забвения к возрождению. М., 2001, с. 22-35, 135-152.

[3] Շանթ Լ., Անկախութիւնը պահանջ ազգային գոյութեան, էջ 171:

[4] Նույնը:

ազատ ու անկախ ազգերի ձևավորում, մյուս կողմից՝ ***նորանկախ պետությունների միջազգային հարաբերությունների հաստատում:***

Ազգերի քաղաքական շփումը հնուց ի վեր հանգեցրել է միջազգային կազմակերպության գաղափարին՝ սահմանափակելու հզոր պետությունների ռազմատենչությունն ու ծավալապաշտությունը և իրավական հարթության վրա կարգավորելու միջազգային հարաբերությունները: Այդպիսի դեր էին ստանձնել Լահեյի Խորհրդաժողովը և Ազգերի լիգան, թեև նրանց գործունեությունը թերի էր: Միջազգային քաղաքականությունը պետք է միտված լինի ոչ թե ազգերի բնաջնջմանը, այլ նրանց համագործակցությանը: Շանթի հավաստմամբ՝ միջազգային համերաշխության հիմքը պետությունները չեն, այլ ***«Ազգե՛րն են, որ եղա՛ծ են եւ ե՛ն բնական հիմքը մարդկային խումբերու եւ միութեան. այդպէս ալ ազգե՛րն են, որ կամաց-կամաց պիտի դառնան հիմնական միաւորները համամարդկային կապակցութեան ու դաշնակցութեան*** (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]:

Շանթն անհավանական է համարում այն ենթադրությունը, թե աշխարհում կարող է լինել «իդեալական միություն», այսինքն՝ մեկ ազգ, մեկ պետություն, մեկ քաղաքակրթություն: Ուստի՝ միախառն, չտարբերակված, միակամ մարդկության գաղափարը, նրա համոզմամբ, «…աւելի կրօնական պէտք մըն է, քան քաղաքական ու քաղաքացիական»[2]: Այս համատեքստում նա քննադատում է թե՛ անարխիզմը, թե՛ պոզիտիվիզմը, թե՛ մարքսիզմը. «… սոցիալիզմը իր էութեամբ բարեկամ չէ մնար ազգերու, մանր գոյութեան ու մանր անկախութիւններու, անիկա «մեծ» ցեղերու ու «մեծ» ժողովուրդներու կողմնակիցն է…»[3]:

Ազգի՝ որպես քաղաքակրթության բնական-կեցութային հիմքի Շանթի կանխադրույթը հիմնված է փիլիսոփայական փաստարկման վրա: Հասարակական կյանքը հակակշիռների միասնություն է: Մի կողմից այն հակված է նմանություն առաջացնել իր բաղադրիչների մեջ,

[1] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 118:
[2] Նույն տեղում, էջ 120:
[3] Շանթ Լ., Մտաւորականութիւն եւ կուսակցութիւն (Այսինքն՝ ժողովրդավար երկիրներու հանրային ղեկավարութիւնը), Երկեր, Հ. Ե, Պէյրութ, 2008, էջ 145:

ինչի հետևանքով բազմանում են ազգերին կապող ընդհանուր հատկանիշները, մյուս կողմից՝ «…ինչքան ազգի մը քաղաքակրթութիւնը բարդանայ, այնքան աւելի շատ եւ աւելի ուժեղ կը դառնան անոնց առանձնայատուկ նրբութիւնները… Մէկ կողմէն՝ հաւասարեցում, միւս կողմէն՝ ***անհատականացում***. մէկ կողմէն՝ կեդրոնաձիգ, դէպի նոյնութիւնը… ձգտող ջանքեր. միւս կողմէն՝ ***կեդրոնախոյս, դէպի տարբերութիւն, բազմազանութիւն, ուրոյնութիւն*** (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]:

Այդպիսով՝ ազգերի պատմաքաղաքական հեռանկարի վերաբերյալ Շանթն ունի ուշագրավ հայեցակետ, ըստ որի՝ «Մարդկութեան եւ քաղաքակրթութեան զարգացումը մեզի կը տանի դէպի աւելի ապակեդրոնացում, դէպի փոքր ազգութիւնները, ի հարկէ ընդհանուր դաշնակցութեամբ»[2]:

Շանթի հայեցակարգում ուրույն տեղ ունի ***հայկական քաղաքակրթության ինքնության*** հիմնախնդիրը: Հայաստանը դիտարկելով Արևելքի և Արևմուտքի բեկման սահմաններում տեղակայված երկիր՝ նա մեկնաբանում է հայ ազգի նույնականացման չափորոշիչները: Ըստ նրա՝ ***ազգությունը հայության առաջանային ու գլխավոր հատկորոշիչն է այլ ազգերից:*** Մյուս կարևոր գործոնը ***քրիստոնեության ընդունումն ու ազգայնացումն է,*** ինչը հիմնովին փոխեց հայոց քաղաքական ու քաղաքակրթական դիրքը՝ նրանց առավել հարաբերակցելով Արևմուտքի հետ: Հայերը նախկինում ևս կապված էին արևմտյան, հատկապես՝ Անտիկ քաղաքակրթության հետ, բայց, Շանթի կարծիքով, «…իրենց արեան կէսը ըլլալով ***ուրարտական***… վարք ու բարքով, ըմբռնումներով, ոգիով ու հակումներով կապուած էին Արեւելքին. Արեւելքի ժողովուրդ էին»[3]: Ի վերջո՝ ***ազգային մշակույթը համադրական է,*** ինչն էական ազդեցություն է ունեցել քաղաքակրթական զարգացումների վրա:

Շանթը քննադատում է արևելյան քաղաքականությանը հատուկ կրոնական անհանդուժողությունը՝ այն բնորոշելով որպես ազգային

[1] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, էջ 123:
[2] Նույն տեղում, էջ 124:
[3] Շանթ Լ., Անկախութիւնը պահանջ ազգային գոյութեան, էջ 180:

ինքնության ու անկախության դեմ կռիվ: Դրանով իսկ «…ազգ, կրօն ու անկախութիւն միշտ սերտ կապուած են իրարու. եւ իր կրօնին փարիլը կը դառնայ զէնք մը, միջոց մը իր ազգային անհատականութիւնը պաշտպանելու, իր պետական ազատութիւնը պահպանելու»[1]:

Մտածողը գնահատում է ***Տրդատ III-ի*** իրականացրած կրոնական հեղաշրջումը՝ այն մեկնաբանելով որպես ***խոհեմ քաղաքականություն՝ հանուն անկախության ու պետականության ամրապնդման:*** Կրոնական ինքնության շնորհիվ հայությունը փրկվեց օտար ցեղերի հետ ձուլումից, ինչը տեղի կունենար կրոնափոխության ու խառն ամուսնությունների հետևանքով: Հակառակ պարագայում՝ «Հայ ուրոյնութիւնը մեռած կ'ըլլար վաղուց. դառնալով թուրքի, թաթարի, մոնղոլի, օսմանցիի ու ատրպէյջանցիներու հոգին ու քաղաքակրթութիւնը ազնըւացնող տարր մը: Ինչպէս եւ եղած է մասամբ»: ***Հայադավանության՝ որպես հոգևոր ու քաղաքական անկախության պաշտպանի դերը*** նա կարևորում է նաև քրիստոնյա պետությունների դեմ պայքարում: Հայտնի է նրանց ձգտումները՝ զրկելու Հայ եկեղեցուն ինքնիշխանությունից և «…իրենց քաղաքական ու քաղաքակրթական տոպրակին մէջ կոխելու համար հայութիւնը»[2]: Հարկ է նշել, որ կրոնական գործոնի դերը էական նշանակություն է ունեցել նաև այն պատճառով, որ ***Հայ եկեղեցին ծառայել է միայն մեկ ազգի՝*** իր կառույցներում չընդունելով այլազգիների ու այլադավանների:

Ըստ Շանթի՝ հայության քաղաքակրթական ներունակությունների է ***արտաքին և ներքին պետականության գոյությունը հայոց աշխարհում:*** Արտաքին անկախությունը միշտ երերուն է եղել՝ պայմանավորված հայերի անկախ, կիսանկախ կամ լրիվ հպատակության կարգավիճակներով: Փոխարենը նրանք միշտ ունեցել են ***«…կուռ ու ամուր ներքին պետականութիւն մը:*** Այդ ներքին պետական կազմի հիմքը մեր նախարարներն են, իսկական իշխողները, իսկական տէրը

[1] Նույն տեղում, էջ 181:
[2] Նույն տեղում, էջ 182:

իրենց հողին եւ հողի վրայի մարդուն (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]: ***Նախարարական ազնվականությունը*** մինչև XIX դար պահպանեց ազգային անկախության քաղաքական հիմքերը՝ ինքնիշխանության որոշակի դրսևորումներով: Ազգային կյանքում մեծ դեր է կատարել նաև ***հոգևորականությունը,*** որը, ըստ Շանթի, նոր տեսակի իշխանություն է և մտավորական ազնվականություն՝ կրոնափիլիսոփայական բարձր արժեհամակարգով: Հոգևոր ազնվականությունը «…եղած է երկրորդ կարեւոր գործօնը մեր ժողովուրդի բաղդը եւ քաղաքականութիւնը վարող՝ կից մեր աշխարհիկ ազնըւականութեան մինչեւ թուրանական դարերը»[2]: Թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր գործիչները ձգտում էին վերականգնել հայոց անկախությունը՝ երազելով ազատ քաղաքակրթության մասին:

Շանթը տարբերակում է ***ժողովրդավարական սկզբունքի*** գործադրման երկու՝ ներքին և արտաքին մակարդակները: ***Ներազգային*** կյանքում նա կարևորում է ժողովրդի ինքնիշխանությունը, պառլամենտական կառավարումը, ներկայացուցչական սկզբունքով ընտրական համակարգը, քաղաքացիական ազատությունները և այլն. «Ժողովուրդն է… Երկրին տէրը, եւ տնտեսական ու քաղաքական կեանքին վերին տնօրինողը պէտք է ըլլայ ժողովուրդը: Ամեն օրէնք, կարգադրութիւն ու ձեռնարկ պէտք է կատարուի ժողովուրդի բարօրութեանն ու զարգացմանը համար»[3]:

Ժողովրդավարական սկզբունքի ***արտաքին*** դրսևորումը քաղաքագետը համարում է ***ազգային անկախության հարցը,*** ազգային-ազատագրական պայքարը: Այս գաղափարը Շանթի հայեցակարգում փաստարկվում է որպես ***«քաղաքակրթութեան բացարձակ պահանջ»,*** որը շատ հարազատ է հայ ժողովրդին: Ի դեպ՝ եվրոպական (արևմտյան) արժեքներին հայ ազգի հակվելը համազոր է եղել ազգային անկախության գաղափարի պաշտպանությանը: Հպատակությունը սպառնալիք է

[1] Նույն տեղում, էջ 184:
[2] Նույն տեղում, էջ 186:
[3] Նույն տեղում, էջ 189:

ոչ միայն ազգային, այլև քաղաքակրթական ինքնությանը: Ժողովուրդների հոգեվարքը սկսվում է այն ժամանակ, երբ նա դադարում է ձգտել անկախության:

Այդպիսով՝ ազգի քաղաքակրթական կենսունակությունը դրսևորվում է անկախ պետականության լինելիությամբ: Պետականությունը ազգի գոյության հիմնապայմանը չէ, բայց ազգային ինքնության, քաղաքակրթության գագաթնակետն է՝ քաղաքական մշակույթի հարթության վրա: Շանթի համոզմամբ՝ ***նոր քաղաքակրթությունը պէտք է բերի «ազգերու հաւասարութեան, ազգերու ինքնորոշման եւ ազգերու անկախութեան դաւանանքը: Եւ մեր նոր դաւանանքին տաճարը, մեր հայրենի հողն է, մեր հայրենիքը, որու լրիւ ու ազատ տիրացմանը պէտք է ձգտինք, ու կը ձգտինք*** (ընդգծումը՝ Լ.Ս.)»[1]: Հայաստանի ու հայության լիիրավ ինքնիշխանությունը պահանջում է ազգային հոգեմտավոր, քաղաքական, տնտեսական, կամային ուժերի կենտրոնացում, ազգային գիտակցության հզորացում՝ անկախության գաղափարի անսասանության համոզմունքով:

SUMMARY

LEVON SHANT'S ARGUMENTS ON INDEPENDENCE AS NATIONAL-SPIRITUAL AND CIVILIZATION FACTOR

SARVAZYAN LILIT

The article analyzes the political-philosophical concept of Levon Shant, a prominent Armenian thinker of the XIX-XX centuries. Shant substantiates the idea of polycentrism denying monocentrism in intercivilization relations. He believes all civilizations are displayed by individual uniqueness conditioned by people's national and cultural originality. He stressed the national factor which reveals more profound qualities. According to Armenian scholar's theory the nation is "an organism producing civilization'' and the nationality is the fundamental principle to identify people. He refused the aspects according to which the national and nations disappear during the process of civilization. On the contrary, the development of civilization is the key condition for nations' prosperity, independence, equality of

[1] Նույն տեղում, էջ 215:

rights, manifestation of national and political identity, as well as for solution to national problems.

Key words: *Levon Shant, independence, civilization, national factor, national-political identity, sovereignty of the state, self-governance of a nation.*

РЕЗЮМЕ

НЕЗАВИСИМОСТЬ КАК НАЦИОНАЛЬНО-ДУХОВНЫЙ И ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ФАКТОР В АРГУМЕНТАЦИЯХ ЛЕВОНА ШАНТА

САРВАЗЯН ЛИЛИТ

В статье анализируется политико-философская концепция известного армянского мыслителя XIX-XX веков Левона Шанта. Мыслитель обосновывает идею многоцентральности цивилизации, отрицая одноцентральность в межцивилизационных отношениях. По его убеждению, все цивилизации проявлаются индивидуальной уникальностью, что обусловлен национально-культурной идентичностью независимых народов. Главным фактором идентификации народов Шант считает национальный фактор, который раскрывает более глубокие цивилизационные качества. По мнению армянского политолога, ***нация это «организм - продуцирующий цивилизацию», национальность - основной принцип идентификации народов, а вопрос национальной независимости - “обсолютная потребность цивилизаци”.*** Он отвергает те точки зрения, согласно которым в цивилизационном процессе национальность и нации исчезают. В реальности прогресс цивилизации - главное условие независимости, процветания, равноправия, проявления национально-политической идентичности наций, а также решения национальных проблем.

Ключевые слова: *Л. Шант, независимость, цивилизация, национальный фактор, национально-политической идентичность, государственный суверенитет, самоуправления нации.*

23. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԻՋԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ԼԻԼԻԹ ԱՐՏԱԿԻ ՉԻՉՈՅԱՆ

Բանալի բառեր՝ *պետության իմիջ, պետականաշինություն, արդիականացում, քաղաքական դերակատարներ, կառավարող ընտրանի:*

Պետության իմիջի արդիականացումը որպես պետականաշինության մշակույթի զարգացման բաղադրիչի ուսումնասիրման հիմնախնդիրը վերարժևորվեց պայմանավորված հետխորհրդային տարածությունների ժողովրդավարացման գործընթացով: Պետականաշինության մշակույթի համատեքստում պետության իմիջի արդիականացումը ենթադրում է կառավարող ընտրանու փոխհամագործակցություն՝ ապահովելով քաղաքական դերակատարների և պետության մրցունակություն, հաջողություն, ազդեցիկություն, կայունություն ներքին և արտաքին քաղաքական շուկաներում:

Պետության իմիջի արդիականացումը ենթադրում է քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային փոփոխություններ, որոնց շնորհիվ պետությունը ոչ միայն հավասարարժեք պատասխանում է ներքին և արտաքին մարտահրավերներին, այլև անհրաժեշտության դեպքում ունակ է մարտահրավերներ նետելու: Պետության իմիջը որոշվում է ներքին և արտաքին քաղաքական շուկաներում դերակատարների մրցունակության, հաջողության, ազդեցիկության, կայունության մակարդակով: Սակայն կայուն, հիմնարար, հաստատուն իմիջի ստեղծումը հնարավոր չէ առանց հասարակությունը միավորող որոշակի արժեքային հիմքերի: Պետության իմիջը բազմամակարդակ, բազմակողմանի երևույթ է՝ ներառելով տնտեսական, սոցիալական, քաղաքական, հասարակական, կրոնական, էթնիկ և մշակութային ասպեկտներ: Պետականաշինությունը ապահովում է մասնագիտացված անձնակազմի ստեղծում, տարածքային միավորի նկատմամբ վերահսկողութ-

յուն, լոյալություն, կայունություն, մշտական ինստիտուտների առկայությամբ օժտված կենտրոնացված և ինքնավար պետություն, որը տվյալ բնակչության նկատմամբ ունի բացարձակ իշխանություն[1]:

20-րդ դարի 50-ական թվականներին ձևավորվել է «իմիջ» եզրույթի հետևյալ սահմանումը. «վարքագծային կարծրատիպ՝ հիմնված ոչ թե իրական, այլ հեղինակության, կարծիքների, պատրանքների վրա, որոնք մարդիկ ստեղծում են իրենց մեջ՝ ելնելով անցյալի մասին միֆական, ապագայի մասին երևակայական պատկերացումներից, որոնք ունակ են ազդեցություն ունենալ ինչպես անհատների և խմբերի, այնպես էլ՝ ամբողջ ազգի վարքագծի վրա»[2]:

Ֆ. Կոտլերի կարծիքով «պետության իմիջը պետության նկատմամբ մարդկանց հավատալիքների, համոզմունքների, պատկերացումների և տպավորությունների ամբողջությունն է»[3]:

Ռուս քաղաքագետ Ա. Գալումովը պետության իմիջ եզրույթը սահմանելիս նշում է, որ այն պետական համակարգի՝ միմյանց հետ փոխկապված առաձնահատկությունների (տնտեսական, աշխարհագրական, ազգային, մշակութային, ժողովրդագրական և այլն) ամբողջություն է, որը ձևավորվում է պետականության էվոլուցիոն զարգացման գործընթացներում, արդյունավետ համագործակցություն է, որի կապող օղակը որոշում է երկրի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, ազգային-դավանաբանական և այլ գործընթացների զարգացման միտումները[4]:

---

[1] Fukuyama, F., 2004, 'State-building: Governance and World Order in the 21st Century', Cornell University Press

[2] Rosa Nurtazina, Yerkebulan Zhumashov, Maral Tomanova, Definition, Structure and Core Functions of the State Image, International Journal of Social, Behavioral, Educational, Economic, Business and Industrial Engineering Vol:8, No:2, 2014. http://waset.org/publications/9997471/definition-structure-and-core-functions-of-the-state-image

[3] Котлер Ф., Асплунд К., Рейн И., Хайдер Д. Маркетинг мест. СПб.: Стокгольмская школа экономики, 2005. 390 с, [3, с. 205].

[4] Галумов Э. А. Международный имидж России: стратегия формирования. М., 2003. 446 с. [1, с. 12].

Մեկ այլ սահմանմամբ՝ «Իմիջը սուբյեկտի գործողությունների հաջողության ապահովմանը միտված սիմվոլիկ պատկերացում է՝ ձևավորված նպատակաուղղված ջանքերի շնորհիվ՝ միտված»[1]:

Որոշ հեղինակների կարծիքով իմիջ և կերպար եզրույթները նույնական չեն՝ տարբերակելով առաջին եզրույթը՝ որպես քաղաքական տեխնոլոգների կողմից նպատակաուղղված աշխատանքի արդյունք, իսկ երկրորդը՝ որպես տարերայնորեն ձևավորված ընկալում: Սակայն, որոշ հեղինակների կարծիքով այսպիսի տարբերակումը արհեստական է և անիմաստ, քանի որ շատ դժվար է գտնել այս երկու եզրույթների միջև առկա բաժանարար գիծը: Այնուամենայնիվ, «իմիջ» եզրույթի մասին վերջնական և միասնական մոտեցում դեռ չկա, որը հիմնավորում է հետազոտությունների մեջ առկա տարակարծությունները: «Իմիջը (կամ կերպարը) հանդես է գալիս որպես մի ամբողջություն և համարյա անհնար է հասարակության գիտակցության մեջ որոշակիացնել, թե տարբեր տարրեր ինչ գործոնների ազդեցության տակ են ձևավոևվել»[2]: Այս տարբերակումը նաև ոչ ռացիոնալ է, քանի որ իմիջի կառավարման համար հաշվի են առնվում պետության բոլոր բաղկացուցիչները: Հավելենք նաև, որ արևմտյան գիտության մեջ գոյություն չունի նման տարանջատում: Կերպար հասկացությունը անգլերեն image հասկացության թարգմանական ձևերից մեկն է[3]:

Պետության իմիջը, Դ. Վ. Ալշանսկու մեկնաբանմամբ տվյալ պետության քաղաքացիների և օտարերկրացիների մոտ ձևավորված պետության երևակայական կերպարն է[4]: Արևմտյան տեսաբանները առաջարկում են պետության իմիջը դիտարկել որպես «համակարգային-կորպորատիվ ամբողջություն՝ ելնելով պետական կառուցակարգերի

[1] Jenes, B. (2005): Possibilities of shaping country image. Marketing és Menedzsment, 2005/2. pp. 18-29

[2] Котлер Ф., Асплунд К., Рейн И., Хайдер Д. Маркетинг мест. СПб.: Стокгольмская школа экономики, 2005. 390 с. [3, с. 205].

[3] Roth, K. P., Diamantopoulos, A., 2009. Advancing the country image construct. Journal of Business Research 62 (7), 726-740

[4] Ольшанский Д. В. Политико-психологический словарь. М., 2002. 576 с. [7, с. 166].

համակարգային կազմակերպումից և դրանց միջև փոխկապվածություններից, ինչպես նաև քաղաքական գործունեության հատկանշական հիմքերից»[1]: Վերոշարադրյալը ընդհանրացնելով՝ ներկայացնենք պետության իմիջի հետևյալ սահմանումը. Այն պետության մասին պատկերացումների ամբոջություն է՝ ձևավորված նպատակադրված տեղեկատվական քաղաքականության արդյունքում և իրավիճակային գործոնների, պատմության, մշակույթի, աշխարհագրական դիրքի, ունեցած ռեսուսների և այլ օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ: Գիտական գրականության մեջ, քաղաքական ժամանակի հրամայականով պայմանավորված, առկա են նորանկախացած երկրների իմիջի արդիականացման ուսումնասիրման առանձնահատկություններ՝

- իմիջը համակարգված արտացոլում է, որը բնութագրվում է հակիրճությամբ, պարզությամբ, զգալի տեղեկատվական հոսքեր կենտրոնացած են որոշակի սիմվոլների շուրջ, որոնք ներկայացվում են կարճ և կոնկրետ,
- իմիջն առանձնացնում է օբյեկտի բազմազան հատկանիշներից բացառիկությունը, առանձնացնող գծերը: Այն չի ընդհանրացնում, այլ անհատականացնում է օբյեկտը,
- պետության իմիջի ստեղծումը միշտ հիմնվում է նրա օբյեկտիվ հատկանիշների (աշխարհագրական դիրք, քաղաքական ռեժիմ, տնտեսություն, ժողովրդագրական ցուցանիշներ և այլն) վրա,
- իմիջը լրացնում և ամբողջականացնում է պատկերացումները՝ հզորացնելով արդեն ձևավորված դրական հատկանիշները:

Գոյություն ունի պետության իմիջի ձևավորման երկու եղանակ՝ տարերայնորեն և հատուկ մասնագետների կողմից նպատակաուղղված գործունեության արդյունքում: Է. Ա. Գալումովի կարծիքով պետությունը ունի մի քանի օբյեկտիվ իմիջ՝ տնտեսական, սոցիալական, հումանիտար, քաղաքական, մշակութային, բնապահպանական և այլն[2]:

[1]Jenes, B. (2005): Possibilities of shaping country image. Marketing és Menedzsment, 2005/2. pp. 18-29

[2] Галумов Э. А. Международный имидж России: стратегия формирования. М., 2003. 446 с. [1, с. 109].

Թվարկվածներից յուրաքանչյուրը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական՝ փոխվելով կապված քաղաքական կարգի փոփոխության հետ, այլ գործոնների ազդեցությամբ, կամ իմիջմեյկերների նպատակաուղղված գործունեության արդյունքում: Հետևաբար իմիջը կարելի է կերտել: Ավելին, պետության իմիջի կառուցվածքի մեջ կարող են ներառվել պետության առջանային և երկրորդային իմիջները՝ ընդգրկելով պետության մասին համակարգային պատկերացումները, որոնք պետությունը դիտարկում են որպես որևէ արժեքային շնորհ (քաղաքական, տնտեսական և այլ գործթնացների սուբյեկտ) ձևավորելով հասարկության գիտակցության մեջ՝ հիմնված պետության մասին առաջնային պատկերացումների վրա[1]:

Պետության արտաքին իմիջը քաղաքական գործունեության արդյունքում ձեռք է բերում մի շարք հատկանիշներ, նոր իրողություններ՝ հանգեցնելով պետության երկրորդային իմիջի ձևավորմանը, որը առաջանում է այլ պետությունների հետ մրցակցային (քաղաքական, տնտեսական, տեղեկատվական) պայքարի գործթընթացներում[2]: Պետության իմիջի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ: Առանձնացվում են այդպիսի գործոնների 3 խումբ: Դրանցից առաջինը գրեթե չի ենթարկվում մանիպուլացիաների, իսկ մյուս երկուսը կարող են ճշգրտվել՝

1. «Պայմանական-ստատիստիկ» գործոններ,
2. «Ճգրտվող պայամանկան-դինամիկ» սոցիալական գործոններ,
3. «Ճգրտվող պայամանկան-դինամիկ» ինստիտուցիոնալ գործոններ[3]:

Պետության իմիջը ձևավորվում է «օբյեկտիվ», «կայուն» գործոններով (աշխարհագրական դիրք, պետության տարածք, պետական

[1] Лебедева Т. П., Михайленко Т. А. Имидж государства в мировом политическом пространстве: структурные модели формирования // Вестн. Моск. Ун-та. Сер. 21. 2011. № 1. С. 13-28.

[2] Heslop, L. A., Lu, I. R. R., Cray, D., 2008. Modeling country image effects through an international crisis. International Marketing Review 25 (4), 354-378

[3] Галумов Э. А. Международный имидж России: стратегия формирования. М., 2003. 446 с. [1, с. 109].

սահմանները, դեպի ծով ելքերը և այլն): Այս գործոններից են նաև պետության մշակութային և ազգային հարստությունները, պատմական իրադարձությունները, հայտնի գործիչների անունները, ովքեր մտել են երկրի պատմության մեջ: Պետության իմիջը ձևավորող հաջորդ խումբ գործոններն են հասարակության սոցիալ-հոգեբանական տրամադրվածությունը, բնակչության սոցիալ-քաղաքական ներգրավվածությունը, մարդկանց բարոյական և էթիկական զարգացվածությունը: Պետության իմիջի ձևավորման ինստիտուցիոնալ գործոնները բնութագրվում են տնտեսության կայունությամբ (այս խմբի մեջ մտնում են ՀՆԱ-ի ցուցանիշները, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների ծավալները, ներդրումների գրավչության մակարդակը), իրավական ակտերի համապատասխանությունը միջազգային նորմերին, պետական վերահսկողության մեխանիզմները:

Ներկա պահին գիտական գրականության մեջ հնարավոր չէ գտնել պետության իմիջի գործառույթների հստակ և միանշանակ թվարկում: Փորձենք համակարգել գրականության մեջ առկա մոտեցումները պետության իմիջի գործառույթների վերաբերյալ: Սովորաբար հեղինակները պետության իմիջի գործառույթները բաժանում են ըստ խմբերի՝ արժեքային և տեխնոլոգիական (Վ. Մ. Շեպել), ակնառու (համընկնում են նպատակների և խնդիրների հետ) և լատենտ (թաքնահարույց) (թաքնված, լեգենդների, միֆերի, ասեկոսեների միջոցով իրականացվող, դրանք կրում են մանիպուլատիվ բնույթ):

Պետության իմիջի գործառույթները տարբերակվում են նաև ըստ նպատակային նշանակության՝ կենտրոնական կամ կառավարչական-համակարգաստեղծ գործառույթ, հոգեբանական պաշտպանվածության, թվացյալ-փոխլրացնող, արժեքային: Ըստ բովանդակության՝ պետության իմիջի գործառույթները բնութագրվում են հետևյալ կերպ՝

- Ճանաչողական և իմիջի օբյեկտի իդիալականացում՝ պատկերացումներին համապատասխանեցնելու համար,
- Նպատակադրման իրականացման գործառույթ (իմիջի և սպասելիքների միջև կորելացիոն կապերի սահմանում),

- Հաղորդակցական
- Հասարակական կարծիքի վրա ազդեցություն գործելու գործառույթ,
- Ներկայացուցչական (քաղաքական իմիջի սուբյեկտի արդյունավետության բարձրացում),
- Նույնականացում և քաղաքական իմիջի այլ սուբյեկտների դասակարգում,
- Փոխհատուցողական:

Կախված ընկալման մակարդակից՝ պետության իմիջի վրա մեծ ազդեցություն ունեն հասարակության ներսում գոյություն ունեցող սպասումները և հանգամանքները: Ուստի, որևէ պետության իմիջի ընկալման առանձնահատկությունները հասկանալու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել զանգվածային գիտակցության իդեալական կերպարները: Պետության իմիջի գնահատումը տեղի է ունենում ոչ միայն քաղաքական կառուցակարգերում և ինստիտուտներում, այլև հասարակության զանագվածային գիտակցությունում: Որպես դինամիկ զարգացող երևույթ՝ պետության իմիջն ունի որոշակի առանձնահատկություններ՝ կապված երկրում տեղի ունեցող գլոբալացման գործընթացների, զանգվածային տեղեկատվության զարգացման, տնտեսական, սոցիալ-քաղաքական առանձնահատկությունների և կրոնական գործընթացների հետ:

SUMMARY

MODERNIZATION OF THE STATE IMAGE AS A COMPONENT OF DEVELOPMENT OF STATE BUILDING CULTURE

CHICHOYAN LILIT

The study of the State image modernization as the component of state building development was reassessed conditioned by the democratization processes in post-Soviet territories. In the context of state building culture the State image modernization supposes the ruling elite cooperation, which ensures competitiveness, success, impact, sustainability of the political actors and the State in the internal and external political markets.

***Keywords**: image of state, state building, modernization, political actors, ruling elite.*

РЕЗЮМЕ

МОДЕРНИЗАЦИЯ ГОСУДАРСТВЕННОГО ИМИДЖА КАК СОСТАВЛЯЮЩАЯ РАЗВИТИЯ КУЛЬТУРЫ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА

ЧИЧОЯН ЛИЛИТ

Изучение модернизации имиджа государство как компонент развития государственного строительства была переоценена обусловлено процессами демократизации в постсоветском пространстве. В контексте культуры государственной строительной модернизация имиджа государства предполагает сотрудничество правящей элиты, которая обеспечивает конкурентоспособность, успех, влияние, устойчивость политических акторов и государства на внутренних и внешних политических рынках.

***Ключевые слова**: имидж государства, государственное строительство, модернизация, политические субъекти, правящие элиты.*

24. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՍԱՀԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բանալի բառեր՝ *վարչական մարմին, վարչարարություն, վարչական ակտ, վարչական վարույթ:*

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ որոշ քաղաքացիների կողմից ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով բարձրացրած իրավական հարցադրումները դեռևս հիմնարար գիտական վերլուծության չեն արժանացել: Դիմելով ՀՀ Սահմանադրական դատարան՝ նրանք պահանջել էին ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի[1] **(այսուհետ նաև՝ Օրենք)** այն նորմերը, որոնք կարգավորում են վարչական մարմինների հասկացությունը և տեսակները՝ պատճառաբանելով, թե «վարչական մարմիններ» հասկացության մեջ օրենսդիրը նոտարներին չի ներառել: ՀՀ Սահմանադրական դատարանը 2016 թվականի մայիսի 10-ի ՍԴՈ-1271 որոշմամբ հանգել է այն եզրակացությանը, որ Օրենքի վերոնշյալ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

[1]Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր (այսուհետ՝ ՊՏ) 2004.03.31/18(317):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>վարչական մարմիններ</u>***՝ *Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝*

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ,

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ,

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ *եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ:*

Վերոնշյալ նորմերի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյուքնում հանգում ենք այն եզրակացությանը, որ վարչական մարմիններ են համարվում հանրապետական կամ տարածքային նշանակություն ունեցող այն մարմինները, որոնք օժտված են **<u>գործադիր-կարգադրիչ լիազորություններով</u>**, ինչպես նաև այն, որ օրենսդիրը չի փորձել սպառիչ թվարկել բոլոր վարչական մարմինները:

Իսկապես հարց է ծագում. կա՞ արդյոք այնպիսի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ անձ, որը իրականացնում է վարչարարություն, սակայն Օրենքում հիշատակված չէ որպես «վարչական մարմին»:

ՀՀ օրենսդրության, ինչպես նաև դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ կան այնպիսի մարմիններ, որոնք արտաքին ներգործություն ունեցող

ակտերի ընդունման շնորհիվ իրականացնում են վարչարարություն, ուստի՝ համարվում են վարչական մարմիններ, սակայն օրենքում հիշատակված չեն: Փորձենք հիմնավորել դրանցից մի քանիսի «վարչական մարմին» համարվելու գոյության իրավունքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքը այդպիսի հնարավորություն վերագրում է միայն պետական մարմնի կարգավիճակ ունեցողներին, ուստի հարկ ենք համարում հարցի ուսումնասիրությունը սկսել հենց այդտեղից:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 3-րդ մասի[1] համաձայն՝ ***<u>կառավարությունը</u>*** (***ընդգծումն մերն է՝ Ս.Մ.***) *կազմված է վարչապետից և նախարարներից:* Սահմանադրական այս նորմի շնորհիվ պետական կառավարման մեջ կառավարությունը և նախարարությունները առանցքային դերակատարություն ունեն: Նրանց կողմից ընդունված որոշումները ենթակա են պարտադիր կատարման ՀՀ ողջ տարածքում: Համակարծիք ենք մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, թե գործադիր իշխանության մարմիններից վարչական ակտերի ընդունման լիազորությունն առավելապես վերապահված է նախարարություններին և կառավարությանն առընթեր մարմիններին[2]: Սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ կառավարությունը քաղաքականության մշակումից զատ հանդես է գալիս նաև որպես **<u>վարչական մարմին</u>**՝ ընդունելով վարչական ակտեր: Մասնավորապես՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի[3] 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» համաձայն՝ *պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝ քաղաքացին՝* ***կառավարության որոշմամբ****:* Այսպիսով՝ անձի՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հարցը լուծելիս կառավարությունը հանդես է գալիս որպես վարչական

[1] Այս դեպքում նկատի ունենք 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ից գործող ՀՀ Սահմանադրությունը: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում:

[2] Տե՛ս ՀՀ ընդհանուր վարչական իրավունք /խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ.Լուխթերհանդթ, Գ.Մուրադյան, Վ.Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ.Ռուբել.-Եր.: Բավիղ, 2011, էջ 134:

[3] Տե՛ս ՀՀՊՏ 1998.10.16/26(59):

մարմին, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին կառավարության որոշումը վարչական ակտ է[1]:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի[2] 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *Հանրապետության նախագահը պետության գլուխն է,* ինչպես նաև *Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությանը:*

Վերոնշյալ հոդվածներից բխում է Հանրապետության նախագահի ներկայացուցչական (մաս 1) և, այսպես կոչված, «իրավարար» (արբիտրաժային) (մաս 2) գործառույթները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հանրապետության նախագահն ունի մեկ այլ, և, թերևս, ավելի կարևոր գործառույթ՝ **գործադիր իշխանության գործառույթը**[3] (***ընդգծումն մերն է՝ Ս.Մ.***): ՀՀ նախագահի՝ գործադիր-կարգադրիչ կարգավիճակը ձևավորող լիազորությունների թվում առանձնապես կարևորվում է այն, որ նա օրենքով սահմանված կարգով լուծում է ՀՀ քաղաքացիության հետ կապված հարցերը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն[4] *Հանրապետության նախագահը օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և քաղաքական ապաստան*

---

[1]«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի վերլուծությունից նույնպես հանգում ենք այն հետևությանը, որ կառավարությունը տվյալ գործառույթն իրականացնելիս հանդես է գալիս որպես վարչական մարմին: Այսպես՝ կառավարությանն է վերապահված լիցենզիաների տրամադրումը պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության, պայթեցման աշխատանքների կատարման, հրագործական ապրանքների արտադրության, զենքի արտադրության, զենքի առևտրի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության կամ պատրաստման, դրամահատման, պետական կնիքների, դրոշմակնիքների պատրաստման կամ արտադրության և այլնի համար: Տե՛ս ՀՀՊՏ 2001.08.08/26(158):

[2]Այս դեպքում նկատի ունենք 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ից գործող ՀՀ Սահմանադրությունը:

[3]Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.-Եր.: «Իրավունք», 2010, էջ 563:

[4]Այս դեպքում նկատի ունենք 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով ընդունված և 2015 թվականի դեկտեմբերի 22-ից գործող Հիմնական օրենքը: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում:

տալու հետ կապված հարցերը:[1] Սահմանադրական այս նորմի պոզիտիվ արտահայտումը դրսևորվել է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի[2] 13-րդ հոդվածի 6-րդ պարբերությունում, համաձայն որի՝ *Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն սրտանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով:*

Քաղաքացիություն շնորհելու լիազորություն իրականացնելիս Հանրապետության նախագահը, ի բացառություն ընդհանուր կանոնի, գործառութային առումով ևս հանդես է գալիս որպես **վարչական մարմին**: Իսկ քաղաքացիություն շնորհելու մասին ՀՀ նախագահի հրամանագիրը վարչական ակտ է:

Ուսումնասիրության առումով առավել հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի՝ վարչական մարմին դիտարկելու հարցը: Ինչպես արդեն նշել ենք, վարչական մարմինների տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ դրանք հիմնականում մտնում են գործադիր իշխանության կազմի մեջ՝ իրականացնելով գործադիր-կարգադրիչ լիզորություններ: Մինչդեռ՝ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի[3] 1-ին հոդվածի համաձայն՝ *կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված **իրավաբանական անձ** է:* Վերոնշյալ նորմի տառացի մեկնաբանության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ Կենտրոնական բանկը ունի «իրավաբանական անձի» կարգավիճակ: Այնինչ մասնագիտական գրականության մեջ զարգացված է այն միտքը, որ վարչական մարմինը չի կարող ունենալ (չունի) իրավաբանական անձի կարգավիճակ[4]:

---

[1]2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով ընդունված ՀՀ Սահմանադրության 134-րդ հոդվածը խնդրո առարկա հարաբերությունը կարգավորում է գրեթե նույն կերպ՝ *Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:*

[2]Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի տեղեկագիր 1995/8:

[3]Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի տեղեկագիր 1996/12:

[4]Տե՛ս ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, էջ 107:

ՀՀ Վճռաբեկ դատարանը իրացնելով օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրական իր լիազորությունը՝ 2007 թվականի դեկտեմբերի 25-ի 3-1886 (ՏԴ) որոշմամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է տրամաբանորեն հակառակ իրավական դիրքորոշում՝ նշելով թե «*Պատասխանողի ներկայացուցիչների պնդումներն այն մասին, որ ՀՀ Կենտրոնական բանկը պետական մարմին չէ, այլ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, և այդ իսկ պատճառով չի իրականացնում վարչարարություն, անհիմն են, պատասխանողը բանկային գործունեության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն, ուստի, հանդիսանում է **<u>վարչական մարմին</u>** (**<u>ընդգծումն մերն է՝ Ս.Մ.</u>**) և վերջինիս կողմից որոշում ընդունելը, այսինքն վարչական ակտ ընդունելու ենթակա են կիրառման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը*»:

Չնայած կազմակերպաիրավական առումով Կենտրոնական բանկը չի մտնում գործադիր իշխանության կազմի մեջ, սակայն ուսումնասիրելով վերջինիս ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված որոշ լիազորություններ՝ հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կենտրոնական բանկին վարչական մարմին դիտարկելու իրավական դիրքորոշումը իրավաչափ է: Նման եզրակացության իրավական հիմքը «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ժզ» կետն է, համաձայն որի՝ *Կենտրոնական բանկի խորհուրդը օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը*[1]*:* Փաստորեն՝ բանկերին, վարկային կազմակերպություններին և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող ու

[1]«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից նույնպես հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ կետնրոնական բանկը հանդես է գալիս որպես վարչական մարմին: Այսպես՝ 16-րդ հոդվածի համաձայն՝ *սույն օրենքի*

վերահսկվող այլ անձանց՝ լիցենզիաների տրամադրման կամ դրանց անվավեր ճանաչման հարցերը լուծելիս, ՀՀ կենտրոնական բանկը ևս հանդես է գալիս որպես վարչական մարմին:

Վերջապես անդրադառնանք նոտարի՝ վարչական մարմին հանդիսանալու խնդրին: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի[1] 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է սույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ:*

ՀՀ Սահմանադրական դատարանը 2016 թվականի մայիսի 10-ի ՍԴՈ-1271 որոշման մեջ, վերլուծելով նոտարի իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական բնույթը, նշել է. «*«Նոտարիատի մասին» առանձին օրենքով օրենսդիրը կարգավորել է նոտարների գործունեությունը, հետևաբար՝ վարչական մարմինների ցանկում նոտարներին չընդգրկելն օրենսդրական բաց համարվել չի կարող: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ նոտարների նկատմամբ, այն վերաբերում է միայն վարչարարություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց գործունեության իրավական հիմքերն այլ են*»:

Վճռաբեկ դատարանը՝ իր թիվ ՎԴ/5014/05/09 որոշմամբ, խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է փոքր-ինչ տարբերվող դիրքորոշում, նշելով թե «*նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ*»:

խախտման դեպքերում լիազոր մարմինը (ՀՀ կենտրոնական բանկը) գրավատների նկատմամբ կիրառում է հետևյալ պատասխանատվության միջոցները՝ նախազգուշացում և խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարական, տուգանք. լիցենզիայի գործողության կասեցում, լիցենզիայի գործողության դադարեցում: Տե՛ս ՀՀՊՏ 2003.12.30/64(177):

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2002.01.10/2(177):

Մեր կարծիքով՝ նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր, քանի որ օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրել է նոտարներին: Մասնավորապես՝ նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության անունից հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը (*«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերություն*): Նրա ստորագրությամբ և կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ (*«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս*): Նոտարի գործունեության հանրային բնույթ կրելը պայմանավորված է նաև արդարադատությանը նպաստելու՝ նոտարների առաքելությամբ (*«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս*), որը որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես գործադիր-կարգադրիչ գործունեություն: Որպես այս դիրքորոշման իրավական հիմք կարող ենք նշել նաև ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող Օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական նախաձեռնությունը[1], ուր նշված է, որ *«Վարչական մարմին հասկացությունը չի կարող ներառել միայն փվյալ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ կան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ չհանդիսացող այլ մարմիններ և **անձինք**, որոնց օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություններ»:*

Այսպիսով՝ քննարկելով վարչական մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ-ում, պարզվեց, որ Օրենքում առկա են էական բացթողումներ, որոնք կարոտ են օրենսդրական կարգավորման:

[1] Տե՛ս Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0

SUMMARY
THE LEGAL STATUS OF THE ADMINISTRATIVE BODIES IN THE REPUBLIC OF ARMENIA

MANUKYAN SAHAK

In this article the author discusses the main features of the legal status of the administrative bodies in the Republic of Armenia. The law defines that all the administrative bodies are able to carry out the whole administration. So in this article the author analyzes the judicial and legal practice and tries to discover and to present the activities of the administrative bodies which are not involved in law.

However the author conclude that The Government of RA, The President of RA, The Central bank and Notary of RA are functionally the administrative bodies except the general rule. Thus, discussing the main issues of the legal status of the administrative bodies, the author has found and underlined many problems which should be regulated by law.

***Keywords**: administrative body, administration, administrative action, administrative proceeding.*

РЕЗЮМЕ
ОСОБЕННОСТИ СТАТУСА АДМИНИСТРАТИВНЫХ ОРГАНОВ РА

МАНУКЯН СААК

Автор затрагивает особенности правового статуса административных органов. В дополнение к перечисленных административных органов, в законе также установлено, что если в добавление этих органов, осуществлять административные и иные государственные органы, последние должны также рассматриваться как административные органы. Поэтому, изучая судебную и правовую практику, автор попытался выявить те органы, которые осуществляют администрирование, но не упомянуты в законе как административный орган. Автор пришел к выводу, что Правительство РА, Президент РА, Центральныи банк РА и нотариус, в порядке исключения из общего правила, функционально также действуют как административные органы. Таким образом, обсуждение вопросов, связанных с правовым статусом административных органов, автор обнаружил, что существуют значительные пробелы, которые нуждаются в правовом регулировании.

***Ключевые слова**: административный орган, администрирование, административный акт, административный процесс.*

25. ОБЪЕКТИВНАЯ ВЗАИМОЗАВИСИМОСТЬ РОССИИ И ЕВРОПЫ В ВОПРОСАХ ЭНЕРГЕТИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА[1].

МАРИНА ЕВГЕНЬЕВНА РОДИОНОВА
ИГОРЬ ВАЛЕРЬЕВИЧ ЮШКОВ

Ключевые слова: *энергодиалог, энергетическая политика, Европейский союз, дорожная карта, энергетическая безопасность.*

На сегодняшний день Россия является одним из важнейших поставщиков энергоносителей в Европейский Союз. Именно поэтому как для России, так и для стран Европейского Союза важно наладить и поддерживать на постоянной основе энергетический диалог, главной целью которого является развитие долгосрочного сотрудничества

Российская Федерация и Европейский Союз (ЕС) остаются важными партнерами в сфере энергетики. Доля российских углеводородов и продуктов их переработки на рынке ЕС по прежнему останется высокой в ближайшие 20-25 лет. Это связано с географической близостью России и стран-членов ЕС, существующей энергетической транспортной инфраструктурой, а также традиционно успешным сотрудничеством в области энергетики, осуществляемым с 1960 года. Также необходимо учитывать, что производственный потенциал ЕС опирается не на слишком объемную собственную энергетическую базу, аккумулирующую всего 2% мировых запасов нефти 4% газа, которые могут быть выработаны в ближайшие 20-25 лет. Представляется, что рост импортных потребностей мог бы стать импульсом для наращивания российско-европейского сотрудничества в сфере энергетики

Энергетическое сотрудничество России и ЕС до 2050 года.

[1] Funded by the ERASMUS+Programme of the European Union. Agreement number 2015-0860/014-001.3 Работа Финансируется Евросоюзом. Статья отражает исключительную точку зрения авторов, и Агентство и Комиссия не несут ответственности за использование информации, которая в них содержится.

Одной из основных вех в развитии отношений России и Европейского Союза в сфере энергетики стало подписание Дорожной карты энергетического сотрудничества России и ЕС до 20150 года. Она была подписана Кооординатором Энергодиалога Россия-ЕС, Министром энергетики Российской Федерации А.В.Новаком и Европейским комиссаром по энергетике Г.Эттингером, которое состоялось в ходе встречи Правительства Российской Федерации и Еврокомиссии 21-22 марта 2013г. в Москве. Дорожная карта признает суверенный характер политических решений России, ЕС и стран, входящих в ЕС, способствует достижению приемлемого уровня неопределенности в контексте будущего устойчивого и взаимовыгодного развития отношений России и ЕС в области энергетики, ориентируется на перспективу и наличие рекомендаций по последовательным шагам для укрепления сотрудничества России и ЕС в области энергетики в ближайшее время.[1]

Хотелось бы привести несколько основных положений дорожной карты, которая: 1) признает существование различий в программах России и ЕС в сфере энергетики, но и отмечает схожесть сфер, в которых программы совпадают и могут создать взаимовыгодный положительный эффект; 2) содержит конкретную, согласованную сторонами стратегическую цель по формированию к 2050г. панъевропейского энергетического пространства с функционирующей интегрированной сетевой инфраструктурой, с открытыми, прозрачными, эффективными и конкурентными рынками, которые будут способствовать обеспечению энергетической безопасности и достижению целей устойчивого развития России и ЕС. Намеченный путь развития сотрудничества дорожной карты до 2020, 2030, 2050 годов определяет основные рекомендации по каждому из направлений: электроэнергетика, газ, нефть, возобновляемые источники энергии, энергоэффективность, сценарии и прогнозы развития энергетики. Не стоит забывать, что Дорожная карта не является юридически обязывающим документом, а лишь служит в

[1] Энергдиалог Россия – ЕС 13-й обобщающий доклад

качестве напутствующего документа, определяющего основные направления деятельности энергодиалога Россия – ЕС.

Юридические вопросы сближения.

К началу XXI века Россия и Европа оказались более привязаны друг к другу экономически, чем когда-либо в истории. Энергетический экспорт стал приобретать достаточно серьезную роль в экономике континента, и в будущем, скорее всего, она будет только возрастать. Посол Европейского Союза в Москве Ричард Рафд когда говорил, что у России нет иного выбора, кроме постепенного сближения ее нормативной базы с Европейским Союзом. Движение в сторону европейского законодательства с российской стороны во многом объективно задано и самими рыночными реформами. Рост спроса на энергоносители со стороны Европы, который ожидается в последующие 20 лет, предполагает капиталовложения со стороны компаний, которые будут продавать энергоносители внутри Европейского Союза, а добывать вне его. Здесь прослеживается забота Еврокомиссии об издержках развития бизнеса, которые могут быть сокращены за счет схожих условий инвестиционного климата. Особенностью многомиллиардных вложений в добычу и доставку больших масс энергоносителей на расстоянии также требует и учета политических факторов, коммерческих рисков, длительности строительства, конкуренции не только между компаниями, но и между странами, чье благосостояние зависит от экспорта энергоресурсов.

Необходимо отметить успешную работу российских компаний на рынке Европейского Союза, в том числе, в сфере нефтепереработки, управления сетями АЗС и терминалами по хранению нефтепродуктов, а также в сфере газа – в управлении мощностями по хранению газа, газотранспортной инфраструктуры, в сфере торговли и распределения газа в ЕС.

Однако, не стоит забывать о санкционной войне, которая значительно повышает риски экономического взаимодействия между российским и европейским бизнесом, порождает негативные ожидания

с обеих сторон, усиливает неопределенность в результатах внешнеэкономической деятельности компаний. Санкции ЕС отрезали российские банки и корпорации от европейских рынков ссудного капитала, а отечественные нефтегазовые компании – от современных оборудования и материалов, которые используются при разработке месторождений, предприятия оборонного комплекса – от передовых технологий военного и двойного назначения. Контрсанкции России закрыли ее рынок для сельхозпроизводителей ЕС и лишили ее ощутимой части доходов.[1]

Нельзя не сказать об изменении линии ЕС в энергодиалоге с Россией. Когда то давно ЕС выступал с инициативой развития широкомасштабного сотрудничества в сфере энергетики, целью которого являлось осуществление Россией поставок энергоносителей в единую Европу на стабильной основе в обмен на инвестиции, новейшие технологии и управленческий опыт. Несмотря на то, что российские нефтегазовые компании по-прежнему заинтересованы в наиболее передовых зарубежных технологиях, считается, что заинтересованность России в Европу нефти и газа слишком велика и поставки в любом случае продолжатся вне зависимости от оказанного содействия со стороны Европы.

Европа делала несколько попыток изменения внутренних энергетических тарифов и цен на газ, вводила использование «суррогатных цен» (цен третьего мира), в связи с чем Россия вынужденно обратилась в ВТО с иском к ЕС по вопросу энергокорректировок, используемых европейцами для введения антидемпинговых пошлин. Разногласия возникли и в связи с принятием Евросоюзом в 2009г. Третьего энергопакета, заставляющего ОАО «Газпром» от контрактной схемы поставок газа перейти на спотовую. Также возникли разногласия в 2014 г., когда Евросоюз в силу своих

[1] Оболенский В.П. Перспективы формирования европейско-азиатского экономического пространства в условиях осложнения отношений России и ЕС // Российский внешнеэкономический вестник, №6, 2015

политических причин, заблокировал возможность строительства «Газпромом» газопровода «Южный поток» по дну Черного моря для поставки российского газа в болгарский порт Варна. Определенным прорывов на энергетическом рынке можно считать реализацию российско-германской договоренности о строительстве Североевропейского газопровода для транспортировки российского газа к побережью Германии. Необходимо также отметить одобрение Еврокомиссией в конце 2015 года концепции создания энергетического союза. Еврокомиссия согласно данному документу получает полномочия обеспечивать «полное соответствие европейскому законодательству всех соглашений, связанных с покупкой газа у внешних поставщиков».

Формулирование целей российской энергетической политики в Европе, масштабы нашего участия в снабжении ЕС, ограничения и риски в этом процессе, использование доходов от экспорта для развития страны – на все эти принципиальные вопросы четкие ответы еще не получены. Вряд ли кто-то в России сомневается в том, что цель торговли энергоресурсами – не максимизация объема экспорта того или иного отдельного энергоносителя, а получение и реинвестирование стабильных доходов в долгосрочном плане (на 20–30 лет). Изначально позиция России была проста: как часть Европы, Российская Федерация несет определенную долю ответственности за энергетическую безопасность континента. Поэтому она вступила в энергодиалог с ЕС и готова рассматривать возможности увеличения поставок энергии при определенных условиях:

- дополнительные поставки электроэнергии сопровождаются инвестициями и передачей России технологий;
- особое внимание уделяется технологиям сбережения энергии, которое рассматривается как самостоятельный источник расширения поставок;
- свобода транзита всех наших энергоносителей в ЕС-15 через Восточную Европу (которая сейчас растворяется в ЕС);

- расширение поставок энергии охватывает не только первичные энергоносители, но и электроэнергию (в том числе с АЭС), ядерное топливо, энергоемкие товары (удобрения, металлы), нефтепродукты и так далее.

Хочется исходить из того, что в ближайшее десятилетие ЕС и Россия будут двигаться к формированию общего экономического пространства, которое будет предусматривать более глубокую интеграцию с сохранением различий, взаимно дополняя друг друга именно на энергетическом рынке. Россия имеет полное моральное право больше знать о будущем газового рынка в Европе, поскольку всегда, даже в условиях тяжелого кризиса 1990-х годов, оставалась абсолютно надежным партнером по устойчивому снабжению континента энергией.

Расширение и углубление диалога между потребителем и производителем углеводородов может способствовать развитию сторон энергетического рынка по снижению рисков, которые связаны с нестабильностью, и помочь аккумулировать необходимые объемы инвестиций. Само по себе осознание необходимости такого рода диалога и работа над ним уже является основной тенденцией в мировой энергетике на глобальных энергетических рынках.

Состояние дел на сегодняшний момент, несмотря на положительный настрой документально, в реалиях отдаленного будущего говорит о непростых российско-европейских отношениях. Рост антироссийских настроений в объединеннной Европе после ее расширения на Восток и политического кризиса на Украине, подталкивает обе стороны переключать внимание на другие географические направления внешнеэкономического сотрудничества (в том числе со стороны России путем налаживания интеграционного процесса в рамках евразийского континента).

ԱՄՓՈՓՈՒՄ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԵՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՌԱԴԻՈՆՈՎԱ ՄԱՐԻՆԱ, ՅՈՒՇԿՈՎ ԻԳՈՐ

Հոդվածում քննարկվում է Ռուսաստանի և ԵՄ միջև էներգետիկ երկխոսության զարգացման հնարավոր ուղիները, ինչպես նաև քննարկվում է պետությունների միջև փոխադարձ հետաքրքրության և փոխկապակցվածության հիմնահարցերը: Թեմայի արդիականությունը հիմնավորվում է այսօր ԵՄ կողմից մշտապես էներգոռեսուրսների նկատմամբ առկա պահանջարկով, չնայած, որ այսօր պատժամիջոցների կիրառման պատերազմը գնալով սրանում է, այնուամենայնիվ, առկա է պահանջարկ գազ էներգոռեսուրսի նկատմամբ: Մի կողմից Ռուսաստանի հնարավորությունները մշտապես ընդլայնվում են, սակայն շատ մասնագետներգտնում են, որ Եվրոպական միության հետ երկխոսությունը ընկալվում և մեկնաբանվում է տարտեսակ: Աշխատանքում ներկայացված է ընդհանրական փաստեր տվյալ ոլորտի տարբեր ուղղությունների՝ Ռուսաստանի և Եմ էներգետիկ երկխոսության, էներգետիկ սեկտորում Ռուսաստանի և Եմ ընդհանուր հետաքրքրույթունների շրջանակի հաստատման, ինչպես նաև Ռուսաստան և ԵՄ միջև ընդհանուր եվրոպական էներգետիկ տարածության պրակտիկ զարգացման վերաբերյալ:

Բանալի բառեր՝ *էներգետիկ երկխոսություն, էներգետիկ քաղաքականություն, Եվրոմիություն, ճանապարհային քարտեզ, էներգետիկ անվտանգություն, միջուկային էներգիա:*

SUMMARY

OBJECTIVE INTERDEPENDENCE OF RUSSIA AND EUROPE IN QUESTIONS OF ENERGY COOPERATION

RODIONOVA MARINA, USKOV IGOR

In article the question of development of energy dialogue of Russia and the EU is considered, the question of objective mutually interest and interdependence is brought up. Relevance of a subject is caused by stable demand for energy resources from the European Union in particular concerning gas. On the one hand possibilities of Russia constantly extend, according to others this dialogue with the European Union is understood by the specialist in most cases variously. In work the overview a factor in various directions concerning a question of energy dialogue of Russia and the EU, directed to approval of common interests of Russia and the EU in the energy sector and practical development of general European economic space between Russia and the EU is provided.

Keywords: *energy dialogue, energy policy, European Union, road map, energy security, nuclear power.*

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

26. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ-ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՀԱԿՈԲ ՎԱՆԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Սոցիալ-մանկավարժական գործունեություն, սոցիալական մանկավարժ, պրակտիկա, թղթապանակ, ընթացակարգ:*

Սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի զարգացումը ենթադրում է այդ համակարգի բոլոր բաղադրիչների զարգացում: Բաղադրիչներից մեկը սոցիալ-մանկավարժական գործունեության հիմնական սուբյեկտի՝ սոցիալական մանկավարժ մասնագետի պատրաստման գործընթացն է: Մասնագիտական կրթության համակարգին ներկայացվող ժամանակակից պահանջներից մեկը կրթական ծրագրերի վերջնարդյունքները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելն է, գործնական կարողությունների, հմտությունների ձևավորումը, մասնագիտական գործունեության տարբեր ոլորտների մասին իրազեկվածության ապահովումը, մասնագիտական հարմարման, ինքնաիրացման, անձնային աճի ապահովումը, մասնագիտական գործունեության ոլորտում ինքնավստահության ձևավորումը, անձնային այնպիսի որակների ձևավորումն ու զարգացումը, որոնք կնպաստեն մասնագիտական կարողությունների զարգացմանը: Վերոնշյալ խնդիրների լուծմանն են ուղղված Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողների պրակտիկաների նկատմամբ մեծ ուշադրությունն ու շարունակականորեն իրականացվող բարեփոխումները. բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում պրակտիկաների տեսակների, ժամաքանակների ավելացումը, նոր կանոնակարգերի, ընթացակարգերի,

վերջնարդյունքների, գնահատման բաղադրիչների ու չափանիշների մշակումը:

Հոդվածի շրջանակներում կներկայացնենք «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավրիատի մանկավարժական պրակտիկաների թղթապանակը, որը ամբողջական, տրամաբանորեն փոխկապակցված բաժիններից կազմված փաստաթուղթ-ընթացակարգ է, որտեղ ընդգրկված են 2-4-րդ կուրսերում ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների ընթացքում ուսանողների գործունեության բովանդակությունը, դրանց իրականացման և վերլուծության մեթոդները, աշխատանքային կոնկրետ ձևաթղթերը, օրինակները և յուրաքանչյուր կիսամյակի համար պրակտիկայի գնահատման բաղադրիչները: Յուրաքանչյուր կիսամյակի պրակտիկայի բովանդակությունը կառուցվում է նախորդի հիման վրա՝ ապահովելով կրթական ծրագրի առանձնահատկությունները, հաջորդականությունն ու ուսանողների մասնագիտական և անձնային աճի դինամիկան, բովանդակությունը կառուցվում է ուսումնական պլանում ընդգրկված առարկաների վերջնարդյունքների հիման վրա:

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն_____
2. Կենսագրական տվյալներ.

- ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ_____
- նախկինում ստացած մասնագիտական կթություն և որակավորում (առկայություն դեպքում)_____
- աշխատանքային փորձ (առկայություն դեպքում) _____

3. բնակության վայրի հասցե, հեռախոսահամար և էլեկտրոնային հասցե _____
4. Ֆակուլտետ, մասնագիտություն_____
5. Պրակտիկաների անցկացման վայրերը.

- 2-րդ կուրս 2-րդ կիսամյակ _____

- 3-րդ կուրս 1-ին կիսամյակ _____
- 3-րդ կուրս 2-րդ կիսամյակ _____
- 4-րդ կուրս 1-ին կիսամյակ _____

2-ՐԴ ԿՈՒՐՍ, 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի թղթապանակի բովանդակությունը (3 կրեդիտ)

1. Պրակտիկայի օրագիր
2. Հիմնարկում սոցիալ-մանկավարժական աշխատանքի համակարգի մասին տեղեկանք-նկարագիր
3. Ինքնավերլուծություն և ինքնագնահատում (SWOT վերլուծություն)

1.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՕՐԱԳԻՐ *

Ամսաթիվ, ամիս, տարեթիվ /	Նախատեսվող աշխատանքի համառոտ բովանդակությունը	Ուսանողի մեկնաբանությունները աշխատանքը կատարելուց հետո	Ուսանողի առաջարկություններն ու ցանկությունները	Պատասխանատուի ստորագրությունը

** Ուսանողը պրակտիկայի օրագրում մանրամասն ներկայացում և վերլուծում է յուրաքանչյուր շաբաթ պրակտիկայի օրը կատարած աշխատանքները: Օրագիրը պետք է լրացված լինի գրագետ, առկա լինեն հիմնավորված մեկնաբանություններ և առաջարկություններ: Օրագիրը անհրաժեշտ է լրացնել բոլոր պրակտիկաների ընթացքում:*

2. ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ-ՆԿԱՐԱԳԻՐ

Պրակտիկայի անցկացման վայրում ուսանողը ծանոթանում է հիմնարկի կառուցվածքին, գործառույթներին, սոցիալ-մանկավարժական գործունեության համակարգին: Գրառումներ է կատարում այդ մասին, կազմում սխեմա, թե ով է ղեկավարում սոցիալ-մանկավարժական աշխատանքները, ովքեր են սուբյեկտները, ինչպիսի սոցիալ-մանկավարժական աշխատանք են իրականացնում, ինչ գործառույթներ ունեն, ինչ մեթոդներ, մեթոդիկաներ, տեխնոլոգիաներ են կիրառում,

ինչ խնդիրներ են լուծում, ովքեր են սոցիալ-մանկավարժական աշխատանքի շահառուները: Հատկապես, պետք է ուշադրություն դարձնել հիմնարկում սոցիալական մանկավարժի աշխատանքներին: Վերոհիշյալ տեղեկանք-նկարագիրը կարելի է ներկայացնել 4-5 էջ ծավալով:

3. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ (SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)[1] *

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. 2.	1. 2.
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. 2.	1. 2.

* ***Մանկավարժական պրակտիկայի ավարտին ուսանողն իրականացնում է SWOT վերլուծություն:***

- SWOT վերլուծության ներքին ոլորտն ընդգրկող ուժեղ և թույլ կողմերը լրացնելիս ուսանողը նշում է իր ձեռքբերումները և հանդիպած դժվարությունները:
- Արտաքին ոլորտն ընդգրկող հնարավորությունների և վտանգների համար ուսանողը նշում է իր աշխատանքի արդյունավետ իրականացմանը նպաստող գործոնները և արդյունավետությունը խոչընդոտող գործոնները:
- Անհրաժեշտ է յուրաքանչյուր չափանիշի համար նշել առնվազն 2 կետ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

1. Պրակտիկայի օրագիր՝ 30 միավոր
2. Հիմնարկում սոցիալ-մանկավարժական աշխատանքի համակարգի մասին տեղեկանք-նկարագիր՝ 30 միավոր
3. Ինքնավերլուծություն և ինքնագնահատում (SWOT վերլուծություն)՝ 40 միավոր

[1] SWOT վերլուծությունն առաջարկվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի հանձնախմբի կողմից նաև այլ մասնագիտությունների և պրակտիկաների թղթապանակներում:

3-ՐԴ ԿՈՒՐՍ, 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

3-րդ կուրսի 1-ին կիսամյակի թղթապանակի բովանդակությունը (3 կրեդիտ)

1. Պրակտիկայի օրագիր
2. Հիմնարկում սոցիալ-մանկավարժական աշխատանքի համակարգի գործառնության արդյունվետության մասին վերլուծություն
3. Հիմնարկում սոցիալ-մանկավարժական գործունեության ամսական պլան
4. Մեկ երեխայի սոցիալ-մանկավարժական և հոգեբանական բնութագիր
5. Ինքնավերլուծություն և ինքնագնահատում (SWOT վերլուծություն)

1.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՕՐԱԳԻՐ (վերը նշված աղյուսակով)

2. ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պրակտիկայի անցկացման վայրում (եթե ուսանողը պրակտիկան անցկացնում է նույն հիմնարկում, ինչ նախորդ կիսամյակում, ապա նա աշխատանքի այս հատվածն իրականացնում է նախորդի հիման վրա և անցնում 2-րդ պարբերությանը) ուսանողը ծանոթանում է հիմնարկի կառուցվածքին, գործառույթներին, սոցիալ-մանկավարժական գործունեության համակարգին: Գրառումներ է կատարում այդ մասին, կազմում սխեմա, թե ով է ղեկավարում սոցիալ-մանկավարժական աշխատանքները, ովքեր են սուբյեկտները, ինչպիսի սոցիալ-մանկավարժական աշխատանք են իրականացնում, ինչ գործառույթներ ունեն, ինչ մեթոդներ, մեթոդիկաներ, տեխնոլոգիաներ են կիրառում, ինչ խնդիրներ են լուծում, ինչպես են համագործակցում միմյանց հետ միևնույն խնդիրները լուծելիս, ովքեր են սոցիալ-մանկավարժական աշխատանքի շահառուները: Հատկապես ուշադրություն է դարձնում սոցիալական մանկավարժի աշխատանքին:

Ուսումնասիրում է շահառուների սոցիալականացման առանձնահատկությունները, փորձում է գնահատել սոցիալ-մանկավարժական

գործունեության սուբյեկտների աշխատանքի արդյունավետությունը: Այս ամենի արդյունքում ուսանողը վերլուծում է, թե որոնք են հիմնարկում սոցիալ-մանկավարժական գործունեության սուբյեկտների ձեռքբերումները, յուրաքանչյուրի ձեռքբերումը, ինչով է դա պայմանավորված, որոնք են բացասական կողմերը, ինչով են դրանք պայմանավորված:

Վերոհիշյալ վերլուծությունը կարելի է ներկայացնել 4-5 էջ ծավալով:

3.ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՊԼԱՆ

Պրակտիկայի ընթացքում կատարված վերոնշյալ ուսումնասիրությունների, վերլուծության արդյունքում ուսանողը կազմում է տվյալ հիմնարկում սոցիալ-մանկավարժական գործունեության ամսական պլան, որտեղ կիստակեցվեն.

- ամիսը, ամսաթիվը,
- աշխատանքի ձևն ու բովանդակությունը,
- խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները,
- այդ գործողությունների պատասխանատուները,
- դրանց կատարման ժամկետները:

Հիմնարկում սոցիալ-մանկավարժական գործունեության ամսական պլանը անհրաժեշտ է ներկայացնել սխեմատիկ՝ ներկայացված ձևաչափով:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿ

(անհրաժեշտ է ներկայացնել ողջ ամսվա համար շաբաթներով, ցանկության դեպքում նաև օրերով)

Ամիս	**աբաթը (նաև օրը)**	**Աշխատանքի ձևն ու բովանդակությունը**	**Գործողությունները** (նախապատրաստական, կազմակերպչական, բուն իրականացման)	**Պա տասխանատուն երը**
0-րդ	-ին	• 7-րդ դասարանում ռիսկի խմբի երեխաների հետ անհատական զրույցներ	• Անհատական զրույցի համար երեխաների ընտրություն, • յուրաքանչյուր երեխայի համար հստակ ժամի որոշում, • նախապես դասղեկներին և երեխաներին այդ մասին իրազեկում,	սոցիալական մանկավարժ

			• առանձին-առանձին հանդիպումների կազմակերպում, • յուրաքանչյուր երեխայի հետ անհատական զրույցների նպատակի հստակեցում, • ընթացքի և արդյունքների մասին գրառումների կատարում:	
	2-րդ 1-3-րդ)	• 9-րդ դասարանի աշակերտների ծնողների հետ երեխաների մասնագիտական կողմնորոշման թեմայով խորհրդատվության իրականացում	• 9-րդ դասարանների հաջորդականության որոշում, • դասղեկներին և երեխաների ծնողներին այդ մասին իրազեկում, • խորհրդատվության թեմայի, նպատակի, մեթոդների հստակեցում և նախապատրաստում, • խորհրդատվության իրականացում, • արդյունքների ամփոփում, վերլուծություն և գրառումներ այդ մասին:	սոցիալական մանկավարժ
//-// /-//	//-//	//-//	//-//	//- //

4.ՄԵԿ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պրակտիկայի ընթացքում հիմնարկում ուսանողն ուսումնասիրում է կոնկրետ երեխայի մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները համապատասխան դիագնոստիկ մեթոդներով, մեթոդիկաներով, կազմում է նրա սոցիալ-մանկավարժական և հոգեբանական բնութագիրը: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել դիագնոստիկ մեթոդիկաների էլեկտրոնային տարբերակները առցանց տարբերակով: Անհրաժեշտ է անպայման նշել ուսումնասիրության համար օգտագործված կոնկրետ մեթոդներն ու մեթոդիկաները:

Երեխայի սոցիալ-մանկավարժական և հոգեբանական բնութագրի քարտի օրինակ

Երեխայի Ա.Ա.Հ. _____

Ծննդյան տարեթիվ_____

Դասարան/խումբ (պայմանավորված պրակտիկայի հիմնարկի առանձնահատկությամբ) _____

Դպրոց կամ այլ հաստատություն ընդունվելու տարեթիվը, ամիսը _____

